

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՇԱԿ ԱՐԹՈՒՐԻ

**ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ՊԱՏՄԱԿԱՆ,  
ԳԱՂԱՓԱՐԱԿՈՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ  
(ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ «ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՈՒՄ»  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ)**

## ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությունը պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝  
պատմական գիտությունների դոկտոր  
Վ.Յ. Տեր-Մաթևոսյան

ԵՐԵՎԱՆ – 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ** ..... 3

**ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ**

«ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ.  
ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ»

..... 16

1.1. Պահպանողականությունը իբրև քաղաքական  
փիլիսոփայություն. ծագումը և հիմնական  
առանձնահատկությունները ..... 16

1.2. Թուրքական պահպանողականության ձևավորման պատմական  
հիմքերը .. 27

1.3. Պահպանողականության դասական և թուրքական մոդելների  
առնչակցությունը. նմանություններ և տարբերություններ  
..... 38

**ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ**

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ  
ԲԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ. ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ .....

44

2.1. ԺԿ ընդդիմադիր շրջանն ու կայացման անձնային  
խորապատկերը. Ձեռնալ Բայար և Ադնան Մենդերես  
..... 44

2.2. ԺԿ իշխանության տարիները՝ քաղաքական  
պահպանողականության հիմնական սկզբունքների  
դիտանկյունից ..... 60

2.2.1. ԺԿ դիրքորոշումը կրոնի և աշխարհիկության նկատմամբ  
..... 63

2.2.1.1. ԺԿ իշխանության փոխադարձությունները  
Կոստանդնուպոլսի Հայոց  
պատրիարքության հետ..... 73

2.2.2. Հեղափոխականություն և քեմալական բարեփոխումներ  
..... 80

2.2.3. Պատմության և ավանդույթների վերափաստավորում  
..... 83

2.3. ԺԿ իշխանության տապալումը. մայիսի 27-ի ռազմական  
հեղաշրջումը ..... 86

**ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ**

«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԲԱՂԱՔԱԿԱՆ  
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՐՕՐՅԱ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

..... 109

3.1. ԱԶԿ ստեղծման ու կայացման պատմական համատեքստը  
..... 109

3.2. Պահպանողական ժողովրդավարությունն իբրև ԱԶԿ  
պաշտոնական ..... 118  
գաղափարախոսությունն

3.3. Մենդերեսի կերպարը ժամանակակից թուրքիայի  
հասարակական-քաղաքական ..... 125  
հոլոֆոսություն

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ..... 135

**ՕԳՏԱԳՈՐԾԿԱԾ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ** .....

138

## **ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ**

### **Յեռագրողական թեմայի արդիականությունը:**

Հասարակության արդիականացման ձևաչափի շնորհ  
հանրապետականների և պահպանողականների հակադիր  
հայացքների բախումը ժամանակակից թուրքիայի քաղաքական  
պատմության վերջին տասնամյակների կիզակետերից մեկն է:  
Ավտորիտար արդիականացման արդյունքում ձևավորված  
հանրապետական թուրքիայում քաղաքական  
պահպանողականության ավանդական դրոյթներին մեկը՝  
«արդիապաշտողական հաղթահարումը» վերաիմաստավորվել է  
միանգամայն ուրույն կերպով: Թուրքական հասարակական մտքին  
բնորոշ շրջափոխային պահպանողականացումը («conservatization»)  
պարբերաբար բերում է հասարակական բևեռացման՝ վտանգելով  
հանրային համերաշխման ստատուս-քվոն: Հանրապետականների և  
պահպանողականների միջև բևեռացումը թուրքիայի  
Հանրապետության պատմության ընթացքում մի քանի անգամ  
լուծվել է բանակի ուղղակի կամ անուղղակի միջամտությամբ:  
Ընդհանուր առմամբ, Երկրորդ աշխարհամարտին հաջորդող  
շրջանում բազմակուսակցական քաղաքական համակարգին  
անցում կատարելուց հետո երկրում տեղ գտած քաղաքական  
գործընթացների, ինչպես նաև սոցիալ-մշակութային  
դինամիկայի տրամաբանությունը պայմանավորված է այդ թվում  
նաև հանրապետականության, պահպանողականության և իսլամի  
կազմած եռանկյան ներսում առկա ընդհանուր  
օրինաչափություններով:

Դեռ օսմանյան հասարակության ընտրանու կողմից  
որոշակիորեն արժարժված պահպանողական գաղափարները

քաղաքական դաշտ են բերվել Թուրքիայի առաջին իսկ իրական մրցակցային ընտրություններում, որոնց արդյունքում իշխանության է եկել Ջ. Բայարի և Ա. Մենդերեսի գլխավորած ժողովրդավարական կուսակցությունը (ԺԿ): ԺԿ իշխանության տասնամյակը (1950-1960 թթ.) ժամանակակից ուսումնասիրողների կողմից հաճախ զուգահեռվում է ներկայում Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) և դրա առաջնորդ Ռ. Թ. Էրդողանի ժամանակաշրջանի հետ: Սակայն առավել հաճախ՝ հիշատակող առերևույթ նմանությունների (խարիզմատիկ առաջնորդություն, առաջնորդների անձնական հատկանիշներ և այլն) կողքին, առկա են առավել խորքային (գաղափարական ժամանակակիցություն, ազատական պահպանողականությունից ավտորիտարիզմի անցման ընդհանուր օրինաչափություններ և այլն) գործոններ, որոնց մասնագիտական գրականության մեջ հաճախ բավարարող շարժումներն չեն դարձվում: Այս նպատակով երկու առաջնորդների ժամանակաշրջանները հարկավոր է դիտարկել թուրքական պահպանողական մտքի էվոլյուցիայի համատեքստում, ինչը թույլ կտա ավելի ամբողջական պատկերացում կազմել մերօրյա Թուրքիայի քաղաքական գործընթացների տրամաբանության վերաբերյալ:

Չնայած թուրքական պահպանողականության վերաբերյալ մեծաքանակ գրականության առկայությանը՝ այդ շարքում բացակայում են քննվող ժամանակաշրջանների համեմատական վերլուծություն պարունակող համալիր հետազոտություններ, ինչը սույն աշխատանքը արդիական է դարձնում ինչպես պատմագիտության, այնպես էլ քաղաքագիտության տեսանկյունից: Առավել ևս, բացակայում են Մենդերես-Էրդողան զուգահեռները թուրքական քաղաքական պահպանողականության մտքի շարունակականության համատեքստում դիտարկող համապարփակ ուսումնասիրությունները:

**Առե նախօրյակում նպատակը և խնդիրները:**

Ատենախոսությունն պատակն է՝ ուսումնասիրել թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության պաշտոնական գաղափարախոսությունն հռչակված պահպանողական ժողովրդավարության հայեցակարգի հիմնական բնութագրերը 1950-1960 թթ. քաղաքական գործընթացների գաղափարական և պատմական համատեքստում:

Ատենախոսությունն թեմայի ուսումնասիրությունը խնդիր ունի.

- բացահայտել օսմանյան, ապա՝ թուրքական հասարակությունն ներում պահպանողական մտքի ծագման և բարձրացման առանձնահատկությունները,
- անդրադառնալ թուրքական պահպանողականության վրա արևմտյան պահպանողական գաղափարների և հոսանքների ազդեցությանը,
- ներկայացնել հետպատերազմյան թուրքիայի ժողովրդավարացման գործընթացում պահպանողական գաղափարների մուտքը քաղաքական դաշտ,
- լուսաբանել ԺԿ իշխանության տասնամյակը՝ դրա առաջնորդների և վերջիններիս գաղափարական կողմնորոշման շեշտադրմամբ,
- դիտարկել ԱԶԿ ձևավորումը և վերելքը թուրքական պահպանողական մտքի վերադրսևորման դիտանկյունից,
- քննել պահպանողական ժողովրդավարության հայեցակարգի առանձնահատկությունները,
- գուգահեռներ անցկացնել թուրքիայի պատմության «մենդերեսյան» և «երդողանական» փուլերի միջև՝ վերհանելով ընդհանուր օրինաչափություններ:

### **Ատենախոսության գիտական նորույթը:**

Ատենախոսությունն առաջին փորձն է հնարավորինս ամբողջական և համակողմանիորեն ներկայացնել թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, ինչպես նաև գիտական հանրույթի շրջանում պարբերաբար քննարկվող Մենդերես-երդողան համեմատության հիմնավորումը՝ բացատրելով այն

թուրքական պահպանողականության շարունակականության ամբ, ազատական պահպանողականության նից ավտորիտարիզմի անցման ընդհանուր օրինաչափության ներքո և խարիզմատիկ առաջնորդության՝ թուրքական քաղաքական դաշտի համար բնորոշ դրսևորումներով:

Կարելի է նշել, որ սույն աշխատանքում օգտագործվել են նշանակալի թվով արխիվային նյութեր, որոնք կա՛մ առաջին անգամ են մտցվում գիտական շրջանառության մեջ, կա՛մ բերված տեքստում ներկայացվում են նոր լույսի ներքո:

**Ատենախոսության ժամանակագրական շրջանակները:**

Ժամանակագրական առումով ատենախոսության ներդրվում է ԺԿ (1946 թ. հունվարի 7-ից՝ 1960 թ. սեպտեմբերի 29-ը) և ԱԶԿ (2001 թ. օգոստոսի 14-ից՝ մեր օրերը) գործունեության շրջանները: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ ժամանակագրական ստորին և վերին այս շեմերը պայմանական են: Թուրքական պահպանողականության զարգացման դինամիկան հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել նաև դրանախընթաց շրջանները: Իսկ խնդրո առարկա կուսակցության ներքին կայացումը աշխատանքում քննարկվում է նախորդող իրադարձության ներքին պատմական համատեքստում:

**Ատենախոսության մեթոդաբանական հենքը:**

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը պատմահամեմատական մեթոդն է՝ կիրարկված աղբյուրների և գրականության համարման, քննական վերլուծության մոտեցմամբ: Աշխատանքը գրելիս օգտագործվել են նաև պատմագիտական ուսումնասիրման ընդհանուր՝ ժամանակագրական և պատմական պարբերացման գործիքակազմերը:

Յետադոտական որոշ խնդիրների լուծման համար օգտագործվել են Մ. Ալբվաքի «հավաքական հիշողության» և Վ. Լիպմանի ու Է. Բերնեյսի «կառավարվող ժողովրդավարության» տեսությունները:

**Ատե նախասու թյ ան կիրառական նշանակությունը:**

Աշխատանքը կարող է կիրառական նշանակություն ունենալ թուրքիայի Յանրապետության պատմության, պահպանողականության պատմության վերաբերյալ հետագա պատմագիտական և քաղաքագիտական հետազոտություններին համար:

Ատե նախասու թյ ան դրույթներն ու եզրակացությունները կարող են օգտակար լինել արևելագետներին, պատմաբաններին, միջազգայնագետներին, համար՝ մասնավորապես, ժամանակակից թուրքիայի քաղաքական տեղաշարժերը դիտարկելու և բացատրելու համատեքստում:

**Աղբյուրների և գրականության տեսություն:**

Ատե նախասու թյ ան թեմայի գիտական համակողմանի ուսումնասիրությունը պահանջում է տարաբնույթ աղբյուրների օգտագործում, այդ թվում՝ արխիվային և հրատարակված փաստաթղթեր, կուսակցական հրատարակություններ, ժամանակակիցների վկայություններ, պարբերական մամուլ, թեմային և հարակից ժամանակաշրջաններին նվիրված մասնագիտական ուսումնասիրություններ, գեղարվեստական-փաստագրական ստեղծագործություններ, վիզուալ նյութեր և այլն:

Աղբյուրների առաջին խումբը քննվող ժամանակաշրջանի արխիվային նյութերն են: Աշխատանքում օգտագործվել են թուրքիայի վարչապետին կից գործող հանրապետական արխիվում<sup>1</sup> պահվող նյութեր, որոնցից որոշներն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Ատե նախասու թյ ան որոշ խնդիրների լուսաբանման համար օգտագործվել են ԱՄՆ

<sup>1</sup> T.C. Başbakanlık Cumhuriyet Arşivi. Ատե նախասու թյ ան պատրաստման ընթացքում այն վերակազմակերպվել է և նյութերն այժմ գտնվում է ԹՀ նախագահի աշխատակազմի պետական արխիվների վարչության հաշվեկշռում (T.C. Cumhurbaşkanlığı Devlet Arşivleri Başkanlığı):

պէ տքարտուղարութեան<sup>2</sup> և Կենտրոնական հետախուզական վարչութեան<sup>3</sup> արխիվային նյութերը:

Քննվող ժամանակաշրջանի որոշ անցքերի ներկայացման ընթացքում օգտագործվել են Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նիստերի արձանագրություններն<sup>4</sup> և ԹՀ պաշտոնաթերթի<sup>5</sup> համապատասխան թողարկումները: Օգտագործված աղբյուրների շարքում արժեքավոր են ժԿ կանոնադրությունը և Մենդերեսի գլխավորած կառավարությունների ծրագրերը<sup>6</sup>, կուսակցական ժողովների քննարկումների սղագրությունները<sup>7</sup>, ինչպես նաև կուսակցական գործիչների ելույթների ժողովածուները<sup>8</sup>:

ԺԿ իշխանութեան ժամանակահատվածի հասարակական-քաղաքական կյանքի անցուդարձերի և կուսակցական տեսանկյունից զգալի չափով օգտագործվել են թուրքական պարբերական մամուլի հրատարակումները: Ատենախոսություն համար առաջնային կարևորություն են ներկայացնում «Ձաֆեր», «Ուլուս», «Ջումհուրիյեթ», «Կաթան», «Թան», «Միլլիյեթ» և հայալեզու «Ժամանակ» թերթերի հրատարակումները, քանի որ, ներկայացնելով գաղափարական տարբեր ուղղվածություններ, վերջիններս գործնականում ընդգրկում են հասարակական հոլովունյթում առկա բոլոր տրամադրությունները: ԱԶԿ իշխանութեան ժամանակահատվածի, ինչպես նաև Մենդերես-Էրդողան համեմատական քննութեան համար մեծ ծավալով դիտարկվել են թուրքական և արտասահմանյան ժամանակակից ՉԼՄ-ների հրատարակումներ ևս:

Աղբյուրների ամանձին խումբ են կազմում քննվող դեպքերի ժամանակակիցների ու իրադարձությունների անմիջական մասնակիցների հուշերը, վկայությունները և փաստագրական աշխատանքները: Մասնավորապես, օգտագործվել են թուրք

<sup>2</sup> U.S. National Archives, Turkey: Records of the U.S. Department of State, **LaFantasie G. (ed.)**, *Foreign relations of the United States, 1958-1960. Eastern Europe; Finland; Greece; Turkey*, vol. X, part 2, U.S. Government Printing Office, 1958-1960.

<sup>3</sup> U.S. Central Intelligence Agency, *Freedom of Information Act Electronic Reading Room*.

<sup>4</sup> *Türkiye Büyük Millet Meclisi Tutanağı (Zabit Ceridesi)*.

<sup>5</sup> *T.C. Resmi Gazete*.

<sup>6</sup> *DP Program ve Tüzüğü*, İstanbul, 1946, **Arar İ. (der.)**, *Hükümet Programları 1920-1965*, İstanbul, 1968.

<sup>7</sup> *Demokrat Parti Meclis Grubu Gizli Müzakere Zabıtları*.

<sup>8</sup> **Şahingiray Ö.Ş.** (der.), *Celal Bayar'ın Söylev ve Demeçleri*, 6 cilt, İstanbul, 1999, **Kılıçık H.**, *Menderes'in Konuşmaları, Demeçleri, Makaleleri*, 9 cilt, Ankara, 1991, **Erdoğan R.T.**, *Ülke Konuşmaları: 2003-2007*, cilt 4, Ankara, 2008:



հայ տնի պետական և հասարակական-քաղաքական գործիչներ Ջ. Բայարի, Ռ. Քորալթանի, Ս. Աղաօղլունի, Յ. Ք. Քարասամանօղլունի, Ն. Ֆ. Քըսաթյունրեքի, Ա. Է. Յալմանի և այլոց հուշերը<sup>9</sup>: Հաշվի առնելով դրանցում շարադրված անձնական հիշողություններին սուբյեկտիվ բնույթը՝ այդ ախտանքները դիտարկվում են բացառապես որպես առանձին անձանց ընկալումներ, այլ ոչ թե որպես պատմական իրողությունների բացահայտման աղբյուր:

Հարկ է առանձնացնել Մենդերես քաղաքական գործչի անձին և գործունեությունը նվիրված ախտությունները: Ի. Գիրգինի «Ադնան Մենդերես» խորագրով գիրքը<sup>10</sup>, տպագրված լինելով դեռ ժԿ իշխանության տարիներին, թուրքիայի վարչապետի քաղաքական դիմանկարի առաջին փորձն է, թեև բովանդակային իմաստով շարադրված է խիստ սուբյեկտիվ դիտանկյունից: Մենդերեսին անդրադարձող թերևս ամենահայտնի գիրքը թուրք հայտնի մտավորական և գրող Ծ. Ս. Այդեմիրի «Մենդերեսի դրաման» ծավալուն ախտանքն է<sup>11</sup>: Չնայած շարադրանքի գերազանցապես գեղարվեստական բնույթին՝ այն հետաքրքիր է՝ հատկապես հաշվի առնելով դրանում բերված Մենդերեսի մտերիմներից որոշների անանուն վկայությունները: Այդեմիրի գրքի որոշ թեգերին հակադրվում է հետագայում թուրքիայի ազգային կրթության նախարարի պաշտոնը զբաղեցրած Օ. Ջ. Ֆերսոյի «Ժամանակաշրջանին իրանունը տված վարչապետ Ադնան Մենդերեսը» ախտությունը<sup>12</sup>, որն ուղղաբար է, քանի որ հեղինակը տեղեկություններ է ստացել Մենդերեսի ընտանիքից, մասնավորապես՝ նրա կին Բերինից: Թեմայի շուրջ օգտակար են նաև Ա. Թունջերի, Մ. Սարոլի, Ա. Դիլիփաթի ախտությունները<sup>13</sup>:

1950-1960 թթ. թուրքիայի քաղաքական գործընթացների ու սուլմասիման տեսակետից զգալի արժեք են ներկայացնում

<sup>9</sup> Bayar C., *Başvekilim Adnan Menderes*, İ. Bozdağ (ed.), İstanbul, 1986, **ՆՈՒՂՆԻ** *Ben de Yazdım*, 8 cilt, İstanbul, 1965-1972, Ertepinar C. (ed.), *Refik Koraltan: Bir Politikacının Anıları Her Şey Vatan İçin*, Ankara, 1999, Ağaoğlu S., *Arkadaşım Menderes*, İstanbul, 1967, **ՆՈՒՂՆԻ** *Yassıda, Kayseri ve Toptaşı Cezaevi Günlükleri*, İstanbul, 2013, Karaoğlu Y., *Politikada 45 yıl*, İstanbul, 1968, Kısakürek N.F., *Benim Gözümde Menderes*, İstanbul, 1998, Yalman A.E., *Yakın Tarihte Gördüklerim Geçirdiklerim*, cilt 2, İstanbul, 1971.

<sup>10</sup> Girgin İ., *Adnan Menderes*, İzmir, 1958.

<sup>11</sup> Aydemir Ş.S., *Menderes'in Dramı (1899-1960)*, İstanbul, 2000.

<sup>12</sup> Ferisoy O.C., *Bir Devre Adımı Veren Başbakan Adnan Menderes*, İstanbul, 1978.

<sup>13</sup> Tuncer A., *Modern Türkiye'nin mimarı: Adnan Menderes*, İzmir, 1958, Sarol M., *Bilinmeyen Menderes*, cilt 1-2, İstanbul, 1983, Dilipak A., *Menderes Dönemi*, İstanbul, 1990.

դանիացի հետազոտող Մ. Պելտի աշխատանքները<sup>14</sup>: Ատենախոսության մեջ կարևորվել են նաև թուրքիայի պատմության տարբեր փուլերն ընդգրկող՝ Է. Յուրխեթի, Ջ. Վանդերլիպպեի, Ի. Թուրանի, Ֆ. Ահմադի, Բ. Քարփաթի, Բ. Լյուխսի, Ու. Յեյլի, Ու. Վեյքերի, Թ. Թուսայայի, Ջ. Էրօղուլի, Բ. Բուրչակի, Մ. Ալբայրաքի, Ս. Յուլջելի, Թ. Թոքերի, Յ. Օքթայի, Դ. Վոդվիչենկոյի, Ա. Միլլերի, Ն. Կիրենի աշխատություններն<sup>15</sup> ու քննվող ժամանակաշրջանի անցքերն ընդգրկող կոլեկտիվ մենագրությունները<sup>16</sup> և հոդվածները<sup>17</sup>:

ԺԿ իշխանության ժամանակաշրջանը ավելի լայն պատմական համատեքստում դիտարկելու համար հատկապես օգտակար են եղել հայ ուսումնասիրողներ Ռ. Մելքոնյանի, Վ. Տեր-Մաթևոսյանի, Ա. Դումանյանի աշխատությունները<sup>18</sup>: Առանձին հիշատակման է

<sup>14</sup> **Pelt M.**, *Military Intervention and a Crisis of Democracy in Turkey: The Menderes Era and its Demise*, I.B. Tauris, 2014, **ՆՆԼՅ ՆԻ** *Adnan Menderes, Islam, and His Conflict with the One-Party Era Establishment*, in D. Jung and C. Raudvere (ed.), *Religion, Politics, and Turkey's EU Accession*, Palgrave Macmillan, 2008, pp. pp 91-113:

<sup>15</sup> **Zürcher E.J.**, *Turkey: A Modern History*, 4<sup>th</sup> ed., I.B. Tauris, 2017, **VanderLippe J.M.**, *The Politics of Turkish Democracy: Ismet Inonu and the Formation of the Multi-Party System 1938-1950*, New York, 2005, **Turan İ.**, *Turkey's Difficult Journey to Democracy: Two Steps Forward, One Step Back*, Oxford, 2015, **Ahmad F.**, *The Making of Modern Turkey*, Routledge, 1993, **ՆՆԼՅ ՆԻ** *The Turkish Experiment in Democracy*, Westview Press, 1977, **Karpat K.H.**, *Turkey's Politics: The Transition to a Multi-Party System*, Princeton University Press, 1959, **Hale W.**, *Turkish Politics and the Military*, Routledge, 1994, **ՆՆԼՅ ՆԻ** *Turkish Foreign Policy Since 1774*, Routledge, 2013, **Weiker W.**, *The Turkish Revolution 1960-1961: Aspects of Military Politics*, Brookings Institution, 1963, **Tunaya T.Z.**, *Türkiye'de Siyasal Partiler, 1859 – 1952*, İstanbul, 1952, **Eroğul C.**, *Demokrat Parti Tarihi ve İdeolojisi*, Ankara, 1990, **Burçak R.S.**, *Türkiye'de Demokrasiye Geçiş 1945-1950*, Ankara, 1979, **Albayrak M.**, *Türk Siyasi Tarihinde Demokrat Parti (1946-1960)*, Ankara, 2004, **Yücel S.**, *Demokrat Parti*, İstanbul, 2001, **Toker M.**, *Demokrasimizin İsmet Paşalı yılları (1944-1973)*, cilt 1-5, Ankara, 1991, **Oktay H.E.**, *Yash ada*, İstanbul, 2006, **Вдовиченко Д.И.**, *Борьба политических партий в Турции (1944-1965 гг.)*, Москва, 1967, **Миллер А.Ф.**, *Очерки новейшей истории Турции*, Москва-Ленинград, 1948, **Киреев Н.Г.**, *История Турции: XX век*, Москва, 2007.

<sup>16</sup> **Heper M.**, **Sayari S.**, *Political Leaders and Democracy in Turkey*, Lexington Books, 2002, **Birand M.**, **Dündar C.**, **Çağlı B.**, *Demirkırat: Bir Demokrasinin Doğuşu*, İstanbul, 1991, **Tanyeli H.**, **Topsakaloğlu A.**, *İzahlı Demokrat Parti Kronolojisi: 1945-1958*, 2 cilt, Ankara, 1959, **İpekçi A.**, **Coşar Ö.**, *İhtilalin İçyüzü*, İstanbul, 1965, **Гасратян М.А.**, **Орешкова С.Ф.**, **Петросян Ю.А.**, *Очерки истории Турции*, Москва, 1983, **Данилов В.И. (отв. ред.)**, *Эволюция политических систем на Востоке. Иран, Пакистан, Турция: традиции и демократизация*, Москва, 1999, **Данилов В.**, **Базиянц А.**, *Причины государственного переворота 1960 г.*, Проблемы современной Турции, Москва, 1963, **Гафурова Б.**, **Зубока Л.**, *Хрестоматия по новейшей истории*, т. 3, ч. 1 (1945-1960 документы и материалы), Москва, 1961.

<sup>17</sup> **Reed H.**, *Revival of Islam in Secular Turkey*, *The Middle East Journal*, vol. 8(3), pp. 267-282, **Lewis G.**, *Turkey: The End of the First Republic*, *The World Today*, vol. 16(9), 1960, pp. 377-386, **Gunn C.**, *The 1960 Coup in Turkey: A U.S. Intelligence Failure or a Successful Intervention?*, *Cold War Studies*, vol. 17, no. 2, 2015, pp. 103-139, **Торчу İ.**, **Akılmak Торчу S.**, *Adnan Menderes'in Yargılanması ve İdamı*, *Akademik Bakış*, sayı 61, 2017, ss. 59-80, **Armaoğlu F.**, *Amerikan Belgelerinde 27 Mayıs Olayı*, *Bellekten*, c. XL, sayı 227, 1996, ss. 203-226, **Шлыков В.И.**, *Борьба за власть и кризис кемалистского режима в Турции после Второй мировой войны*, *Локус: люди, общество, культуры, смыслы*, №1, 2017, стр. 57-71.

<sup>18</sup> **Մելքոնյան Ռ.**, *1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի դեպքերը (Թուրքիայում և քրիստոնյա փոքրամասնությունների դեմ բռնությունների հերթական դրսևորումը)*, *Արևելագիտության հարցեր*, հ. VIII, 2014, էջ 144-156, **ՆՆԼՅ ՆԻ** *Թուրքիայի Յանրապետության խորհրդարանի հայ ազգի պատգամավորները (1935-1960թթ.)*, *Արևելագիտության հարցեր*, 2012, հ. VII, էջ 95-102, **ՆՆԼՅ ՆԻ** *Погромы греков и*

արժանի ակադեմիկոս Ռ. Սաֆրասյանի խմբագրությամբ հրատարակված «Թուրքիայի Հանրապետության պատմություն» կոլեկտիվ մենագրությունը<sup>19</sup>: 1950-1960 թթ. ներքաղաքական գործընթացների առաջին ուսումնասիրողներից է Ռ. Կոնդակչյանը, ում առաջ քաշած որոշ դրույթներ պատմագիտական հենք են ծառայել սույն աշխատության համար<sup>20</sup>:

Ատենախոսության համար քաղաքական պահպանողականության ուրվագծերը ներկայացնելիս տեսական քաղաքագիտական հիմք են հանդիսացել Ռ. Բըրքի, Ս. Հանթինգթոնի, Ռ. Բուրկի, Է. Հեմիլթոնի, Ս. Անդրեասոնի, Ռ. Սքրոթոնի, Ֆ. Վիլսոնի, Հ. Սեսիլի, Ջ. Կեկեսի ուսումնասիրությունները<sup>21</sup>: Նույն նպատակի համար օգտագործվել են նաև Է. Բըրքի, Ա. դը Տոկվիլի դասական դարձած հիմնարար աշխատությունները<sup>22</sup>: Թուրքական պահպանողականության ձևավորման պատմական հիմքերի բացահայտման տեսակետից կարևորվել է «Քաղաքական միտքը ժամանակակից Թուրքիայում» շարքի՝ Ա. Չիդեմի խմբագրությամբ լույս տեսած «Պահպանողականություն» ծավալուն հատորը<sup>23</sup>, որում թուրքական պահպանողականության ներկայացված է ամենատարբեր դիտանկյուններից: Հանրապետական շրջանի պահպանողական դրսևորումների տիպաբանական

---

*армян в Турции 6-7 сентября 1955 года*, Историческое пространство. Проблемы истории стран СНГ, 2015, №1, стр. 269-275, **Ter-Matevosyan V.**, *Turkey, Kemalism and the Soviet Union: Problems of Modernization, Ideology and Interpretation*, Palgrave Macmillan, 2019, **Դու մանյան Ա.**, *Քաղաքական կյանքում 1920-1970-ական թվականներին. ընդհանուր ակնարկ*, Արևելագիտության հարցեր, հ. XII, 2016, էջ 158-179:

<sup>19</sup> **Սաֆրասյան Ռ. (խմբ.)**, *Թուրքիայի Հանրապետության պատմություն*, Երևան, 2014:

<sup>20</sup> **Кондакчян Р.П.**, *Турция: Внутренняя политика и ислам*, Ереван, 1983, **Նույնի** *Внутренняя политика Турции (1950-1960)*, Ե.Ղ. Սարգսյան և ուրիշներ (խմբ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. V: Թուրքիա, Երևան, 1970, էջ 5-140:

<sup>21</sup> **Kirk R.**, *The Conservative Mind: From Burke to Eliot*, 7<sup>th</sup> ed., Washington, 2001, **Huntington S.P.**, *Conservatism as an Ideology*, *The American Political Science Review*, vol. 51(2), 1957, pp. 454-473, **Bourke R.**, *What is conservatism? History, ideology and party*, *European Journal of Political Theory*, vol. 17(1), 2018, pp. 449-475, **Hamilton A.**, *Conservatism*, *Stanford Encyclopedia of Philosophy* (Fall 2016 Edition), E.N. Zalta (ed.), <https://plato.stanford.edu/archives/fall2016/entries/conservatism/> [հասանելի է՝ 03.09.2018], **Andreasson S.**, *Conservatism*, in V. Geoghegan, R. Wilford (eds.), *Political Ideologies: An Introduction*, 4<sup>th</sup> ed., London, 2014, pp. 47-70, **Scruton R.**, *The Meaning of Conservatism*, 3<sup>rd</sup> ed., Palgrave, 2001, **Wilson F.G.**, *A Theory of Conservatism*, *American Political Science Review*, vol. 35(1), 1941, pp. 29-43, **Cecil H.**, *Conservatism*, *Williams and Norgate*, 1912, **Kekes J.**, *What is Conservatism?*, *Philosophy*, vol. 72(281), 1997, pp. 351-374.

<sup>22</sup> **Burke E.**, *Reflections on the Revolution in France: A Critical Edition*, J.C.D. Clark (ed.), Stanford University Press, 2001, **De Tocqueville A.**, *The Old Regime and the Revolution, vol 1: the Complete Text*, F. Furet and F. Mélonio (ed.), Chicago and London, 2015.

<sup>23</sup> **Çiğdem A. (ed.)**, *Modern Türkiye’de Siyasî Düşünce, cilt 5 – Muhafazakârlık*, İstanbul, 2003.

առանձնահատկություններն ուսումնասիրվել են քեմալական մտավորականության պահպանողական ներկայացուցիչներ Ի.Յ. Բալթաջըօղլուի, Փ. Սաֆայի, Յ. Չ. Ուլքենի և Մ. Շ. Թունչի տեսական աշխատությունների<sup>24</sup> վերլուծության միջոցով: Պահպանողական գաղափարախոսության որոշ նրբություններ բացահայտվել են ակադեմիկոս Ռ. Սաֆրասոյանի, Մ. Մարգարյանի և Ալ. Սաֆարյանի աշխատանքների օգտագործմամբ<sup>25</sup>:

Իբրև «Արդարություն և զարգացում» կուսակցության պաշտոնական գաղափարախոսություն՝ պահպանողական ժողովրդավարության հայեցակարգի քննության ընթացքում առանցքային է Ռ. Թ. Երդողանի նախկին քաղաքական խորհրդական Յալչըն Աքդողանի «Պահպանողական ժողովրդավարություն» աշխատությունը<sup>26</sup>, որն, ըստ էության, կուսակցության քաղաքական ինքնության հռչակագիրն է: Տեսական մեծ արժեք է ներկայացնում նաև 2004 թ. հունվարին ԱԿ հովանու ներքո Ստամբուլում կայացած «Միջազգային պահպանողականություն և ժողովրդավարություն» թեմայով սիմպոզիումի նյութերի ժողովածուն<sup>27</sup>:

Պահպանողական ժողովրդավարության հայեցակարգի և դրանում տեղի ունեցող փոփոխությունների համակողմանի հետազոտման ընթացքում օգտակար են եղել հայալեզու<sup>28</sup>, թուրքալեզու<sup>29</sup>, անգլալեզու<sup>30</sup> և ռուսալեզու<sup>31</sup> մեծ թվով

<sup>24</sup> **Baltacıoğlu İ.H.**, *Tarih ve Terbiye*, İstanbul, 1933, **Նուլյ Նի** *Türke Doğru*, İstanbul, 1943, **Safa P.**, *Türk inkılabına bakışlar*, İstanbul, 1938, **Նուլյ Նի** *Seçmeler*, Ankara, 1970, **Նուլյ Նի** *Doğu-Batı Sentezi*, İstanbul, 1963, **Նուլյ Նի**, *Din, İnkılap, İrtica*, İstanbul, 1999, **Ülken H.Z.**, *Türkiye'de Çağdaş Düşünce Tarihi*, 2. baskı, İstanbul, 1979, **Նուլյ Նի** *Veraset ve Cemiyet*, İstanbul, 1957, **Tunc M.Ş.**, *Bir Din Felsefesine Doğru*, İstanbul, 1959, *Descartes Kongresine Hitab*, Bilgi, sayı 11(132), 1958, s. 16-17.

<sup>25</sup> **Safrastyan R.**, *Modern conservatism as a world perception and political movement: the case of American neocons and paleocons*, Իմաստություն, հ. 2(11), 2014, էջ 97-103, **Նուլյ Նի**, *Պահպանողականություն և ԱՄՆ-ում*, Մ. Մարգարյան, Ռ. Սաֆրասոյան, Մ. Լալայան, Պահպանողական հոսանքներ և գաղափարներ, Երևան, 2010, էջ 21-41, **Մարգարյան Մ.**, *Պահպանողականություն և Մ. Մարգարյան, Ռ. Սաֆրասոյան, Մ. Լալայան, Պահպանողական հոսանքներ և գաղափարներ*, Երևան, 2010, էջ 4-21, **Սաֆարյան Ալ.**, *Չիյ աջյոյ փրդ և «Թյ ու ըքակն ու թյ ան հիմ ու նքները»*, Երևան, 2012

<sup>26</sup> **Akdoğan Y.**, *Muhafazakar Demokrasi*, Ankara, 2003.

<sup>27</sup> *Uluslararası Muhafazakarlık ve Demokrasi Sempozyumu*, İstanbul, 2004

<sup>28</sup> **Տեր-Սաֆևոյան Վ.**, *Թուրքիան 2008–2011 թթ.: Քաղաքական փոխակերպում և փոփոխության հիմնական առանձնահատկությունները*, Ժամանակից Եվրասիա, հ. 1, 2012, էջ 11-40:

<sup>29</sup> **Uluçakar M.**, *Muhafazakâr Demokrasi Söylemi Üzerine Bir İnceleme*, Alternatif Politika, sayı 10(3), 2018, ss. 349-373, **Fedayi C.**, *AKP'nin Siyasal Kimliği Üzerine: Kimlik Arkadan Gelsin*, Muhafazakâr Düşünce, sayı 1(1), 2004, ss. 149-163, **Bora T.**, *AKP ve Muhafazakâr Demokratlığın Sınırları*, Karizma, sayı 5(17), 2004, ss. 37-42, **Yalsızuçanlar S.**, *İslamcı/Milliyetçi/Sağ Siyaset'in yeni adı: Muhafazakâr Demokrasi*, Karizma, sayı 17, 2004, ss. 93-96.

աղբյուրներ: Ժամանակակից Թուրքիայում Ա. Մենդերեսի կերպարի դրսևորումների ուսումնասիրման գործում կիրառվել են գեղարվեստական ֆիլմեր և հեռուստապատկերներ<sup>32</sup>:

Ատենախոսության տարբեր դրոյթների մշակման ընթացքում օգտագործվել են հայ և օտարերկրացի միջառք հետազոտողների ատենախոսությաններ<sup>33</sup>:

### **Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են աշխատանքի հիմնական նպատակները, գիտական նորոյթը, կիրառական

---

<sup>30</sup> **Çagliyan-İçener Z.**, *The Justice and Development Party's Conception of "Conservative Democracy": Invention or Reinterpretation?*, Turkish Studies, vol. 10(4), 2009, pp. 595-612, **Alpan B.**, *From AKP's 'Conservative Democracy' to 'Advanced Democracy': Shifts and Challenges in the Debate on 'Europe'*, South European Society and Politics, vol. 21(1), 2016, pp. 15-28, **Rogenhofer J.M.**, *Antidemocratic Populism in Turkey after the July 2016 Coup Attempt*, Populism, vol. 1(2), 2018, pp 116-145.

<sup>31</sup> **Матюхин В.В.**, *Доминирование Партии справедливости и развития в турецком политическом процессе: идеологический аспект*, Вестник РУДН, серия Политология, 2016, №2, стр. 25-38, **Галкина Е.В.**, **Хасанов Р.Ш.**, *Идеологическое измерение партийно-политического пространства современной Турции*, Вестник ВолГУ, серия История, 2015, №6, стр. 38-46, **Хасанов Р.Ш.**, *Трансформация партийной системы современной Турции*, ПОЛИТЭКС, 2017, №1, стр. 56-69, **Նուրյնի** *Стабильность и изменения в партийной системе Турецкой республики*, Общество: политика, экономика, право, 2017, №8, стр. 31-34.

<sup>32</sup> «*Մաշախունդ*» (թրք.՝ «Sis», 1988 թ., ռեժիսոր՝ Զ. Լիվանելի, <https://www.imdb.com/title/tt0262307/> [հասանելի է՝ 07.03.2019]), «*Գլխաշորիս վրայի ժանյակավոր վարդը*» (թրք.՝ «Çemberimde Gül Oya», 2004-2005 թթ., Չաղան Ըրմաք, <https://www.imdb.com/title/tt0424754/> [հասանելի է՝ 07.03.2019]), «*Հիշի՛ր, սիրելիս*» (թրք.՝ «Hatırla Sevgili», 2006-2008 թթ., ռեժիսորներ՝ Ումմյուլ Բուհրան և Տարուք Թեբեր, <https://www.imdb.com/title/tt0878797/> [հասանելի է՝ 07.03.2019]), «*Ես նրան շատ էի սիրում*» (թրք.՝ «Ben Onu Çok Sevdim»), 2013-2014 թթ., ռեժիսորներ Մեհմեթ Բահադր Էր և Էյլեմ Բոզա, <https://www.imdb.com/title/tt5736118/> [հասանելի է՝ 07.03.2019]):

<sup>33</sup> **Սյրաջյան Տ.**, *Քաղաքական պահպանողականության ձևավորումը Անգլիայում (18-րդ դարի երկրորդ կես – 19-րդ դարի սկիզբ)*, ԻԳ.00.01 ք.գ.թ. ատենախոսություն, ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2015, **Գեղամյան Վ.**, *Սոցիալ-մշակութային դիմադրական թուրքիայում Ի. Ինոնյուլի նախազահություն շրջանում (1938-1950 թթ.)*, Է.00.02 ք.գ.թ. ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2017, **Yigit A.**, *Celal Bayar and Political Leadership, 1937-1960*, PhD Dissertation, Ihsan Doğramacı Bilkent University, Department of Political Science, Ankara, 2013, **Жирнов Н.Ф.**, *Политические идеи консерватизма в наследии Эдмунда Бёрка: преемственность и развитие*, дис. д-ра полит. наук: 23.00.01, Рос. акад. гос. службы при Президенте РФ, Москва, 2009, **Safi İ.**, *Türkiye'de Muhafazakârlığın Düşünsel-Siyasal Temelleri ve Muhafazakâr Demokrat Kimlik Arayışları*, Ankara Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Kamu Yönetimi ve Siyaset Bilimi Anabilim Dalı, Doktora Tezi, Ankara, 2015, **İnan S.**, *Muhalefette Adnan Menderes (1945-1950)*, Doktora tezi, Süleyman Demirel Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü, Isparta, 2002, **Şeyhanlioğlu H.**, *Demokrat parti ve siyasal muhafazakarlık*, Doktora Tezi, Süleyman Demirel Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Kamu Yönetimi Anabilim Dalı, Isparta, 2009.

նշանակությունը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Ատենախոսության **«ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ»**

վերնագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից, որոնցից առաջինում՝ *«Պահպանողականությունն իբրև քաղաքական փիլիսոփայություն. ծագումը և հիմնական առանձնահատկությունները»*, ներկայացված են քաղաքական պահպանողականության ձևավորման պատմական և գաղափարական բնութագրիչները, անդրադարձ է կատարվում պահպանողական մտքի առավել ազդեցիկ ներկայացուցիչների որոշ աշխատություններին: *«Թուրքական պահպանողականության ձևավորման պատմական հիմքերը»* վերնագրով երկրորդ ենթագլուխն անդրադառնում է թուրքական պահպանողականության կայացման վրա օսմանյան ժամանակության ազդեցությանը, հանրապետական շրջանում քեմալականության և պահպանողականության փոխարաբերությունների խնդրին և ներկայացնում հաջորդող տասնամյակների քաղաքական հոլովույթում պահպանողական գաղափարների ներդրման նախադրյալները: *«Պահպանողականության դասական և թուրքական մոդելների առնչակցությունը. նմանություններ և տարբերություններ»* վերնագրով կրող երրորդ ենթագլխում համեմատական քննության են առնվում արևմտյան և թուրքական մոդելի պահպանողականության բնորոշիչ առանձնահատկությունները, բացատրվում է թուրքական պահպանողական մտածողության տարբերակիչ գծերի ընդհանուր տրամաբանությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է **«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ. ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ»**: *«ԺԿ ընդդիմադիր շրջանն և կայացման առանցքին խորապատկերը. Ջելալ Բայար և Ադնան Մենդերես»* վերնագրով առաջին ենթագլխում ներկայացված են ժողովրդավարական

կուսակցության ստեղծման հանգամանքները, անցումը բազմակուսակցական քաղաքական համակարգին և քաղաքական հակադիր ճամբարների փոխհարաբերությունները: Երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է «ժԿ Իշխանության տարիները՝ քաղաքական պահպանողականության հիմնական սկզբունքների դիտանկյունից», Մենդերեսի կառավարության գործունեությունը մեկնաբանվում է քաղաքական պահպանողականության հիմնադրույթների լույսի ներքո: Ենթագլխում առանձնահատուկ տեղ է հատկացված հայ համայնքի հետ թուրքիայի վարչապետի հարաբերություններին: «ժԿ Իշխանության տապալումը. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումը» վերնագրով երրորդ ենթագլուխը ժամանակակիցների կողմից «ամենաճշգրիտ, ամենաարդյունավետ ու ամենաարագ» քաղաքական գործողությունն քննարկված 1960 թ. ռազմական հեղաշրջման նախադրյալների, պատճառների ու հետևանքների ուսումնասիրությունն է:

Ատենախոսության երրորդ գլուխը կրում է «**ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՐՕՐՅԱ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**» վերնագիրը: ԱՉԿ ստեղծման և կայացման պատմական համատեքստը» վերնագրով ենթագլխում քննության են առնվում ներկայիս թուրքիայի իշխող քաղաքական ուժի ստեղծման և դրա գաղափարական առանձնահատկություններին ձևավորման նախադրյալները՝ կուսակցության առաջնորդ Ռ. Թ. Էրդողանի խարիզմատիկ առաջնորդությունը դիտանկյունից: Երկրորդ ենթագլխում, որը կրում է «Պահպանողական ժողովրդավարությունն իբրև ԱՉԿ պաշտոնական գաղափարախոսությունն» վերնագիրը, համակողմանիորեն քննարկվում են «Արդարություն և զարգացում» կուսակցության քաղաքական ինքնությունն հռչակված գաղափարախոսության տիպաբանական յուրահատկությունները՝ թուրքիայում պահպանողական մտքի շարունակականության գաղափարի լույսի ներքո: «Մենդերեսի կերպարը ժամանակակից թուրքիայի հասարակական-քաղաքական

*հոլոփոլյթոլմ»* վերնագրով երրորդ ենթագլխում քննվում են Ա. Մենդերեսի քաղաքական կերպարի միջակայացման փորձերը, ներկայացվում են Ռ. Թ. Էրդողանի հրապարակային ելույթներում Թուրքիայի նախկին վարչապետին արված անդրադարձները, թուրքական հասարակության շրջանում Մենդերեսի վերաբերյալ հավաքական հիշողությունների դրսևորումները, ինչպես նաև վերլուծվում են իբրև պահպանողական գաղափարներ դավանող խարիզմատիկ առաջնորդ՝ Մենդերեսի և Էրդողանի նմանություններն ու տարբերությունները:

Ատենախոսության վերջում ներկայացվում են աշխատանքի հիմնական եզրակացությունները և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկը:





Ժամանակների ֆենոմեն է<sup>36</sup>: Ինչպես քաղաքական փիլիսոփայության մյուս երկու խոշոր ուղղությունների՝ Լիբերալիզմի (ազատականության) և սոցիալիզմի (ընկերվարության), այնպես էլ պահպանողականության արմատները սկիզբ են առնում 17-րդ դարի անգլիական ճգնաժամային իրականությունից, սակայն դրանք բոլորն էլ «բյուրեղանալով տեսական և գործնական որոշակի ավանդույթի են վերածվել միայն Ֆրանսիական հեղափոխության և նից հետո»<sup>37</sup>:

Խոսելով այսպես կոչված «պրոտոպահպանողականների» մասին՝ պետք է առաջին հերթին հիշատակել Դևիդ Հյումին<sup>38</sup>, որին որոշ ուսումնասիրողներ համարում են «Ժամանակակից պահպանողական մտավոր ավանդույթի նախահայրը»<sup>39</sup>: Բացի դրանից, հիմքեր կան պնդելու, որ գերմանական և ուսավորականությանը (գերմ.՝ «Aufklärung») հակադիր սոցիալական շարժումը 1790-ական թթ. իր բնույթով «գիտակցված պահպանողական» էր<sup>40</sup>: Չնայած այս ամենին պահպանողականության եզրը քաղաքական գաղափարախոսության<sup>41</sup> վերաբերմամբ շրջանառության մեջ է դրվել 1818 թ., իսկ լայն տարածում է ստացել միայն

<sup>36</sup> Տե՛ս Գարբուզով **В.Н.**, *Консерватизм: ценности, идеи, политика*, Метаморфозы истории, №1, 1997, стр. 138:

<sup>37</sup> **Gray, J.**, *Liberalism*, Milton Keynes, 1995, p. 78.

<sup>38</sup> Հյումի պահպանողական և ազատական հայացքների ընդհանրական բնութագրի համար տե՛ս **Resnick D.**, *David Hume: A modern conservative*, The European Legacy, vol. 1(1), 1996, pp. 397–402:

<sup>39</sup> **Flew A.**, *David Hume: Philosopher of Moral Science*, Oxford, 1986, p. 173.

<sup>40</sup> **Beiser F.**, *Enlightenment, Revolution and Romanticism: The Genesis of Modern German Political Thought 1790–1800*, Cambridge, 1992, p. 281.

<sup>41</sup> Մասնագիտական գրականության մեջ «գաղափարախոսություն» եզրի սահմանման և դրա ընդգրկման շրջանակի շուրջ մոտեցումները հաշվվում են տասնյակներով: Դևիդ Մըքլելանի բնորոշմամբ՝ այն հասարակական գիտություններում ձևակերպման համար առավել բարդ սահմանումն է (տե՛ս **McLellan D.**, *Ideology*, 2<sup>nd</sup> ed., Buckingham, 1995, p. 3): Մ. Համիլթոնը, օրինակ, բերում է «գաղափարախոսություն» կոնցեպտի սահմանման 27 բաղադրատարր (տե՛ս **Hamilton M.B.**, *The Elements of the Concept of Ideology*, Political Studies, vol. 35(1), 1987, pp. 20–21): Հարցի շուրջ տե՛ս նաև **Mullins W.A.**, *On the Concept of Ideology in Political Science*, The American Political Science Review, vol. 66(2), 1972, pp. 498–510, **Gerring J.**, *Ideology: A Definitional Analysis*, Political Research Quarterly, vol. 50(4), 1997, pp. 957–994 և, հատկապես, **Knight K.**, *Transformations of the Concept of Ideology in the Twentieth Century*, The American Political Science Review, vol. 100(4), 2006, pp. 619–626:

Սույն աշխատանքում եզրը կիրառվում է՝ բնորոշելու «հավատալիքների ընդգրկումը, փոխկապակցված և ամբողջական համակարգը, որը բացատրում է ուժի կիրառումը, դատում պատմական իրադարձությունները, տարբերակում է քաղաքական ճիշտը և սխալը, առաջ քաշում քաղաքականության և մարդկային գործունեության այլ ոլորտների միջև առկա որոշակի (դիպլոմատային և բարոյական) փոխկապակցվածություններ»: Տե՛ս **McClosky H.**, *Consensus and Ideology in American Politics*, The American Political Science Review, vol. 58(2), 1964, p. 362:

տասնամյակներ անց<sup>42</sup>: Այդ իսկ պատճառով պահպանողական մտքի առաջին խոշոր ներկայացուցիչները, ինչպես օրինակ՝ Բըրքը և դը Մեստրը, իրենց պահպանողական չէին համարում: Ավելին, որոշ պահպանողական հեղինակներ պահպանողականությունը նդհանրապես չէին դիտարկում որպես գաղափարախոսություն՝ պնդելով, որ եզրի կիրառումը եվրոպական կամ ամերիկյան վրոպական քաղաքական շարժումների նկարագրության նպատակով լիովին անտեղի է<sup>43</sup>:

Ժամանակակից պահպանողականության բարձրացումն առաջին հերթին կապված է անգլիացի մտածող Էդմունդ Բըրքի անվան հետ<sup>44</sup>: 1790 թ., երբ Ֆրանսիական հեղափոխությունը դեռ անարյուն ու տուպիա էր խոստանում, Բըրքն իր «Մտորումներ Ֆրանսիական հեղափոխության մասին» քաղաքական պամֆլետում առաջ է քաշում այն պնդումը, թե ավանդույթների և արժեքների ժխտումը, որ բերել է հեղափոխությունը, անխուսափելիորեն հանգեցնելու են տեռորի և բռնապետության<sup>45</sup>: Ըստ նրա՝ անցյալի նկատմամբ Ֆրանսիացի հեղափոխականների ռացիոնալիստական մոտեցումները խարխում էին ժամանակի փորձություններն անցած սոցիալական ինստիտուտների հիմքերը՝ առանց դրանք որևէ ավելի լավ տարբերակով փոխարինելու վստահության: Բըրքի պահպանողականությունը վերացական դոկտրին չէ. ըստ էության այն չգրված բրիտանական սահմանադրության պահպանողական բնույթի խոստումն է: Թերևս

---

<sup>42</sup> Ընդունված է համարել, որ «պահպանողականություն» եզրը հասարակական մտքի դիսկուրսում հայտնվել է 1818 թ. Ֆ.-Ռ. դը Շատոբրիանի կողմից «Պահպանողականը» (ֆր.՝ «*Le Conservateur*») քաղաքական հանդեսի հրատարակումից հետո (համարների հասանելի են Ֆրանսիայի ազգային գրադարանի էլ. պաշարներում՝ <https://catalogue.bnf.fr/ark:/12148/cb32747421f> [հասանելի է՝ 07.03.2019]): 1830-1840-ական թթ. տերմինն արդեն բավական տարածում էր գտել Արևմտյան Եվրոպայում: Մասնավորապես, 1830 թ. իր համարներից մեկում բրիտանական «Quarterly Review»-ն առաջին անգամ առաջարկում է Թորինների կուսակցությունն անվանել «Պահպանողական»: Տե՛ս Quarterly Review, vol. 42, 1830, p. 276:

<sup>43</sup> Տե՛ս, օրինակ, **Kirk R.**, *The Conservative Mind: From Burke to Eliot*, pp. 3-7:

<sup>44</sup> Բըրքի պահպանողական հայացքների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս **Kramnick I.**, *The Rage of Edmund Burke, Portrait of an Ambivalent Conservative*, New York, 1977, **Жирнов Н.Ф.**, *Политические идеи консерватизма в наследии Эдмунда Бёрка: преемственность и развитие*, дис. д-ра полит. наук: 23.00.01, Рос. акад. гос. службы при Президенте РФ, Москва, 2009, **Մկրտչյան Տ.**, *Քաղաքական պահպանողականության ձևավորումը Անգլիայում (18-րդ դարի երկրորդ կես - 19-րդ դարի սկիզբ)*, ԻԳ.00.01 ք.գ.թ. ատենախոսություն, 33 ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2015:

<sup>45</sup> Բըրքի էպոխալ աշխատության թերևս առավել հաջող քննական հրատարակությունը տե՛ս **Burke E.**, *Reflections on the Revolution in France: A Critical Edition*, J.C.D. Clark (ed.), Stanford, 2001:

սրանով պետք է բացատրել, որ նա պաշտպանում էր Ամերիկյան հեղափոխությունը (1775-1785 թթ.)՝ համարելով, որ այն հանդես է գալիս իրական անգլիացու ավանդական ազատությունների շահերից<sup>46</sup>:

Բըրքյան գաղափարների ազդեցությունը կրողների թվում էր Ֆրանսիացի փիլիսոփա և դիվանագետ Ժոզեֆ դը Մեստրը, ում ջանքերով գաղափարների շուրջ ձևավորվեց պահպանողականության առավել ծայրահեղական մի դպրոց, որը հայտնի է իբրև Լատինական պահպանողականություն<sup>47</sup>: Եթե Բըրքի պահպանողականությունը էվոլյուցիոն էր, ապա Մեստրինը՝ հակահեղափոխական: Երկու մտածողներն էլ հակադրվում էին Ֆրանսիական հեղափոխության ծայրահեղ նորարարությանը, բայց եթե Բըրքը դրանք մերժում էր իշահավանդական ազատությունների, ապա Մեստրը՝ իշահավանդական իշխանությունների (միապետի և եկեղեցու)<sup>48</sup>: Մեստրի ժառանգությունը նկատելի ազդեցություն է թողել 19-րդ դարի առաջին կեսի իսպանական, իտալական և Ֆրանսիական պահպանողական մտքի վրա<sup>49</sup>, սակայն նրա հիերարխիկ պահպանողականությունն ընդհանուր առմամբ կորցրեց իր արդիականությունը, մինչդեռ Բըրքի առավել ճկուն մոտեցումները հետագայում դարձան արևմտյան մոդելի ժողովրդավարությունների ընդունված աստիճանական, ոչ հեղափոխական փոփոխությունների գաղափարական հիմք<sup>50</sup>:

Պահպանողականության բըրքյան ավանդույթը խորը ազդեցություն է թողել և՛ Ֆրանսախոս, և՛ գերմանախոս դպրոցների ձևավորման վրա: Ֆրանսիայում «Մտորոնմների»

<sup>46</sup> Տե՛ս **Spinner J.**, *Constructing Communities: Edmund Burke on Revolution*, Polity, vol. 23(3), 1991), pp. 395-421:

<sup>47</sup> Տե՛ս **Viereck P.**, *Unadjusted Man in the Age of Overadjustment: Where History and Literature Intersect*, New Brunswick, 2004, p. 36:

<sup>48</sup> Երկու մտածողների հայացքների համեմատության համար մանրամասն տե՛ս **Lebrun R.A.**, *Joseph de Maistre and Edmund Burke: A Comparison* in R.A. Lebrun (ed.), *Joseph de Maistre's Life, Thought, and Influence: Selected Studies*, Montreal and Kingston, 2001, pp. 153-172:

<sup>49</sup> Խոսելով նրա ժառանգության մասին՝ Մեստրի անգլալեզու թերևս ամենահեղինակավոր ուսումնասիրող Ռիչարդ Լեբրենը դիպրուկ նկարագրում է. «Ժոզեֆ դը Մեստրի կարգավիճակն իբրև ժամանակակից քաղաքակրթության ոգուն ռեակցիոն ընդդիմության խորհրդանիշ վերանայման ենթակա է»: Տե՛ս **Նոլյ Նի**, *Joseph de Maistre, Cassandra of Science*, French Historical Studies, vol. 6(2), 1969, p. 219:

<sup>50</sup> Բըրքյան հայացքների հիման վրա ժամանակակից պահպանողականության կայացման վերաբերյալ տե՛ս **Jones E.**, *Edmund Burke and the Invention of Modern Conservatism, 1830-1914: An Intellectual History*, Oxford, 2017:

ազդեցությունը կարելի է նկատել ժամանակի հեղինակների մեծամասնության մոտ՝ ժերմեն դը Ստալից<sup>51</sup> Ալեքսիս դը Տոկվիլ: Չնայած բըրքյան գաղափարների նկատմամբ ֆրանսիական հասարակությունում առկա բացասական վերաբերմունքին<sup>52</sup> Տոկվիլի «Յին ռեժիմը և Յեղափոխությունը» աշխատությունը<sup>53</sup> գրվել է Բըրքի վերլուծության գիտակցական ազդեցությամբ: Ֆրանսիական հեղափոխության վերաբերյալ տոկվիլյան հայացքները զգալի չափով փոխվել են 1853 թ. Շառլ դե Ռեմյուզայի՝ Բըրքին անդրադարձող երկմաս ընդարձակ ուսումնասիրությունն<sup>54</sup> ընթերցելուց հետո<sup>55</sup>: Տոկվիլի, ինչպես և Բըրքի մոտ հանդիպում են տեսակետեր ուրոնք կարելի է դիտարկել և՛ պահպանողականության և՛ ազատականության դիրքերից: Այդ իսկ պատճառով ուրոշ հեղինակներ նրանց համարում են ազատական պահպանողական<sup>56</sup>:

Գերմանիայում Բըրքի «Մտորումները» լույս տեսնելուց հետո 3 տարվա ընթացքում թարգմանվել է 2 անգամ<sup>57</sup> նկատելի ազդեցություն թողնելով ժամանակի այնպիսի պահպանողականների վրա, ինչպիսիք են Ֆրիդրիխ Գենցը, Ավգուստ Վիլհելմ Ռեհբերգը և Էռնստ Բրանդեսը<sup>58</sup>: Ֆրանսիական հեղափոխության նկատմամբ վերջիններիս, և հատկապես՝

<sup>51</sup> Այդ ազդեցությունը կարմիր թելի պես անցնում է հատկապես բարոնուհու «Դիտարկումներ Ֆրանսիական հեղափոխության կարևոր իրադարձությունների շուրջ» աշխատությունում: Տե՛ս **De Staël G.**, *Considerations on the Principal Events of the French Revolution*, A. Crautu (ed.), Indianapolis, 2008:

<sup>52</sup> Ձեռնիկզգը մեջբերում է ժերար ժանժամբրի դիպուկ բնութագրումը, թե «Ֆրանսիացի պատմաբանները՝ Թյերից՝ Լաֆլեր, շատ քիչ հետաքրքրություն են ցուցաբերել Բըրքի նկատմամբ»: Տե՛ս **Jennings J.**, *Edmund Burke, the French Revolution and his French Critics*, M. Fitzpatrick, P. Jones (eds.), *The Reception of Edmund Burke in Europe, London and New York*, 2017, p. 98, n. 26.

<sup>53</sup> Տե՛ս **Tocqueville A. de**, *The Old Regime and the Revolution*:

<sup>54</sup> Տե՛ս **De Rémusat Ch.**, *Burke: Sa vie et ses écrits*, *Revue des Deux Mondes*, vol. 23(1), 1853, pp. 209–261 և 435–490:

<sup>55</sup> **Burke R.**, *What is conservatism? History, ideology and party*, *European Journal of Political Theory*, vol. 17(1), 2018, p. 462.

<sup>56</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Lakoff S.**, *Tocqueville, Burke, and the Origins of Liberal Conservatism*, *The Review of Politics*, vol. 60(3), 1998, pp. 435–464:

<sup>57</sup> Յոզեֆ Շթահելի և Ֆրիդրիխ Գենցի թարգմանությունները տե՛ս համապատասխան արար՝ **Stahel J.**, *Bemerkungen über die französische Revolution und das Betragen einiger Gesellschaften in London bei diesen Ereignissen: Aus dem Englischen nach der vierten Ausgabe übersetzt*, Vienna, 1791 և **Gentz F.**, *Betrachtungen über die französische Revolution nach dem Englischen des Herrn Burke*, Berlin, 1793:

<sup>58</sup> Գերմանական մտածողների վրա Բըրքի ազդեցության մասին մանրամասն տե՛ս **Green J.A.**, *Edmund Burke's German Readers at the End of Enlightenment, 1790-1815*, PhD Dissertation, Trinity Hall, University of Cambridge, Cambridge, 2017, <https://core.ac.uk/download/pdf/153444492.pdf> [հասանելի է՝ 07.03.2019]:

գերմանական բարեփոխական պահպանողականության հիմնադիր Ռեհբերգի քննադատությանը լիովին նմանվում է Բըրքի տեսակետին<sup>59</sup>:

Մայրցամաքային եվրոպայի պահպանողականները Բըրքյան գաղափարներից զատ նկատելի ազդեցություն են կրել թոմիզմի և հեգելականության ավանդույթներից, ինչի հետևանքով եվրոպական պահպանողականությանը ռացիոնալ կամ համակարգված է: Այս համատեքստում անգլիացի քաղաքական փիլիսոփա Ջոն Գրեյը գրում է. *«պահպանողականները երբեմն անուշադրության էին մատնում քաղաքական կյանքի վրա տեսական գաղափարների անդրադարձը՝ ակնարկելով, որ քաղաքական գիտելիքը... ճիշտ կլինի թողնել առանց շրջանառության և ռացիոնալ համակարգման: [19-րդ և 20-րդ, — Ա.Գ.] դարերն այնուհանդերձ հազեցած են պահպանողական մտքով... որը նույնքան համակարգված և կիրարկվող է, որքան ազատական ավանդույթը»*<sup>60</sup>:

Չնայած սրան՝ Գրեյը նույն շարքին է դասում բրիտանացիներ Բըրքին և Մայքլ Օուքշոթին, գերմանացիներ Յեգելին և Ֆրիդրիխ Սալինյիին, ֆրանսիացի դը Մեստրին և իսպանացի-ամերիկացի Ջորջ Սանտայանային՝ նշելով, որ այս բոլորը կիսում են *«ազատական ռացիոնալ իզմի ավելցուկի դեմ հակազդեցության ոգին»*<sup>61</sup>:

Բրիտանական<sup>62</sup> և մայրցամաքային եվրոպական ուղղությունների կողքին կայանում է նաև ամերիկյան պահպանողականությանը: Թեև, պայմանավորված ԱՄՆ հիմքում ընկած սահմանադրական հանրապետականության սկզբունքներով, ամերիկյան աջակողմյան միտքը գերազանցապես նեոպահպանողական և ազատական է՝ ձևավորված *«եվրոպական պահպանողականության հետ համեմատելի որևէ*

<sup>59</sup> Որոշ ուսումնասիրողներ, մասնավորապես՝ Ֆրեդերիկ Բայգերը, այնուհանդերձ պնդում են, որ վերջիններս նման եզրակացության են հանգել Բըրքից անկախ (Beiser F., *Enlightenment, Revolution and Romanticism*): Տե՛ս նաև Schwarzmantel J.J., *The Age of Ideology: Political Ideologies from the American Revolution to Postmodern Times*, New York, 1998, pp. 122-123:

<sup>60</sup> Gray J., *Liberalism*, pp. 78-79.

<sup>61</sup> Նույն տեղում:

<sup>62</sup> Բըրքից հետո բրիտանական պահպանողական մտքի զարգացման մասին մանրամասն տե՛ս Eccleshall R., *English conservatism as ideology*, Political Studies, vol. 25(1), 1977, pp. 62-83:

բանի գործնական բացակայ ու թյամբ»<sup>63</sup>: ԱՄՆ հիմնադիր հայրերից Ջեյմս Մեդիսոնը հաճախ համարվում է առաջին ամերիկացի պահպանողականը<sup>64</sup>: Նույն շարքին կարելի է դասել Ալեքսանդր Յամիլթոնին, Ջոն Ադամսին, Դենիել Ուեբսթերին և Ջոն Քալհունին<sup>65</sup>: Ընդհանուր առմամբ, կարելի է համաձայնել, որ Բըրքյան դասական պահպանողականությանն ԱՄՆ-ում չի տվել<sup>66</sup> Օուքշոթի կամ Սեմյուել Քոլրիջի մասշտաբի մտածողներ<sup>67</sup>: Ավելին, չնայած Ռասել Քըրքի, Դանիել Բելի և Ռոբերտ Նիսբեթի նման հեղինակների առկայությանը, Ալան Բրինքլիի ձևակերպմամբ, 20-րդ դարի վերջին արդեն դասական պահպանողականությանն ամերիկյան մասնագիտական գրականության մեջ «որքի» կարգավիճակում էր<sup>68</sup>: Փոխարենը դեռ 20-րդ դարի առաջին կեսին ամերիկյան մտածող Լեո Շտրաուսի կողմից դրվում են «նոր պահպանողականության (նեոկոնսերվատիզմի) ուսումնասիրման հիմքերը»<sup>69</sup>: Նատարան չատում է իրեն Բըրքից և այլ ազդեցիկ պահպանողականներից, որոնք հենվում էին միայն պատմության և ավանդույթի վրա՝ անտեսելով բնական իրավունքի «համընդհանուր կամ վերացական սկզբունքները»<sup>70</sup>: Նոր պահպանողականության «կնքահայր» Իրվինգ Բրիսթոլը լավագույնս է բացատրում դրատարբերությունը դասական պահպանողականության հից. «Նոր պահպանողականներն այսօրվա Ամերիկայում իրենց ավելի շատ են տանը զգում, քան ավանդական պահպանողականները... որովհետև այն հոլսադրող է, ոչ

<sup>63</sup> Gray J., *Gray's Anatomy: Selected Writings*, London, 2010, p. 166.

<sup>64</sup> Տե՛ս Hamilton A., *Conservatism*, Stanford Encyclopedia of Philosophy (Fall 2016 Edition), E.N. Zalta (ed.), <https://plato.stanford.edu/archives/fall2016/entries/conservatism/> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>65</sup> Տե՛ս Cain E., *They'd rather be right: youth and the conservative movement*, New York, 1963, p. 17:

<sup>66</sup> Բըրքի ամերիկյան ազդեցության մասին մանրամասն տե՛ս Deane S., *Burke in the United States* in D. Dwan, Ch.J. Insole (eds.), *The Cambridge Companion to Edmund Burke*, Cambridge, 2012, pp. 221-234:

<sup>67</sup> Ամերիկյան պահպանողականության վերաբերյալ առկա գրականության ընդհանուր բնութագրի համար տե՛ս Phillips-Fein K., *Conservatism: A State of the Field*, vol. 98(3), 2011, pp. 723-743:

<sup>68</sup> Brinkley A., *The Problem of American Conservatism*, *American Historical Review*, vol. 99(2), 1994, p. 409.

<sup>69</sup> Murray D., *Neoconservatism: Why We Need It*, New York, 2006, p. 38.

<sup>70</sup> Strauss L., *Natural Right and History*, 7<sup>th</sup> ed., Chicago, 1970, pp. 13-14.

հոլսալքող, միտված է ապագային, ոչ անցյալին և դրա ընդհանուր տոնը դրական է, ոչ վհատեցնող»<sup>71</sup>:

Սեմյոն Ել Յանթինգթոնն իր «Պահպանողականության ներքին գաղափարախոսության» տեսական մեծ արժեք ներկայացնող հոդվածում, ձգտելով գտնել «կոնսերվատիզմ» եզրի համընդունելի սահմանում, առանձնացնում է բըրքյան դասական պահպանողականության հետևյալ հիմնական դրույթները<sup>72</sup>.

1. Մարդը կրոնական արարած է, և կրոնն է քաղաքացիական հասարակության հիմքը: Սրբազան հաստատումն ապահովում է օրինական և կայուն հասարակական կարգը:

Սկսած նախատիպային պահպանողական Բըրքից մինչև մեր օրերի հեղինակները (ինչպես օրինակ՝ Ալասդեր Մաքինթայը և կամ Ռոբերտ Ջորջ) հասարակական կարգն ավանդաբար կապել են հենց կրոնի հետ<sup>73</sup>:

2. Հասարակությանը դանդաղ պատմական աճի բնական և օրգանական արդյունքն է: Գոյության ունեցող հաստատության ներքին ամփոփում են նախորդ սերունդների իմաստությանը: Իրավունքը ժամանակի գործառույթն է:

Պահպանողականները պնդում են, որ դրական և հարակայուն իրավունքը կարող է ծագել միայն ավանդույթից և սովորության ներքին: Ուստի տեղական և ազգային ավելի արժեքավոր է քան վերագալիսն ու համընդհանուրը<sup>74</sup>:

3. Մարդը բնազդներով, զգացմունքներով և բանականությամբ օժտված արարած է: Երջահայացությանը, նախապաշարմունքը, փորձը և սովորությանն ավելի լավ խորհրդատուներ են քան դատողությանը,

<sup>71</sup> **Kristol I.**, *The Right Stuff*, in I. Kristol, *The Neoconservative Persuasion*, New York, 2011, pp. 191-192. Ժամանակակից ամերիկյան նոր պահպանողականության վերաբերյալ մանրամասն տե՛ս **Safrastyan R.**, *Modern conservatism as a world perception and political movement: the case of American neocons and paleocons*, Իմաստությանը, հ. 2(11), 2014, էջ 97-103, **ՆՈՒՂ ՆԻ**, *Պահպանողականությանն ԱՄՆ-ում*, Մ. Մարգարյան, Ռ. Սաֆրաստյան, Մ. Լալայան, Պահպանողական հոսանքներ և գաղափարներ, Երևան, 2010, էջ 21-41:

<sup>72</sup> Տե՛ս **Huntington S.P.**, *Conservatism as an Ideology*, *The American Political Science Review*, vol. 51(2), 1957, pp. 454-473 (հատկապես՝ 456):

<sup>73</sup> Ելվածի համատեքստում տե՛ս **Harris I.**, *Burke and Religion* in D. Dwan, Ch.J. Insole (eds.), *The Cambridge Companion to Edmund Burke*, Cambridge, 2012, pp. 92-103, **MacIntyre A.**, *After Virtue: A Study in Moral Theory*, 3<sup>rd</sup> ed., London, 2013 և **George R.P.**, *Moral Particularism, Thomism, and Traditions*, *The Review of Metaphysics*, vol. 42(3), 1989, pp. 593-605:

<sup>74</sup> **Andreasson S.**, *Conservatism*, V. Geoghegan, R. Wilford (eds.), *Political Ideologies: An Introduction*, 4<sup>th</sup> ed., London, 2014, p. 65.



տրամաբանությանը, վերացարկու մեները և  
բնագանցությանը (մետաֆիզիկան): Ճշմարտությանը  
համընդհանուր մասշտաբներում գոյությանը չունի, այլ  
առկա է միայն առանձին վերցրած փորձառությանը ներքին:

Մարդկային անկատար էությանը պահպանողականներին հետ  
է պահում անիրատեսական և լավատեսական  
ենթադրությանը ներքին: Սխալ ականության պահպանողական այդ  
գիծն առավել ցայտուն արտահայտվում է օրինակ Ջորջ  
Սանտայանայի մոտ<sup>75</sup>:

4. *Համայնքը գերակայում է անհատի նկատմամբ: Մարդկանց  
իրավունքները բխում են նրանց պարտականությանը ներքին:  
Չարի արմատները մարդկային բնության, այլ ոչ թե որևէ  
առանձին վերցրած հասարակական հաստատության մեջ են:*

Պահպանողականները համարում են, որ յուրաքանչյուր  
հասարակության, յուրաքանչյուր ռեժիմ և յուրաքանչյուր  
իրավիճակ պետք է գնահատվի ըստ պատմական համատեքստի:  
Սոցիալական գնահատականները չեն կարող հարմարեցվել  
համընդունելի իդեալներին<sup>76</sup>:

5. *Մարդիկ հավասար են միայն բացարձակ բարոյական  
իմաստով: Հասարակական կազմակերպումը բարդ գործընթաց է  
և միշտ ընդգրկում է զանազան դասեր, շարքեր և խմբեր:  
Տարբերակումը, աստիճանակարգությունն ու  
առաջնորդությանը ցանկացած քաղաքացիական  
հասարակության անխուսափելի բնութագրիչներն են:*

Պահպանողականությանը, ըստ էության, ընդունում է  
գերմանացի սոցիոլոգ Ռոբերտ Միխելսի՝ օլիգարխիայի «ոսկե  
օրենքը»<sup>77</sup> իբրև սոցիալական կազմակերպման անխուսափելի  
հետևանք:

<sup>75</sup> **Kekes J.**, *What is Conservatism?*, Philosophy, vol. 72(281), 1997, p. 369. Սանտայանայի  
աշխատանքներից տե՛ս հատկապես՝ **Santayana J.**, *Dominations and Powers: Reflections on  
Liberty, Society, and Government*, New York, 2017:

<sup>76</sup> **Andreasson S.**, *Conservatism*, p. 65.

<sup>77</sup> Միխելսը համարում էր, որ հասարակական կազմակերպման ցանկացած ձև՝  
անկախ իր առաջնային ժողովրդավարական կամ անձնիշխանական բնույթից,  
անխուսափելիորեն վերածվում է փոքրաքանակ ընտրյալների իշխանության՝  
օլիգարխիայի: Մանրամասն տե՛ս **May J.D.**, *Democracy, Organization, Michels*, *The American  
Political Science Review*, vol. 59(2), 1965, pp. 417-429:

6. Կանխավարկածն այն է, որ ցանկացած առկա կառավարման սխեմա նախընտրելի է չփորձված նախազօհգ: Մարդու հոլյսերը մեծ են, իսկ տեսլականը՝ սահմանափակ: Առկա խնդիրները շտկելու փորձերը սովորաբար ավարտվում են ավելի մեծ խնդիրների առաջացմամբ:

Պահպանողականները կարծում են, որ անհրաժեշտ է ամեն կերպ խուսափել ռիսկից, երբ խոսքը վերաբերում է սոցիալական գործողության որևէ դրսևորման կամ առկա ռեժիմի բարեփոխման որևէ առաջարկի<sup>78</sup>:

Փորձելով ընդհանրացնել վերոշարադրյալը՝ կարելի է նշել, որ պահպանողականությունը, Յանս Մյուլլենֆելդի արտահայտությամբ, «բաղաբաղականությունն է առանց իդեալների»<sup>79</sup>: Այն չի տալիս հիմնարար հարցեր, ուստի չի տալիս նաև սպառիչ պատասխաններ, այն լուրջ հիշեցնում է սոցիալական կարգի հիմնարար նախադրյալների մասին<sup>80</sup>: Ինչպես արդարացիորեն արձանագրում է Ռոջեր Սքրուլթոնը՝ «պահպանողականությունը հազվադեպ է բարձրաձայնում իր սկզբունքների, բանաձևերի և նպատակների մասին: Դրա էությունն անհողաբաշխ է, իսկ արտահայտության մեջ, երբ ստիպված է արտահայտվել՝ կասկածամիտ: Բայց այն ունակ է արտահայտվել և ճգնաժամի ժամանակ... լավագույնս է գործում»<sup>81</sup>: Եվ իրոք, պահպանողական գաղափարախոսների ձայնն առավել ազդու է հնչում, երբ տեղի են ունենում ստատուս քվոյի հիմնարար փոփոխություններ: Նման օրինակներ են և՛ Բըրքի վերոհիշյալ «Մտորումներ», և՛ Յանթինգթոնի «Բաղաբաղական կարգը փոփոխվող հասարակություններում», և՛ անգամ նույն Սքրուլթոնի «Անգլիա. էլեգիա» աշխատությունները<sup>82</sup>:

Այն հանգամանքը, որ պահպանողականությունն իբրև բաղաբաղական գաղափարախոսությունն ինքնին «թույլ է սեփական

<sup>78</sup> Տե՛ս **Wilson F.G.**, *A Theory of Conservatism*, American Political Science Review, vol. 35(1), 1941, p. 42:

<sup>79</sup> Գերմ.՝ «Politik ohne Wunschbilder»: Տե՛ս **Mühlenfeld H.**, *Politik ohne Wunschbilder*, München, 1952:

<sup>80</sup> Տե՛ս **Huntington S.P.**, *Conservatism as an Ideology*, p. 473:

<sup>81</sup> **Scruton R.**, *The Meaning of Conservatism*, 3<sup>rd</sup> ed., Basingstoke, 2001, p. 1.

<sup>82</sup> Տե՛ս **Huntington S.P.**, *Political Order in Changing Societies*, New Haven and London, 2006 և **Scruton R.**, *England: An Elegy*, London and New York, 2006:

նպատակը պարզաբանել իս»<sup>83</sup>, բարդացնում է անգամ այն բնորոշող հստակ սահմանման ձևակերպումը<sup>84</sup>: Այդ համատեքստում ամերիկացի քաղաքագետ Ռասել Քըրքը բերում է հետևյալ 10 պնդումները, որոնք արտահայտում են պահպանողական հայացքների սկզբունքային ամբողջությունը<sup>85</sup>.

1. Պահպանողականը հավատում է, որ գոյություն ունի կայուն բարոյական կարգ: Այդ կարգը ստեղծված է մարդու համար, և մարդը ստեղծված է դրա համար. մարդկային բնությունն անփոփոխ է և բարոյական ճշմարտությունները մշտական են:
2. Պահպանողականը հետևում է սովորույթներին, պայմանականություններին և շարունակականություններին:
3. Պահպանողականները հավատում են նախասահմանման սկզբունքին:
4. Պահպանողականներն առաջնորդվում են շրջահայացության սկզբունքով:
5. Պահպանողականներն ուշադրություն են դարձնում բազմազանության սկզբունքին:
6. Պահպանողականները ողջախոհություն են ցուցաբերում՝ հաշվի առնելով սեփական անկատարությունը:
7. Պահպանողականները հավատացած են, որ ազատությունն ու սեփականությունը սերտորեն փոխկապակցված են:
8. Պահպանողականները խրախուսում են կամավոր համակցությունը նույնքան, որքանով հակադրվում են հարկադիր համայնավարությունը:

<sup>83</sup> Wilson F.G., *A Theory of Conservatism*, p. 40.

<sup>84</sup> Ավանդականության, կասկածամտության և օրգանականության փաստարկների կիրառմամբ ծայրահեղականությունները մերժող քաղաքական պահպանողականության հստակ սահմանում դուրս բերելու փորձերի մասին մանրամասն տե՛ս Kendal W., Carey G.W., *Towards a Definition of "Conservatism"*, *The Journal of Politics*, vol. 26(2), 1964, pp. 406-422:

<sup>85</sup> Քըրքի 10 սկզբունքները շարադրված են նրա «Շրջահայացության քաղաքականությունը» աշխատությունում: Տե՛ս Kirk R., *the Politics of Prudence*, Chicago, 1993: Ավելի ուշ դրանք հեղինակի կողմից առանձնացվել են և առանձին էսսեի տեսքով հասանելի են Մշակույթային արդիականացման Ռասել Քըրքի կենտրոնի կայքում՝ <https://kirkcenter.org/conservatism/ten-conservative-principles/> [հասանելի է՝ 07.03.2019]:

9. Պահպանողականը գիտակցում է իշխանության և մարդկային կրքերի նկատմամբ ողջամիտ սահմանափակումների անհրաժեշտությունը:

10. Պահպանողականը հասկանում է, որ առողջ հասարակության մեջ մշտականությունն ու փոփոխականությունը պետք է ճանաչվեն և հաշտեցվեն:

Սկսած Բըրքի ժամանակից՝ ծայրահեղական մտքի առնվազն 5 խոշոր դպրոց է հասարակական ընկալման համար մրցակցել պահպանողականության հետ, այդ թվում՝ փիլիսոփայական ռացիոնալիզմը, Ռուսոյի և գաղափարակիցների ռոմանտիկ ազատագրումը (էմանսիպացիան), բենթամականների օգտապաշտությունը (ուտիլիտարիզմը), Կոնտի պրոգրեսիվիզմը և Մարքսի հավաքական մատերիալիզմը<sup>86</sup>: Միաժամանակ, ազատականության և պահպանողականության հակադրությունն ու բանավեճը շարունակում է մնալ համաշխարհային քաղաքականության առավել առանցքային գաղափարական խզումը<sup>87</sup>: Ծագելով անգլոսաքսոնական քաղաքագիտական հոլոպոլոյթից՝ այն այժմ հանդիպում է գրեթե ամենուր՝ հաճախ ստանալով դասական մեկնաբանությունից բավական տարբերվող դրսևորումներ: Նման տեղայնացման օրինակներից է ժամանակից Թուրքիան, որտեղ փոփոխությունների մասին պահպանողականությունը ընկալում էր բեմն տրամագծորեն տարբերվում են Բըրքի կամ Օուքշոթի՝ դասական դարձած եզրահանգումներից<sup>88</sup>:

## 1.2. Թուրքական պահպանողականության ձևավորման պատմական հիմքերը

<sup>86</sup> Տե՛ս Kirk R., *The Conservative Mind: From Burke to Eliot*, p. 9:

<sup>87</sup> Տե՛ս Cohen N., *The Reconstruction of American Liberalism, 1865-1914*, Chapel Hill and London, 2002 p. 8:

<sup>88</sup> Տե՛ս Ötsel D., *The conservative minimum: historical and transcendent subject* in M. Johnson, M. Garnett, D.M. Walker (eds.), *Conservatism and Ideology*, London and New York, 2016, pp. 24-25:

Թեև Օսմանյան կայսրությունում անցյալ ապաշտություն դրսևորումների կարելի էր հանդիպել դեռ 17-րդ դարից<sup>89</sup>, պահպանողականության բարձրացումը օսմանյան հասարակության մեջ կապվում է հետագայում արդիականության խորհրդանիշ դարձած Սելիմ III-ի գահ բարձրանալու հետ<sup>90</sup>: Թանգիմաթյան բարեփոխումներին հաջորդող շրջանում սատիճանաբար շրջանառության դրված հասկացությունները՝ «թյունըթականություն», «օսմանականություն», «իսլամականություն», հաճախ հակադրվում էին «արևմտականացման» գաղափարին<sup>91</sup>:

Անգամ Օսմանյան լիբերալիզմի առաջամարտիկ համարվող արքայազն Սաբահադդինը և նրա կողմից 1902 թ. հիմնված «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերության» (թրք.՝ «Teşebbüs-ü Şahsî ve Adem-i Merkeziyet Cemiyeti») անդամները կրում էին ֆրանսիական պահպանողականության (հատկապես՝ ֆրեդերիկ Լե Պլեի) նկատելի ազդեցությունը<sup>92</sup>:

Պահպանողականության դրույթներ կարելի է տեսել երիտթուրքական երկու խոշոր գաղափարախոսների՝ Յուսուֆ Աքչուրայի և Չիյա Գյոքալփի՝ գարգացման մեկ գաղափարախոսությունը նտրելու շուրջ մտորումներում<sup>93</sup>: Այս

<sup>89</sup> Կայսրության լճացման շրջանի թերևս ամենաակնառու ապացույցը այբանացի կրոնափոխ Քոչիբեյի երկու ուղերձներն են՝ ուղղված օսմանյան գահակալներ Սուրադ IV-ին (1631 թ.) և Իբրահիմին (1640 թ.): Այդ տեքստերում ներկայացված են կայսրության թուլացման պատճառներն ու ճգնաժամից դուրս գալու հնարավոր ուղիները: Արևմտյան հեղինակները երբեմն Քոչիբեյին անվանում են «օսմանյան Մոնտեսքյո»: Նրա մասին մանրամասն տե՛ս **Gökçe A.F.**, *Osmanlı Klasik Döneminde İdari Reform Hareketleri: Koçi Bey Risalesi*, Yasama Dergisi, sayı 14(1), 2010, ss. 59-78:

<sup>90</sup> Տե՛ս **Erdogan M.**, *Türkiye’de Anayasalar ve Siyaset*, Ankara, 2001, s. 1:

<sup>91</sup> Հայտնի թուրք գրող Ահմեթ Համդի Թանփընարը գրում է. «Թանգիմաթի դարաշրջանի առաջին գաղափարախոսությունը մշակութականությունն է... Կայսրությունում 19-րդ դարի ընթացքում ասպարեզ բերված՝ օսմանականության, իսլամականության և թյունըթականության նման բոլոր գաղափարական հոսքերի հիմքում սատ ընկած»: Տե՛ս **Tanpınar A.H.**, *XIX. Asır Türk Edebiyatı Tarihi*, İstanbul, 2006, s. 147: Բազմամշակութային հասարակություններում ծայրահեղական մշակութականությունը սովորաբար բերում է ծայրահեղական պահպանողականության կամ, ինչպես գերմանացի փիլիսոփա Վալտեր Բենյամինն է բնորոշում, «քաղաքականության գեղազիտականացման», երբ ազատության և արդարության բանական գաղափարները զոհաբերվում են նպատակի «գեղեցկությանը»: Տե՛ս **Dahl G.**, *Radical Conservatism and the Future of Politics*, London, 1999, pp. 70-71:

<sup>92</sup> Տե՛ս **Zürcher E.J.**, *The Unionist Factor. The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement*, Leiden, 1984, p. 41:

<sup>93</sup> Տե՛ս, օրինակ, **Akçura Y.**, *Üç Tarz-ı Siyaset*, E.Z. Karal (Haz.), Ankara, 1976, s. 19 և **Gökalp Z.**, *Hars ve Medeniyet*, Ankara, 1972, s. 21:

համատեքստում, Գյոքալփը գրում է. «Ազգի մշակույթը հիմնական է, քաղաքակրթությունը ձեռքբերովի... Մենք օսմանյան քաղաքակրթության հարցում հեղափոխական ենք, թուրքական մշակույթի հարցում՝ պահպանողական... Թուրքական հեղափոխականությունը քաղաքակրթության հարցում պահպանողականությունն ամենևին չի ընդունում: Թուրքականությունը միայն մշակույթի հարցում է պահպանողական»<sup>94</sup>: Ինչպես նկատում է պրոֆեսոր Ա. Սաֆարյանը, «Թուրքագիտության հիմունքներ» աշխատությունում Գյոքալփը բացեիբաց շեշտում է, որ նույն երկրում գոյություն ունեցող երկու մոդելներից մեկը՝ օսմանյանն իր համար լիովին գարշելի-անվայել ու չ-տգեղ էր, իսկ թուրքականը՝ լիովին գեղեցիկ<sup>95</sup>:

Այնուհանդերձ, քաղաքական և փիլիսոփայական պահպանողականությունն Օսմանյան Կայսրությունում և Թուրքիայում մինչև 20-րդ դարի կեսն այդպես էլ չի դառնում առանցքային գաղափարական ուղղություն<sup>96</sup>: Դրա աստիճանական վերելքը հնարավոր է դառնում միայն քեմալական շարժման հաղթանակից հետո:

Թուրքիայի Զանրապետության հռչակումից հետո քեմալական վերնախավի նախաձեռնած՝ ավանդական օսմանյան սոցիալական, տնտեսական և քաղաքական համակարգերի արևմտականացման գաղափարախոսական արշավը հիմնված էր աշխարհիկության, ազգայնականության, եվրոպական պրոգրեսիվիզմի տեղային դրսևորումների և 19-րդ դարի գիտականության առանձին սկզբունքների վրա<sup>97</sup>: Պետական աստեղծման և ազգաստեղծման այդ

<sup>94</sup> Մեջբերումը՝ ըստ **Gökmen Ö.**, *Tek Parti Dönemi Cumhuriyet Halk Partisi'nde Muhafazakâr Yönelimler*, A. Çiğdem (ed.) *Modern Türkiye'de Siyasî Düşünce*, cilt 5 – Muhafazakârlık, İstanbul, 2003, s. 140: Զեղափոխականություն և պահպանողականություն փոխարարություն շուրջ Գյոքալփյան մոտեցումների համար տե՛ս **Gökalp Z.**, *İnkılapçılık ve Muhafazakârlık*, Yeni Gün, 16.05. 1339/1923:

<sup>95</sup> Տե՛ս **Սաֆարյան Ա.**, *Չիյա Գյոքալփը և «Թուրքականությունը հիմունքները»*, Երևան, 2012, էջ 51:

<sup>96</sup> Տե՛ս **Safi İ.**, *Türkiye'de Muhafazakârlığın Düşünsel-Siyasal Temelleri ve Muhafazakâr Demokrat Kimlik Arayışları*, Ankara Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Kamu Yönetimi ve Siyaset Bilimi Anabilim Dalı, Doktora Tezi, Ankara, 2015, s. 71:

<sup>97</sup> Տե՛ս **Kazancıgil A.**, *The Ottoman Turkish State and Kemalism*, in A. Kazancıgil, E. Özbudun (eds.) *Atatürk: Founder of a Modern Turkey*, London, 1981, p. 37:

գաղափարախոսությունը, որ Յակուբ Քադրի Քարասմանօղլունի<sup>98</sup> առաջ քաշած ձևակերպմամբ կոչվեց քեմալականություն<sup>99</sup>, իր կենսագործման մեջ 20-րդ դարում երրորդ աշխարհի երկրների արդիականացման առավել արդյունավետ օրինակն է<sup>100</sup>: Թեև այդ բարեփոխումներն ավանդաբար մեկնաբանվում են իբրև աշխարհիկ մոդեռնիստների և իսլամական հետադիմականների միջև «զրո գումարով խաղ» («zero-sum game»)<sup>101</sup>, պետք է նշել, որ քեմալականների շարքերը միասեռ չէին և բաղկացած էին մի շարք խմբերից, որոնք նորաստեղծ հանրապետության քաղաքական կյանքը մեկնաբանում էին գաղափարախոսական տարբերելակետերից: Քեմալական մտավորականության ընտրանում մի շարք ներկայացուցիչների, որոնց թվում էին, մասնավորապես, Իսմայիլ Յաքքը Բալթաջըօղլուն<sup>102</sup>, Փեյամի Սաֆան<sup>103</sup>, Յիլմի

<sup>98</sup> Չայտնի գրող և հրապարակախոս Յ. Ք. Քարասմանօղլուն (1889-1974 թթ.) քեմալական գաղափարների և գաղափարախոսության ջերմ պաշտպան էր: Մինչև 1934 թ.՝ ԹԱՄԺ պատգամավոր: 1934-1955 թթ.՝ Թուրքիայի Յանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալբանիայում, Չեխոսլովակիայում, Ծվեյցարիայում և Իրանում: Նաև նրա ջանքերով հիմնադրված «Քադրո» ամսագիրը նպատակ ուներ աջակցել քեմալական հեղափոխության գաղափարների տարածմանը, մասնավորապես՝ լուսաբանել Էտաթիզմի կարևորությունն ու նշանակությունը երկրի հետագա կայացման համար: Քարասմանօղլունի կյանքի և ստեղծագործության մասին մանրամասն տե՛ս **Սահակյան Լ., Դավթյան Ա., Յաքուբ Քադրի Քարասմանօղլուն. գրական դիմանկարի փորձ**, Կանթեղ, № 1, 2010, էջ 41-50:

<sup>99</sup> Քարասմանօղլուն եզրն առաջին անգամ կիրառել է 1929 թ. հունիսի 29-ին «Միլլիյեթ» պարբերականում տպագրված իր հոդվածում: Տե՛ս **Gencer B., Ahmet Cevdet'in Çağdaş Türk Muhafazakâr Düşüncesine Etkisi**, Muhafazakâr Düşünce, sayı 39, 2014, s. 26: Այդ սահմանման հիմքում դրված պատկերացումներն ավելի ուշ պիտի ձևակերպվեին ու տեղ գտնեին Թուրքիայի 1937 թ. Սահմանադրության 2-րդ հոդվածում՝ իբրև երկրի զարգացման հիմնական 6 սկզբունքներ՝ հանրապետականություն, ժողովրդականություն, ազգայնականություն, աշխարհիկություն, Էտաթիզմ, հեղափոխականություն: Վերջինների մասին մանրամասն տե՛ս **Սաֆրասոյան Ռ.** (պատ. խմբ.), **Թուրքիայի Յանրապետության պատմություն**, Երևան, 2014, էջ 73-75:

<sup>100</sup> Տե՛ս **Huntington S.P.**, Political Order in Changing Societies, p. 348:

<sup>101</sup> Տե՛ս **Waxman D.**, *Islam and Turkish National Identity: A Reappraisal*, Turkish Yearbook of International Relations, sayı 30, 2000, pp. 4-5:

<sup>102</sup> Իսմայիլ Յաքքը Բալթաջըօղլուն (1886-1978 թթ.) ավարտել է օսմանյան Դար ուլլ-Ֆյունունը՝ հետագայում իբրև մանկավարժ վերապատրաստվելով եվրոպական մայրաքաղաքներում: Երիտասարդ տարիքում անդամակցել է երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը: 1930 թ. միացել է մի քանի ամիս գոյություն ունեցած ընդդիմադիր Ազատական հանրապետական կուսակցությանը: Միաժամանակ, շարունակել է լինել քեմալական վերնախավի մերձավորներից մեկը. եղել է ԹԱՄԺ 7-րդ և 8-րդ գումարման պատգամավոր, կրոնական բարեփոխումների հարցերով Աթաթյունը 1923-1925 թթ. եղել է Ստամբուլի համալսարանի առաջին ռեկտորը: Նրա մասին մանրամասն տե՛ս **Güngör M.**, *Çağının Önünde Koşan Bir Aydın: İsmayıl Hakkı Baltacıoğlu*, Mersin Üniversitesi Eğitim Fakültesi Dergisi, sayı 4(1), 2008, ss. 54-64:

<sup>103</sup> Փեյամի Սաֆան (1899-1961 թթ.) թուրք հասարակության շրջանում հայտնի է այդ թվում նաև նշանավոր կոմունիստ բանաստեղծ Նազըմ Յիքմեթի հետ 1930-ական թթ. կեսերին ունեցած հրապարակախոսական բանավեճերով: Սուլյն

Չիյա Ուլլքենը<sup>104</sup> և Մուսթաֆա Շեքիփ Թունչը<sup>105</sup>, կարելի է համարել թուրքիայում հանրապետական պահպանողական ության սաղմնավորողը<sup>106</sup>: Ունենալով պահպանողական քաղաքական հայացքներ՝ այս գործիչները պահպանում էին նաև մոդեռնիստական կենսափիլիսոփայությունը՝ թուրքական հասարակության արդիականացման ուղղվածության հարցում աստիճանաբար հակվելով դեպի արևմտյան ոչ պոզիտիվիստական հոսքեր, ինչպես օրինակ՝ Ֆրանսիական սպիրիտուալիզմ (Էմիլ Բուտրոու և Ֆելիքս Ռավեսսոն-Մոլյեն), ամերիկյան պրագմատիզմ (Ուիլյամ Ջեյմս և Ջոն Դյուի) և, գլխավորապես, բերգսոնիզմ<sup>107</sup>: Խոսելով վերջինի մասին՝ հարկ է նշել, որ Մուսթաֆա Քեմալի

---

աշխատանքի տեսակից ուշագրավ են նրա «Յիվանդասենյակ իններորդ վիրաբուժականում» (թրք.՝ «Dokuzuncu Hariciye Koğuşu»), «Մի տարակուսանքի վեպ» (թրք.՝ «Bir Tereddüdün Romanı»), «Ֆաթիհ-Հարբիյե» (թրք.՝ «Fatih-Harbiye») վեպերը, որոնցում հստակ երևում է արևելք-արևմուտք երկատման նկատմամբ հեղինակի պահպանողական դիրքորոշումը: Սաֆան 1950 թ. քեմալական Յանրապետական ժողովրդական կուսակցության (ՅԺԿ) ցուցակով առաջադրվել է ԹԱՄԺ պատգամավորության թեկնածու, սակայն կուսակցության հետմիասին պարտություն է կրել Ջելալ Բայարի և Ադնան Մենդերեսի ժողովրդավարական կուսակցության նից (ԺԿ): 1950-ականներին անձամբ ծանոթացել է Մենդերեսի հետ՝ վերջինիս վրա թողնելով գաղափարական նշանակալի ազդեցություն: 1938 թ. լույս տեսած Սաֆայի «Անդրադարձներ թուրքական հեղափոխությանը» (թրք.՝ «Türk İnkılabına Bakışlar») գիրքը Քեմալական շարժման պահպանողական մեկնաբանության առաջին փորձերից մեկն է: Նրա մասին մանրամասն տե՛ս **Kutlu A., Modern, Milliyetçi ve Muhafazakar Bir Yazar ve Düşün Adamı: Peyami Safa, Ömer Halisdemir Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Fakültesi Dergisi**, sayı 11(1), 2018, ss. 139-156:

<sup>104</sup> Յիվմի Չիյա Ուլլքենն (1901-1974 թթ.) իր գործունեությունը ծավալել է բացառապես գիտահրապարակախոսական շրջանակներում: Նրա կողմից հիմնադրված միշտաբար պարբերականներում և հատկապես «Փիլիսոփայություն տարեգիրք» (թրք.՝ «Felsefe Yıllığı») ամսագրում են տպագրվել թուրքական պահպանողական մտքի նշանավոր գործիչները, այդ թվում՝ Բալթաջընդլուն և Թունչը: Ուլլքենի մասին մանրամասն տե՛ս **Tütengil C.O., Hilmi Ziya Ülken'in Çıkardığı Dergiler ve Bu Dergilerde Yaptığı Yayınlar**, İstanbul Üniversitesi İktisat Fakültesi Mecmuası, sayı 34(1-4), 2012, ss. 161-172:

<sup>105</sup> Մուսթաֆա Շեքիփ Թունչը (1886-1958 թթ.) հոգեբանի և փիլիսոփայի որակավորում է ստացել Եվեյցարիայում: Թուրքիա վերադառնալուց հետո մինչև կյանքի վերջ աշխատել է Ստամբուլի համալսարանում, վարել ակտիվ գիտական և հրապարակախոսական գործունեություն: 1920-ականների սկզբից ակտիվորեն համագործակցել է Բալթաջընդլունի հետ: Յենց Թունչն է թուրքերեն թարգմանել Անրի Բերգսոնի առավել հայտնի աշխատանքներից որոշները՝ «Ստեղծարար Էվոլյուցիան» (թրք.՝ «Yaratıcı Tekamülden Hayatın Tekamülü», 1934 թ.), «Ծիծաղը» (թրք.՝ «Gülme: Komiğin Anlamı Üzerine bir Deneme», 1945 թ.), «Գիտակցության անմիջական տվյալները» (թրք.՝ «Şuurun Doğrudan Doğruya Verileri», 1950 թ.) և այլն: Նրա մասին մանրամասն տե՛ս **Yaylalı İ., Şuurlu Muhafazakârlık: Mustafa Şekip Tunç Düşüncesinde Birey, Toplum**, Hacettepe Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü, Yüksek Lisans Tezi, Ankara, 2014:

<sup>106</sup> Յանրապետական պահպանողական ության առանձնահատկություններին մասին մանրամասն տե՛ս **İrem N., Turkish Conservative Modernism: Birth of a Nationalist Quest for Cultural Renewal**, International Journal of Middle East Studies, vol. 34(1), 2002, pp. 87-112:

<sup>107</sup> Ֆրանսիացի հրեա փիլիսոփա Անրի-Լուի Բերգսոնի (1859-1941 թթ.) փիլիսոփայաքաղաքական տեսությունը նդհանուր բնութագրի համար տե՛ս **Shklar J., Bergson and the Politics of Intuition**, The Review of Politics, vol. 20(4), 1958, pp. 634-656:



գլխավորած ազգայնամուկական շարժման սկզբնավորման ժամանակ բերգսոնական գաղափարներն արդեն իսկ որոշակիորեն տարածված էին հետօսմանյան թուրքական մտավորականության շրջանում:

Բնութագրական է, որ Անրի Բերգսոնի փիլիսոփայական հայացքներն օսմանյան մտավորական սերունդի ու շարժումների ծիրում են հայտնվել համեմատաբար ուշ՝ 1910-ական թթ. կեսերին, երբ ֆրանսիացու գործերն արդեն լայնորեն տարածված էին եվրոպական երկրներում<sup>108</sup>: Առաջին աշխարհամարտի ավարտին իթթիհաթականների շարքերում ձևավորվում է բերգսոնական խմբակ, որի առաջամարտիկներ Բալթաջըօղլուն և Թունչը հանդես էին գալիս սկզբնավորվող քեմալական ազգայնամուկական շարժման պաշտպանությամբ՝ միաժամանակ, քննադատելով գյոքալիյան պոզիտիվիստական սոցիալ-քաղաքական տեսությունը: Իր «*Թուրքիայում ժամանակակից մտքի պատմություն*» հայտնի աշխատության մեջ Ուլքենը գրում է, որ բերգսոնյան այդ խմբակի ձևավորումը 1920-ական թթ. սկզբին ընթացք է «*Dergah*» («Սուֆիական առանձնոց») պարբերականի շուրջ, որի էջեր էլ հենց նրանք բերում էին քաղաքական լիովին նոր բառապաշար<sup>109</sup>: Թուրք սոցիոլոգ, դեպքերի ժամանակակից Չիյաէթթին Ֆահրին (Ֆընդըբօղլուն) նկարագրում է այդ ժամանակաշրջանը. «*Բերգսոնյան փիլիսոփայությունը տարօրինակ համազգեստ կրող օտար գիտնականներով լցված Բեյազըթ հրապարակի միջով անցնող համալսարանի երիտասարդ ու սանողների համար մոտակա պայծառ ապագայի ավետաբերներ էր*»<sup>110</sup>:

<sup>108</sup> Բերգսոնին անդրադարձող առաջին հոդվածը թուրք իրականության մեջ հրապարակել է Չիյա Գյոքալիը: Ջելյալ Սաքըփ գրական կեղծանվամբ հրապարակված նրա «*Ռըզա Թևֆիքի փիլիսոփայություն*» հոդվածում առաջին անգամ թուրք ընթերցողին ներկայացվում է դանիացի մտածողը: Տե՛ս **Sakıp C.** (Ziya Gökalp), *Rıza Tevfik'in Felsefesi*, Genç Kalemler, sayı 15, 01.02.1327/1912, ss. 60-71: Բիչ ուշ Բերգսոնին է անդրադարձել նաև ինքը՝ Ռըզա Թևֆիքը (Բյույյուքբաշի). տե՛ս **Tevfik R.**, *Henri Bergson ve Felsefesi*, İctihad, sayı 291 30.01.1329/1913, ss. 20-38:

Օսմանյան ինտելեկտուալ շրջանակներում բերգսոնականության տարածման մասին մանրամասն տե՛ս **Yıldırım Y.**, *Bergsonculuğun Türkiye'ye Girişi ve Türk Felsefesine Etkisi*, Türkiye Araştırmaları Literatür Dergisi, sayı 9(17), 2011, ss. 333-356:

<sup>109</sup> Տե՛ս **Ülken H.Z.**, *Türkiye'de Çağdaş Düşünce Tarihi*, 2. baskı, İstanbul, 1979, s 376:

<sup>110</sup> Տե՛ս **Fındıkoğlu Z.F.**, *Türkiye'de Bergsonizm II*, Cumhuriyet, 15.01.1941, s. 2:

Թուրք բերգսոնականները մեկնաբանում էին Բերգսոնի՝ Առաջին աշխարհամարտում ֆրանս-գերմանական հակամարտությանը տված գնահատականը (իմա՝ պատերազմը՝ իբրև «*Եվրոպայի բարոյական վերածննդի*» միջոց<sup>111</sup>) որպես քեմալական շարժման ընթացքում օսմանյան-իսլամական ռեակցիոն ուժերի լեգիտիմությանը խարխուղ կռվան: Ըստ նրանց՝ բերգսոնյան «*այլ Արևմուտքի*» ավանդույթը պարարտ հող էր ստեղծում ազգային միասնության նոր տեսության համար՝ ընդգծելով արդիականության ձգտման «*նոր թուրքական կամքի*» իդիոսինկրետիկ բնույթը<sup>112</sup>: Յետևելով Շպենգլերի «*Եվրոպայի մայրամուտի*» մոտեցումներին՝ բերգսոնականները, մասնավորապես՝ Սաֆան հստակորեն հեռանում են հետպատերազմյան աշխարհի ավանդական քաղաքագիտական-փիլիսոփայական մոտեցումներից՝ քեմալական մոդեռնիզմի տեսլականը կապելով բերգսոնյան «*այլ Արևմուտքի*» հետ<sup>113</sup>: Տարիներ անց՝ 1937 թ., Փարիզում ելույթ ունենալով Փիլիսոփայության համաշխարհային 9-րդ կոնգրեսի ամբիոնից, Թունչը հայտարարելու էր. «*այսօր Թուրքիան հենց պն. Բերգսոնի նախաձեռնողով է ընթանում*»<sup>114</sup>:

1920-ականների վերջից խմբակի աշխատանքները նկատելիորեն ակտիվանում են. 1927 թ. Ուլլքենի նախաձեռնությամբ ստեղծվում է Թուրքական փիլիսոփայական և սոցիոլոգիական ասոցիացիան (ավելի ուշ՝ Թուրքական փիլիսոփայական ասոցիացիա. թրք.՝ *Türk Felsefe Cemiyeti*), որի ղեկավարումը 1930-ականների սկզբից ստանձնում է Թունչը: 1934 թ. թուրք բերգսոնականների գաղափարների տարածման հիմնական հարթակն է դառնում Բալթաջըօղլուի հիմնադրած «*Yeni Adam*» («*Նոր մարդ*») պարբերականը: Ընդհանուր առմամբ, 1930-ականների սկիզբը նշանավորվում է բերգսոնականների և «*Kadro*» («*Կարդ*») ամսագրի շուրջ համախմբված մտավորականների՝ Շնքեթ Սուրեյյա Այդեմիրի, Յաքուբ Քադրի Քարասումանօղլուի, Վեդաթ

<sup>111</sup> Տե՛ս **Chevalier J.**, *Henri Bergson*, L.A. Clare (trans.), London, 1928, p. 70:

<sup>112</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **İrem N.**, *Undercurrents of European modernity and the foundations of modern Turkish conservatism: Bergsonism in retrospect*, Middle Eastern Studies, vol. 40(4), 2004, pp. 91-92:

<sup>113</sup> Տե՛ս **Safa P.**, *Türk Düşüncesi ve Batı Medeniyet*, Türk Düşüncesi, 1958, sayı 1(1), ss. 5-6:

<sup>114</sup> Տե՛ս **Tunç M.Ş.**, *Descartes Kongresine Hitab*, Bilgi, sayı 11, 1958, s. 132:

Նեդիմ Թյորի, Բուրհան Ասաֆ Բելգեի, Իսմայիլ Յյուսրև Թյորքիսի միջև քեմալական շարժման տեսական հիմնավորման շուրջ գաղափարախոսական հակադրությունը<sup>115</sup>:

Սոցիալիստական գաղափարների որոշակի ազդեցությունն կրող քաղաքականների և հանրապետական պահպանողականության գաղափարակիր ենիգյունականներին միավորում էր, սակայն, համանման դիրքորոշումն իսլամի նկատմամբ: 1928 թ. ապրիլի 10-ին Թուրքիայի Յանրապետության սահմանադրության 2-րդ հոդվածում կատարված փոփոխությունը իսլամը դադարեց լինել երկրի պետական կրոնը, և քեմալականության բոլոր համակիրները՝ անկախ իրենց նեղ գաղափարախոսական տարբերություններից, լծվեցին լաիցիզմի քարոզի գործին: Բացառությունն չէին նաև թուրք բերգսունականները. Սաֆան, օրինակ, իր «Անդրադարձներ թուրքական հեղափոխությանը» գրքում ջերմորեն պաշտպանում է քեմալական մշակութային և քաղաքական ռեֆորմները՝ իբրև հանրապետության ազգայնական գաղափարախոսության հետևանք և շարունակություն<sup>116</sup>: Նա պահպանողական դիրքերից շարադրում է «հեղափոխություն» հասկացության հետևյալ առանձնահատկությունները՝

1. «Յեղափոխությունն ավանդույթի թշնամին չէ,
2. Յեղափոխությունը հնարավոր չէ նույնությամբ կրկնել: Պատմության մեջ ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, ռուսական հեղափոխությունները նույնը չեն և իրար չեն կրկնում:
3. Որևէ հեղափոխություն մեկ անձի կողմից չի կերտվում: Որքան էլ Աթաթյուրքը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում թուրք մեծ հեղափոխականների շարքերում,

<sup>115</sup> «Քաղրո»-«Ենի ադամ» հրատարակախոսական դիմակայության տեսակետից ուղղադրվել են Բալթաջըօղլուի հետևյալ հոդվածները՝ Baltacıoğlu İ.H., *Kadroya Göre Y. Adam/ Y. Adama Göre Y. Adam*, Yeni Adam, 23.04.1934, sayı 17, s. 11, **Նույնի**՝ *Kadroya Cevap*, Yeni Adam, 09.07.1934, sayı 28, s. 5, **Նույնի**՝ *Kadroya Cevap*, Yeni Adam, 16.07.1934, sayı 29, s. 8:

<sup>116</sup> Սաֆան քեմալական շարժումը բացատրում է՝ օգտագործելով բերգսունյան կենսական լիցքի («*élan vital*») սկզբունքը և պնդելով, որ լիցքը չի կարող անհետևանք մարել: Տե՛ս Safa P., *Türk inkılabına bakışlar*, İstanbul, 1938, ss. 203-206: Փեյամի Սաֆայի պահպանողական հայացքների մասին տե՛ս İlikan Rasimoğlu C.G., *Peyami Safa and Turkish Conservatism*, Global Media Journal Turkish Edition, vol. 3(5), 2012, pp. 86-104:

հեղափոխությանը նաև Աթաթյանը քիչ շատ ավելի առաջ էր սկսվել:

4. Աշխարհիկությանը նաև արևմտյան քաղաքակրթության նախապայմանն ու հիմքը է: Արևմտյան քաղաքակրթության զարգացած երկրների մեծամասնությունը, ներառյալ՝ Անգլիան աշխարհիկ է:
5. Թուրքիայում ժողովրդի իշխանությունը սկիզբ է առել ոչ թե 1923, այլ 1908 թ.: Յետագայում այն փորձությունների է ենթարկվել, բայց կրկին կյանքի է կոչվել 1950 թ.»<sup>117</sup>:

Թուրքիայում ընդհանրապես քեմալական շարժման հաղթանակը բացատրելիս կապակցում է նոր հանրապետական աշխարհիկ աշխարհայացքը (հեղինակը կիրառում է հեգելյան «Weltanschauung» եզրը գերմաներեն տարբերակով<sup>118</sup>) օսմանյան աստվածային կանխագիտության (արաբ․՝ عادت الله [ādetullāh]<sup>119</sup>) գաղափարի հետ<sup>120</sup>:

Իր բնույթով հանրապետական պահպանողականությունը հակակրթական է, բայց ոչ հակակրոնական, այս առումով թուրք պահպանողական մոդեռնիստները ձգտում էին եզրանշել կրոնականության հանրապետական ընկալումը<sup>121</sup>: Ըստ նրանց՝ դրա համար անհրաժեշտ էր բարեփոխել ավանդական իսլամական մտածողության համակարգը՝ բացելով այսպես կոչված «անկախ դատողության դարպասները» (արաբ․՝ الاجتهاد باب [bāb al-ijtihād]<sup>122</sup>): Կրոնի հարցերի շուրջ թուրք բերգսունականների մտքի խմորումներն ավելի ուշ՝ 1950-ականների կեսերից տեղ են գտնում Բալթաջընօղլուի հիմնած «Din Yolu» («Կրոնի ուղի») ամսագրում:

Բերգսունյան «ստեղծարար էվոլյուցիայի» տեսության հիմքի վրա նրա թուրք հետևորդներն առաջ են քաշվում ժամանակակից հասարակության ստեղծման ինքնակամության

<sup>117</sup> <sup>117</sup> Safi İ., *Türkiye'de Muhafazakârlığın Düşünsel-Siyasal Temelleri ve Muhafazakâr Demokrat Kimlik Arayışları*, ss. 92-93.

<sup>118</sup> Տե՛ս Tunç M.Ş., *Milliyet İdeali ve Topyekün Milli Terbiye*, Cumhuriyet, 05.04.1943, s. 2:

<sup>119</sup> Տե՛ս Նուրջի՝ Millet ve İnsan, Cumhuriyet, 07.04.1943, s. 3:

<sup>120</sup> Տե՛ս İrem N., *Turkish Conservative Modernism*, p. 98:

<sup>121</sup> Թուրք բերգսունականների կրոնական հայացքների մետամորֆոզի ընթացքի մասին պատկերացում կազմելու համար տե՛ս Թուրքի հետևյալ գրքերը՝ Tunç M.Ş., *Bir Din Felsefesine Doğru*, İstanbul, 1959:

<sup>122</sup> Տե՛ս, օրինակ, Նուրջի՝ Kader ve Kanun, Cumhuriyet, 26.04.1942, s. 2: «Իջ թի հարի դարպասները» բաց/փակ լինելու մասին ժամանակակից գիտական տեսակետի համար տե՛ս Hallaq W.B., *Was the Gate of Ijtihad Closed?*, International Journal of Middle East Studies, vol. 16(1), 1984, pp. 3-41:

(սպունտանոէթյան) թեզը: Սաֆայի «Կյանքի դեմ մեր համակարգերը» ծրագրային հոդվածում քեմալական շարժման պրագմատիզմը մեկնաբանվում է բերգսոնյան փիլիսոփայական բառապաշարի այնպիսի եզրերի համատեքստում, ինչպիսիք են «ստեղծարարությունը», «ինքնակամությունը», «կենսականությունը» և այլն<sup>123</sup>: Քեմալական շարժման պրագմատիկ բնույթի դրույթը կարմիր թելի նման անցնում է նաև Ուլքենի և Բալթաջըօղլուի մոտ<sup>124</sup>: Միաժամանակ, բերգսոնականները հանդես են գալիս 1920-ական թթ. լիբերալ մոդեռնիզմի եվրոպական դասական տեսլականի դեմ՝ համարելով, որ քեմալական արդիականացումը պետք է դիտարկել «Արևմուտքի դեմ պայքարող Արևմուտքի» տրամաբանության մեջ<sup>125</sup>:

Բալթաջըօղլուն առանձնահատուկ տեղ է հատկացնում թուրքական հասարակության մեջ «ավանդույթի» դերին: Ըստ նրա՝

1. ավանդույթներն իրենց բնության տեսակետից սովորություններ են,
2. ավանդույթները սովորությունների նման հաճախ չեն փոփոխվում,
3. ավանդույթները սովորությունների չափ կենդանի ֆենոմեն են,
4. ավանդույթը մարդկային կմախքի նման է մշակույթի հետ տարբերակում է ցեղը,
5. ավանդույթի հիմքերը դիցաբանության մեջ են,
6. ավանդույթը համընդհանուր իմաստություն է,
7. քանի դեռ կա ավանդույթը, կանաև ազգային ցեղը,
8. ավանդույթի ընդհանրությունը, ծագման, մտքի և ոգու ընդհանրություն է,
9. ազգային միասնությունն ապահովող գործոնը մշակույթից առաջ ավանդույթն է<sup>126</sup>:

<sup>123</sup> Տե՛ս **Safa P.**, *Hayat karşısında sistemlerimiz*, Cumhuriyet, 11.07.1933, s. 3:

<sup>124</sup> Տե՛ս **Ülken H.Z.**, *Veraset ve Cemiyet*, İstanbul, 1957, **Baltacıoğlu İ.H.**, *Tarih ve Terbiye*, İstanbul, 1933: Նույն համատեքստում տե՛ս նաև **Նուլյ Նի**՝ *Eski ve Yeni, Olü ve Diri*, Yeni Adam, sayı 340, 1941, s. 2, **Նուլյ Նի**՝ *Milli Anane*, Yeni Adam, 1942, sayı 366, s. 2:

<sup>125</sup> Տե՛ս **Safa P.**, *Türk Düşüncesi ve Batı Medeniyet*, ss. 4-5:

<sup>126</sup> Տե՛ս **Baltacıoğlu İ.H.**, *Türke Doğru*, İstanbul, 1943, s. 33.

Նման շեշտադրմամբ է բացատրվում, որ Բալթաջը ըօղլ ու ի պահ պանողականությունը հաճախ կոչում են «ավանդույթականություն»:

Ընդհանուր առմամբ, հանրապետական պահպանողականությունը քեմալական պաշտոնական գաղափարախոսության հակաօսմանյան, ապախսլամական և ոչ լիբերալ հայացքները համադրում էր ազգայնական ոչ ստանդարտ տարրերի հետ՝ դեմ հանդես գալով ինչպես օսմանյան քաղաքագիտական ավանդույթին, այնպես էլ մոդեռնիզմի դասական եվրոպական իդեալներին<sup>127</sup>: Հատկանշական է նաև, որ պահպանողականությունը իրենց արձագանքն են գտել ժամանակի գրական շրջանակների կողմից ևս: Այդ համատեքստում, հարկ է հիշատակել Յահյա Քեմալ Բեյաթլը ի «պահպանողականության գեղագիտության»<sup>128</sup> և Ահմեթ Համդի Թանփընարի «արևելք-արևմուտք համակցություն»<sup>129</sup> գաղափարները:

Պահպանողականությունը հանրապետական թուրքիայի գոյություն առաջին տասնամյակներում ստանում էր տարբեր, հաճախ՝ տրամագծորեն տարբերվող դրսևորումներ: Ժամանակի իսլամական և ազգայնական պահպանողականության առավել հայտնի ներկայացուցիչն է ԹՀ պետական օրհներգի խոսքերի հեղինակ Մեհմեթ Աքիֆ Էրսոյը: Թուրք հետազոտող Նուրեթթին Թոփչուն գրում է. «Աքիֆի բնավորությանը հատուկ պատմությունով, անցյալով, նախնիներով հպարտանալու գագացումները նրան ազգայնականության և, հետևաբար,

<sup>127</sup> Տե՛ս İrem N., Turkish Conservative Modernism, pp. 96-97:

<sup>128</sup> Թուրք հայտնի պոետ Յ.Բ. Բեյաթլը (1884-1958 թթ.) ՀԺԿ իշխանության տարիներին մի քանի անգամ ընտվել է ԹԱՄԺ պատգամավոր, թուրքիայի դեսպանի պաշտոնը զբաղեցրել է հաստանում, Պորտուգալիայում, Պակիստանում: Յահյա Քեմալի պահպանողականության մասին մանրամասն տե՛ս Karakaş R., *Türk muhafazakarlığı ve Yahya Kemal Beyatlı*, Selçuk Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Sosyoloji Anabilim Dalı, Yüksek Lisans Tezi, Konya, 2008, հատկապես՝ ss. 103-114: Մի ամանակ, նրա արտահայտություններին ներքին մեկը, թե «ազգային գիտակցությունն ու նեցող մարդու համար պահպանողականություն, ազատականություն և այլ գաղափարների միջև տարբերությունը քիչ է» (տե՛ս Kemal Y., *Aziz İstanbul*, İstanbul, 2008, s. 50), ցույց է տալիս, որ Քեմալի պահպանողականությունն ավելի շատ դրսևորվում է ձևի, քան բովանդակության մեջ:

<sup>129</sup> Ա. Հ. Թանփընարը (1901-1962 թթ.) թուրքական գրական մոդեռնիզմի կարկառուն ներկայացուցիչներից է: 1944-1946 թթ. ԹԱՄԺ պատգամավոր է եղել Մարաշի ընտանյան շրջանից: Նրա համադրական պահպանողականության մասին մանրամասն տե՛ս Տե՛ս Çağhyan Z., *Erken Cumhuriyet Dönemi Sentezci Muhafazakarlığı'nda "Değişim": Ahmet Hamdi Tanpınar ve Türk Modernleşmesi*, Muhafazakâr Düşünce, sayı 9-10, 2006, ss. 79-100:

*պահ պանողակ անու թյ ան* *են* *բերել*»<sup>130</sup>: Էրսոյի պահ պանողակ անու թյ ու նն առանձնահատուկ հետաքրքրութիւն է ներկայացնում, քանի որ վերջինս իբրև արևմտականացման մոդել դիտարկում է ճապոնիան, որտեղ արևմտյան գիտութիւն նվաճումները յուրացվել են, սակայն քաղաքակրթութիւն «անարժեք, նորածնութիւն պես ընկալվող անկարևոր տարրերը» դուրս են մղվել<sup>131</sup>:

Վաղ շրջանի թուրքական պահ պանողակ անու թյ ան խորհրդանիշներից քաղաքագետ Ալի Ֆուաթ Բազգիլը սերտորեն կապված է նաև ազատականութիւն հետ: Միակուսակցական կառավարման տարիներին, երբ քաղաքական համակարգի ազատականութիւն գաղափարները բաց տեքստով հասարակական շրջանակներում ընկալելի չէին կարող լինել, Բազգիլը հանդես է գալիս «ոգու և կամքի կրթութիւն» միջոցով կանոնավոր ժողովրդավարութիւն ունենալու տեսլականով<sup>132</sup>: Թուրք քաղաքագետ և հրապարակախոս Թանըլ Բորայի բնորոշմամբ՝ «Բազգիլը անկախամիտ մարդ էր, քաղաքականութիւն և քաղաքական գործիչների դեմ կանխատրամադրված և հակված կասկածամտութիւն. տիպիկ պահ պանողակ ան»<sup>133</sup>:

20-րդ դարի առաջին կեսի թուրքական պահ պանողակ ան մտքի դրսևորումները գերազանցապես տեսական բնույթ էին կրում և իրական քաղաքական արտացոլում չէին գտնում: Չնայած քեմալական հասարակական քաղաքագիտական մտքի միջավայրում ձևավորված լինելու հանգամանքին՝ Երկրորդ աշխարհամարտին հաջորդող շրջանում բազմակուսակցական քաղաքական համակարգին անցում կատարելուց հետո պահ պանողակ անութիւն հիմնական դրույթները սկսում են լայնորեն շրջանառվել նաև

<sup>130</sup> **Topçu N.**, *Mehmet Âkif'in İdealizmi*, I. Kara (haz.), Türkiye İslâmcılık Düşüncesi, cilt 3, İstanbul., 1994, s. 191.

<sup>131</sup> **Erdoğan M.**, *Safahat'ın Temalarından Biri: İslâmî Modernleşme Görüşü*, Mehmet Âkif Ersoy'u Anma Kitabı, Ankara, 1986, s. 156. Էրսոյի պահ պանողակ անութիւն մասին մանրամասն տե՛ս **Yılmaz M.**, *Mehmet Akif Ersoy*, A. Çiğdem (ed.) *Modern Türkiye'de Siyasî Düşünce*, cilt 5 – Muhafazakârlık, İstanbul, 2003, ss. 318-334:

<sup>132</sup> Տե՛ս **Önder T.**, *Ali Fuad Başgil*, A. Çiğdem (ed.) *Modern Türkiye'de Siyasî Düşünce*, cilt 5 – Muhafazakârlık, İstanbul, 2003, s. 291:

<sup>133</sup> **Bora T.**, *Muhafazakârlığın Değişimi ve Türk Muhafazakârlığında Bazı Yol İzleri*, Toplum ve Bilim, sayı 74, 1997, s. 26:

քաղաքական լայն հոլովոյթում, այդ թվում՝ ընդդիմադիր ուժերի կողմից:

### 1.3. Պահպանողականության դասական և թուրքական մոդելների առնչակցությունը. նմանություններ և տարբերություններ

1946 թ. Թուրքիայում բազմակուսակցական քաղաքական համակարգի հաստատումից ի վեր կայացած 20 խորհրդարանական ընտրություններում ավանդական և պահպանողական արժեքներ դավանող կուսակցությունները հաղթանակի են հասել 16 անգամ<sup>134</sup>: Պահպանողական գաղափարախոսության նման մասսայականությունը պետք է բացատրել դրա թուրքական դրսևորման առանձնահատկություններով: Թուրքական հասարակության մեջ պահպանողականությունն (թրք.՝ «*muhafazakârlık*») ավանդաբար ասոցացվում է «m»-ով սկսվող մեկ այլ բառի հետ՝ մուսուլման (թրք.՝ «*müslüman*»), ուստի այն դավանում է կրոնական արժեքները, հանրային սովորություններն ու ավանդույթները: Քեմալ Քարպաթի ձևակերպմամբ՝ թուրքական պահպանողականությունը լոկ «*հին սոցիալական կապերն ու հասկացությունները նոր ձևին համապատասխանեցնելու ջանք է*»<sup>135</sup>: Ավելին, այս առանձնահատկությունը հաշվի առնելով՝ այն պիսի հայտնի թուրք հետազոտողներ, ինչպիսիք են Նիյազի Բերկեսը և Քեմալ Քարփաթը թուրքական պահպանողականությունը/ավանդականությունը չեն համարում առանձին փիլիսոփայական-քաղաքական ուղղություն<sup>136</sup>:

Պատմագաղափարախոսական էնդեմիկ միջավայրում ձևավորված պահպանողականությունը Թուրքիայում հիմնված է ուժեղ, հասարակական կյանքի բոլոր ոլորտները վերահսկող և խիստ ինքնիշխան պետության՝ գերմանական և ֆրանսիական ավանդույթի վրա՝ միաժամանակ պահպանելով

<sup>134</sup> Տե՛ս *Kalaycıoğlu E., Politics of Conservatism in Turkey*, Turkish Studies, vol. 8(2), 2007, p. 233: Տվյալները թարմացված են հրապարակումից հետո տեղի ունեցած ընտրությունների արդյունքներով:

<sup>135</sup> Հղումն ըստ՝ *Yıldırım S., Muhafazakarlık, Türk Muhafazakarlığı ve Peyami Safa Üzerine*, Journal of Historical Studies, vol. 1(1), 2003, s. 10:

<sup>136</sup> Տե՛ս *Kulaç O., Çalhan S.H., Tuğral M., Conservatism and Turkey: Case of Motherland Party*, Mediterranean Journal of Social Sciences, vol. 5(7), 2014, p. 551:



անգլոսաքսոնական պահպանողական ության ազատական մտքի որոշ տարրերը<sup>137</sup>: Քաղաքական ության մեջ արտացոլման տեսակետից 1950-ական թթ. համարվում են թուրքական բացարձակ կամ հայրենասիրական, 1970-ականները՝ իսլամական, 1980-ականներինց սկսած՝ ժողովրդավարական պահպանողական ության դրսևորման շրջաններ<sup>138</sup>: Բոլոր այս փուլերում էլ թուրքական պահպանողական ությունն արևմտյան մոդելի պահպանողական ությունից ունեցել է նկատելի տարբերություններ՝ միաժամանակ պահպանելով որոշ հիմնարար նմանությունները:

Եթե արևմտյան պահպանողական ությունը ձևավորվել և զարգացել է Ֆրանսիական հեղափոխության ազդեցությամբ տարածված գաղափարների քննադատության շուրջ, ապա թուրքիայում պահպանողական ության մեկնակետը քեմալական շարժումն ու հանրապետության հռչակումն է<sup>139</sup>: Ի տարբերություն առաջինի՝ քեմալի նախածեռնած՝ քաղաքական համակարգի փոփոխությունն իրականացվել է անհամեմատ անցնցում կերպով<sup>140</sup>, հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ այն ընթանում էր սոցիալական աստիճանակարգության վարընթաց, իսկ Ֆրանսիական հեղափոխությունը՝ վերընթաց հրամանայականով: Այս համատեքստում ուշագրավ է թուրքական պահպանողական ության մոտեցումը փոփոխության նկատմամբ: Չանրապետության հռչակումից հետո թուրք պահպանողականները նոր ռեժիմի արևմտականացման շարժման հետբացահայտ խնդիրներ չունեին: Չանրապետական պահպանողականների դիրքորոշումը ամփոփված է հետևյալ կարգախոսների մեջ՝ «*փոփոխություն*

<sup>137</sup> Տե՛ս **Շահա Օ.**, *Muhafazakar düşüncede toplum*, Uluslararası Muhafazakarlık ve Demokrasi Sempozyumu, İstanbul, 2004, s. 72:

<sup>138</sup> Տե՛ս **Օզիպեկ Բ.Բ.**, *Muhafazakarlık: Akıl Toplum Siyaset*, Ankara, 2004, p. 34

<sup>139</sup> Այս հարցում համակարծիք են թեմայի ուսումնասիրողների մեծամասնությունը՝ օսմանյան շրջանի պահպանողական ության դրսևորումները համարելով լուրջ դրանախերգանքը: Տե՛ս **Bora T.**, *Türk Sağının Üç Hâli: Milliyetçilik, Muhafazakârlık, İslâmcılık*, İstanbul, 1999, s. 52, **Mollaer F.**, *Türkiye’de Liberal Muhafazakârlıkve Nurettin Topçu*, İstanbul, 2008, s. 73, **Çiğdem A.**, *Sunuş*, A. Çiğdem (ed.) *Modern Türkiye’de Siyasî Düşünce*, cilt 5 – Muhafazakârlık, İstanbul, 2003, s. 16, **İrem N.**, *Turkish Conservative Modernism: Birth of a Nationalist Quest for Cultural Renewal*, p. 107-108 և այլն:

<sup>140</sup> Տե՛ս **Mardin Ş.**, *Türkiye’de Din ve Siyaset: Makaleler 3*, İstanbul, 1999, s. 148:

շարունակականության մեջ» (թրք.՝ «*imtidâd içinde değişme*»)<sup>141</sup> և «շարունակելով փոխվել, փոխվելով շարունակել» (թրք.՝ «*devam ederek değişmek değişerek devam etmek*»)<sup>142</sup>: Երկրի աշխարհագրությունը և պատմությունը պայմանավորված այդ մոտեցումը, որ Չեյնեբ Չաղլիյան-Իչեները կոչում է «սինթետիկ հակված պահպանողականության»<sup>143</sup>, ենթադրում էր, որ սեփական ինքնությունը չկորցնելով արևմտյան քաղաքականության մասկարելի է դառնալ միայն «դպրոցից հայրենիք վերադարձի միջոցով» (թրք.՝ «*mektepten memlekete dönmek*»)<sup>144</sup>: Ուշագրավ է, որ իր հրապարակային ելույթներից մեկում համանման արտահայտություն է արել նաև Ռ. Թ. Էրդողանը՝ նշելով, որ Թուրքիան արևմուտքից ավանդաբար վերցրել է ոչ թե գիտությունն ու արվեստը, այլ անբարոյականությունը<sup>145</sup>: Ավելի, Թուրքիայի Հանրապետության առաջին տասնամյակներում թուրք պահպանողականների որդեգրած մոտեցումներում գործնականում չի հանդիպում անցյալի իդեալականացման թեզը<sup>146</sup>, փոխարենը նրանց դիրքորոշումը կարելի է գնահատել իբրև «ժամանակակից լինելու չափ պահպանողական և պահպանողական լինելու չափ հեղափոխական»<sup>147</sup>: Օսմանյան անցյալի իդեալականացումը գլուխ ավտո է

<sup>141</sup> Հղումը Բեյաթ ըրինըստ՝ **Ünver S.**, *Yahya Kemal'in Dünyası*, İstanbul, 2000, s. 59:

<sup>142</sup> **Tanpınar A.H.**, *Yahya Kemal*, İstanbul, 2001, s. 24.

<sup>143</sup> **Çağlıyan-İçener Z.**, *The Justice and Development Party's Conception of "Conservative Democracy": Invention or Reinterpretation?*, p. 596. Արևելքն արևմուտքի հետ համադրելու գաղափարի մեկնության համար տե՛ս **Safa P.**, *Doğu-Batı Sentezi*, İstanbul, 1963 (հատկապես՝ էջ 101): Թեզը կարմիր թելի նման անցում է նաև Ահմեթ Համդի Թանփընարի մոտ: Տե՛ս, հատկապես, **Tanpınar A.H.**, *Mücevhherlerin Sırrı: Derlenmiş Yazılar, Anketler ve Röportajlar*, İstanbul, 2003:

<sup>144</sup> Հայտնի այս արտահայտությունը պատկանում է Յահյաթեմալ Բեյաթ ըրին: Տե՛ս **Beyath Y.K.**, *Edebiyata Dair*, İstanbul, 1971, s. 139:

<sup>145</sup> Տե՛ս *Batı'nın ahlaksızlığını aldık*, *Hürriyet*, 25.01.2008, <http://www.hurriyet.com.tr/gundem/bati-nin-ahlaksizligini-aldik-8098117> [հասանելի է՝ 03.09.2018]: Էրդողանն իր ելույթում մեջբերում է իր սիրելի հեղինակներից մեկի՝ Մ.Ա. Էրսոյի տողերից մեկը՝ «*Alınız ilmini Garbın, alınız sana'tını*» («*Վերցրեք գիտությունն Արևմուտքի, վերցրեք՝ արվեստը*»): Տե՛ս **Doğan M.**, *Mehmet Akif, Türkiye'de modernleşme ve gençlik: bilgi şöleni*, Ankara, 2007. s. 140:

<sup>146</sup> Հանթինգթոնը գրում է. «*Փոփոխությունը փոփոխությունն է. պատմությունը ո՛չ նահանջում է, ո՛չ կրկնվում, և յուրաքանչյուր փոփոխությունն քայլ է ստատուս քվոյից: Ժամանակի հետ հետադիմականության իդեալը ավելի ու ավելի քիչ ընդհանուր բան է ունենում անցյալի իրական հասարակության հետ: Անցյալը առասպելականացվում է և, ի վերջո, հետադիմականը սկսում է աջակցել իդեալականացված Ռսկե դարի վերադարձը, որն իրականում երբեք էլ գոյություն չի ունեցել*» (**Huntington S.P.**, *Conservatism as an Ideology*, p. 460):

<sup>147</sup> **Atay T.**, *Gelenekçilikle Karşı-Gelenekçiliğin Gelgitinde Türk 'Gelenek-çi' Muhafazakârlığı*, A. Çiğdem (ed.) *Modern Türkiye'de Siyasî Düşünce*, cilt 5 – Muhafazakârlık, İstanbul, 2003, s. 167.

բարձրացնելու ավելի ուշ, այդ թվում հատկապես՝ ԱԶԿ իշխանության տարիներին<sup>148</sup>:

Թուրքական պահպանողականության մյուս առանձնահատկությունն է հասարակության մեջ «Կենտրոն-ծայրամաս» բաժանման<sup>149</sup> մեջ ունեցած դերակատարությունն է: Ի տարբերություն, օրինակ, Մեծ Բրիտանիայի, որտեղ պահպանողականներն ավանդաբար ասոցացվել են կենտրոնի հետ<sup>150</sup>, Թուրքիայում պահպանողական գաղափարների շարժիչ ծայրամասն է<sup>151</sup>: Թուրք քաղաքագետ Մեթին Յեփերի բնորոշմամբ. «[Կենտրոն-ծայրամաս հարաբերությունների հարցում, — Ա.Գ.] օսմանյան-թուրքական քաղաքականությունն իր զարգացման երկար ընթացքի արդյունքում հանգրվանեց անգլիական օրինակի հակադիր բևեռում»<sup>152</sup>: Ուստի թուրքական պահպանողականությունը սովորաբար հանդես է գալիս արդիականացումը ծայրամասի արժեքների՝ ավանդույթի, իսլամի, սովորությունների պահպանմամբ իրականացնելու դիրքերից:

Ուշագրավ է նաև թուրքական պահպանողականության դիրքորոշումը կրոնի նկատմամբ: Դասական պահպանողականությունը կրոնը սոցիալական գործիք է: Այն օրինականացում է պետության գոյությունը, հաջորդ կյանքի խոստման շնորհիվ մարդկանց բարոյական պահվածքն ու ապահովում սոցիալական կարգը և այլն<sup>153</sup>: Ֆրանսիացի փիլիսոփա Լուի դը Բոնալ դի խոսքերով՝ կրոնն իր բնույթով սոցիալական է, պատահական չէ, որ դրա լատինական համարժեքը ծագում է «*religare*»՝ «կապել» բայից<sup>154</sup>: Առաջին թուրք պահպանողականների

<sup>148</sup> Այս թեմային անդրադարձ կկատարվի սույն աշխատանքի երրորդ գլխում: Տե՛ս նաև **Yilmaz I., Bashirov G.**, *The AKP after 15 years: emergence of Erdoganism in Turkey*, Third World Quarterly, vol. 39(9), 2018, p. 11:

<sup>149</sup> «Կենտրոն-ծայրամաս» փոխհարաբերությունների համատեքստում թուրքական քաղաքականությունը մեկնաբանելու առաջին փորձը Շերիֆ Մարդինի հետևյալ հայտնի հոդվածն է՝ **Mardin Ş.**, *Center-Periphery Relations: A Key to Turkish Politics?*, Daedalus, vol. 102(1), 1973, pp. 169-190: Այս թեմայով առավել արդիական ուսումնասիրություն համար տե՛ս **Bakiner O.**, *A key to Turkish politics? the center-periphery framework revisited*, Turkish Studies, vol. 19(4), 2018, pp. 503-522:

<sup>150</sup> Տե՛ս **Berrington H.**, *Change in British Politics*, London, 2005, p. 17:

<sup>151</sup> Տե՛ս **Mardin Ş.**, *Türkiye’de Toplum ve Siyaset: Makaleler 1*, İstanbul, 1990, s. 37, **Kalaycıoğlu E.**, *Politics of Conservatism in Turkey*, p. 233:

<sup>152</sup> **Heper M.**, *The State Tradition in Turkey*, Walkington, 1985, p. 14.

<sup>153</sup> Տե՛ս **Benetton Ph.**, *Muhafazakarlık*, C. Akalın (çev.), İstanbul, 1991, ss. 34-35:

<sup>154</sup> Հղումն ըստ՝ **Nisbet R.A.**, *Conservatism and Sociology*, American Journal of Sociology, vol. 58(2), 1952, p. 171:

կողմից ևս կրոնը բնութագրվել է որպես «սոցիալ ական իրողություն»<sup>155</sup>, որը թուրք «ազգի իրական հայելին է»<sup>156</sup> և «մշակույթի մասնիկը»<sup>157</sup>: Տարիներ անց Էրդողանի գլխավորած «Արդարություն և զարգացում» կուսակցությունը քաղաքականություն մուտք գործելիս հանդես էր գալիս իբրև հենց այս գաղափարների շարունակող<sup>158</sup>:

Պահպանողականության նոր ավանդույթում հանդիպող մի շարք գաղափարներ առանձնապես խորը հետք են թողել թուրքական պահպանողական մտքի ժառանգության վրա<sup>159</sup>: Դրանցից որոշների մասին խոսվեց վերևում (բերգսունականության ազդեցություն, արևելք-արևմուտքի համարդրման ճապոնիայի օրինակ): 1940-ական թթ. երկրորդ կեսից սկսած՝ ինչպես արևմուտքում, այնպես էլ թուրքիայում պահպանողականության բնորոշ գիծ է դառնում հակակոմունիզմը՝ պայմանավորված երկրորդ աշխարհամարտի ավարտին տեղի ունեցող աշխարհաքաղաքական վերածևումներով և մոտավոր տ Սառը պատերազմով: Իր «Պահպանողական մտքի շարժումն Ամերիկայում սկսած 1945 թ.» հայտնի աշխատության մեջ Ջորջ Նեշը կարծիք է հայտնում, որ հետպատերազմյան պահպանողականությունը միավորել է երեք գործող և մասամբ իրար հակադրվող մտքի ուղղություններ, որոնք նախկինում իրարից մեծապես անկախ էին՝ կամքի ազատականությունը (լիբերտարիանիզմը), ավանդականություն և հակակոմունիզմը<sup>160</sup>: Ընդգծված հակակոմունիստական կեցվածք

<sup>155</sup> **Ayvazoğlu B.,** *Yahya Kemal: "Eve Dönen Adam"*, İstanbul, 1999, ss. 47-48.

<sup>156</sup> **Tanpınar A.H.,** *Yahya Kemal*, s. 44.

<sup>157</sup> **Kerman Z.,** *Ahmet Hamdi Tanpınar'ın Edebiyat Tarihi Hakkında Bazı Görüşleri*, S. Uğurcan (ed.), Doğumunun Yüzüncü Yılında Ahmet Hamdi Tanpınar, İstanbul, 2003, s. 73.

<sup>158</sup> Տե՛ս **Çağliyan-İçener Z.,** *The Justice and Development Party's Conception of "Conservative Democracy": Invention or Reinterpretation?*, p. 604: Էրդողանի և իր կուսակցության քաղաքականությունն իսլամի նկատմամբ նկատելիորեն փոփոխվել է իշխանության ղեկին գտնվելու տարիների ընթացքում: Այդ մետամորֆոզը բնություն կառնվի սույն աշխատանքի երրորդ գլխում: ԱԶԿ վաղ տարիների կրոնական դիրքորոշման համար տե՛ս **Heper M., Toktaş S.,** *Islam, Modernity, and Democracy in Contemporary Turkey: The Case of Recep Tayyip Erdogan*, *The Muslim World*, vol. 93(2), 2003, pp. 157-185:

<sup>159</sup> Տե՛ս **Safi İ.,** *Türkiye'de Muhafazakârlığın Düşünsel-Siyasal Temelleri ve Muhafazakâr Demokrat Kimlik Arayışları*, s. 8:

<sup>160</sup> Տե՛ս **Nash G.H.,** *The Conservative Intellectual Movement in America since 1945*, New York, 1976: Այս համատեքստում ուշագրավ է նաև Մայքլ Քիմաջի ուսումնասիրությունը, որում համոզիչ կերպով ցույց է տրվում, թե ինչպես է 1940-1950-ական թթ. հակակոմունիզմը ձևափոխում և՛ ազատականությունը, և՛ պահպանողականությունը՝ ազդարարելով տարիներ անց նոր

ուևնեցող թուրք պահպանողական հեղինակներից կարելի է առանձնացնել Նեջիփ Ֆազըլ Քըսաթյուրեքին, Մեհմեթ Շևքեթ Էյգիին, Օսման Յուսեֆ Սերդենգեչթիին և Ջևաթ Ռիֆաթ Աթիլ հանին<sup>161</sup>: Քաղաքական կյանքում իր դրսևորման իմաստով թուրքական հակակոմունիզմը սաստկանում է ժողովրդավարական իշխանության տարիներին<sup>162</sup>:

Թուրք քաղաքագետ Թանըլ Բորայի բնորոշմամբ՝  
Թուրքիայում «ազգայնականությանը, պահպանողականությանը ու իսլամականությանը ոչ թե դիրքորոշում են, այլ՝ վիճակներ, ճիշտ ֆիզիկայի նյութի վիճակների նման՝ պինդ, գազային, հեղուկ: Ազգայնականությանը, պահպանողականությանը ու իսլամականությանը թուրքական աջերի տարբեր վիճակներն են, որոնք կարող են փոխակերպվել մեկը մյուսի»<sup>163</sup>: Ավելին, անգամ իսլամն ու հանրապետական աշխարհիկությունը պետք է դիտարկել իբրև «նույն պատմական ընդհանրության տարբեր համակյաց հատվածներ»<sup>164</sup>: Միաժամանակ և՛ հանրապետականությանը, և՛ պահպանողականությանը հատուկ նահապետական մտայնությունը թույլ էր տալիս անգամ թուրք պահպանողականներին վերախմբագրել և վերաիմաստավորել քեմալական քաղաքական գաղափարները<sup>165</sup>: Յենց նման պայմաններում էլ ասպարեզ է իջնում՝ իբրև քաղաքական գործիչ քեմալական գաղափարական միջավայրում կայացած Ջելալ Բայարի և Ադնան Մենդերեսի գլխավորած ընդդիմադիր ժողովրդավարական կուսակցությունը, որին վիճարկված էր շուրջ մեկ տասնամյակ լինել Թուրքիայի քաղաքական կյանքի հիմնական դերակատարը:

---

պահպանողականության արձրացումը: Տե՛ս **Kimmage M.**, *The Conservative Turn: Lionel Trilling, Whittaker Chambers, and the Lessons of Anti-communism*, Cambridge, 2009:

<sup>161</sup> Տե՛ս **Safi İ.**, *Türkiye’de Muhafazakârlığın Düşünsel-Siyasal Temelleri ve Muhafazakâr Demokrat Kimlik Arayışları*, s. 146:

<sup>162</sup> Այդ հարցի շուրջ տե՛ս նաև **Yıldırım S.**, *Demokrat Parti ve Dönemi: Sol Tarihyazımında “Kayıp” Zamanın İzinde*, Praksis, cilt 18(2), 2008, ss. 23-42:

<sup>163</sup> **Bora T.**, *Türk Sağının Üç Hâli: Milliyetçilik, Muhafazakârlık, İslâmcılık*, s. 8.

<sup>164</sup> **Yavuz H.**, *Introduction: The Role of the New Bourgeoisie in the Transformation of the Islamic Movement*, in Yavuz M.H. (ed.), *The Emergence of New Turkey*, Salt Lake City, 2006, p. 8.

<sup>165</sup> Տե՛ս **Öğün S.S.**, *Türk Muhafazakarlığının Kültür Kökleri ve Peyami Safa’nın Kültürel Yanılgısı*, Toplum ve Bilim, sayı 74, 1997, s. 153:

Ամփոփելով նշենք, որ հանրապետության հռչակումից հետո ավտորիտար արդիականացման դժվար ճանապարհ անցնող ավանդական թուրքական հասարակության շրջանում մոդեռնիզմի շուրջ քննարկումներն ասպարեզ բերեցին նաև մի շարք պահպանողական գաղափարներ: Եվ եթե միակուսակցական իշխանության տարիներին դրանք տեղային դրսևորումներ էին ունենում քեմալիզմի ընդհանուր գաղափարական հովանու ներքո, ապա Երկրորդ աշխարհամարտից հետո քաղաքական համակարգի աստիճանական ժողովրդավարացումը պայմաններ ստեղծեց քաղաքական դաշտում պահպանողական ուժի ի հայտ գալու համար:

## ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ

### ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ. ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՅԱԼ ՆԵՐՈ

#### 3.1. ԺԿ ընդդիմադիր շրջանն ու կայացման անձնային խորապատկերը. Ջելալ Բայար և Ադնան Մենդերես

Քեմալական միակուսակցականության տարիներին թուրքիայի ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) դերը երկրի քաղաքական համակարգում մասամբ ձևական էր<sup>166</sup>: Հանրապետական ժողովրդական կուսակցության (թրք.՝ «Cumhuriyet Halk Partisi», ՀԺԿ) շարքերում ներքին խմորումների առաջին հրապարակային դրսևորումը<sup>167</sup> կարելի է համարել 1944 թ. մայիսի 22-ին երկրի օրենսդիր մարմնում պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ նախկին վարչապետ, Իզմիրից պատգամավոր ընտրված Ջելալ Բայարի քննադատական ելույթն ու դրան հաջորդած քվեարկությունը<sup>168</sup>:

Քեմալական կուսակցության շարքերում հակասությունները առավել ցայտուն են դառնում հաջորդ` 1945 թ. պետական բյուջեի և հատկապես «Հողագործին

<sup>166</sup> Թուրքիայի պատմության ճանաչված մեկնաբան Էրիկ-Յան Տյունրիտերը գրում է. «Միակուսակցականության դարաշրջանում նրանք [ԹԱՄԺ քվեարկությունները, — Ա. Գ.] դարձել էին պարզ ձևականություն: Քննարկումները սահմանափակված էին անգամ խմբակցության նիստերի ժամանակ, որոնք օգտագործվում էին կառավարության կողմից սեփական որոշումների մասին ազդարարելու և դրանք բացատրելու համար»: Տե՛ս **Zürcher E.J., Turkey: A Modern History**, 4<sup>th</sup> ed., London and New York, 2017, p. 178:

<sup>167</sup> Քաղաքական ճգնաժամի անուղղակի նախանշան կարելի է համարել նաև 1944 թ. մարտին ԹԱՄԺ-ում Սարաջօղլուի կառավարությանը վստահության քվեարկության ժամանակ ստացված 57 դեմ ձայները: Տե՛ս **Шлык В.И., Борьба за власть и кризис кемалистского режима в Турции после Второй мировой войны**, Локус: люди, общество, культуры, смыслы, №1, 2017, стр. 58:

<sup>168</sup> Լիստի արձանագրության համար տե՛ս **TBMM Zabıt Ceridesi**, devre VII, cilt 10, 22.05.1944, ss. 146-151: Իր ելույթում Բայարը մտահոգություն էր հայտնում բարձր սղաճի և արժույթի սև շուկայի դեմ կառավարության անգործության կապակցությամբ` շեշտելով, որ սպառիչ պատասխան չստանալու դեպքում դեմ է քվեարկելու բյուջեին: Ի վերջո ԹԱՄԺ քվեարկության արդյունքում բյուջեն ընդունվեց 392 կողմ, 167 ձեռնպահ, 1 դեմ ձայներով: Ընդ որում, ձեռնպահ մնացած օրենսդիրների մեծ թիվը վկայում է կուսակցության ներսում աճող դժգոհության մասին: Տե՛ս **VanderLippe J.M., The Politics of Turkish Democracy: Ismet Inonu and the Formation of the Multi-Party System 1938-1950**, New York, 2005, pp. 110-111:

հողահատկացման» մասին օրենքի<sup>169</sup> քննարկումների ընթացքում հենց այս բանավեճերում կարելի է տեսնել որոշ ժամանակ անց ձևավորվող ժողովրդավարական կուսակցության (թրք.՝ «*Demokrat Parti*», ԺԿ)<sup>170</sup> ընդդիմադիր դիրքորոշման առաջին դրսևորումները: ԹԱՄԺ-ի քննարկումների ընթացքում ելույթ ունեցող որոշ ՅԺԿ-ականներ, այդ թվում՝ Ջելալ Բայարը, Ադնան Մենդերեսը, Ռեֆիք Քորալթանը, Ֆուաթ Բյոքրյուլյուն, Ֆերիդուն Ֆիքրի Դյուշյունսելը, Յիքմեթ Բայուրը, Էմին Սազաքը, Ջալիթ Օրալը և Դամար Արըքօղլուն հանդես են գալիս Շյուքրյուն Սարաջօղլունի կառավարության սոցիալական քաղաքականության խիստ քննադատությամբ<sup>171</sup>: Յունիսի 7-ին՝ հողահատկացման մասին օրենքի քվեարկությունից առաջ Իզմիրից ընտրված պատգամավոր Ջ. Բայարը, Այդընից ընտրված Ա. Մենդերեսը, Իչելից ընտրված Ռ. Քորալթանը և Կարսից ընտրված Մ.Ֆ. Բյոքրյուլյուն ԹԱՄԺ-ում ՅԺԿ խմբակցությանն են ներկայացրեցնում մի հուշագիր, որը հայտնի է իբրև «Չորսի առաջարկություն» (թրք.՝ «*Dörtlü Takrir*»)<sup>172</sup>:

Առաջարկության գաղափարը պատկանում էր Բյոքրյուլյունին և Մենդերեսին, իսկ Քորալթանը տեքստի տակ ստորագրել էր նրանց միացած Բայարի հորդորով<sup>173</sup>: Վերջինիս՝ իբրև Աթաթյուրքի նախագահության շրջանի վերջին և Ինյունյունի նախագահության շրջանի առաջին վարչապետի ներգրավվածությունը հուշագրին զգալի կշիռ էր հաղորդում: Յասարական ընկալման մեջ ստորագրյալների շարքում Բայարի անվան ընդգծման տեսակետից բնութագրական է «Չորսի առաջարկությանը» ժամանակի թերթերից մեկի կողմից տրված

<sup>169</sup> Թրք.՝ «*Çiftçiyi Topraklandırma Kanunu*»: №4753 օրենքն ընդունվել է 1945 թ. հունիսի 11-ին՝ 351 կողմ ձայներով (104 պատգամավոր չի մասնակցել քվեարկությանը): Օրենքի տեքստը տե՛ս *Çiftçiyi Topraklandırma Kanunu*, T.C. Resmî Gazete, sayı 6032, 15.06.1945, ss. 8893-8897:

<sup>170</sup> Տե՛ս **Սե՛ս** և **Տա՛ն Բ.**, *Demokrat Parti'nin Kuruluş Süreci ve DP – CHP Siyasî Mücadelesi (1945-1947)*, Sosyal ve Kültürel Araştırmalar Dergisi, cilt 1(2), 2015, ss. 33:

<sup>171</sup> Տե՛ս **Տիմուր Թ.**, *Türkiye'de Çok Partili Hayata Geçiş*, İstanbul, 1991, s. 11, **Երօղլու Ը.**, *Demokrat Parti Tarihi ve İdeolojisi*, Ankara, 1990 s. 22:

<sup>172</sup> Տե՛ս **Բայար Ը.**, *Başvekilim Adnan Menderes*, İ. Bozdağ (ed.), İstanbul, 1986, s. 9: Առաջարկության տեքստը տե՛ս **Տա՛հինգիրայ Ծ.Տ.** (der.), *Celal Bayar'ın Söylev ve Demeçleri*, cilt 3: *Demokrat Parti'nin Kuruluşu'ndan İktidara Kadar Politik Konuşmalar: 1946 – 1950*, İstanbul, 1999, ss. 23-25, տե՛ս նաև T.C. Başbakanlık Cumhuriyet Arşivi (այսուհետ տեքստում՝ *BCA*), fon: 490.1, yer: 572.2277.3, lef. 26-28:

<sup>173</sup> Տե՛ս **Ագաօղլու Տ.**, *Demokrat Parti'nin Doğuş ve Yükseliş Sebepleri: Bir Soru*, İstanbul, 1972, s. 85:



գնահատականը. «Ձեւլ ալ Բայարը և ընկերները ցանկանում են, որ որոշ օրենքներում և կուսակցության կանոնադրությունում փոփոխություններ կատարվեն»<sup>174</sup>: Քանի որ ներկայացման պահից սկսած այս հուշագիրը ՅԺԿ վերնախավի կողմից անձնականացվել է<sup>175</sup>, մինչև դրա բովանդակությանն ու ստացած արձագանքներին անդրադառնալը համառոտ ներկայացնենք այն ստորագրած գործիչների անցած ճանապարհը:

Մահմուդ Ձեւլ ալ Էդդին Բայարը<sup>176</sup> ծնվել է 1883 թ. մայիսի 16-ին Յյուդավենդիզարի (Բուրսայի) նահանգի Ումուրբեյ գյուղում՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Բուլղարիայից ներգաղթյալների ընտանիքում: Առաջին քայլերը սկսել է բանկային ոլորտում՝ ի վերջո աշխատանքի անցնելով «Deutsche Orientbank»-ի Բուրսայի մասնաճյուղում: 1907 թ. հարել է երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը (թրք.՝ «İttihat ve Terakki Fırkası»)՝ մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը զբաղեցնելով Իթթիհաթի Բուրսայի, ապա՝ Իզմիրի տարածքային ստորաբաժանումների պատասխանատու քարտուղարի պաշտոնը: Այս ընթացքում ակտիվորեն համագործակցել է օսմանյան տխրահռչակ «Յատուկ կազմակերպության» (թրք.՝ «Teşkilât-ı Mahsûsa») հետ<sup>177</sup>: 1919 թ. Սարուխանի շրջանից ընտրվել է օսմանյան վերջին գումարման խորհրդարանի պատգամավոր, իսկ քեմալական ազգայնամուլական շարժման սկզբնավորումից հետո Գալիփ Յոջա կեղծանունով ակտիվ հակահունական գործունեություն է ծավալել: Յանրապետության հռչակումից հետո 1924-1932 թթ. Աթաթյունրքի հանձնարարությունամբ ստեղծել և գլխավորել է Թուրքիայի

<sup>174</sup> *Son Posta*, 13.06.1945, s. 1.

<sup>175</sup> Ադնան Մենդերեսն ավելի ուշ հիշելու էր, թե օրեր անց խմբակցության նիստի ընթացքում բոլոր 4 ստորագրողներն էլ ենթարկվել են շարունակական անձնավորված հարձակումների, թեև քննարկման օրակարգի միակ հարցն իրենց առաջարկության բովանդակությունն էր: Տե՛ս *Fersoy O.C., Bir Devre Adımı Veren Başbakan Adnan Menderes*, İstanbul, 1978. s. 88:

<sup>176</sup> 1934 թ. հունիսի 21-ին ընդունված «Ազգանվան մասին» №2525 օրենքի ուժի մեջ մտնելուց հետո Մահմուդ Ձեւլ ալ բեյը Աթաթյունրքից «նվեր» ստացավ Բայար ազգանունը, որը արաբերեն Ձեւլ ալ անվան թարգմանությունն է՝ «*փառավոր, հայ տնի*»: Տե՛ս *Spencer R.F., The Social Context of Modern Turkish Names*, Southwestern Journal of Anthropology, vol. 17(3), 1961, p. 206:

<sup>177</sup> Տարիներ անց Բայարը հայտարարեց վերհիշելու էր իր «կոմիտեական» (թրք.՝ «komiteci») կեղծանունը: Տե՛ս *Lewis G., Turkey: The End of the First Republic*, The World Today, vol. 16(9), 1960, p. 378:

Գործարար բանկը (թրք.՝ «*Türkiye İş Bankası*»): 1932-1937 թթ. եղել է երկրի  
Էկոնոմիկայի նախարար, 1937-1939 թթ.՝ վարչապետ: Իսմեթ  
Ինյունյունի նախագահ դառնալուց 2 ամիս անց՝ 1939 թ. հունվարի  
25-ին հրաժարական է ներկայացրել<sup>178</sup> և դրանից հետո զբաղվել  
օրենսդիր գործունեությամբ: 1945 թ. դրությամբ՝ Բայարը  
պատգամավոր էր ընտրվել ԹԱՄԺ բուրձր գումարումների  
ընտրություններում<sup>179</sup>:

Ալի Ադնան Էրթեքին-Մենդերեսը<sup>180</sup> ծնվել է 1899 թ.<sup>181</sup> Այդընի  
Նահանգում<sup>182</sup> խոշոր հողատիրոջ ընտանիքում: Սովորել է  
Զմյուննիայի իթթիհաթական դպրոցում (թրք.՝ «*İzmir İttihat ve Terakkî  
İdadisi*»), ապա՝ Ամերիկյան քոլեջում, որտեղ ուսումը կիսատ է  
մնացել օսմանյան բանակ զորակոչվելու պատճառով: Քոլեջի  
տարիներին՝ 1913 թ. ծանոթացել է «Միություն և  
առաջադիմություն» կուսակցության պատասխանատու

<sup>178</sup> Ինյունյունի և Բայարի անձնական հարաբերությունները Թուրքիայի  
քաղաքական պատմության իրադարձությունների համատեքստում անանձնակի  
հետաքրքրություն են ներկայացնում: Այդ մասին մանրամասն տե՛ս **Dilligil T.,  
Bayar-İnönü Yakınlaşması**, Ankara, 1969: Որոշ հեղինակներ այս երկու գործիչների  
անձնական հակակրանքով են բացատրել ԺԿ ստեղծումը: Տե՛ս, օրինակ, **Tuncer A.,  
Modern Türkiye'nin mimarı: Adnan Menderes**, İzmir, 1958, s. 9:

<sup>179</sup> Թուրքիայի երրորդ նախագահի մասին մանրամասն տե՛ս **Yiğit A., Celal Bayar and  
Political Leadership, 1937-1960**, PhD Dissertation, İhsan Doğramacı Bilkent University, Department of Political  
Science, Ankara, 2013:

<sup>180</sup> «Ազգանվան մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց հետո Ալի Ադնանը  
վերցրել է նախ Էրթեքին, ապա՝ Մենդերես ազգանունները: 1935 թ. օգոստոսի 7-  
ին ԶԺԿ գլխավոր քարտուղարին ուղղված հեռագրում կարդում ենք.  
«*Ազգանունս Էրթեքին է, Մենդերես է դարձել*»: Տե՛ս **BCA**, fon: 490.01, yer: 677.289.1:  
Չնայած սրան՝ մինչև 1937 թ. ներառյալ ԹԱՄԺ գրագրության մեջ հանդիպում է  
միայն Ադնան Էրթեքին ձևը: Ըստ Մենդերեսի որդու՝ Այդընի վկայության՝  
Մենդերես ազգանվան գաղափարը հղացել է ԱԳ նախարար Թաֆիթ Ռյունչթյուն  
Արասը՝ խորհուրդ տալով իբրև ազգանուն վերցնել հվ.-արևմտյան  
Թուրքիայով հոսող Մենդեր (թուրքական տարբերակով՝ Մեծ Մենդերես) գետի  
անունը: Զետաքրքրական է, որ Արասը ևս իր ազգանունը ստացել էր գետի՝  
Արաքսի անունից: Տե՛ս **İnan S., Muhalefette Adnan Menderes (1945-1950)**, Doktora tezi, Süleyman  
Demirel Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü, Isparta, 2002, s. 24:

<sup>181</sup> Մենդերեսի ծննդյան հստակ ամսաթիվն անհայտ է, թեև որոշ  
հեղինակների կարծիքով նա պետք է, որ լուրջս աշխարհ եկած լիներ գարնան  
վերջին կամ ամռան սկզբին: Տե՛ս, օրինակ, **Aydemir Ş.S., Menderes'in Dramı (1899-1960)**,  
İstanbul, 2000, s. 13: Իր իսլամական հայացքներով հայտնի թուրք գրող Նեջիփ  
Ֆազըլ Քըսաթյունը քրե «միստիկ» կապ փնտրելով 1950 թ. մայիսի 14-ի և 1960 թ.  
մայիսի 27-ի հետենթադրում է, որ Մենդերեսը ծնվել է մայիսին: Տե՛ս **Kisakirek  
N.F., Benim Gözümde Menderes**, İstanbul, 1998, s.155:

<sup>182</sup> 1947 թ. ապրիլի 1-ին ելույթի ընթացքում Մենդերեսի խոսքում տեղ գտած  
արտահայտությունը, թե «*գեղեցիկ հզմիրը, որտեղ ծնվել և մեծացել եմ*»  
(թրք.՝ «*doğduğum ve büyüdüğüm güzel İzmir*»), մեր կարծիքով պետք է մեկնաբանել  
Թուրքիայի ապագա վարչապետի ելույթներին բնորոշ պոպուլիզմի  
համատեքստում: Տե՛ս **Vatan**, 02.04.1947: Ծննդյան մասին պահպանված  
փաստաթղթերից դատելով նա ծնվել է ներկայիս Այդընի նահանգի Քոչարլըի  
չրջանի Չաքըրբեյլի գյուղում: Տե՛ս **İnan S., Muhalefette Adnan Menderes (1945-1950)**, s. 4,  
dp. 14 և ekler 5-7:

քարտուղար Ջելալ Բայարի հետ<sup>183</sup>: 1916 թ. դեկտեմբերից հաշվառվել է իբրև պահեստազորի սպա, սակայն ռազմական գործողության ընթացքում չի մասնակցել առողջական խնդիրների պատճառով: Հարել է քեմալական շարժմանն ու հունների դեմ պարտիզանական պայքարին: 1930 թ. սեպտեմբերին հիմնել և ղեկավարել է Ազատական հանրապետական կուսակցության (թրք.՝ «*Serbest Cumhuriyet Fırkası*») Այդընի տարածքային կառույցը: Դրա կազմալուծումից հետո անդամակցել է ՀԺԿ-ին և 1931 թ. այդ ընտրատարածքից ընտրվել ԹԱՄԺ պատգամավոր: Օրենսդիրում աշխատանքին զուգահեռ 1933-1935 թթ. սովորել է Անկարայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Լինելով խոշոր կալվածատեր՝ 1940-ականներից սկսած հակադրվել է իշխանության վարած հողային քաղաքականությանը, ինչն ի վերջո բերել է ՀԺԿ հետևորդադադարական խզմանը<sup>184</sup>:

Բեքիր Ռեֆիք Քորալթանը<sup>185</sup> ծնվել է 1889 թ. Սեբաստիայի նահանգի Դերիկի գավառում: 1910 թ. ավարտել է Ստամբուլի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Տարբեր պաշտոններ է զբաղեցրել օսմանյան ներքին գործերի և դատախազության համակարգերում, եղել է Տրապիզոնի ոստիկանապետը: Մասնակցել է քեմալական շարժմանը, ընտրվել ԹԱՄԺ առաջին գումարման պատգամավոր: Ակտիվորեն ներգրավված է եղել Անկախության դատարանների<sup>186</sup> աշխատանքում: 1936-1938 թթ.՝ Արդվիհի, 1938-1939 թթ.՝ Տրապիզոնի, 1939-1942 թթ.՝ Բուրսայի

<sup>183</sup> Տե՛ս **Bayar C.**, *Başvekilim Adnan Menderes*, ss. 21-23:

<sup>184</sup> Մենդերեսի կյանքի մասին մանրամասն տե՛ս թերևս նրա մասին գրված ամենատարածված գրքում՝ **Aydemir Ş.S.**, *Menderes'in Dramı (1899-1960)*: Առավել չեզոք դիրքերից գրված կենսագրության համար տե՛ս **İnan S.**, *Muhalefette Adnan Menderes (1945-1950)*:

<sup>185</sup> «Ազգանվան մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց հետո Աթաթյուրքի կողմից ստացել է Քորալթան՝ «կրակոտ, գործուն տիրակալ» ազգանունը: Տե՛ս *Biyografisi*, Vatan, 18.06.1974:

<sup>186</sup> Անկախության դատարանները (թրք.՝ «*İstiklâl mahkemeleri*») արտակարգ լիազորություններով օժտված դատական մարմիններ էին, որոնք 1920-1927 թթ. օգտագործվում էին քեմալական շարժման թշնամիների, դասալիքները և դավաճան հռչակված անձանց նկատմամբ հաշվեհարդար տեսնելու համար: Ռ. Քորալթանը 1921-1923 թթ. մասնակցել է Յոզղաթի և Ստամբուլի Անկախության դատարանների աշխատանքին: Դրանց մասին մանրամասն տե՛ս **Aybars E.**, *İstiklâl Mahkemeleri, 1920-1927*, İzmir, 1988:

նահանգապետ: 1943 թ.՝ 7-րդ գումարման ԹԱՄԺ-ում վերստին անցել է օրենսդիր գործունեության<sup>187</sup>:

Մեհմեթ Ֆուաթ Քյոփրյուլյուն<sup>188</sup> ծնվել է 1890 թ. դեկտեմբերի 5-ին Կոստանդնուպոլսում: Ընդունվել, սակայն սեփական նախաձեռնությամբ կիսատ է թողել ուսումնասիրությունը՝ համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Ակտիվորեն զբաղվել է հրապարակախոսական և գիտական աշխատանքով: Եղել է թուրքական գիտության արևմտականացման ջանասարկերից մեկը: 1923 թ. դարձել է Ստամբուլի համալսարանի գրականության ֆակուլտետի դեկան: Հանրապետության հռչակումից հետո Աթաթյուրքի հանձնարարությանը հիմնել է Թուրքիայի թյուրքագիտական ինստիտուտը (թրք.՝ «*Türkiyat Enstitüsü*»)՝ սկսելով հրատարակել «Թյուրքագիտություն» (թրք.՝ «*Türkiyat*») պարբերականը: Աթաթյուրքի առաջարկությամբ մուտք է գործել քաղաքականության, 1935 թ., 1939 թ., 1943 թ. Կարսի ընտրական շրջանից ընտրվել է ԹԱՄԺ պատգամավոր:<sup>189</sup>:

Վերադառնալով «Չորսի առաջարկությանը»՝ նշենք, որ դրա հիմնական պահանջներն էին՝

1. ազգային իշխանության ամենաբնական դրսևորում և հիմք համարվող խորհրդարանական վերահսկողության (գործադիրի նկատմամբ) ապահովման՝ սահմանադրության ոչ միայն տառին, այլ և ոգուն համապատասխանող ուղիների որոնում,
2. դեռ Անկարայի կառավարության 1921 թ. հիմնական օրենքով սահմանված՝ քաղաքացիների քաղաքական իրավունքների և ազատության ներքին իրացման համար հնարավորությունների ստեղծում,
3. վերոհիշյալ նպատակների համապատասխան կուսակցության աշխատանքի վերակազմակերպում<sup>190</sup>:

<sup>187</sup> Քորալթանի կյանքի մասին մանրամասն տե՛ս նրահուշերում՝ **Ertepinar C. (ed.), Refik Koraltan: Bir Politikacının Anıları Her Şey Vatan İçin**, Ankara, 1999:

<sup>188</sup> Միևնույն ժամանակ «Ազգանվան մասին» օրենքի ընդունումը՝ Քյոփրյուլյուն զարգացրեց Մեհմեթ Ֆուաթ Քյոփրյուլյուն սերում էր Օսմանյան կայսրությանը հայտնի վեգիտներով ազգային ժողովրդականության ընդունմանը:

<sup>189</sup> Քյոփրյուլյունի կյանքի մասին մանրամասն տե՛ս հետևյալ մահախոսականում **Tansel F.A., Memleketimizin Acı Kaybı: Prof. Dr. Fuad Köprülü**, Belleten, cilt 30(120), 1966, ss. 621-636:

<sup>190</sup> Տե՛ս **Burçak R.S., Türkiye'de Demokrasiye Geçiş 1945-1950**, Ankara, 1979, ss. 241-244:

Ուշագրավ է, որ հուշագրի հեղինակները հղում էին կատարում Թուրքիայի նախագահ Իսմեթ Ինյունյունի 1945 թ. մայիսի 19-ի երիտասարդության օրվան նվիրված հայտնի ելույթին<sup>191</sup>, որում վերջինս շեշտում էր երկրորդ աշխարհամարտից հետո դեպի ժողովրդավարություն քայլեր կատարելու անհրաժեշտությունը<sup>192</sup>:

Չորս պատգամավորների առաջարկությունը 7 ժամ շարունակ քննարկվում է ՅԺԿ խորհրդարանական խմբակցության 1945 թ. հունիսի 12-ի դռնփակ նիստում՝ հակառակ բանավեճի մանրամասները հանրությանը հասանելի դարձնելու՝ ստորագրյալների առաջարկին<sup>193</sup>: Թե՛ մթնոլորտում անցած բանավեճերի ընթացքում Բայարը, Մենդերեսը, Քորալթանսու Քյոփրյունլյուն ենթարկվում են սուր քննադատության: Իր ելույթում վարչապետ Շ. Սարաջօղլուն նշում է, որ ՅԺԿ-ն արդեն իսկ հիմնված է ժողովրդավարական սկզբունքների վրա և պահանջում հետ կանչել առաջարկությունը<sup>194</sup>: Ի վերջո, քվեարկությամբ «Չորսի առաջարկությունը» մերժվում է այն հիմնավորմամբ, որ օրենսդրական փոփոխությունները պետք է ներկայացնել ԹԱՄԺ, իսկ կանոնադրությունը փոփոխում է կուսակցության համագումարը<sup>195</sup>:

Այս քննարկումից հետո ևս ՅԺԿ վերնախավի և «չորսի» միջև հակասությունները շարունակվում են: Դրավկայությունն է ԹԱՄԺ ամբիոնից 1945 թ. օգոստոսի 15-ին Մենդերեսի ունեցած ելույթը, որում վերջինս շեշտում է, որ ազգային կամքը պետք է գերազույն սկզբունք հռչակվի ընտրության ազատության իրավունքի ճանաչման և հակաժողովրդավարական օրենքների վերացման ճանապարհով<sup>196</sup>: 1945 թ. սեպտեմբերի 6-ին Մենդերեսը ՅԺԿ գլխավոր քարտուղար Նաֆի Արուճ Բանսուի կողմից ստորագրված նամակ է ստանում, որով նրանից պահանջում էին

<sup>191</sup> Ելույթի տեքստը տե՛ս *Milli Şef İnönü'nün 19 Mayıs Gençlik Bayramı munasibetile gençliğe hitaben söylediği nutuk*, Ayın Tarihi, cilt 126, Mayıs 1944, ss. 23-29:

<sup>192</sup> Տե՛ս **Turan İ.**, *Turkey's Difficult Journey to Democracy: Two Steps Forward, One Step Back*, Oxford, 2015, p. 68:

<sup>193</sup> Տե՛ս **Bayar C.**, *Başvekilim Adnan Menderes*, s. 33, **Вдовиченко Д.И.**, *Борьба политических партий в Турции (1944-1965 гг.)*, Москва, 1967, стр. 28:

<sup>194</sup> Տե՛ս **Aydemir Ş.S.**, *Menderes'in Dramı (1899-1960)*, s. 419:

<sup>195</sup> Տե՛ս **Burçak R.S.**, *Türkiye'de Demokrasiye Geçiş 1945-1950*, s. 15:

<sup>196</sup> Տե՛ս **Kılçık H.**, *Menderes'in Konuşmaları, Demeçleri, Makaleleri*, cilt 1, Ankara, 1991, s. 43

բացատրել վերջին շրջանում նրա գործողությունների տրամաբանությունը<sup>197</sup>: Պատասխան նամակում Մենդերեսը համոզմունք է հայտնում, որ իր գործողությունները որևէ կերպ չեն հակասել կուսակցության ո՛չ կանոնադրությանը, և ո՛չ էլ ծրագրին: Ըստ նրա՝ իր քայլերը նպատակ չեն հետապնդել քառս տարածել քաղաքական համակարգում, այլ լուկ ներկայացնել ժողովրդավարացման շուրջ իր տեսակետները<sup>198</sup>:

Չնայած դրան՝ 1945 թ. սեպտեմբերի 21-ին ՅԺԿ խորհուրդը<sup>199</sup>, հաշվի առնելով կուսակցության դեմ նրանց գործունեությունը, միաձայն որոշում է կայացնում կուսակցության շարքերից վտարել Այդինից ընտրված պատգամավոր Ադնան Մենդերեսին և Կարսից ընտրված Ֆուաթ Քյոփրյուլյունին<sup>200</sup>: Ուշագրավ է, որ «Չորսի առաջարկությամբ» սկիզբ դրված գործընթացը մեծ արձագանք գտավ արևմուտքում: ԱՄՆ պետքարտուղարության գրագրության մեջ այն ընկալվում է իբրև ժողովրդավարացման ուղղությամբ գործադրվող նպատակային ջանք<sup>201</sup>:

Կուսակցական որոշման հաջորդ օրը՝ սեպտեմբերի 22-ին Մենդերեսը և Քյոփրյուլյունն հանդես են գալիս մամուլի էջերում հրապարակումներով՝ փորձելով հանրությանը հասցնել սեփական դիրքորոշումը: Մասնավորապես, Մենդերեսն իր վրդովմունքն է հայտնում, որ «Վաթան» պարբերականի սեպտեմբերի 13-ի և 14-ի համարներում իր հրապարակած ծրագրային հոդվածները<sup>202</sup> ՅԺԿ կողմից մեկնաբանվել են իբրև հակակուսակցական գործունեության ապացույց: Ըստ նրա՝ քաղաքական համակարգի բարեփոխման իրենց տեսլականը պետք է

<sup>197</sup> Տե՛ս Tanyeli H., Topsakaloğlu A., *İzahlı Demokrat Parti Kronolojisi*, cilt 1, Ankara, 1959, ss. 27-28:

<sup>198</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>199</sup> Կուսակցության խորհրդի (թրք.՝ «CHP Parti Divanı») կազմում ընդգրկված էին ՅԺԿ նախագահության անդամները, ԹԱՄԺ նախագահը, կառավարության կուսակցական անդամները, վարչական խորհրդի, խմբակցության և կուսակցական անկախ խմբի ղեկավարները: Տե՛ս Akşam, 22.09.1945, s. 2:

<sup>200</sup> Տե՛ս Ulus, 22.09.1945, s. 1: Որոշման տեքստը տե՛ս՝ BCA, fon: 490.1, yer: 572.2277.3, lef. 12:

<sup>201</sup> Տե՛ս U.S. National Archives, Turkey: *Records of the U.S. Department of State, 1802-1949*, 867.00, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1945-1949, pp. 260-264:

<sup>202</sup> Տե՛ս Menderes A., *Başbakan'ın Demeci Münasebetiyle*, Vatan, 13.09.1945, ss. 1-2 և **ՆՈՒՂՆԻ** *Başbakan'ın Demeci Münasebetiyle*, Vatan, 13.09.1945, ss. 1-2: Հետաքրքրական է, որ թուրքական մամուլի որոշ պարբերականներ, մասնավորապես՝ Ահմեթ Էմին Յալմանի խմբագրությամբ տպագրվող «Վաթանը» և Չեքերիա ու Սաբիհա Սերթելների կողմից խմբագրվող «Թանը» բացահայտ կերպով աջակցում էին «չորսին»: Տե՛ս Zürcher E.J., *Turkey: A Modern History*, p. 213:

քննադատվելու միայն գաղափարական, և ոչ անձնական համատեքստում<sup>203</sup>: Ազատ և մրցակցային ընտրությունների համար «չորսի» պայքարի համատեքստում երկիմաստ է տեղի ունեցածին Քյոփրյուլյուլի գնահատականը. «*միայն ու միայն թուրք ազգին է պատկանում իրավունքն ու լիազորությունը՝ որոշելու, թե ով էր ճիշտ*»<sup>204</sup>:

ՅԺԿ-ից Մենդերեսի և Քյոփրյուլյուլի հեռացումից հետո ի նշան բողոքի սեպտեմբերի 26-ին պատգամավորական մանդատը վայր է դնում Ջելալ Բայարը<sup>205</sup>: Այս քայլը ցույց է տալիս, որ նա կիսում էր կուսակցությունից վտարված գործընկերների այն կարծիքը, թե ՅԺԿ ներսում հակադիր կարծիք արտահայտելու հնարավորությունները խիստ սահմանափակ են: Քորալթանի վտարումից հետո՝ դեկտեմբերի 3-ին Բայարը ևս լքում է քեմալական կուսակցության շարքերը<sup>206</sup>: Այս զարգացումներն ավելի քան իրական էին դարձնում ՅԺԿ-ից վտարվածների կողմից նոր կուսակցության ստեղծումը<sup>207</sup>:

Նկատենք, որ ձևավորվող թուրքական ժողովրդավարության ընդհանուր ուրվագծերը ներկայացվել էին ավելի վաղ՝ 1945 թ. նոյեմբերի 1-ին ԹԱՄԺ նոր նստաշրջանի բացման ժամանակ Իսմեթ Ինյունյուլի ունեցած ելույթում: Խոստովանելով, որ թուրքական քաղաքական համակարգի միակ թերությունն ընդդիմադիր կուսակցությունների բացակայությունն է՝ «Ազգային շեֆը» ընդգծում էր. «*Ժողովրդավարությունն ունի սկզբունքներ, որոնք ընդհանուր են բոլոր երկրների համար, սակայն կան նաև գծեր, որոնք յուրահատուկ են առանձին վերցրած ազգի բնավորության և մշակույթի համար: Թուրք ազգը*

<sup>203</sup> Տե՛ս *Vatan*, 22.09.1945, ss. 1, 3:

<sup>204</sup> Տե՛ս նույն տեղը: Չարկ է նշել, որ Ֆուաթ Քյոփրյուլյուլն օգոստոս-սեպտեմբեր ամիսներին բավական հաճախ էր հանդես գալիս թեմայի շուրջ մամլո հրապարակումներով: Մասնավորապես, տե՛ս **Köprülü M.F.**, *Açık Konuşalım!*, *Vatan*, 25.08.1945, ss. 1, 3, **İnönü İh** *Yalancının Mumu...*, *Vatan*, 06.09.1945, ss. 1-2, *Yalancının Mumu...*, *Vatan*, 07.09.1945, ss. 1, 4, *Sırça Köşkte Oturan...*, *Vatan*, 11.09.1945, s. 2, *Sırça Köşkte Oturan...*, *Vatan*, 12.09.1945, ss. 2, 4:

<sup>205</sup> Տե՛ս **Tanyeli H.**, **Topsakaloğlu A.**, *İzahlı Demokrat Parti Kronolojisi*, cilt 1, s. 30:

<sup>206</sup> Տե՛ս **Bayar C.**, *Başvekilim Adnan Menderes*, s. 47:

<sup>207</sup> 1945 թ. դեկտեմբերի սկզբին թուրքական հասարակական շրջանակներում նոր կուսակցության ստեղծումն անշրջելի էր համարվում: Տե՛ս, օրինակ, *Eski Başbakan Celâl Bayarın kuracağı parti*, *Cumhuriyet*, 02.12.1945, *Yeni parti için son hazırlıklar*, *Cumhuriyet*, 04.12.1945: Այդ համոզմունքն ամրապնդվել էր հասկապես դեկտեմբերի 4-ին տեղի ունեցած Ինյունյուլ-Բայար հանդիպումից հետո: Տե՛ս *Millî Şef dün Celâl Bayarı kabul ettiler*, *Cumhuriyet*, 05.12.1945:

պարտավոր է գտնել իր համար ժողովրդավարության այն բնութագրիչ ներք, որոնք կհամապատասխանեն իր բնույթին և խառնվածքին»<sup>208</sup>: Սակայն Ինյոնյուն անուամբ հենարավոր ամենը ժողովրդավարությունը նեղ սահմաններում պահելու համար: Նոր ձևավորվող բազմակուսակցական համակարգից բացառվել էր ձախերի մասնակցությունը, իսկ աջերի մեծ մասը (այդ թվում՝ օսմանիստները, կրոնական ֆունդամենտալիստները, նացիստական գաղափարները կիսող ծայրահեղ ազգայնամուլները) մեկուսացվում էին քաղաքական գործընթացներից: Թուրքիայի իշխող վերնախավի համար ընդունելի էր միայն այն ընդդիմությունը, որը ձևավորված կլիներ կիսաազատական աջերից և բաղկացած այն գործիչներից, որոնք ՅԺԿ շարքերում որոշակի ճանապարհ էին անցել <sup>209</sup>:

Միաժամանակ, եթե Ինյոնյուն աստիճանաբար հակվում էր ռեժիմի ազատականացման գաղափարին<sup>210</sup>, ապա քեմալականների առավել արմատական թևի ներկայացուցիչները Ռեջեփ Փեքերի գլխավորությամբ շարունակում էին ներկայացնել տնտեսության պետական սեկտորի հետ սերտորեն կապված ռազմաքաղաքական վերնախավի շահերը: Հատկանշական է, որ ՅԺԿ-ականների չափավոր թևը ներկայացնող Նիհաթ Էրիմն անգամ կարծում էր որ հայտարարվող ազատությունների նկատմամբ անհրաժեշտ է խիստ վերահսկողություն հաստատել <sup>211</sup>:

Հետագոտողների մեծ մասը համակարծիք է, որ «Չորսի առաջարկության» ներկայացման պահին դրահեղինակները նոր կուսակցություն հիմնելու մտադրությունն չունեին և առաջնորդվում էին լոկ ՅԺԿ-ն բարեփոխելու ցանկությամբ <sup>212</sup>:

<sup>208</sup> **Öztürk K.**, *Cumhurbaşkanları'nın Türkiye Büyük Millet Meclisini Açış Nutukları*, İstanbul, 1969, s. 379.

<sup>209</sup> **St' u Eroğul C.**, *The Establishment of Multiparty Rule: 1945-1971*, İ.C. Schick, E.A. Tonak, Turkey in Transition: New Perspectives, New York and Oxford, 1987, pp. 103-104:

<sup>210</sup> **St' u Heper M.**, *İsmet İnönü: The Making of a Turkish Statesman*, Leiden, 1998, p. 162: Թուրքիայի երկրորդ նախագահի հայացքները նույն կերպ է ներկայացնում նաև թուրք հայ տնի լրագրող, Ինյոնյունի կենսագիր (ևս նրա դստեր՝ Օզդենի ամուսին) Մեթին Թեքերը: **St' u Toker M.**, *Demokrasimizin İsmet Paşalı yılları (1944-1973)*, cilt 1, *Tek Partiden Çok Partiye (1944-1950)*, Ankara, 1990, p. 32:

<sup>211</sup> **St' u VanderLippe J.M.**, *The Politics of Turkish Democracy: Ismet Inonu and the Formation of the Multi-Party System 1938-1950*, p. 166: Այս համատեքստում ուշազրավ է Նիհաթ Էրիմի՝ «Ուլուս» պարբերականում հրատարակած հոդվածը՝ **Erim N.**, *Demokrasi, gaye midir? Vasıta midir?*, Ulus, 30.05.1946:

<sup>212</sup> **St' u Zürcher E.J.**, *Turkey: A Modern History*, p. 212, **Koçak C.**, *Türkiye'de İki Partili Siyasi Sistemin Kuruluş Yılları 1945-1950*, İstanbul, 2010, s. 408, **Кондакчян Р.П.**, *Внутренняя политика Турции (1950-1960)*,



Սակայն կուսակցական վերնախավի կողմից ցուցաբերված կոշտ դիրքորոշումը Բայարին և նրա կողմնակիցներին ընդունված իր տարբերվող կարծիք արտահայտելու համար այլ հարթակ չթողեց, քան նոր կուսակցության հիմնումը<sup>213</sup>: ՅԺԿ նման դիրքորոշման մեջ կարելի է որոշակի կանխամտածվածության միտում տեսնել: Ինյոնյուն իրոք ինչ-որ իմաստով շահագրգռված էր նախկին կուսակիցների կողմից նոր՝ ընդդիմադիր կուսակցության ստեղծմամբ<sup>214</sup>: Թուրք պատմաբան Թարըք Չաֆեր Թունայան կարծիք է հայտնում, որ իշխանությունները քաղաքական բազմակարծությունն օգտագործում էին Եվրոպայում ֆաշիստական ուժերի պարտության և ՄԱԿ-ի կազմավորման ֆոնին քիչ թե շատ ժողովրդավար երևալու նպատակով<sup>215</sup>:

ԺԿ հիմնադրումն ազդարարող մամլու ասուլիսը Բայարի, Մենդերեսի, Քորալթանի և Քյոփրյունլյունի կողմից հրավիրվել էր 1946 թ. հունվարի 7-ին: Կուսակցության հիմնադիրները առանձնահատուկ կերպով շեշտում էին, որ նորաստեղծ քաղաքական ուժը հիմնված է ոչ թե անձերի, այլ գաղափարների վրա<sup>216</sup>: Չնայած ՅԺԿ-ից տարբերակվելու՝ ԺԿ հիմնադիրների ջանքերին՝ սկզբնական շրջանում նորաստեղծ կուսակցությունն գաղափարական ինքնության առումով նույնացվում էր քեմալականների հետ<sup>217</sup>: Ավելին, քիչ չէին նաև

Ե.Ղ. Սարգսյան և ուրիշներ (խմբ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. V: Թուրքիա, Երևան, 1970, էջ 17:

<sup>213</sup> Տե՛ս **Karpat K.H.**, *Turkey's Politics: The Transition to a Multi-Party System*, Princeton, 1959, p. 410:

<sup>214</sup> Ոմանք Բայարի կողմից կուսակցության ստեղծումը սկզբնական շրջանում համեմատում էին Աթաթյունը դրոմամբ 1930 թ. օգոստոսին Ֆեթհի Օքյարի կողմից հիմնված և ընդամենը 4 ամիս գոյատևած Ազատական հանրապետական կուսակցության օրինակի հետ՝ նշելով, որ այն ՅԺԿ ղեկավարության և Ինյոնյունի կողմից սկզբնապես ընկալվում էր իբրև հանրային դժգոհության ալիքը շեղելու և տարակարծության պատրանք ստեղծելու համար: Տե՛ս **Шлыкков В.И.**, *Борьба за власть и кризис кемалистского режима в Турции после Второй мировой войны*, стр. 60, **Ahmad F.**, *The Making of Modern Turkey*, 1993, pp. 104-105: ՅԺԿ գործողությունների կանխամտածվածության մասին տե՛ս նաև **Karpat K.H.**, *Turkey's Politics: The Transition to a Multi-Party System*, p. 146, **Koçak C.**, *Türkiye'de İki Partili Siyasal Sistemin Kuruluş Yılları 1945-1950*, s. 691 և այլն:

<sup>215</sup> Տե՛ս **Tunaya T.Z.**, *Türkiye'de Siyasal Partiler, 1859 – 1952*, İstanbul, 1952, s. 647:

<sup>216</sup> Տե՛ս **Ulus**, 08.01.1946, s. 1

<sup>217</sup> Տե՛ս **Ağaoğlu S.**, *Demokrat Parti'nin Doğuş ve Yükseliş Sebepleri: Bir Soru*, s. 52: Ինչպես նկատում է Ռաֆֆի Կոնդակչյանը, ԺԿ հիմնադիրներին միավորում էր ոչ միայն ՅԺԿ-ական անցյալը, այլ նաև այն, որ բոլորն էլ կամ եղել են երիտթուրքական կուսակցության ակտիվ անդամ, կամ անցել են դրա դարոցով: Տե՛ս **Кондакчян Р.П.**, *Внутренняя политика Турции (1950-1960)*, стр. 17:

նրանք, ովքեր ժԿ-ին մեղադրում էին ընդհանրապես գաղափարական հիմք չ ունենալ ու մեջ<sup>218</sup>:

Այս համատեքստում հետաքրքիր են կուսակցության հիմնադիրների արած որոշ հայտարարությունները: Մասնավորապես, Մենդերեսը, պատասխանելով կուսակցության աջակողմյան կամ ձախակողմյան հայացքներ ունենալ ու մասին հարցին, նշել էր, որ ժԿ տեղը կարելի է նշել միայն քաղաքական դասակարգման մեջ ՅԺԿ տեղը պարզելուց հետո<sup>219</sup>: Բայարն, իր հերթին, անդրադառնալով ժԿ՝ Ազատական հանրապետական կուսակցության օրինակով իբրև կեղծ ընդդիմություն ստեղծվել ու մասին տարածված կարծիքներին, նշել է, որ նման դավադրության մասին խոսելն անտեղի է և կուսակցությունը հիմնվել է հենվելով թուրք ժողովրդի քաղաքական հասունության վրա<sup>220</sup>:

Ստեղծումից ընդամենը կես տարի անց՝ 1946 թ. հունիսի 21-ին ժԿ-ին սպասում էր համապետական ընտրություններ, որոնք առաջին մրցակցայինն էին թուրքի պատմության մեջ: Դրանք պետք է կայանային 1947 թ., սակայն 1946 թ. մայիսին կայացած ՅԺԿ արտահերթ համագումարի ընթացքում հայտնի դարձավ, որ իշխանությունը մտադիր է խորհրդարանական ընտրությունները վաղաժամ անցկացնել<sup>221</sup>: Այս քայլը պետք է բացատրել ընտրական գործընթացը մինչև ժԿ լիակատար կառուցվածքային կայացումը կազմակերպելու և հեշտ հաղթանակի հասնելու ցանկությամբ<sup>222</sup>: Չնայած ընտրական

<sup>218</sup> Տե՛ս **Karpat K.H.**, *Turkey's Politics: The Transition to a Multi-Party System*, p. 210, **Turan İ.**, *The Evolution of Political Culture in Turkey*, in A. Evin (ed.), *Modern Turkey: Continuity and Change*, Wiesbaden: VS Verlag für Sozialwissenschaften, 1984, p. 11:

<sup>219</sup> Տե՛ս **Bayar C.**, *Başvekilim Adnan Menderes*, s. 48:

<sup>220</sup> Տե՛ս *Celâl Bayarın demeci*, *Cumhuriyet*, 14.03.1946, p. 2:

<sup>221</sup> 1946 թ. մայիսի 10-ին համագումարի ընթացքում իր ունեցած ելույթում Ինյոնյուն հոլյս էր հայտնել, որ «ժողովրդավարներն» այնուամենայնիվ կմասնակցեն համապետական ընտրություններին: Տե՛ս **Türk Devrim Tarihi Enstitüsü**, *İnönü'nün Söylev ve demeçleri: T.B.M.M. Meclisinde ve C.H.P. Kurultaylarında (1919-1946)*, Istanbul, 1946, s. 402: Դրանից երկու օր առաջ հայտնի էր դարձել, որ ընդդիմադիրները չեն մասնակցելու ՏԻՄ ընտրություններին: Յետաքրքրական է, որ Ինյոնյունի հայտարարությունների տոնը Բայարի մոտմտավախությունն էր հարուցել, որ խորհրդարանական ընտրությունները բոյկոտելու դեպքում ինքը կարող է մեղադրվել ազգային դավաճանության մեջ: Տե՛ս **Bayar C.**, *Başvekilim Adnan Menderes*, s. 54-55:

<sup>222</sup> Այս թեմայի շուրջ Մենդերեսի հրապարակած հոդվածում, մասնավորապես, կարդում ենք. «*Ընտրությունները վաղաժամ անցկացնելու պատճառը չավ հայտնի է: ԺԿ նկատմամբ մարդկանց անսպասելի հետաքրքրությունը*

գործընթացի արդարության նկատմամբ թերահավատությանը՝ ԺԿ ղեկավար մարմինը հունիսի 16-ին միաձայն որոշում կայացրեց մասնակցել ընտրություններին՝ «*հանուն ժողովրդի*»<sup>223</sup>: ԺԿ-ն քվեարկության էր գնում 243 թեկնածուից բաղկացած կուսակցական ցուցակով, որն ընդգրկում էր ի թիվս այլոց նաև 2 նահանգապետի, 15 բարձրաստիճան սպայի և այլն<sup>224</sup>: Թեև ընտրական կոալիտ խախտումների պատճառով ԺԿ-ն ընտրությունները հայտարարել էր անօրինական<sup>225</sup>, այնուամենայնիվ Բայարին և կողմնակիցներին 7-րդ գումարման ԹԱՄԺ-ում բաժին հասավ 465 տեղից 61-ը<sup>226</sup>: Ընդ որում, ԺԿ հաղթանակի էր հասել երկու առանցքային ընտրական գոտիներում՝ Ստամբուլում<sup>227</sup> և Անկարայում: Մի քանի ամսում գրանցված նման արդյունքները վկայում էին քաղաքացիների շրջանում երկու տասնամյակից ավելի իշխանության ղեկին գտնվող ԶԺԿ կառավարումից առկա դժգոհության մասին: Ըստ թուրք պատմաբան Մ. Ալբայրաքի՝ 1946 թ. հուլիսյան ընտրությունները հավակնում են թուրքական քաղաքական պատմության մեջ ամենաքննարկվածը լինել՝ հաշվի առնելով ընտրական գործընթացի ժողովրդավարացման վրա դրանց ազդեցությունը<sup>228</sup>:

Նորընտիր խորհրդարանի առաջին նիստերն արդեն ցույց են տալիս, որ ԺԿ-ն չի պատրաստվում լինել քեմալականների համար նախընտրելի կառավարվող ընդդիմությունը: 1946 թ. դեկտեմբերին հաջորդ տարվա բյուջեի քննարկումների ընթացքում երկու կուսակցությունների միջև կրքերի բորբոքումը հասնում է գագաթնակետին: ԺԿ անունից Սենդերեսի հնչեցրած խիստ քննադատական ելույթից հետո

---

*հարուցել է նախկինում հանդուրժող թվացող ԶԺԿ դժգոհությունը: Սրանով է պայմանավորված, որ ԶԺԿ-ն ցանկանում է անմիջապես և ամբողջապես արգելակել ԺԿ զարգացումը»:* Տե՛ս *Teessür Verici Bir Manzara, Vatan*, 19.05.1946:

<sup>223</sup> Տե՛ս **Şahingiray Ö.Ş.** (der.), *Celal Bayar'ın Söylev ve Demeçleri*, cilt 3: *Demokrat Parti'nin Kuruluşu'ndan İktidara Kadar Politik Konuşmalar: 1946 – 1950*, ss. 442-446:

<sup>224</sup> Տե՛ս **Миллер А.Ф.**, *Очерки новейшей истории Турции*, Москва-Ленинград, 1948, стр. 221:

<sup>225</sup> Տե՛ս **Bisbee E.**, *The New Turks: Pioneers of the Republic, 1920-1950*, Philadelphia, 1951, p. 227:

<sup>226</sup> Տե՛ս **Tunaya T.Z.**, *Türkiye'de Siyasal Partiler, 1859 – 1952*, s. 657:

<sup>227</sup> Թուրք հայ տնի լրագրող, «Վաթան» թերթի հիմնադիր և գլխավոր խմբագիր Ահմեթ Էմին Յալմանի փոխանցմամբ՝ Ստամբուլում ԺԿ հաղթանակը բացատրվում է նաև նրանով, որ քաղաքապետ ԼյուՖթի Քըրդարը մեծապես դիմադրել է ԶԺԿ-ականների ճշմանը՝ կեղծիքները կանխելու նպատակով հարցը բարձրացնելով նաև նախագահ Իսյունյունի մոտ: Տե՛ս **Yalman A.E.**, *Yakın Tarihte Gördüklerim Geçirdiklerim*, cilt 2, 1971, İstanbul, s. 136:

<sup>228</sup> Տե՛ս **Albayrak M.**, *Türk Siyasi Tarihinde Demokrat Parti (1946-1960)*, Ankara, 2004, s. 90:

վարչապետ Ռեջեփ Թեքերը ԹԱՄԺ ամբիոնից վերջինիս մեղադրում է «հոգեկան հիվանդ» (թրք.՝ «*psikopat*»)<sup>229</sup> Լինելու մեջ: Դրան հաջորդած՝ ԺԿ-ականների կողմից ԹԱՄԺ նիստերի տևական բոյկոտը դադարում է միայն դեկտեմբերի 28-ին՝ նախագահ Ինյունյուի միջնորդությամբ հետո<sup>230</sup>:

1947 թ. հունվարի 7-11-ին կայանում է ժողովրդավարական կուսակցության առաջին համագումարը, որի ընթացքում Ջելալ Բայարը հանդես է գալիս ծավալուն ծրագրային ելույթով<sup>231</sup>: Համագումարի արդյունքներով ներկայացվում է նախորդ տարի կուսակցության ներսում ստեղծված «Յիմնական հայցերի հանձնախմբի» (թրք.՝ «*Ana Davalar Komisyonu*») գեկույցը, որը կոչվում էր «Ազատության ուխտ» (թրք.՝ «*Hürriyet Misakı*»)<sup>232</sup> և ստեղծվել էր մասնավորապես Մենդերեսի ակտիվ ներգրավվածության շնորհիվ<sup>233</sup>: Չեկույցն ամփոփում էր Թուրքիայի ժողովրդավարացման կուսակցության տեսլականը՝ ընտրական համակարգի բարելավման վրա հատուկ շեշտադրմամբ<sup>234</sup>: Հակաժողովրդավարական օրենքներում փոփոխությունների պահանջն իշխանություններին ներկայացվում էր իբրև յուրատեսակ վերջնագիր, որը մերժելու դեպքում Բայարնու կողմնակիցները սպառնում էին պայքարը շարունակել ԹԱՄԺ պատերից դուրս<sup>235</sup>: Ընդհանուր առմամբ, համագումարի

<sup>229</sup> Տե՛ս *TBMM Tutanak Dergisi*, 8. Dönem, 3. Cilt Fihristi, 18. Birleşim, 18.12.1946, s. 23:

<sup>230</sup> Տե՛ս **Toker M.**, *Demokrasimizin İsmet Paşalı yılları (1944-1973)*, cilt 1, s. 160: Բավական լավ ծանոթ Լինելով Թուրքիայի քաղաքական դաշտի առանձնահատկություններին՝ ԺԿ-ն առաջին իսկ օրից ձգտում էր Ինյունյուի անջատելի իրիսկ կուսակցությունից՝ հասնելով նախագահի որոշակի չեզոքություն: Այս համատեքստում հետաքրքիր է «Վաքիթ» թերթի գլխավոր խմբագիր, 1927-1946 թթ. ՀԺԿ-ական պատգամավոր Ասըմ Ուսի՝ դեռ 1945 թ. վերջերին սպագրված հոդվածը, որում արդեն խոսվում էր Ազգային շեֆի՝ երկու պաշտոններից մեկը թողնելու անհրաժեշտության մասին: Տե՛ս **Us A.**, *Cumhurbaşkanlığı ve Parti Başkanlığı*, Vakıf, 20.09.1945:

<sup>231</sup> Տե՛ս **Mete O.**, *Bütün tafsilât ve akisleriyle Demokrat Partinin 1. Büyük Kongresi*, İstanbul, 1947, s. 9-17:

<sup>232</sup> Փաստաթղթի անունն անգամ կոչված էր հիշեցնել 1920 թ. հունվարի 28-ին Օսմանյան խորհրդարանի կողմից ընդունված «Ազգային ուխտ» (թրք.՝ «*Misâk-ı Milli*») անունը կրող քաղաքական հռչակագիրը, որն արտահայտում էր քեմալական շարժման ազգայնամոլական քաղաքականության հիմնական մոտեցումները: «Ազատության ուխտը», հեղինակների մտահղացմամբ, պետք է «*ըրացներ*» «Ազգային ուխտը»: Տե՛ս **Sakal F.**, *Çok partili döneme geçişte tek partinin muhalefet anlayışı*, Samsun, 2008, s. 32:

<sup>233</sup> Տե՛ս **Fersoy O.C.**, *Bir Devre Adımı Veren Başbakan Adnan Menderes*, p. 180:

<sup>234</sup> Տե՛ս **Tunaya T.Z.**, *Türkiye'de Siyasal Partiler, 1859 – 1952*, ss. 650-652 և 673-675:

<sup>235</sup> Տե՛ս **Eroğul C.**, *Demokrat Parti Tarihi ve İdeolojisi*, s. 27: Հատկանշական է, որ ԺԿ երիտասարդ անդամներից ոմանք, մասնավորապես՝ Սամեթ Աղաօղլուն և Մյուլքերեմ Սարոլը, կորցնելով ՀԺԿ իշխանության պայմաններում

ընթացքում ակնհայտ էր, որ ԺԿ-ին ավելի շատ հետաքրքրում էին ոչ այնքան ծրագրային ձևակերպումները, որքան ԶԺԿ տապալումը<sup>236</sup>:

ԶԺԿ ներսում Փեքերի գլխավորած «պահպանողականների» և Էրիմի գլխավորած «չափավորների» խմբավորումների հակասության նկատմամբ ֆոնին խորացող ճգնաժամի պայմաններում նախագահ Իսյոնյունն պետք է որոշում կայացներ ԺԿ նկատմամբ հետագա դիրքորոշման առնչությամբ: Առանց այդ էլ բարդ իրավիճակն էլ ավելի էր ծանրանում, քանի որ 1947 թ. գարնանը հռչակվել էր Թրումենի դոկտրինը, իսկ Թուրքիային ֆինանսական օժանդակության մեծացման հարցի քննարկման ժամանակ ԱՄՆ սենատորների մի մասը խիստ քննադատել էր պաշտոնական Անկարայի ներքաղաքական ուղեգիծը: Նման պայմաններում 1947 թ. հունիսի 11-ին Թուրքիայի նախագահը հանդես եկավ ռադիոուղերձով, որը հաջորդ օրը հրապարակվեց երկրի բոլոր ՉԼՄ-ներում և թուրքական քաղաքական պատմության մեջ մնաց իբրև «Յունիսի 12-ի հայտարարություն» (թրք.՝ «12 Temmuz Beyannamesi»): Այս ուղերձով Իսյոնյունն երաշխավորում էր օրինական դաշտում ընդդիմադիր կուսակցության գործունեության ազատությունը՝ դե ֆակտո զոհաբերելով այս հարցում ծայրահեղ կոշտ դիրքորոշում ունեցող վարչապետ Բեջեփ Փեքերին<sup>237</sup>: Իսյոնյունի հայտարարությունն ու 1947 թ. նոյեմբեր-դեկտեմբերյան համագումարը գործնականում ազդարարում էին ԶԺԿ քաղաքական փլիխոսության վեկտորի փոփոխությունը՝ «հեղափոխականից չափավորի»<sup>238</sup>:

Քաղաքական նախաձեռնությունն ստացած ԺԿ-ականներին նման պայմաններում հաջողվեց ԹԱՄԺ-ում տևական քննարկումներից

---

Ժողովրդավարության կայացած ինստիտուտներ ստեղծելու հավատը սկսել էին այլ ընտրանքային ճանապարհներ որոնել՝ քննարկելով նաև բանակին դիմելու տարբերակը: Տե՛ս **Ahmad F.**, *The Turkish Experiment in Democracy 1950–1975*, London, 1977, pp. 22-23:

<sup>236</sup> Տե՛ս **Данилов В.И. (отв. ред.)**, *Эволюция политических систем на Востоке. Иран, Пакистан, Турция: традиции и демократизация*, Москва, 1999, стр. 189:

<sup>237</sup> Հայտարարության տեքստը տե՛ս *12 Temmuz Beyannamesi, Ayin Tarihi, sayı 164, 1947, ss. 14-16:*

<sup>238</sup> Տե՛ս **Karpat K.H.**, *Turkey's Politics: The Transition to a Multi-Party System*, p. 207:

հետո հասնել ընտրական օրենքի բարեփոխմանը<sup>239</sup>: «Կաթան» պարբերականը նոր օրենքի ընդունումը բնութագրել էր իբրև «ժողովրդի հաղթանակ» (թրք.՝ «*milletin zaferi*»)<sup>240</sup>:

Նոր ընտրակարգով ընտրությունները անսովոր փորձություն էին խոստանում լինել թե՛ ՅԺԿ-ի, և թե՛ ԺԿ-ի համար: Քեմալականներն այնքան վստահ էին սեփական հաղթանակում, որ պատրաստ էին ԹԱՄԺ-ում մի քանի տեղ գիջել «ժողովրդավարականներին»՝ ապահովելու պառլամենտում ընդդիմության առկայությունը<sup>241</sup>: Ուշագրավ է, որ նախընտրական շրջանում երկու կուսակցությունները քննարկել են ընտրությունների շրջանում կոալիցիոն կառավարություն ձևավորելու հնարավորությունը, ինչը թույլ կտար բարձրացնել քվեարկության արդյունքների նկատմամբ վստահությունը: Այդ տարբերակը ՅԺԿ կողմից մերժվել է, քանի որ Բայարն ու կողմնակիցները հավելյալ օրենսդրական բարեփոխումներ էին պահանջում<sup>242</sup>: 1949 թ. հունիսի 20-25-ին անցկացված ԺԿ երկրորդ ընդհանուր համագումարը ընդունեց նոր փաստաթուղթ, որն առաջին համագումարում ընդունվածի տրամաբանությամբ կոչվում էր «Ազգային ապահովության ուխտ» (թրք.՝ «*Milli Teminat Misakı*»): Դրանում կառավարությունից պահանջվում էր զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել ազգային ինքնիշխանության սկզբունքի կենսագործմանը և քաղաքացիների քաղաքական իրավունքների և ազատությունների իրացմանը: Յունիսի 27-ին «ուխտը» քննարկվում է կառավարության նիստում և արժանանում խիստ կոշտ գնահատականների: Կառավարության կողմից ընդունված հայտարարությունն ու ընդհանրապես քննարկումը վկայում են,

<sup>239</sup> 1950 թ. մայիսյան համապետական ընտրություններին ընդառաջ արդեն գործում էր 1950 թ. փետրվարի 16-ին ընդունված «Պատգամավորական ընտրությունների մասին» №5545 օրենքը, որով երկրում սահմանվում էին համընդհանուր, ուղիղ, մրցակցային ընտրություններ՝ ձայների բաց հաշվարկով և արդյունքների նկատմամբ դատական վերահսկողությամբ: Օրենքի տեքստը տե՛ս *Milletvekilleri Seçimi Kanunu*, T.C. Resmî Gazete, 21.02.1950:

<sup>240</sup> Տե՛ս *Vatan*, 18.02.1950, s. 1:

<sup>241</sup> Տե՛ս **Ahmad F.**, *The Making of Modern Turkey*, p. 108:

<sup>242</sup> Տե՛ս **Toker M.**, *Demokrasimizin İsmet Paşalı yılları (1944-1973)*, cilt 1, s. 243-244:

թե որքան լարված էին ԺԿ և ՅԺԿ հարաբերությունները սպասվելիք ընտրությունների նախաշեմին<sup>243</sup>:

Մայիսյան ընտրությունների ԺԿ-ն մասնակցում էր «Բավ Է. խոսքը ժողովրդինն է» (թրք.՝ «*Yeter! Söz Milletindir!*») կարգախոսով<sup>244</sup>: ԺԿ-ականները դեռ նախընտրական շրջանում հայտարարել էին, որ իշխանության գալու դեպքում չեն պատրաստվում հաշվեհարդար տեսնել ՅԺԿ անդամների հետ միակուսակցական շրջանում կայացրած որոշումների համար<sup>245</sup>: Մայիսի 14-ին կայացած քվեարկության ընթացքում գրանցվում է շուրջ 88,9% մասնակցություն: ԺԿ-ն ստանում է ընտրողների ձայների 53,59-ը, իսկ ՅԺԿ-ն՝ 39,98%-ը: Չնայած դրան՝ տիրող մեծամասնական ընտրակարգի պատճառով Բայարի և Մենդերեսի կուսակցությանը բաժին է հասնում 487 տեղանոց ԹԱՄԺ-ի բացարձակ մեծամասնությունը՝ 396 մանդատ<sup>246</sup>: Ընտրությունների արդյունքները թեև անսպասելի էին ՅԺԿ-ականների համար, սակայն դրանցում ամկաեր որոշակի օրինաչափություն: Մեթին Թոքերը գրում է, որ անգամ նախագահ Իսյոնյուն, թեև չէր հավատում նման տարբերակի, հոգեպես պատրաստ էր պարտություն<sup>247</sup>:

Միջազգային հանրության մոտ 1950 թ. ընտրությունները թողել էին «խաղաղ հեղափոխության» տպավորություն<sup>248</sup>: Քեմալական վերջին կառավարությունների օրոք նկատվող ինստիտուցիոնալ ճգնաժամի հաղթահարումն ընտրական

<sup>243</sup> Տե՛ս **Albayrak M.**, *Türk Siyasi Tarihinde Demokrat Parti (1946-1960)*, s. 147, *D.P.'ye karşı açılan propaganda savaşı*, Cumhuriyet, 27.06.1949, *Başbakanlık dün gece bir beyanname neşretti*, Cumhuriyet, 27.06.1949:

<sup>244</sup> Տե՛ս *Demokrat Parti diün seçim beyannamesini yayınladı*, Cumhuriyet, 09.05.1950:

<sup>245</sup> Այս քայլը, որ թուրքական քաղաքական բառապաշար է մուտք գործել ԺԿ նախընտրական ծրագրում տեղ գտած ձևակերպմամբ՝ «*devri sabık' yaratmamak*», տարակարծություն էր առաջացրել Մենդերեսի և Բայարի միջև, քանի որ վերջինս կարծում էր, որ նման որոշում կարող է կայացնել միայն երկրի բարձրագույն իշխանություն ԹԱՄԺ-ը: Տե՛ս **Bayar C.**, *Başvekilim Adnan Menderes*, s. 141:

<sup>246</sup> Տե՛ս *D.P. 36 İlde Tam Liste Halinde Kazandı, 385 Milletvekili Çıkarması Bekleniyor*, Cumhuriyet, 16.05.1950:

<sup>247</sup> Տե՛ս **Toker M.**, *Demokrasimizin İsmet Paşalı yılları (1944-1973)*, cilt 1, s. 249: Ընտրությունների արդյունքում 68 մանդատ բաժին է հասնում ՅԺԿ-ին, 1՝ Տեղի Չաքմաքի (ԹՅ ՉՈՒ ԳՇ երկարամյա պետր մահացել է 1950 թ. ապրիլին՝ ընտրություններից շուրջ 1 ամիս առաջ), Օսման Բյոլյունքբաշըի, Յուսուֆ Յիքմեթ Բայունրի և այլոց հիմնած «Ազգ» կուսակցությունը, 7՝ անկախ պատգամավորներին, ևս 15 տեղ մնում է թափուր: Տե՛ս **Demirel A.**, *50. Yıldönümünde 1950 Seçimleri*, Tarih ve Toplum Dergisi, sayı 197, 2000, ss. 13-23:

<sup>248</sup> Տե՛ս **Вдовиченко Д.И.**, *Борьба политических партий в Турции (1944-1965 гг.)*, стр. 103, *Vatan*, 26.05.1950:

ճանապարհով վկայում է քաղաքական վերնախավի որոշակի հասունության մասին<sup>249</sup>: Ընդհանրապես, 1950 թ. ընտրություններն ամբողջատիրություններից ժողովրդավարության ուղղությամբ Թուրքիայի պատմության մեջ արված բեկումնային քայլերից էին<sup>250</sup>:

**2.2. ԺԿ իշխանության տարիները՝ քաղաքական փոփոխությունների և հիմնական սկզբունքների դիտանկյունից**

1950 թ. մայիսի 14-ի ընտրությունները բեկումնային էին Թուրքիայի քաղաքական պատմության տեսակետից<sup>251</sup>: ԺԿ հաղթանակը նշանավորում էր ոչ միայն մի կուսակցության 27 տարվա իշխանության ավարտը, այլև առաջին անգամ Թուրքիայի քաղաքական էլիտայի մի հատվածի, որը որոշակիորեն տարբերվում էր ԶԺԿ-ական վերնախավից: ԺԿ ներկայացուցիչների միջին տարիքը ավելի ցածր էր, նրանք սովորաբար անհամեմատ ազդեցիկ էին իրենց ընտրական տարածքներում: Իշխանության եկած կուսակցության ներկայացուցիչների թվում ավելի քիչ էին համալսարանական կրթությունն ստացածները և անհամեմատ մեծ թիվ էին կազմում առևտրում ներգրավվածություն ունեցողները: ԶԺԿ հետամենացայտուն տարբերությունը ԺԿ շարքերում վարչական կամ զինվորական անցյալ ունեցող ներկայացուցիչների գրեթե լիակատար բացակայությունն էր<sup>252</sup>:

Թեև ընտրության արդյունքների հրապարակումից հետո Ինյունյուն պատրաստակամություն էր հայտնել անմիջապես

<sup>249</sup> Տե՛ս **Lewis B.**, *The Emergence of Modern Turkey*, 3<sup>rd</sup> ed., London, 2002, p. 314:

<sup>250</sup> Տե՛ս **Karpat K.H.**, *Turkey's Politics: The Transition to a Multi-Party System*, p. 242: Նման գիտակցմամբ է համակված նաև հաղթանակից հետո ԺԿ տարածած հայտարարությունը, որում ազգային կամքի ազատ դրսևորման մեջ հավասարապես կարևորվում է նաև հաղթած կուսակցության, և՛ նախկին իշխանությունների (մասնավորապես՝ Ինյունյունի) դերը: Տե՛ս **Toker M.**, *Demokrasimizin İsmet Paşalı yılları (1944-1973)*, cilt 2, *DP'nin Altın Yılları: 1950-1954*, Ankara, 1990, s. 28:

<sup>251</sup> Գնահատելով ժողովրդավարական եղանակով իշխանափոխության կարևորությունը՝ պատմաբան Բերնարդ Լյուիսն անգամ կարծիք է հայտնում, որ «ԶԺԿ ընտրական պարտությունն իր խոշորագույն ձեռքբերումներից է՝ երկրորդ հեղափոխություն, որը լրացնում և ամբողջացնում է առաջինը, որից հենց ծագել էր կուսակցությունը»: Տե՛ս **Lewis B.**, *The Emergence of Modern Turkey*, p. 303:

<sup>252</sup> Տե՛ս **Zürcher E.J.**, *Turkey: A Modern History*, p. 223:



գիջել իշխանությունը, սակայն Բայարը դիմել էր Շեմսեթին Գյունալթայի կառավարությանը՝ երկրի ղեկավարումը մինչև մայիսի 22-ի ԹԱՄԺ նիստը շարունակելու խնդրանքով<sup>253</sup>: Այդ ողջ ընթացքում թուրքական մամուլում և կուսակցական կողասրահներում շարունակվում էին քննարկումները՝ կապված հատկապես վարչապետի թեկնածության հետ: Մայիսի 20-ին «Ջումհուրիյեթի» գլխավոր խմբագիր Նադիր Նադիր Աբալըօղլուն, որը ԺԿ ցուցակով ԹԱՄԺ պատգամավոր էր ընտրվել Մուղլայի ընտրական շրջանից, գրում է. «Այս հարցի շուրջ պետք է մտածենք: Մեր երիտասարդ ժողովրդավարության ներկա փուլում Բայարից ակնկալվող առաքելության ներկա փուլում... Բոլոր կանխատեսումներին հակառակ՝ Մեջլիսում մեծամասնություն կազմած ժողովրդավարները գոնե թե այս սկզբի տարիների համար հին և փորձված առաջնորդի օգնության կարիքը չունենան արդյոք»՝ ակնարկելով Բայարի հնարավոր վարչապետությունը<sup>254</sup>:

Սակայն Մենդերեսի թեկնածությունը կուսակցության ներսում լիովին կանխատեսելի էր: Մենդերեսի մտերիմ, Մանիսայի ընտրական շրջանից ԺԿ պատգամավոր ընտրված և հետագայում փոխվարչապետ դարձած Սամեթ Աղաօղլուն հիշում է ընտրության հաջորդ օրը հետագայում Մենդերեսի կառավարությունում ՆԳ նախարար դարձած Ֆեզի Լյուլթի Քարասամանօղլուի հնչեցրած խոսքերը. «Ադնանը՝ վարչապետ Քյոփրյուլյուն էլ արտգործնախարար պետք է լինի: Այս կերպի հայտ կգան հանրապետական շրջանի Ալի և Ֆուաթ փաշաները»<sup>255</sup>: Նույն օրերին «Վաթանի» գլխավոր խմբագիր Ահմեթ Էմին Յալմանը նույն Քարասամանօղլուին ուղղված նամակում գրում է. «Ժողովրդավարական կուսակցության շարժիչ ուժը լավագույնը ներկայացնում է Մենդերեսը... վարչապետ միայն

<sup>253</sup> St' u VanderLippe J.M., *The Politics of Turkish Democracy: Ismet Inonu and the Formation of the Multi-Party System 1938-1950*, p. 205:

<sup>254</sup> St' u Nadi N. [Abahoğlu], *Kim olacak?*, Cumhuriyet, 20.05.1950:

<sup>255</sup> Ağaoğlu S., *Arkadaşım Menderes*, İstanbul, 1967, s. 100. Քարասամանօղլուն նկատի ունի Թանզիմաթի շրջանի օսմանյան հայտնի սարդազամներ (կառավարության ղեկավարներ) Մեհմեդ Էմին Ալի և Քեչեջիզադե Մեհմեդ Ֆուաթ փաշաներին: Աղաօղլուն ավելի ուշ հրապարակված իր հուշերում կրկնում է նույն միտքը. «Ֆեզի բեյի հետ հանդիպեցինք: Մեր կարծիքով Մենդերեսը պետք է վարչապետ լիներ: Բայարն էլ ստանձներ երկրի նախագահի պաշտոնը»: St' u Ağaoğlu S., *Siyasî Günlük-Demokrat Partinin Kuruluşu*, İstanbul, 1992, s. 402:

նա կարող է լինել»<sup>256</sup>: Ինքը՝ Բայարը, Մենդերեսին կառավարության կազմավորելու առաջարկի պահը վերհիշելիս, նշում է, որ Մենդերեսն իր մոտերեկել Ֆուաթ Քյոփրյուլյունի վարչապետության համար միջնորդելու<sup>257</sup>:

1950 թ. մայիսի 20-ի ԹԱՄԺ նիստում Ջելալ Բայարն ընտրվում է Թուրքիայի Հանրապետության 3-րդ նախագահ (387 կողմ, 66 դեմ ձայներով): Նույն օրը վարչապետ Մենդերեսը կազմավորում է երկրի 19-րդ կառավարությունը: «Չորսի առաջարկության» մյուս երկու հեղինակներից Ռեֆիք Քորալթանը ստանձնում է ԹԱՄԺ խոսնակի, իսկ Ֆուաթ Քյոփրյուլյունն՝ ԱԳ նախարարի պաշտոնը<sup>258</sup>: Սկսվում է թուրքական քաղաքական կյանքում Մենդերեսի գերակայության տասնամյակը<sup>259</sup>:

ԺԿ գաղափարախոսությունը հիմնված էր տնտեսության ոլորտում առավել ազատական, իսկ քաղաքական համակարգում ազգային-պահպանողական տարրերի համադրման վրա՝ կուսակցության իշխանության ընթացքում աստիճանաբար ընդգծվող կրոնական երանգավորմամբ: Դասական պահպանողականությանը հատուկ ուրուշ հիմնադրույթներ Մենդերեսի կառավարության մոտեցումներում արտահայտվում էին բավական պարզորոշ կերպով: Ընդհանրապես, կարելի է առանձնացնել որոշ սկզբունքներ, որոնք ծագում են Բըրքի «Մտորումներից» և արդիական են նաև մեր օրերում: Բրիտանացի պահպանողական լորդ Ջյուն Սեսիլը, մասնավորապես կարևորում է.

<sup>256</sup> Տե՛ս **Ağaoğlu S.**, *Arkadaşım Menderes*, s. 100:

<sup>257</sup> Տե՛ս **Bayar C.**, *Başvekilim Adnan Menderes*, ss. 103-104:

<sup>258</sup> Տե՛ս *D.P. diin iktidarı resmen devir aldı*, *Cumhuriyet*, 23.05.1950: Մենդերեսի կառավարության կազմի ու ծրագրի համար տե՛ս **Albayrak M.**, *Türk Siyasi Tarihinde Demokrat Parti (1946-1960)*, ss. 431-449:

<sup>259</sup> Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան սըր Ալեքսանդր Նոքս Յելմը լավագույնս է նկարագրում Մենդերեսի քաղաքական հեգեմոնիան. «խորհրդակցության և քննադատության նման հարցերում սնապարծ և անհամբեր՝ նա կենտրոնացրել էր ողջ իշխանությունն իր ձեռքերում՝ հավաստիացումներով մանիպուլացնելով կաբինետը և խուսափելով խորհրդակցել սեփական գործընկերների և խորհրդարանականների հետ, որոնցից կախված էր իր պաշտոնը: Բանավիճելու իր ունակություններով, ծաղրի և լեզվական հարձակումների կարողություններով նա մշտապես կարողանում էր լռեցնել իր այն կողմնակիցներին, որոնք դեմ էին դուրս գալիս իր աճող մենիշխանությունը: Նրանք, ովքեր ենթարկվել էին նրա ծաղրին, թեև վիրավորված էին, սակայն որևէ նշան չէին ցուցաբերում միավորվելու, որպեսզի վիճարկեն նրա գերակայությունը»: Տե՛ս FO371/107547/WK1011/1, *Annual Report on Turkey for 1952*, British Embassy, Ankara, 09.01.1953:

1. կրոնի կարևորությունն ու պետության կողմից դրա ճանաչման արժեքը,
2. քաղաքական կամ սոցիալական բարեփոխումների ընթացքում անհատների նկատմամբ կատարվող անօրինականությունների սպառնալիքը (հեղափոխականության և դրահեռանքների ընկալումը),
3. հասարակության մեջ տարբերությունների անհրաժեշտությունը՝ ելնելով դիրքից և պաշտոնից (հարգանք պետության և իշխանության նկատմամբ),
4. ազատ շուկայի և մասնավոր սեփականության իրավունքների նկատմամբ հարգանք,
5. մարդկային հասարակության ոչ թե մեխանիզմ, այլ օրգանիզմ լինելու ընկալում (հասարակությունը-ընտանիք փոխհարաբերությունների կարևորում),
6. անցյալի հետշարունակականության պահպանում<sup>260</sup>:

Սույն սկզբունքներից որոշները մեր կարծիքով մեծապես պայմանավորել են ԺԿ կառավարման տասնամյակը, ուստի ստորև դրանց անդրադառնանք ավելի հանգամանորեն:

### 2.2.1. ԺԿ դիրքորոշումը կրոնի և աշխարհիկության նկատմամբ

Թուրքիայի Չանրապետության ստեղծումից ի վեր քեմալական ռեժիմն աստիճանաբար որդեգրել էր հասարական կյանքի աշխարհիկացման քաղաքականություն, որն իր բնույթով հակակրոնական չէր: Այն չէր ձգտում ջախջախել իսլամը, այլ ջանում էր կազմաքանդել դրա սոցիալական կառույցը՝ խզելով կրոնի կապը կյանքի քաղաքական, հասարակական և սոցիալական տարբեր դրսևորումների հետ<sup>261</sup>: ԺԿ-ն, շարունակելով աշխարհիկության քեմալական թեզի կիրարկումը, դրան տվեց յուրօրինակ մեկնաբանություն: Այս համատեքստում խիստ ուշագրավ է 1949 թ. հունիսի 20-ին ԺԿ երկրորդ ընդհանուր

<sup>260</sup> Տե՛ս Cecil H., *Conservatism*, London, 1912, p. 48: Երիկ-Յան Յուրխերը շեշտում է, որ հիշյալ սկզբունքները Բըրքի ժամանակից ի վեր նույնն են մնացել: Տե՛ս Zürcher E.J., *Terakkiperver Cumhuriyet Fırkası ve Siyasal Muhafazakârlık*, A. Çiğdem (ed.) *Modern Türkiye’de Siyasî Düşünce*, cilt 5 – Muhafazakârlık, İstanbul, 2003, s. 40:

<sup>261</sup> Տե՛ս Lewis B., *The Emergence of Modern Turkey*, p. 412:

համագումարում Ջելալ Բայարի ունեցած ելույթի հետևյալ հատվածը. «Աշխարհիկությունը մեր ծրագրում կրոնական ազատության իմաստին է հանգում: Աշխարհիկությունը չի նշանակում անհավատություն: Մեր ծրագրում աշխարհիկությունը լավագույնս է արտահայտում կրոնի նկատմամբ հարգանքը: Եթե մենք իշխանության լինեինք, այս ծրագիրը կկենսագործեինք: Նկատի ունեմ, որ թուրք ազգը մոլսուկ ման է: Մոլսուկ ման էլ մնալ ու է: Որպես մոլսուկ ման է գնալ ու դեպի Ալլահը... Չիմա ինձ հարցնում են, թե ինչ եմ մտածում կաթոլիկների, ուղղափառների և այլ կրոնների ներկայացուցիչների վերաբերյալ: Պատասխանեմ՝ կաթոլիկները, հրեաները, հայերը և ուղղափառները մեզ մոտդեռ թանգիմաթից սկսած կրոնական ազատություն են ունեցել: Եթե նրանց այս ազատություններին խոչընդոտող որոշ բաներ կան, դրանք վերացնելու ենք: Մենք խստորեն դեմ ենք, որ կրոնը քաղաքականության մեջ գործիք դառնա»<sup>262</sup>:

Նույն կերպ, թե՛ ԺԿ ծրագրի 14-րդ հոդվածում, թե՛ 1950 թ. հունիսի 2-ին ընդունված՝ Մենդերեսի առաջին կառավարության ծրագրում ընդգծվում էր, որ կուսակցությունը պատրաստակամություն է հայտնում շարունակել թուրքիայում իբրև քեմալական դոկտրինի մաս իրականացվող աշխարհիկության քաղաքականությունը՝ չօգտագործելով իսլամն իբրև քաղաքական պայքարի և քարոզչության միջոց<sup>263</sup>: Իրականում, սակայն, ԺԿ տասնամյակն<sup>264</sup> ազդարարեց թուրքիայի Չանրապետությունում իսլամի դերի բարձրացման և դրա քաղաքականացման սկիզբը<sup>265</sup>: Ասվածի առավել ցայտուն ապացույցներից մեկը սուֆիական թարիքաթների [tarīka]<sup>266</sup>

<sup>262</sup> Sarol M., *Bilinmeyen Menderes*, cilt 1, İstanbul, 1983, ss. 95-96.

<sup>263</sup> Տե՛ս Yücel S., *Demokrat Parti*, İstanbul, 2001, s. 258, Arar İ. (der.), *Hükümet Programları 1920-1965*, İstanbul, 1968, ss. 225-226:

<sup>264</sup> ԺԿ իշխանության ժամանակաշրջանում թուրքիայի ներքին քաղաքականության մեջ իսլամի դերակատարության մասին մանրամասն տե՛ս Кондакчян Р.П., *Турция: Внутренняя политика и ислам*, Ереван, 1983, стр. 114-179:

<sup>265</sup> Տե՛ս Pelt M., *Adnan Menderes, Islam, and His Conflict with the One-Party Era Establishment*, D. Jung and C. Raudvere (ed.), *Religion, Politics, and Turkey's EU Accession*, New York, 2008, pp. 93-94:

<sup>266</sup> Ելնելով սույն աշխատանքի թեմատիկ ուղղվածությունից՝ իսլամական եզրաքանոնյան միավորների և հատուկ անունների հայերեն տարբերակները տեքստում բերված են ըստ դրանց թուրքերեն հնչյունական ձևերի: Առաջին գործածությունը կից փակագծերում ներկայացված են եզրերի միջազգայնորեն ընդունված լատինատառ տառադարձումներն ըստ՝ Bearman P.J.,

գործունեության նկատելի ակտիվացումն է<sup>267</sup>: Կարելի է նշել սուֆիական առավազն 6 եղբայրությունն (թիջանի [Tijāniyyah], նաքշբենդի [Nakshbandiyya], մալաի [Mawlawiyya], քադիրի [Kādiriyya], հելվեթի [Khalwatiyya] և բեքթաշի [Bektāshīyya]), որոնք քառորդ դար տևած ընդմիջումից հետո կրկին գլուխ էին բարձրացրել 1950-ականների սկզբին<sup>268</sup>: Ընդ որում, չնայած սուֆիական ընդհատակի դեմ շարունակվող ոստիկանական պայքարին<sup>269</sup>, Մենդերեսն ու ԺԿ-ական վերնախավն անուղղակի թելերով կապված էին սուֆիական տարբեր միաբանությունների (առավել ապես՝ նաքշբենդիների) հետ՝ հաճախ ընտրություններում աջակցության դիմաց գործնականում դաշնակցելով նրանց հետ<sup>270</sup>:

Այս համատեքստում բավական ուշագրավ են ԺԿ փոխարարությունները բեքթաշիական միաբանության հետ: 1925 թ. նոյեմբերի 30-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) կողմից ընդունված «Թեքքեների [takiyya], զավիյաների [zāwiya] ու թյուրբեների [turba] փակման և թյուրբեապահների ու միշարբայլ կոչումների վերացման մասին» №677 օրենքի<sup>271</sup> ու ժողովրդի տարածքում փաստորեն արգելվել էր սուֆիական թարիքաթների գործունեությունը:

Արգելքի ընդգրկման ծավալները պատկերացնելու համար բավական է նշել, որ Առաջին աշխարհամարտից հետո անգամ առավել առաջադիմական Ստամբուլում<sup>272</sup> յուրաքանչյուր ութ

**Banquis Th., Bosworth C.E., Donzel J. van, Heinrichs W.P. (eds.),** *Encyclopaedia of Islam: Glossary and Index of Terms*, 2<sup>nd</sup> ed., Brill, 2006:

<sup>267</sup> Տե՛ս **Ter-Matevosyan V.**, *Turkey, Kemalism and the Soviet Union: Problems of Modernization, Ideology and Interpretation*, Cham, 2019, p. 108:

<sup>268</sup> Տե՛ս **Reed H.**, *Revival of Islam in Secular Turkey*, *The Middle East Journal*, vol. 8(3), pp. 274-275, **Lewis B.**, *Islamic Revival in Turkey*, *International Affairs*, vol. 28(1), 1952, p. 43:

<sup>269</sup> Միաբանությունների դեմ ուղղված հետապնդումների ամենացայտուկն դրսևորումը 1951 թ. հունիսի 25-ին ԹԱՄԺ կողմից ընդունված «Աթաթյունը թիջանիների դեմ գործված մեղքերի մասին» № 5816 օրենքն է, որ ուղղված էր թիջանիների միաբանության դեմ: Հանրապետության հիմնադիրի առերևույթ պաշտպանության ներքո քողարկված այս որոշումը կարելի է բացատրել ԺԿ շարքերում տիրող այն մտահոգությամբ, որ թիջանիները կարող են օգտագործվել ՀԺԿ կողմից: Տե՛ս **U. Eroğul C.**, *Demokrat Parti Tarihi ve İdeolojisi*, s. 129:

<sup>270</sup> Տե՛ս **Eligür B.**, *The Mobilization of Political Islam in Turkey*, Cambridge, 2010, p. 57:

<sup>271</sup> Օրենքը ԹՀ «Պաշտոնաթերթում» հրատարակվել և ուժի մեջ է մտել 1925 թ. դեկտեմբերի 13-ին: Տեքստը տե՛ս *Tekke ve Zâviyelerle Türbelerin Kapatılmasına ve Bunlarla İlgili Türbedârlık Gibi Diğer Bir Unvânların Men' ve İlgâsına Dâir Kânûn No: 677*, T.C. Resmi Gazete, 13.12.1341/1925:

<sup>272</sup> Ստամբուլի Սուլեյմանիե ձեռագրերի գրադարանում պահվող և 1919-1921 թթ. թվագրվող՝ Էրզուրումում և Յեշիլգադե Մեհմեդ Սալիհ Էֆենդիի 56 էջանոց «Թեքքեների ուղեցույցում» ներկայացվում է գրման

տղամարդուց մեկը հարում էր սուֆիական միաբանությանը ներքին<sup>273</sup>: Քեմալականների օրենսդրական այս նախաձեռնությունն իր սուր ծայրով ուղղված էր առաջին հերթին Յանրապետության ստեղծումից ի վեր որևէ բնույթի քաղաքական ակտիվություն ցուցաբերած թարիքաթների<sup>274</sup>, այդ թվում՝ բեքթաշիների դեմ: Վերջիններս, ունենալով իշխանության կողմից հետապնդումների պայմաններում գործունեություն ծավալելու նշանակալի փորձ<sup>275</sup>, անցան ընդհատակ:

Ժամանակի թուրքական մամուլում բեքթաշիների թեմայով մերթընդմերթ հայտնվող հրապարակումները<sup>276</sup> վկայում են, որ թարիքաթի գործունեությունը մինչև ժողովրդավարական կուսակցության իշխանության գալն, ըստ էության, այդպես էլ չի ընդհատվել: Ուստի միանգամայն բնական է, որ 1952 թ. ակտիվ բեքթաշիների թիվը թուրքիայում, թեև բավական նվազելով մի

---

Ժամանակաշրջանում Կոստանդնուպոլսում և հարակից շրջաններում գործող ընդհանուր առմամբ 345 թեքթե, որից 68-ը պատկանում էին քաղիրի, 63-ը՝ Նաքշբանդի, 12-ը՝ բեքթաշի թարիքաթին և այլն: Մանրամասն տե՛ս **Aşkar M., *Son Dönem Tekke Mecmualarından Yeşilzâde Mehmed Salih Efendi'nin Rehber-i Tekâyâ'sı***, Tasavvuf, sayı 3, ss. 129-165:

<sup>273</sup> Տե՛ս **Buehler A.F., *Recognizing Sufism: Contemplation in the Islamic Tradition***, London and New York, 2016, p. 192.

<sup>274</sup> Ուշագրավ է, որ քեմալական շարժման շրջանում Մ. Քեմալն ակտիվորեն օգտվում էր սուֆիական միաբանությունների աջակցությունից: Բավական է նշել, որ մինչև հանրապետության հռչակումը ԹԱՄԺ կազմում 10 պատգամավոր ուղղակիորեն որևէ թարիքաթի անդամ էր՝ 2 Նաքշբանդի, 2 մալևի, 2 հելվեթի, 3 բեքթաշի և 1 հոգի Յաջի Բայրամ [Bayrâmiyya] միաբանությունից: Տե՛ս **Çıplak İ.T., *Demokrat Parti Döneminde Aleviler ve Bektaşiler'in Siyasi ve Sosyo-Kültürel Faaliyetleri (1950-1960)***, Yüksek Lisans Tezi, Balıkesir Üniversitesi, 2017, s. 22:

Որպես ազգայնամուլական շարժման առաջնորդ՝ Քեմալի հարաբերությունները բեքթաշիների հետ սկսվում են դեռ այդ շարժման սաղմնային շրջանից: Արդեն 1919 թ. դեկտեմբերի 22-23-ին Նաանձամբեղելի Ե Յաջըբեքթաշուն՝ այցելելու միաբանության Էպոնիմ Յաջը Բեքթաշ Վելիի (մահ. 669/1270-71?) գերեզմանին և շահելու բեքթաշիների աջակցությունը շարժման կազմակերպական աշխատանքներում: Տե՛ս **Şapolyo, E.B., *Atatürk ve Seymen Alayı***, Ankara, 1971, ss. 16-18:

<sup>275</sup> 1826 թ. հունիսի 15-ի դեպքերի արդյունքում օսմանյան սուլթան Մահմուդ II-ի կողմից ենիչերիական կորպուսի ջախջախումից հետո վերջիններիս հետ սերտորեն փոխկապակցված բեկթաշիների միաբանությունը հայտնվեց պետական բռնաճնշումների կիզակետում: Չնայած դրան՝ ընդամենը շուրջ քառորդ դար անց՝ 1849 թ. ընդհատակից դուրս եկած թարիքաթն արդեն վերականգնել էր իր նախկին ազդեցության զգալի մասը (**Birge J.K., *The Bektashi Order of Dervishes***, London and Hartford, 1937, p. 79):

<sup>276</sup> Տե՛ս «Ջումհուրիյեթ» թերթի օրինակով՝ **Bektaşiler!**, Cumhuriyet, 08.06.1930, 13 **Bektaşi Yakalandı**, Cumhuriyet, 13.06.1932, **İzmir'de Bektaşi Âyini Yapanlar Yakalandı**, Cumhuriyet, 10.11.1935, **Bektaşi Ayini Yapanlar Mahkûm**, Cumhuriyet, 03.02.1937, **İzmir'de Bektaşi Âyini Yapanlar**, Cumhuriyet, 16.06.1941, **Bektaşinin Duası**, Cumhuriyet, 18.11.1943, **Bektaşinin Sözü...**, Cumhuriyet, 23.01.1946, **Parti Bektaşileri**, Cumhuriyet, 23.08.1951 և այլն: Ընդ որում, հստակորեն նկատվում է հրապարակումների տոնայնության անցումն ընդգծված բացասականից առավել ասես չեզոքի:

քանի անգամ զիջում էր միաբանության ալբանական թևին, այնուամենայնիվ հասնում էր 30 հազարի<sup>277</sup>: Ընդ որում, այս թիվը վերաբերում է անմիջականորեն թարիքաթի անդամներին և չի ընդգրկում ալևիներին<sup>278</sup>: Բեքթաշիները, ըստ էության, երբեք հանդես չեն եկել իբրև համազգային քվեարկությունների ժամանակ ալևիներին միավորող ուժ: Չնայած այս հանգամանքին՝ միաբանության քաղաքական կարևորությունը չի կարելի անտեսել<sup>279</sup>:

Չայտնի է, որ բեքթաշիների բաբաների թևի<sup>280</sup> ներկայացուցիչների հետ ԺԿ վերնախավի շփումները բավական ակտիվ էին 1950 թ. մայիսյան ընտրություններին նախորդող շրջանում: Նևշեհիրում Չաջը Բեքթաշ Վելիի գերեզմանի կարգավիճակի ճանաչման դիմաց բեքթաշիների ընտրական աջակցության հարցի շուրջ Ահմեթ Սըրրը դեդեբաբայի<sup>281</sup> պատվիրակները 1949 թ. մեկական հանդիպում են ունեցել ԺԿ ղեկավարության հետ Ստամբուլի Չեյթինբուրնու և Էրենքյոյ թաղամասերում<sup>282</sup>: Պատահական չէ, որ մինչև 1957 թ. ԺԿ մասնակցած

<sup>277</sup> Տե՛ս **Jong F. de**, *Sufi Orders in Ottoman and Post-Ottoman Egypt and the Middle East*, Istanbul, 2000, p. 45:

<sup>278</sup> «Alevilik» (*Alevîyya*, «ալևականություն») և «Bektaşilik» («բեքթաշականություն») եզրերը ժամանակակից մասնագիտական գրականության մեջ և հատկապես Թուրքիայի հասարակական հոլոպոլոյթում մեծամասամբ օգտագործվում են գրեթե միևնույն իմաստով՝ թեև առաջինն անմիջականորեն շեշտում է հանրույթի քվադրիթսիկական բաղադրիչը, իսկ երկրորդը՝ կրոնական: Տե՛ս **Azak U.**, *Islam and Secularism in Turkey: Kemalism, Religion and the Nation State*, London and New York, 2010, p. 141:

<sup>279</sup> Տե՛ս **Massicard E.**, *The Alevis in Turkey and Europe: Identity and Managing Territorial Diversity*, London and New York, 2013, p. 120:

<sup>280</sup> Դեռ 19-րդ դ. 60-ական թթ.՝ Ահմեդ Ջելալ Էդդին չելեբիի օրոք, բեքթաշիների ընդհանուր հանրույթից, Չաջը Բեքթաշ Վելիի հետ կապի բնույթի հիմքով, վերջնականապես առանձնացել էին բաբաների/բաբազան (վերջինիս հետ կապված էին գաղափարական՝ ուղու ժառանգականությամբ) և չելեբիների/դեդեզան (կապված էին անմիջական՝ պրոտի ժառանգականությամբ) ճյուղերը: Տե՛ս **Акимушкин О.Ф.**, «*Бекташійя*», Ислам: Энциклопедический словарь, под ред. Г.В. Милославского, Ю.А. Петросяна, М.Б. Пиотровского и С.М. Прозорова, Москва, 1991, стр. 40, **Özlü Z.**, *Osmanlı Döneminde Hacı Bektaş Veli Sülalesi: Çelebiler, Belleten*, sayı 285, 2015, s. 503.

<sup>281</sup> Դեդեբաբան բաբազան բեքթաշիների հիերարխիկ համակարգի բարձրագույն պաշտոնն է, որի կրողը հանդիսանում է Չաջը Բեքթաշ Վելիի ներկայացուցիչը: Ընտրվում է բեքթաշի խալիֆների ընդհանուր ժողովում՝ նրանց թվից: Տե՛ս **Noyan B.**, *Bütün Yönleriyle Bektâşilik ve Alevilik*, cilt 1: *Hacı Bektaş Velinin Hayatı Kişiliği Eserleri*, İstanbul, 2006, ss. 316-317:

<sup>282</sup> Տե՛ս **Koca Ş.**, *Bektâşilik ve Bektâşî Dergahları*, İstanbul, 2005, s. 95.

Տեղեկությունը հաղորդող Շևքի Քոջաբաբան մեկ այլ աշխատության մեջ կրկնում է նման հանդիպումների վերաբերյալ պնդումը՝ նշելով, սակայն, որ դրանք տեղի են ունեցել Ստամբուլի Քազըլչեշմե և Էյուլփ թաղամասներում: Տե՛ս նույնի, *Es-Seyyid Halife Koca Turgut Baba Divanı*, İstanbul, 1999, s. 355:

բոլոր համապետական ընտրություններում թուրքիայի ալևիաբնակ նահանգներում (Ամասիա, Չորում, Երզնկա, Մարաշ, Սեբաստիա, Թոքատ, Դերսիմ) Մենդերեսի կուսակցությունը հաղթել է նշանակալի առավելությունը<sup>283</sup>: ԺԿ-ն անգամ 1946 թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, որոնք ավարտվել էին նորաստեղծ կուսակցության պարտությունը, ստացել էր ալևիների ձայների 70%-ը<sup>284</sup>: Ավելին, Մալաթիայից ԹԱՄԺ պատգամավոր ընտրված<sup>285</sup> ալևի դեդե Յյուսեին Դոդանի որդու՝ Իզզեթթինի փոխանցմամբ՝ մինչև 1957 թ. ԺԿ-ից ԹՅ օրենսդիր մարմնի անդամ է դարձել 29 ալևի<sup>286</sup>: Մենդերեսի կառավարության ու բեքթաշիաալևիական համայնքի միջև խզումը սկսվել է 1957 թ. ընտրություններին նախորդող շրջանում, երբ ԺԿ-ն առավել նկատելիորեն սկսեց հակվել դեպի օրթոդոքս իսլամ: Իր բնույթով հետերոդոքս բեքթաշիականության հետևորդները 1957 թ. ընտրություններից սկսած դադարեցին աջակցել Մենդերեսին կամ աջակողմյան հայացքներ ունեցող որևէ այլ ուժի: Բացի դրանից, ալևի-բեքթաշիների շրջանում տիրող տրամադրությունների վրա նշանակալի ազդեցություն ունեցավ Յաջը Բեքթաշ Վելիի գերեզմանն ու կից դերգահը [dargāh] թանգարանի վերածելու՝ Մենդերեսի կառավարության նախաձեռնությունը<sup>287</sup>:

Չնայած իսլամի հարցում հակասական դիրքորոշմանը<sup>288</sup> և կրոնը սեփական քաղաքական շահերին ծառայեցնելու՝ դեռ

<sup>283</sup> Տե՛ս **Türkiye İstatistik Kurumu, Milletvekili Genel Seçimleri 1923-2011**, Ankara, 2012, ss. 26-92:

<sup>284</sup> Տե՛ս **Aktürk Ş., Almanya, Rusya ve Türkiye’de etnisite rejimleri ve milliyet,** İstanbul, 2015, s. 152:

<sup>285</sup> Յյուսեին Դոդանը 1950 թ. ընտրություններում ԹԱՄԺ պատգամավոր է դարձել քեմալական Յանրապետական ժողովրդական կուսակցության ցուցակով: Մի քանի ամիս անց, սակայն, Մենդերեսի հետզրույցից հետո լքել է ՅԺԿ շարքերն ու 1951 թ. մարտի 30-ից միացել ԺԿ-ին: Տե՛ս *C.H.P. den İstifa Eden Hüseyin Doğan da D.P. ye Girdi*, Cumhuriyet, 31.03.1951:

<sup>286</sup> Տե՛ս **Çıplak İ.T., Demokrat Parti Döneminde Aleviler ve Bektaşiler’in Siyasi ve Sosyo-Kültürel Faaliyetleri (1950-1960)**, s. 80:

<sup>287</sup> 1954 թ. փետրվարի 24-ին դերգահը թանգարանի վերածելու համար Ֆինանսների նախարարության հաշվեկշռից հատկացվել էր 65.000 լիրա (թուրքական արժույթի փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 1950-ական թթ. առաջին կեսին տատանվում էր 5,25-5,50-ի միջև): Տե՛ս *T.B.M.M. Zabıt Ceridesi*, devre IX, cilt 28, s. 818:

<sup>288</sup> Այս հակասականության տիպիկ օրինակ է 1953 թ. մայիսի 11-ին Քըրշեհիրում վարչապետ Մենդերեսի արած աղմկահարույց հայտարարությունը, որ մեծ դժգոհություն էր հարուցել Յաջը Բեքթաշ Վելիի դերգահի վերաբացման կողմնակիցների շրջանում. «*Մեր հեղափոխության պահպանումը մեր առաջին պարտականությունն է: Փակ թեքքեների վերաբացման* [ընդգծումն իմն է, — Ա.Գ.], *քաղաքացիական*



պաշտոնավարման ժամանակ հնչող մեղադրանքներին<sup>289</sup>՝ Մենդերեսը մշտապես դրականորեն է ընդունվել և հիշվել ժամանակի սուֆիական եղբայրությանների անդամների մեծ մասի կողմից<sup>290</sup>: Սակայն անգամ վերոգրյալի լույսի ներքո ժԿ վերնախավի նկատմամբ բեքթաշիների վերաբերմունքն արժանի է առանձնահատուկ ուշադրության. նույնիսկ Մենդերեսի վերջին կառավարության նկատմամբ ունեցած անբարյացակամ վերաբերմունքով հանդերձ նրանք շարունակում էին համոզված լինել, որ վերջիններս հարում են իրենց թարիքաթին:

Դրահետկապված ուշագրավ տեղեկություններ է փոխանցում ժԿ կառավարման մայրամուտին՝ 1960 թ. մարտի 21-ին բեքթաշիների բաբաների թևի դեդեբաբա ընտրված Բեդրի Նոյանը<sup>291</sup>: Նավաստիություն է հայտնում, որ Ադնան Մենդերեսը թարիքաթի անդամ էր՝ պնդելով, որ միաբանության հետԹՅ 9-րդ վարչապետին կապող օղակը վերջինիս ընտանիքի ֆինանսական գործերով փաստաբան Ֆեյզի Աքերեն Բաբան էր՝ Իզմիրից<sup>292</sup>: Իբրև այդ տեղեկատվությունն իրեն փոխանցող անձ՝ Նոյանը նշում է Ռեֆիք Սաղթուլ անունով մի բեքթաշիի<sup>293</sup>:

Հայտնի թուրք մտավորական Շևքեթ Սյուրեյյա Այդեմիրն իր «Մենդերեսի ողբերգությունը» գրքում<sup>294</sup> հետաքրքրական մանրամասն է բերում՝ նշելով, որ Մենդերեսի և Աքերենի շփումները սկսվել են, երբ ծնողներին ու քրոջը կորցնելուց հետո պատանի Ադնանն ապրում էր հորական տատի՝ Ֆիթնաթ Յանըմի հետ, իսկ Աքերենը զբաղվում էր Իզմիրում Մենդերես ընտանիքի ունեցվածքի հարցերով: Ավելին, որոշ

---

օրենսգրքում փոփոխությունների, հին այբուբենին վերադառնալու մասին խոսք անգամ գնալ չի կարող»: Տե՛ս *Başvekil Kırşehir’de Mühim Bir Hitabette Bulundu*, Milliyet, 12.05.1953:

<sup>289</sup> Տե՛ս **Toprak B.**, *Islam and Political Development in Turkey*, Brill, 1981, p. 83:

<sup>290</sup> Տե՛ս, օրինակ, **Atay T.**, *Naqshbandi Sufis in a Western Setting*, Ph.D. thesis, University of London, 1994, p. 91:

<sup>291</sup> Բեդրի Նոյանը (ծնվ.՝ Սալիհ Բեդրեթթին, 1912-1997 թթ.) բաբազան բեքթաշիների 36-րդ դեդեբաբան է: Ի թիվս այլնի, հայտնի է նաև «*Bütün Yönleriyle Bektâşilik ve Alevilik*» («*Բեքթաշիականությունն ու այլևհականությունը՝ բոլոր կողմերից*») ծավալուն բազմահատորյակով, որն այս հարցի շուրջ կարևոր աղբյուրներից մեկն է: Նոյանի մասին տե՛ս **Üzüm İ.**, *Bedri Noyan*, A. Topaloğlu ve ark. (ed.), *Türkiye Diyanet Vakfı İslâm Ansiklopedisi*, cilt 33, İstanbul, 2007, ss. 214-215.:

<sup>292</sup> **Noyan B.**, *Bütün Yönleriyle Bektâşilik ve Alevilik*, cilt 6: *Ünlü Bektaşiler ve Bektaşî Fıkralar*, İstanbul, 2003, s. 234:

<sup>293</sup> Նույն տեղում, էջ 69:

<sup>294</sup> Գրքում Այդեմիրը Աքերենին կոչում է «*Ֆուզի Աքեր կամ Աքեր*»՝ նշելով, որ նրա հստակ անունը չգիտի:

տեղեկություններով, Տեյզի Աքերենը Մենդերեսի հետմտերմիկ հարաբերություններով<sup>295</sup> հայտնի օպերային հայտնի երգչուհի Այհան Այդանի քեռին էր<sup>296</sup>: Երկար տարիներ փաստացի կառավարելով Մենդերես ընտանիքի սեփական հողատարածքը՝ նավաստակել էր Ադնանի և նրա տատի վստահությունը<sup>297</sup>: Ըստ երևույթին, Աքերենը Մենդերեսի հոգևոր հովանավորությունը («վելիլիլի») ստանձնել էր դեռ վերջինիս՝ Իզմիրի Ամերիկյան քոլեջում ուսանելու տարիներից: Բեքթաշիների անուղղակի վկայություններից կարելի է դատել, որ Մենդերեսի ընծայությունը թարիքաթին («նասիֆ») կատարվել է հենց Աքերենի կողմից<sup>298</sup>:

Բեդրի Նոյանը նույն գրքում անդրադառնում է նաև ԹՀ 3-րդ նախագահ, ԺԿ-ական Ջելալ Բայարի՝ բեքթաշիների հետ փոխհարաբերությունների հարցին: Հղում կատարելով այդ թվում նաև Ալի Նաջի Բայբալ դեդեբաբային՝ նա պնդում է, որ Բայարը թարիքաթին է միացել Բուրսայում՝ Քյուչուք Իբրահիմ բաբայի հոգևոր հովանավորությամբ: Ուշագրավ է նաև, որ դեռ Աթաթյուրքի ժամանակներից նախագահական ապարտի գլխավոր բժիշկ Հասան Ռագըփ Էրենսելը, ով հայտնի էր նաև իբրև բեքթաշի բաբա, մինչև իր մահը՝ 1953 թ., եղել է նաև Բայարի մտերիմն ու անձնական բժիշկը<sup>299</sup>:

Բեքթաշի նույն դեդեբաբան որոշակի տեղեկություններ է հաղորդում նաև ԺԿ հիմնադիր մեկ այլ անդամի՝ 50-ականների առաջին կեսի ԹՀ ԱԳ նախարար Մեհմեթ Ֆուադ Քյոփրյուլլուի՝ թարիքաթի հետ ունեցած անչնությունների մասին: Նոյանը գրում է, որ Սարանոյի Գազի Հյուսրև-բեգ մզկիթի գրադարանի տնօրեն Տեյզուլլահ Բարիչի հետ անձնական գրույցում

---

<sup>295</sup> Մենդերեսի հետ Այհան Այդանի սիրավեպի արդյունքում ծնված երեխայի սպանության՝ այսպես կոչված «Մանկան գործը» 1960 թ. մայիսյան հեղաշրջումից հետո Յասըղայի դատավարությունների ընթացքում պաշտոնական արված վարչապետին առաջադրված մեղադրանքներից մեկն էր: «Մանկան գործը» լսումների սղագրության տեքստին կարելի է ծանոթանալ ԹԱՄԺ գրադարանի թվային պաշարներում՝

<https://acikerisim.tbmm.gov.tr/xmlui/bitstream/handle/11543/2666/197302829.pdf> (հասանելի է՝ 17.12.2018):

<sup>296</sup> Տե՛ս **Aydemir Ş.S.**, *Menderes'in Dramı (1899-1960)*, ss. 19-20:

<sup>297</sup> Տե՛ս **Dilipak A.**, *Menderes Dönemi*, İstanbul, 1990, s. 21:

<sup>298</sup> Տե՛ս **Noyan B.**, *Bütün Yönleriyle Bektâşîlik ve Alevîlik*, cilt 6, s. 20:

<sup>299</sup> Նույն տեղում, ss. 69, 141:

Քյոփրյուլյուն անձամբ է խոստովանել, որ բեքթաշի է: Նույն տեղեկությունը Նոյանին փոխանցել են նաև միաբանության մի շարք այլ անդամներ: Ըստ տեղեկությունների՝ սուֆիական դերգահների փակման ժամանակաշրջանում հենց Քյոփրյուլյունի անձնական արխիվում են պահվել Յաջը Բեքթաշ Վելիի գերեզմանի շուրջ գործող բեքթաշիական համալիրի գրադարանի նյութերը: Դրանք միայն նրամահվանից հետո (1966 թ.) են վերադարձվել հետևյալ ժամ գտնվում են դերգահի տեղում գործող թանգարանի հաշվեկշռում<sup>300</sup>: Յարկ է հավելել նաև, որ Քյոփրյուլյուն Գեորգ Յակոբից հետո<sup>301</sup>, ըստ էության, առաջինն է բեքթաշիականությունը դիտարկել իբրև քննական հետազոտման առարկա<sup>302</sup>: Դեռ մինչև ԹՀ հռչակումը հրատարակված նրա «*Առաջին սուֆիները թյուրք գրականության մեջ*» մենագրություն<sup>303</sup> տեքստում բեքթաշիական թեմատիկան անցնում է կարմիր թելի պես<sup>304</sup>: Յատկանշական է, որ ներիսլամական տարբերությունների մասին խոսելիս<sup>305</sup> Քյոփրյուլյուն հանգում է այն եզրահանգմանը, որ պահներն ու բեքթաշիները գործնականում նույնն են: Ըստ նրա՝ եթե վերջիններն ապրում են քաղաքներում և ունեն կրթական ու մշակութային որոշակի ցենզ, ապա առաջինները հիմնականում գյուղական շրջանների բնակիչներ են:

Յետաքրքիր է, որ Մենդերեսի իշխանության ողբերգական ավարտը բեքթաշիական մեկնաբանությամբ ներկայացվում էր իբրև աստվածային պատիժ՝ ճիշտ ճանապարհից շեղվելու համար:

<sup>300</sup> Նույն տեղում, s. 218:

<sup>301</sup> 20-րդ դարասկզբին գերմանական թուրքագիտության հիմնադրի հեղինակած՝ իսրայրո առարկա հարցի շուրջ առաջին և դասական դարձած աշխատանքը տե՛ս **Jacob G.**, *Die Bektaschijje in ihrem Verhältnis zu verwandten Erscheinungen*. München, 1909:

<sup>302</sup> **Tschudi R.**, *Bektāshiyya*. Encyclopaedia of Islam, 2<sup>nd</sup> ed., ed. by Hamilton A. R. Gibb, Johannes H. Kramers, Évariste Lévi-Provençal, Joseph Schacht, Bernard Lewis and Charles Pellat, vol. 1, Leiden, 1960, s. 1162.

<sup>303</sup> Տե՛ս **Köprülü M.F.**, *Türk Edebiyatında İlk Mutasavvıflar*. İstanbul, 1919: Ուշադրություն է արժանի աշխատության՝ Գարի Լայգերի և Ռոբերտ Դանկոֆի կատարած անգլերեն թարգմանությունը՝ ծավալուն ներածականով և ծանոթագրություններով՝ նույնի. *Early Mystics in Turkish Literature*, trans. by Gary Leiser and Robert Dankoff, London and New York, 2006:

<sup>304</sup> Տե՛ս **Köprülü M.F.**, *Türk Edebiyatında İlk Mutasavvıflar*, 3. baskı, Ankara, 1976, ss. 48-54, 108-114, 257-260, 349-353:

<sup>305</sup> Այդ տարբերությունների քյոփրյուլյունական կոնցեպտուալ իզացումն ամփոփ գծերով տե՛ս **Dressler M.**, *Writing Religion: The Making of Turkish Alevi Islam*, Oxford, 2013, pp. 151-271:

Այս լույսի ներքո հատկանշական է նույն դեդեբայի նկարագրած հետևյալ դիպվածը:

1960 թ. փետրվարի 2-ին վարչապետ Մենդերեսն ու ազգային կրթության նախարար Մեհմեթ Աթըֆ Բենդերլիօղլուն, չնայած -7°C ջերմաստիճանին և ձնաքթին, մեկնում են երկրի կենտրոնական Մուշուր և Յաջըբեթաշ շրջաններ՝ հանդիպելու տեղական բնակչությանը: Ընդ որում, ուղեկցող լրագրողներին արգելվում է լուսանկարել եղանակային բարդ պայմաններում Յաջը Բեթաշ Վելիի գերեզմանին մոտեցող վարչապետին<sup>306</sup>: Բեդրի Նոյանը պատմում է Մենդերեսի այցի՝ բեթաշիների վրա թողած տպավորության մասին.

*«Ադնան Մենդերեսը մայիսի 27-ի հեղափոխությանը կարծ ժամանակ առաջ եկել էր Յաջըբեթաշ շրջան: Նրա գալուց երեք-հինգ ժամ առաջ արևային եղանակ էր, շրջանում իրական գարնանային մթնոլորտ էր տիրում: Սակայն երբ Մենդերեսը մոտենում էր Յաջըբեթաշին, հանկարծ երկինքը պատվեց ամպերով, և շրջանում ձնաքուք սկսվեց: Մենդերեսը Յաջիբեթաշ այսպես մտավ:*

*Գնաց այցելելու Յազրեթ-ի Փիրին (Յաջը Բեթաշ Վելիին): Յանգստարան մտնելու համար սկսեց իջնել աստիճաններով, սակայն հանկարծ սայթաքեց ու ընկավ: Յաջըբեթաշցիներն, այս մասին լսելով, մտածեցին, որ սա աստվածային մի նշան էր. մոտ ապագայում իշխանությանը էլ է զրկվելու:*

*Եվ իրոք, մի քանի ամիս անց տեղի ունեցավ մայիսի 27-ի հեղաշրջումը, և Մենդերեսը զրկվեց իշխանությանը»<sup>307</sup>:*

ԺԿ կառավարման ժամանակաշրջանում իսլամի նկատմամբ վերաբերմունքի ընդհանրական գնահատական է տալիս ԹՅ ազգային կրթության նախարար Թնֆիք Իլերին 1957 թ. հոկտեմբերի 16-ին Սամսունում ունեցած ելույթի ժամանակ: Ըստ նրա՝ ԺԿ իշխանության 7 տարվա ընթացքում 17 իմամ հաթիփ դպրոց, 15 հազար մզկիթ է բացվել, կառուցվել են նոր հոգևոր դպրոցներ, «Ստամբուլը վերածվել է երկրորդ Կաաբայի»,

<sup>306</sup> Տե՛ս *Hacıbektaş'ın Türbesini Ziyaret Eden Başvekil*, Milliyet, 03.02.1960:

<sup>307</sup> Տե՛ս **Noyan B.**, *Bütün Yönleriyle Bektâşîlik ve Alevîlik*, cilt 6, ss. 234-235:

յ ու ռ ա ք ա ն չ յ ու ռ գ ո ղ ծ ա ր ա ն ի ծ խ ն ե լ ու զ ի կ ո ղ ք ի ն մ ե կ մ ի ն ա ր ե թ Ե ք ա ր ձ ր ա ց վ ե լ <sup>308</sup>:

ԺԿ Ժ ա մ ա ն ա կ ա շ ր ջ ա ն ու մ ի ս լ ա մ ի վ ե ռ ա ք ե ղ յ ա լ ա ա ն ց ք ա յ ի ն փ ո փ ո խ ու թ յ ու ն ն ե ռ ի ց հ ա ր կ Ե ա ա ն ձ ն ա ց ն ե լ հ ա տ կ ա պ ե ս 1950 թ. հ ու ն ի ս ի 16-ի ն ը ն դ ու ն վ ա ծ № 5665 օ Ր Ե ն ք ը, ո Ր ո վ ա պ ա ք Ր Ե ա կ ա ն ա ց վ ու մ Ե Բ Օ 526-ր դ հ ո ղ վ ա ծ ո վ ս ա հ մ ա ն վ ա ծ մ ու ս ու լ մ ա ն ա կ ա ն ա ղ ո թ ա կ ա ն չ ի՝ ա զ ա ն ի ա ր ա ք ե ղ Ե ն ը ն թ ե ղ ր ց ա ն ու թ յ ու ն ը <sup>309</sup>: Ը ն դ հ ա ն ու ռ ա մ ա մ ք, Մ Ե ն դ Ե ղ Ե ս ի կ ա ա վ ա ր ու թ յ ա ն ի շ խ ա ն ու թ յ ա ն պ ա յ մ ա ն ն ե ղ ու մ «*հ ա ն Ր ա պ Ե տ ա կ ա ն Թ ու ղ ք ի ա յ ի կ Ր ո ն ա կ ա ն ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն ը հ ի մ ն ա վ ո Ր ա պ Ե ս փ ո խ վ Ե ց, Ա թ ա թ յ ու ղ ք ի Ժ ա մ ա ն ա կ ա ր շ ջ ա ն ի «ռ ա զ մ ա կ ա ն ա շ խ ա ր հ ի կ ու թ յ ա ն» ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն ը լ ի ո վ ի ն վ ե ղ ա ց վ Ե ց*»<sup>310</sup>:

Ա մ փ ո փ Ե լ ո վ պ Ե տ ք Ե ա ր ձ ա ն ա գ Ր Ե լ, ո Ր հ Ե ն վ Ե լ ո վ պ ա հ պ ա ն ո ղ ա կ ա ն հ ա յ ա ց ք ն Ե ղ ու ն Ե ց ո ղ, գ Ե ղ ա զ ա ն ց ա պ Ե ս հ ա վ ա տ ա ց յ ա լ ը ն տ ղ ա զ ա ն գ վ ա ծ ի վ Ր ա, ԺԿ-ն լ ա յ ն ո Ր Ե ն օ գ տ ա գ ո ղ ու մ Ե ղ ի ս լ ա մ ը ք ա ղ ա ք ա կ ա ն ն պ ա տ ա կ ն Ե ղ ո վ: 1940-ա կ ա ն թ թ. վ Ե ղ ջ ի ց ս կ ս վ ա ծ ի ս լ ա մ ի ք ա ղ ա ք ա կ ա ն ա ց ու մ ը Մ Ե ն դ Ե ղ Ե ս ի կ ա ա վ ա ր ու թ յ ու ն ն Ե ղ ի ի շ խ ա ն ու թ յ ա ն ը ն թ ա ց ք ու մ լ ա յ ն թ ա փ ս տ ա ց ա վ՝ 1950-ա կ ա ն թ թ. վ Ե ղ ջ ի ն Բ Ե ղ Ե լ ո վ ի ս լ ա մ ա կ ա ն ն Ե ղ ի և ա շ խ ա ր հ ի կ ու թ յ ա ն կ ո ղ մ ն ա կ ի ց ն Ե ղ ի մ ի ջ և ս ու ղ Ե ղ կ փ Ե ղ կ մ ա ն:

2.2.1.1. ԺԿ *ի շ խ ա ն ու թ յ ա ն փ ո խ ա ր ա ք ե ղ ու թ յ ու ն ն Ե ղ ը Կ ո ս տ ա ն դ ն ու պ ղ ս ի Յ ա յ ո ց պ ա տ ղ ի ա ր ք ու թ յ ա ն հ Ե տ*

Ա ն դ Ր ա ղ ա ա ն ա լ ո վ ԺԿ կ Ր ո ն ա կ ա ն ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ա ն ը՝ հ ա ր կ Ե ն շ Ե լ ն ա ն, ո Ր ա յ ն ս կ գ Ր ի ց և Ե թ ո չ մ ու ս ու լ մ ա ն փ ո ք Ր ա մ ա ս ն ու թ յ ա ն <sup>311</sup> ն Ե ղ կ ա յ ա ց ու ց ի չ ք ա ղ ա ք ա ց ի ն Ե ղ ի կ ո ղ մ ի ց

<sup>308</sup> Տ Ե՛ ս *Başbakan Samsun'da Tütün fiatları yükseltilecek*, Cumhuriyet, 17.10.1957:

<sup>309</sup> Տ Ե՛ ս *Eroğul C., Demokrat Parti Tarihi ve İdeolojisi*, Ankara, 1990, s. 90:

<sup>310</sup> Ն ու յ ն տ Ե ղ ը, s. 132:

<sup>311</sup> «Ո չ մ ու ս ու լ մ ա ն փ ո ք Ր ա մ ա ս ն ու թ յ ու ն» Ե գ ղ ը թ ու ղ ք ա կ ա ն հ ա ս ա ր ա կ ա կ ա ն-ք ա ղ ա ք ա կ ա ն հ ո ղ ո վ ու յ թ ու մ ա վ ա ն դ ա ք ա ր կ ի ղ ա ա վ ու մ Ե՝ հ ի մ ն վ Ե լ ո վ Լ ո գ ա ն ի պ ա յ մ ա ն ա գ ղ Ե ղ ի 37-45-ր դ հ ո ղ վ ա ծ ն Ե ղ ի կ ա մ ա յ ա կ ա ն մ Ե կ ն ա ք ա ն ու թ յ ա ն վ Ր ա: Թ Ե և պ ա յ մ ա ն ա գ ղ ի տ Ե ք ս տ ղ ս ա հ մ ա ն ա փ ա կ վ ու մ Ե «ո չ մ ու ս ու լ մ ա ն փ ո ք Ր ա մ ա ս ն ու թ յ ու ն» ա ն ո ղ ո շ ձ և ա կ Ե ղ պ մ ա մ ք, թ ու ղ ք ա կ ա ն պ Ե տ ու թ յ ու ն ը «ipso facto» շ ա ր ու ն ա կ ու մ Ե օ ս մ ա ն յ ա ն «մ ի լ լ Ե թ ն Ե ղ ի» ի ն ս տ ի տ ու տ ի ա վ ա ն դ ու յ թ ը՝ ճ ա ն ա չ Ե լ ո վ մ ի ա յ ն հ ու յ ն Ե ղ ի, հ ա յ Ե ղ ի և հ Ր Ե ա ն Ե ղ ի ի ղ ա վ ու ն ք ն Ե ղ ը: Տ Ե՛ ս *Bayır D., Minorities and Nationalism in Turkish Law*, Abingdon-New York, 2016, p. 90:

դիտարկվում էր իբրև յուրատեսակ փրկօղակ<sup>312</sup>: Պատահական չէ, որ քեմալական ամբողջատիրոջ ան կողմից բռնաճնշումների ենթարկված<sup>313</sup> ազգային-կրոնական փոքրամասնությունները, այդ թվում՝ հայերը 1946, 1950 և 1954 թթ. համապետական ընտրություններում մեծամասամբ քվեարկել են հենց Ջելալ Բայարի և Ադնան Մենդերեսի՝ առերևույթ ավելի ազատական հայացքներ ունեցող կուսակցության օգտին<sup>314</sup>: Միաժամանակ, թեև փոքրամասնություններին նկատմամբ մինչև 1955 թ. կիպրական ճգնաժամը որդեգրված հանդուրժողական քաղաքականությունը ժԿ համար արտաքին դրդապատճառներ ուներ (ԱՄՆ-ի հետ մերձեցում, ՆԱՏՕ-ի անդամակցության գործընթաց)<sup>315</sup>, հայերի համար այն լավ առիթ էր լուծել համայնքի առջև ծառայած հիմնական խնդիրները (պատրիարքական ընտրությունների անցկացում, համայնքային գույքի՝ վաքըֆների հետ կապված հարցերի կարգավորում և այլն):

1950 թ. մայիսյան ընտրություններում ժԿ տարած համոզիչ հաղթանակից հետո ձևավորված Մենդերեսի առաջին կառավարության պաշտոնավարման մեկնարկին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքական տեղապահը Գևորգ արք. Արսլանյանն էր, որն արդեն թևակոխել էր կյանքի իններորդ տասնամյակը<sup>316</sup>: 1944 թ. Մեսրոպ Նարոյան պատրիարքի մահվանից ի

<sup>312</sup> Տե՛ս **Oktay H.E.**, *Yashi ada*, İstanbul, 2006, s. 195:

<sup>313</sup> Մինչև 1950 թ. Թուրքիայում իշխող քեմալական Չանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՉԺԿ) մեծամասամբ շարունակում էր Օսմանյան կայսրության՝ սեփական ոչ մուսուլման քաղաքացիների հանդեպ անհանդուրժողական և խտրական քաղաքականությունը: Այլատյացության՝ օրենսդրական ձևակերպում ստացած մի շարք դրսևորումներն այս տարիներին ուղղված էին ազգային փոքրամասնություններին տնտեսական և, մասամբ նաև, ֆիզիկական ջախջախմանը: Այս մասին, մասնավորապես, տե՛ս **Մելքոնյան Ռ.**, «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, 2008, թիվ 5, էջ 127-143, նույնի՝ «*Էթնիկ գորակոչ*» Թուրքիայի Չանրապետությունում (1941-1942թթ.), Լրաբեր հասարակական գիտություններ, 2012, թիվ 2-3, էջ 42-50: Ազգային-կրոնական փոքրամասնություններին նկատմամբ ՉԺԿ ընդհանրական դիրքորոշման վերաբերյալ մանրամասն տե՛ս **Çağatay Okutan M.**, *Tek parti döneminde azınlık politikaları*, 2. baskı, İstanbul, 2009:

<sup>314</sup> Տե՛ս **Demirler D., Kayhan M.**, *Türkiye'de azınlık hakları sorunu: vatandaşlık ve demokrasi eksenli bir yaklaşım*, İstanbul, 2006, s. 37:

<sup>315</sup> Տե՛ս **Güven D.**, *Riots against the Non-Muslims of Turkey: 6/7 September 1955 in the context of demographic engineering*, European Journal of Turkish Studies, vol. 12, 2011, par. 56, [journals.openedition.org/ejts/4538](http://journals.openedition.org/ejts/4538) (հասանելի էր 20.10.2018):

<sup>316</sup> Գևորգ արք. Արսլանյանի կյանքի որոշ մանրամասների համար տե՛ս Մայրաթոռի պաշտոնական ամսագրում հրատարակված մահախոսականը՝ *Չանգիստ*



Հաջորդ օրը ստացվում է Ամենայն հայոց կաթողիկոսի հաստատման կոնդակը<sup>322</sup>, և Գարեգին Խաչատուրյանն իր պարտականությունների կատարմանն է անցնում մարտի 16-ին կայացած պատրիարքական աթոռ բարձրանալու հանդիսավոր արարողությունից հետո<sup>323</sup>:

Նորընտիր պատրիարքն առաջին իսկ րոպեներից գիտակցում է թուրքական իշխանությունների հետ դրական հարաբերությունների հաստատելու կարևորությունը: Այդ ենվկայում նրա առաջին հայտարարություններն Ստամբուլի Յեշիլբյոյ օդանավակայանում վայրէջք կատարելուց հետո. «23 տարվա բացակայությունից հետո հայրենիք վերադառնալու երջանկությանն արժանանալու համար շնորհակալ եմ Աստծուն: Երկրից հեռու գտնվելուս ընթացքում Թուրքիայի ապրած զարգացումն ակնհայտ է ողջ աշխարհի համար: Վստահ եմ, որ մեր երկիրը սիրելի նախագահ Ջելալ Բայարի և կառավարության առաջնորդությունից մշտապես առաջընթաց է գրանցելու: Երկրից դուրս գտնվելու ընթացքում Թուրքիայի պատվաբեր քաղաքացիությունը միշտ պահպանել եմ»<sup>324</sup>:

Պատրիարքական պարտականությունները ստանձնելուց կարճ ժամանակ անց<sup>325</sup> Գարեգին արքեպիսկոպոսն ուղևորվում է մայրաքաղաք Անկարա՝ հանդիպելու Թուրքիայի նախագահին, վարչապետին և կառավարության անդամներին: Ապրիլի 7-ին Թուրքիայի ներքին գործերի նախարար Յալիլ Իբրահիմ Օզյորուքի անունից մայրաքաղաքի պաշտոնական հյուրատանը՝ «Անկարա փալատում» նրա պատվին հանդիսավոր ճաշ է տրվում<sup>326</sup>: Դրանից ավելի վաղ՝ աթոռակալման արարողությունից հետո

<sup>322</sup> Ամենայն Հայոց հայրապետի կոնդակը՝ Կոստանդնուպոլսի նորընտիր պատրիարք Ամենապատիվ Տ. Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի հաստատման մասին, Էջմիածին, թիվ Ա-Գ, 1951, էջ I-IV:

<sup>323</sup> Տե՛ս *Ermeni Patriği diün taç giydi*, Milliyet, 17.03.1951:

<sup>324</sup> Տե՛ս *Ermeni Patriği diün sabah geldi*, Milliyet, 12.03.1951:

<sup>325</sup> Թուրքիա ժամանելուց երկու օր հետո նորընտիր պատրիարքն արդեն հասցրել էր քաղաքավարության այց կատարել Ստամբուլի նահանգապետ Տահրեթթին Զեքիմ Գյոքային (տե՛ս *Ermeni Patriği Valiyi ziyaret etti*, Milliyet, 15.03.1951): Ստամբուլի նահանգապետը թուրքական պետական աստիճանակարգության ամենաբարձր պաշտոնյան է, որն ուղղակիորեն աշխատում է Կոստանդնուպոլսի հայոց և հունաց պատրիարքների ու հրեից ռաբունապետի հետ (Տե՛ս *Altındal A., Türkiye ve Ortodoksia*, İstanbul, 1995, s. 89):

<sup>326</sup> Տե՛ս *Kısa şehir haberleri*, Milliyet, sayı 336, 04.04.1951, s. 2, *Ermeni Patriği Ankara'dan hareket etti*, Milliyet, sayı 339, 07.04.1951, s. 5:



նորընծա պատրիարքի անուսից երախտագիտական հեռագիր էր հղվել վարչապետ Ադնան Մենդերեսին<sup>327</sup>:

Գարեգին արքեպիսկոպոսի՝ թուրք ղեկավարներին ուղղված նամակները սովորաբար շարադրված են ընդգծված դիվանագիտական բառապաշարով: Օրինակ՝ 1953 թ. սեպտեմբերի 5-ով թվագրվող՝ վարչապետ Ադնան Մենդերեսին ուղղված նամակում, որում բազմիցս շեշտվում է թուրքիայի հայ քաղաքացիների հավատարիմ և երախտագետ լինելը, Պատրիարքը կառավարության ղեկավարին դիմելիս կիրառում է «*Մեր մեծապատիվ հայր և երկրի ղեկավար*» ձևակերպումը<sup>328</sup>: Այս և նմանատիպ այլ արտահայտությունները պետք է գնահատել այն դիրքերից, որ թուրքիայի ղեկավարության հետ ջերմ հարաբերությունների հաստատումը պոլսահայ համայնքի փաստական ղեկավարը հանդիսացող պատրիարքի համար համայնքային խնդիրներից որոշների լուծմանը հասնելու թերևս միակ ճանապարհն էր<sup>329</sup>: Հայոց պատրիարքին բավական արագ հաջողվում է համապատասխան շփման եզրեր գտնել թուրքական քաղաքական վերնախավի առանցքային ներկայացուցիչների հետ: Այս առումով ուշագրավ է 1952 թ. դեկտեմբերին Գարեգին արքեպիսկոպոսի՝ մայրաքաղաք Անկարա կատարած այցը, որի ընթացքում նա ընդունելության է արժանանում երկրի երեք գլխավոր դեմքերի՝ նախագահ Ջելել Բայարի, վարչապետ Ադնան Մենդերեսի և թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահ Ռեֆիք Քորալթանի կողմից<sup>330</sup>: Ամփոփելով պատրիարքի այցը՝ Ստամբուլի հայկական «Ժամանակ» օրաթերթը գրում է. «*պատրիարքարան է կը հաղորդուի թէ Ս. Պատրիարքը գոհունակ սրտով վաղը երեկոյ ճամբայ կ'ելլէ Անգարայէ, ուր ամենուն կողմէ արժանացած է համակրելի եւ ջերմ ընդունելու թեան*»<sup>331</sup>:

<sup>327</sup> Տե՛ս *Ermeni Patriği dün törenle andıctı*, Milliyet, 17.03.1951 (տեքստը՝ *BCA*, fon: 30.1.0.0, yer: 18.101.4):

<sup>328</sup> Թրք.՝ «*çok muhterem Babamız ve Devlet Başkanımız*» (տե՛ս *BCA*, fon: 30.1.0.0, yer: 133.866.7, s. 3):

<sup>329</sup> Համայնքին հուզող հարցերի վերաբերյալ Գարեգին արքեպիսկոպոսի՝ Մենդերեսին հղած խնդրագրերի թեմայով խիստ ուշագրավ է թուրք ուսումնասիրող Ֆեյզա Քուրնազ Շահինի հետևյալ հոդվածը՝ **Kurnaz Şahin F., Demokrat Parti döneminde Ermeni cemaatinin iktidara yaklaşımı: Patrik Karekin Haçaduryan'ın Başbakan Adnan Menderes'e arzuhalleri (1951-1960)**, Tarihîn Peşinde, sayı 13, 2015, ss. 185-215:

<sup>330</sup> Տե՛ս *Başbakan, Ermeni Patriğini kabul etti*, Cumhuriyet, 19.12.1952:

<sup>331</sup> Տե՛ս *Ազգ. ժողովի նախագահ Րեֆիք Քորալթան եւ սընդունեց Ս. Պատրիարք հօր այցելու թիւ նը, ժամանակ*, 20.12.1952:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի և Թուրքիայի վարչապետի ակտիվ շփուլմներն ինչպես հանդիպումների, այնպես էլ անձնական նամակագրության մակարդակում շարունակվել են ԺԿ իշխանության ողջ ընթացքում: Դրանց արդյունքում լուծում են գտել պոլսահայ համայնքին հուզող մի շարք խնդիրներ: Բնութագրական է, օրինակ, որ պատրիարքի վարչապետի հետ տնական նամակագրության արդյունքում<sup>332</sup> հաջողվում է հասնել ԹԱՄԺ կողմից ԹՅ «Վաքըֆների մասին» 1935 թ. 2762 թվակիր օրենքի 44-րդ հոդվածի<sup>333</sup> հայերի համար ցանկալի մեկնաբանմանը<sup>334</sup>: Այս նպատակի համար Գարեգին սրբազանը համախմբում է պոլսահայ համայնքի ողջ ներուժը, այդ թվում՝ ներգրավելով ԹԱՄԺ հայ ազգի պատգամավոր Չաքար Թարվերին և Թուրքիայի հայերի ազգային կենտրոնական վարչության ատենապետ Մկրտիչ Շելեֆյանին<sup>335</sup>, որն անձնական ջերմ հարաբերություններ ունեւորել է Ադնան Մենդերեսի հետ: Թուրքական արխիվներում պահպանվել են այս առիթով պատրիարքի և Մ. Շելեֆյանի՝ վարչապետ Մենդերեսին հղած շնորհակալական նամակները<sup>336</sup>: Համանման մի գրություն էլ ուղարկվել է նաև համանքային մեկ այլ խոշոր իրադարձության՝ Սբ. Խաչ Դարեվանքի բացման կապակցությամբ<sup>337</sup> և այլն:

Պոլսահայերի հոգևոր առաջնորդը Թուրքիայի քաղաքական վերնախավի հետ հարաբերությունները կառուցելիս ավանդաբար հանդես է գալիս երկրի օրինավոր և ընդգծված հասարակական ակտիվություն ունեցող քաղաքացու դիրքերից: Մասնավորապես, Գարեգին արք. Խաչատուրյանը պաշտոնավարման

<sup>332</sup> Տե՛ս, օրինակ, BCA, fon: 30.1.0.0, yer: 133.866.7, 133.866.8, 133.869.3 և այլն:

<sup>333</sup> Օրենքը տե՛ս ԹՅ պաշտոնաթերթում՝ *Vakıflar kanunu*, T.C. Resmî Gazete, 13.06.1935: Գույքի կադաստրային գրանցմանը վերաբերող՝ օրենքի 44-րդ հոդվածի ազդեցությունը տարածվում էր պոլսահայերի համայնքային ունեցվածք համարվող այնպիսի կառույցների վրա, ինչպիսիք են Քումբափրի Սբ. Աստվածածին աթոռանիստ Մայր տաճարը, Գալաթայի Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Գեդիկփաշայի Սբ. Հովհաննես եկեղեցիները, նախկին Թոքատլյան հյուրանոցի շենքը և այլն:

<sup>334</sup> Որոշումը տե՛ս ԹԱՄԺ համապատասխան նիստի արձանագրություն և տեքստում՝ *T.B.M.M. Zabıt Ceridesi*, devre X, cilt 13, 02.07.1956, ss. 15-16:

<sup>335</sup> Թարվերի և Շելեֆյանի մասին մանրամասն տե՛ս **Մելքոնյան Ռ., Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի հայ ազգի պատգամավորները (1935-1960թթ.)**, Արևել ազիտության հարցեր, 2012, թիվ 7, էջ 95-102:

<sup>336</sup> Տե՛ս համապատասխանաբար BCA, fon: 30.1.0.0, yer: 133.870.7, ss. 23-24 և yer: 133.870.1, էջ 1-2:

<sup>337</sup> Տե՛ս BCA, fon: 30.1.0.0, yer: 133.870.7, էջ 30:

ընթացքում բազմիցս մասնակցել է հանրային հանգանակություններին: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն քրիստոնեական կարեկցանքով բացատրվող դեպքերի<sup>338</sup>, այլև իբրև Թուրքիայի քաղաքացի կատարված նվիրատվությունների մասին<sup>339</sup>: Ավանդական էին դարձել Մենդերեսի արտերկիր կատարվող այցերից<sup>340</sup>, համապետական ընտրություններից<sup>341</sup> առաջ և հետո, իսլամական տոների կապակցությամբ<sup>342</sup> պատրիարքի անունից Թուրքիայի վարչապետին հղվող նամակները, որոնցի պատասխան ավանդաբար ջերմ շնորհակալականներ էին ստացվում:

ԺԿ իշխանության տասնամյակի՝ Թուրքիայի ազգային-կրոնական փոքրամասնությունների համար ամենածանր շրջանը Ստամբուլի 1955 թ. սեպտեմբերյան պոգրոմների օրերն էին<sup>343</sup>, որոնք, փաստորեն, փշրեցին ոչ թուրքերի նկատմամբ Մենդերեսի կառավարության բարյացակամ վերաբերմունքի միջոց: Այդ օրերին Գարեգին արք. Խաչատուրյանի դիրորոշումը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում: Ուշագրավ է, որ ողբերգական այդ դեպքերից մոտ մեկ ամիս առաջ վարչապետ Մենդերեսն իր անձնական քարտուղար Մուզաֆֆեր Էրսյունի<sup>344</sup> միջոցով ողջուններ է փոխանցել Չայոց պատրիարքին՝ հետաքրքրվելով համայնքում առկա խնդիրների լուծման ընթացքով<sup>345</sup>: Այս ժեստը, որը ընդգծված դրական արձագանք էր ստացել պոլսահայերի շրջանում, պետք է համարել հայերի շրջանում կուտակված դժգոհություննը պարպելուն ուղղված

<sup>338</sup> Ս. Պատրիարք Չայրը կուսակալ քոֆ. Կեօքայի այցելելով 20 հազար ոսկի նուիրատուութիւնը ըրաւ Ֆէթիհէի աղետեալ ներուն համար, Ժամանակ, 01.05.1957:

<sup>339</sup> Ս. Պատրիարք Չայրը 100 ոսկի նուիրեց Մալթէփէի մզկիթին, Ժամանակ, 19.12.1957:

<sup>340</sup> Տե՛ս, օրինակ BCA, fon: 30.1.0.0, yer: 133.870.7, 133.869.3 և այլն:

<sup>341</sup> Տե՛ս, օրինակ, BCA, fon: 30.1.0.0, yer: 133.867.2, ss. 1-2:

<sup>342</sup> Տե՛ս, օրինակ, BCA, fon: 30.1.0.0, yer: 5.24.9, ss. 1-2:

<sup>343</sup> Գերագանցապետ հոլյների, բայց նաև հայերի դեմ ուղղված այդ ջարդարությունների մասին մանրամասն տե՛ս **Мелкоян Р., Погромы греков и армян в Турции 6-7 сентября 1955 года**, Историческое пространство. Проблемы истории стран СНГ, 2015, 1, стр. 269-275:

<sup>344</sup> Չաշվի առնելով վարչապետի մեծ ծանրաբեռնվածությունը՝ Գարեգին արքեպիսկոպոսը հաճախ հենց Էրսյունի միջոցով էր փորձում կապ հաստատել Մենդերեսի հետ: Մասնավորապես, հենց նրա միջոցով էր Պոլսի հայոց պատրիարքը 1957 թ. փորձում թուրքական կառավարության աջակցությունը ստանալ Գալուստ Գյուլբենկյանից ժառանգությունն ստացած 80 (այլ աղբյուրներով՝ 170) կիլոգրամ ոսկին Թուրքիա բերելուն և իրացնելուն հարցում: Տե՛ս BCA, fon: 30.1.0.0, yer: 133.870.7, ss. 20-21, yer: 133.868.1, s. 5:

<sup>345</sup> Տե՛ս BCA, fon: 30.1.0.0, yer: 133.867.11:

քայլ : Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Գարեգին արքեպիսկոպոսի նամակների հիմնական խնդրանքը՝ վարչապետի հետ թեկուզ մի քանի րոպե տևողությամբ հանդիպման կազմակերպումն էր<sup>346</sup>։ Ստամբուլյան պոպոմիս հաջորդող օրերին Յայնց պատրիարքի հավասարակշիռ և զգուշավոր դիրքորոշումը հիշեցնում է տարիներ անց 1960 թ. հեղաշրջումից հետո նրա որդեգրած կեցվածքը, որին անդրադարձ կկատարվի ստորև :

Ընդհանուր առմամբ, մինչև 1960 թ. մայիսյան ռազմական հեղաշրջումը Մենդերես-Խաչատուրյան հարաբերությունները շարունակել են լինել ընդգծված դրական : Այդ է վկայում հեղաշրջումից հետո թուրքական մամուլում արտահոսած՝ 1960 թ. մայիսի 5-ին վարչապետին Գարեգին արքեպիսկոպոսի գրած քաջալերող նամակը<sup>347</sup> : Այդ հրապարակումները որոշակի բացասական արձագանք են գտնում պոլսահայերի շրջանում : Յղում կատարելով «Ագիս» հանդեսին՝ պոլսահայ «Ժամանակը» գրում է. «Նոյնիսքն մեր հայ հայրենակիցներուն կը մնայ հաշիւ հարցնել Պատրիարք Էֆենտիէն որ իրենց զգացմանց թարգման չի հանդիսացող այս գրու թիւ նը գրած է»<sup>348</sup> : Թուրքական «Զումհուրիյեթի» էջերում այդ օրերին անգամ տեղեկություններ է հայտնվում այն մասին, որ հայտնի 5 պոլսահայերից բաղկացած մի խումբ հանդես է եկել պատրիարքի հրաժարականի պահանջով<sup>349</sup> : Գարեգին սրբազանը, հակադարձելով մամուլի կողմից հնչող մեղադրանքներին, ընդունում է, թե ինքը «համակրու թիւ նու նէր Մէնտէրեսի անձին հանդէպ»՝ միաժամանակ շեշտելով Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության համար բոլոր ժամանակներում արդիական մաքսիմը՝ «մենք օրու ան կառավարու թեան հնազանդելու պարտաւ որ ենք»<sup>350</sup> : 80-ամյա պատրիարքը համայնքի անվտանգությունը երաշխավորելու

<sup>346</sup> Նույն տեղը :

<sup>347</sup> Տե՛ս E. İzzet Benice ve Ermeni Patriğinin Menderes'e yazdığı mektup açıklandı, Milliyet, 12.09.1960:

<sup>348</sup> Տե՛ս Գարեգին պատրիարքին կողմէ անկեալ վարչապետին գրուած նամակը հրատարակու եցաւ, Ժամանակ, 12.09.1960:

<sup>349</sup> Տե՛ս Ermeni cemaati Patrik Haçaduryanı protesto ederek istifasını istiyor, Cumhuriyet, 13.09.1960: Թերթը նշում է 5 պոլսահայերի անունները՝ Եդուարդ Բեզագ, Թաթուլ Ալիքսանյան, Նուրհան Օզալթուն, Արաւլթունյան և Վարդգես Գաբրիելյան :

<sup>350</sup> Տե՛ս Ս. Պատրիարք Յօր նամակին արձագանքը թուրք մամուլին մէջ, Ժամանակ, 13.09.1960:

դիրքերից հանդես գալու այս քաղաքականությունը շարունակում է նաև հեղաշրջումից հետո: Մայիսի 30-ին Գարեգին արքեպիսկոպոսը *«մոտաւ որապէս 20 վայրկեանի տեսակցութիւն»* է ունենում Ստամբուլի նահանգապետի պարտականությունները կատարող բանակի գեներալ Ռևիք Թուլգայի հետ: Նույն օրը հրապարակվում է նրա նամակը՝ ուղղված երկրի փաստական ղեկավար, Ազգային միասնության կոմիտեի նախագահ Ջեմալ Գյուրսելին, որում Հայոց պատրիարքը վերահաստատում է Թուրքիայի հայ քաղաքացիների հավատարմությունն օրվա շխանություններին<sup>351</sup>:

Ամփոփելով նշենք, որ 1960 թ. հեղաշրջումից հետո Պոլսո հայոց պատրիարքի դիրքորոշման այս կտրուկ շրջադարձը գալիս է փաստելու, որ վարչապետ Ադնան Մենդերեսի հետ Գարեգին արքեպիսկոպոս խաչատուրյանի շուրջ մեկ տասնամյակ տևած մտերմությունն առաջին հերթին անձնական կապերի միջոցով պրլսահայ համայնքի անվտանգությունն ու կայուն զարգացումն ապահովելու միջոց էր:

### 2.2.2. Հեղափոխականությունն և քեմալական բարեփոխումներ

1946 թ. ստեղծման պահին հրապարակված ԺԿ ծրագրի 15-րդ հոդվածում *«Հեղափոխության մեր ընկալումը»* խորագրի ներքո կարդում ենք. *«Մեր կուսակցությունը հեղափոխությունն իմաստավորում է հարափոփոխ աշխարհի և երկրի պահանջներին, կյանքի շարժման արագությանը համապատասխանեցնելու, թուրք ազգը բոլոր առումներով նոր մակարդակի բարձրացնելու և անցյալից մնացած հետադիմական և վնասական ավանդույթներն արմատախիլ անելու համար անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռնարկելու տեսակետից»*<sup>352</sup>:

Ինքը Բայարը քեմալականության հիմքերի վրա կառուցված քաղաքական համակարգի նկատմամբ իր կողմից ստեղծվող

<sup>351</sup> Տե՛ս *2եկոյց պատրիարքարանի*, Ժամանակ, 02.06.1960: Բնութագրական է, որ նամակի տեքստում Գարեգին պատրիարքը կիրառել է *«այս հայրենիքի զավակներ հանդիսացող և այս չքնաղ երկրում դրա բարիքներից օգտվող հավատարիմ հայ քաղաքացիներ»* (թրք.՝ «bu Vatanın bir evladı ve bu güzel Vatanında ve onun nimetlerinden müstefit olan sadık ermeni vatandaşlar») ձևակերպումը:

<sup>352</sup> Տե՛ս *DP Program ve Tüzüğü*, İstanbul, 1946, s. 4:

կուսակցության մոտեցումները ներկայացնում է հետևյալ կերպ.

ա) Աթաթյունը քարեփոխումներն ամբողջական են և կայացած:

բ) Անհրաժեշտ է, որ ազգից դեպի պետության գաղափարական հոսք սկսվի: Թուրք ազգը հասուն ազգ է և ունակ է ինքն իր ճակատագիրը վճռել: Ուստի անհրաժեշտ է, որ մեր կողմից ստեղծվել իք կուսակցությունն աշխատի ներքևից՝ վերև:

գ) Թուրքիայում անհրաժեշտ է ապահովել ժողովրդի մասնակցությունը կառավարմանը: Դրալու ծումը մեր ընտրական համակարգը մեծամասնական հիմքերի վրա դնելն է:

դ) Քաղաքական ուժերը, ընտրության ճանապարհով ժողովրդի կողմից ընտրվելով, իշխանության գալիս երկիրը պետք է կառավարեն ժողովրդից եկող քաղաքական ազդակների հիման վրա: Աթաթյունը սահմանադրությունը նախատեսում է, որ բոլոր ուժերը պետք է հավաքվեն մեջլիսի հովանու ներքո:

ե) Պատմական զարգացումներն աչքի առաջ ունենալով՝ աշխարհիկության հարցում պետք է զգուշավոր մոտեցում ցուցաբերել

զ) Նոր ստեղծվել իք կուսակցությունը հենվելու է ոչ թե «գաղափարական կարգերի», այլ «ժողովրդի հիմքերի» վրա<sup>353</sup>:

Նմանաբնույթ բառապաշար է առկա ԺԿ ղեկավարների ընդդիմադիր շրջանի գրեթե բոլոր հրապարակային հայտարարություններում: Ոչ ծայրահեղական, աստիճանական փոփոխության պահպանողական թեզը հատկապես ակնառու է 1949 թ. ԺԿ երկրորդ ընդհանուր համագումարի ժամանակ հնչեցված ելույթներում: Բայարը, մասնավորապես, հայտարարում էր. «Այս հայտարարությունը [հոլլիսի 12-ի հայտարարությունը, - Ա.Գ.] մեզ երկու ճանապարհ է թողել. 1. հեղափոխության կամ ապստամբության ճանապարհ, 2. երկրի կայունությունը պահպանելու ճանապարհը, եթե անգամ դա ենթադրում է դժվարություններ և ժամանակի կորուստ: Մենք մեզ վստահված մեծ պատասխանատվություն քննարկել ենք երկրորդ ճանապարհը»:

<sup>353</sup> Տե՛ս **Bayar C.**, *Ben de Yazdim*, cilt 2, İstanbul, 1966, s. 112:

1950 թ. նախընտրական շրջանում ԺԿ ղեկավար մարմնի տարածած հայ տարարության հետևյալ հատվածը ևս արտահայտում է նույն մտայնությանը. «*Իշխանության գալու դեպքում մեր կուսակցության առաջին և ամենակարևոր պարտականությունը բնականաբար կլինի ազգի կողմից ընդունված բարեփոխումների և մեր պատմության վերջին հեղափոխության արդյունքում ձեռք բերված արդյունքների պահպանումը*»<sup>354</sup>: Այս միտքը զարգացնում է ընտրություններից հետո վարչապետի պաշտոնը ստանձնած Ադնան Մենդերեսը. «*Ազգի կողմից չընդունված, ազգի խղճի վրա ջրադացի քարի պես ծանրացած որոշ միջոցներ վերացնելու ենք: Արդյո՞ք ճիշտ կլինի, որ ազգի խիղճը ճնշող մի շարք միջոցների կողքին 15-20 տարի պահապանի պես կանգնենք և դրանք անվերապահ պահպանենք: Ինչպես նշված է մեր նախընտրական ծրագրում, պահպանելու ենք միայն ազգի կողմից ընդունված բարեփոխումները*»<sup>355</sup>:

Գաղափարական նման մոտեցման գործնական դրսևորումներն են ԺԿ շրջանում ընդունված մի շարք աղմկահարույց որոշումները, այդ թվում՝ 1952 թ. №5997 օրենքը ԹՀ սահմանադրության տեքստում 1945 թ. կատարված բառային \$ոնդիթյունը քականցումը չեղարկելու մասին<sup>356</sup>, 1954 թ. №6234 օրենքը գյուղական ինստիտուտների փակման մասին<sup>357</sup>, 1951 թ. №5830 օրենքը «Ժողովրդական տների» փակման մասին<sup>358</sup> և այլն:

Ընդհանուր առմամբ, պահպանողականության տեսակետից ԺԿ դիրքորոշումը հեղափոխականության վերաբերյալ պայմանավորված էր երկու առանցքային գործոնով՝

1. այն ստեղծվել էր ՀԺԿ գաղափարախոսության ազդեցությունը մեծապես կրող անձանց կողմից՝ ՀԺԿ ղեկավարության անմիջական թողնվածությամբ,

<sup>354</sup> Տե՛ս **Albayrak M.**, *Türk Siyasi Tarihinde Demokrat Parti (1946-1960)*, s. 78:

<sup>355</sup> Տե՛ս **Sarol M.**, *Bilimmeyen Menderes*, cilt 1, s. 238:

<sup>356</sup> Տե՛ս *491 Sayılı Teşkilâtı Esasiye Kanununun Tekrar Meriyete Konulması Hakkında Kanun*, T.C. Resmi Gazete, 31.12.1952:

<sup>357</sup> Տե՛ս *Köy Enstitüleri İle İlköğretmen Okullarının Birleştirilmesi Hakkında Kanun*, T.C. Resmi Gazete, 04.02.1954:

<sup>358</sup> Տե՛ս *Resmî Daire ve Müesseselerin Siyasi Partilere Bedelsiz Mal Devredemeyeceklerine ve Bu Daire ve Müesseselerle Münfesih Derneklere Ait Olup Siyasi Partilere Terkedilmiş Olan Gayrimenkul Mallarla Bu Partiler Tarafından Genel Menfaatler İçin Yaptırılmış Olan Binaların Sahiplerine ve Hazineye İadesine Dair Kanun*, T.C. Resmi Gazete, 11.08.1951:

2. կուսակցության ստեղծման պահին հեղափոխականությանը մտավորականության, վարչակազմի, բանակի և անգամ հասարակության մեջ լայնորեն ընդունելի գաղափար էր:

Այսպիսով, եթե իր գործունեության ընդդիմադիր շրջանում ԺԿ-ն գործող օրենքների շրջանակում վարում էր սթափ քաղաքականություն, ապա կուսակցության իշխանության տասնամյակը կարելի է բնորոշել իբրև «կիսահակահեղափոխական»<sup>359</sup>: 1950-ական թթ. վերջին արդեն ԺԿ-ական վերնախավը վերածվել էր կուսակցական դիկտատուրայի կրողի և իրականացնողի, իսկ ԶԺԿ-ն հրապարակավ հանդես էր գալիս ժողովրդավարական գաղափարների քարոզով: Քաղաքական դերերի այս փոփոխությունը փաստում է, որ քեմալական հեղափոխականությանը վերընթաց ժողովրդական իշխանությամբ հակադրվելու փորձերը ԺԿ կառավարման վերջին փուլում չէին հասնում իրենց նպատակին: Թուրքիայում բազմակուսակցական համակարգի ներդրումը հանգել էր ոչ թե ժողովրդավարության, այլ «ժողովրդական մեծամասնության բռնապետության»:

### 2.2.3. Պատմության և ավանդույթների վերաիմաստավորում

ԺԿ 1946 թ. ծրագրի 13-րդ հոդվածը ներկայացնում է ազգայնականությունն երևույթի կուսակցության ընկալումը. «Մեր ազգայնականության ընկալումը հենված է քաղաքացիների կողմից ընդհանուր պատմության ընթացքում ստեղծված մշակույթի և իդեալների ընդհանրության վրա և մերժում է ցանկացած տեսակի անջատողական միտումներ: Մեր կուսակցությունը բոլոր քաղաքացիներին՝ առանց կրոնի և ռասայի խտրության թուրք է համարում և ճանաչում է նրանց թուրք լինելու բոլոր իրավունքները»<sup>360</sup>: Այս ձևակերպման մեջ հնչում են ինչպես օսմանյան միասնական ազգի գաղափարի, այնպես էլ Լոզանի պայմանագրից Թուրքիայում ձևավորված ինքնության բնորոշման արձագանքները:

<sup>359</sup> Տե՛ս **Տե՛ս** **Սեյհանիօղլու Հ.**, *Demokrat parti ve siyasal muhafazakarlık*, Doktora Tezi, Süleyman Demirel Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Kamu Yönetimi Anabilim Dalı, Isparta, 2009, s. 141:

<sup>360</sup> Տե՛ս **Սե՛ս** *DP Program ve Tüzüğü*, s. 4:



Ընդհանրապես, ԺԿ գործունեության ընթացքում պատմության կարևոր դերակատարության մասին պատկերացում կարելի է ստանալ նաև անուղղակի վկայություններից: Մասնավորապես, 1950-1960 թթ. միջակայքում երկրում բացված 13 նոր թանգարանները, որոնցից առավել կարևորներն են ԹԱՄԺ և Աթաթյունրքի դամբարանին կից գործող Անըթբաբի թանգարանները<sup>361</sup>: 1952 թ.՝ Կոստանդնուպոլսի գրավման 500-ամյակին ընդառաջ, թուրքատրվեց օսմանյան դինաստիայի կին անդամների մուտքը Թուրքիայի Յանրապետություն<sup>362</sup>:

Օսմանյան անցյալի և իսլամական ժառանգության նկատմամբ կուսակցության առանձնահատուկ վերաբերմունքը նկատելի է նաև Մենդերեսի կառավարության ներքին վարած արտաքին քաղաքականության մեջ: Պատահական չէ, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի Թուրքիայի արտաքին քաղաքականության առավել հաջողված ուղղություններից մեկը միջինարևելյանն է<sup>363</sup>: Այդ է վկայում 1950-ականների ընթացքում իսլամական երկրների հետ թուրք պաշտոնյաների փոխայցելությունների հաճախականությունը<sup>364</sup>: Ավելին, իսլամական համերաշխության թեզը կարելի է համարել 1955 թ. փետրվարի 24-ին ստորագրված Բաղդադի պակտի և դրա հիման վրա ձևավորված Կենտրոնական պայմանագրի կազմակերպության (ՍԵՆՏՕ) երկրորդային պատճառներից մեկը: Այս առումով հատկանշական է, որ 1958 թ. հունվարի 24-ին Բաղդադ մեկնած Մենդերեսի պատվիրակությունն այցելում է սուլենի իսլամի 4 իրավագիտական դպրոցներից մեկի՝ հանաֆիականության հիմնադիր Աբու Յանիֆայի դամբարան, ինչից հետո Թուրքիայի վարչապետը, անդրադառնալով ՍԵՆՏՕ-ի նպատակներին, նշում է

<sup>361</sup> Յամեմատություն համար նշենք, որ քեմալական իշխանության վերջին տասնամյակում բացվել է շուրջ 1,5 անգամ քիչ թանգարան: Տե՛ս **Katoğlu M., Cumhuriyet Türkiye'sinde Eğitim, Kültür, Sanat, Türkiye Tarihi**, cilt 4, İstanbul, 1989, s. 465:

<sup>362</sup> Օսմանյան դինաստիան ողջ կազմով արտաքսվել էր նորանկախ Թուրքիայի Յանրապետությունից՝ համաձայն 1924 թ. մարտի 3-ին ԹԱՄԺ կողմից ընդունված №431 օրենքի: Դրանում կատարված փոփոխություննը տե՛ս *Hilâfetin İlgasına ve Hanedanı Osmaninin Türkiye Cumhuriyeti Memaliki Haricine Çıkarılmasına Dair Olan 431 Sayılı Kanunun 2nci Maddesinin Değiştirilmesi ve Aynı Kanuna Bazı Maddeler Eklenmesi Hakkında Kanun*, T.C. Resmi Gazete, 23.06.1952: Յարցի շուրջ առավել մանրամասն՝ **Gözler K., Cumhuriyet ve Monarşi**, Türkiye Günlüğü, sayı 53, 1998, ss. 27–34:

<sup>363</sup> Տե՛ս **Eroğul C., Demokrat Parti Tarihi ve İdeolojisi**, s. 160:

<sup>364</sup> Այցերի ամբողջական ժամանակագրություն համար տե՛ս **Şeyhanhoğlu H., Demokrat parti ve siyasal muhafazakarlık**, ss. 159-160:

մասնավորապես հետևյալը. «Թուրքերի նյութական առաջնորդությունը գումարվել է Մեծ իմամի [Աբու Յանիֆայի, - Ա.Գ] հոգևոր առաջնորդությունը: Պատմությունը հետջեսբերի, սակայն հայտնի չէ նաև, թե վաղն ինչ կլինի: Բաղդադի պակտը հակակոմունիզմի պաշտոնական համատեքստից դուրս իր հիմքում նպատակ ունի մերձեցնել մուսուլմաններին: Նպատակը Միջին արևելքում մուսուլմաններին որքան հնարավոր է մերձեցնել միմյանց»<sup>365</sup>:

Հարկ է հիշատակել նաև 1957 թ. նոյեմբերին կազմավորված Մենդերեսի հինգերորդ և վերջին կառավարության ծրագրի հետևյալ հատվածը. «Անցյալից եկող սոցիալական, պատմական և ընթացող ն և իրական հիմքեր ունեցող եղբայրության կապերով ենք կապված բոլոր արաբական ազգերի և, մասնավորապես, Սիրիայի հետ: Անկասկած է, որ Միջին արևելքի բոլոր և հատկապես մեր կողմից եղբայր համարվող արաբական ազգերից յուրաքանչյուրն ազատության և անկախության ունենալու բարօրությանն ու երջանկությանը հասնելու իրավունք ունի: Մեր այդ սրբազան ցանկությանը նաև մեր ազգային գոյության ևս մեկ երաշխիք է»<sup>366</sup>:

Օսմանյան ընդհանուր պատմության համատեքստում է դիտարկվում նաև 1950-ական թթ. երկրորդ կեսին Կիպրոսի շուրջ իրավիճակի սրացման ընթացքում Թուրքիայի որդեգրած դիրքորոշումը, որն ամփոփվում է նախագահ Բայարի մեկ նախադասության մեջ. «Թուրքիայի հիշողության հետ հաշվի են նստում, նրա խոսքին ականջալուր են լինում»<sup>367</sup>: Կղզու ազգության մեր թուրք քաղաքացիների իրավունքների պաշտպանության հարցը դիտվում էր 1878 թ. այն բրիտանացիներին զիջելուց հետո վիրավորված օսմանյան արժանապատվության վերականգնման համատեքստում: Հատկանշական է, որ կղզու համար անկախության ենթադրող

<sup>365</sup> Տե՛ս *u Başbakan dün ansızın Bağdat'a gitti*, Cumhuriyet, 25.01.1958:  
<sup>366</sup> Տե՛ս *u Neziroğlu İ., Yılmaz T. (haz.), Türkiye Büyük Millet Meclisi: Hükümetler-Programları ve Genel Kurul Görüşmeleri*, cilt 2, Ankara, 2013, s. 1208:  
<sup>367</sup> Տե՛ս *u Bayar Kıbrıs bizim malımızdır dedi*, Cumhuriyet, 14.10.1957:

Լոնդոն-Ցյուրիխյան համաձայնության<sup>368</sup> երեք հիմնարար փաստաթղթերից երրորդի ստորագրման համար 1959 թ. փետրվարի 17-ին Լոնդոն մեկնող Մենդերեսի ինքնաթիռի վթարն ու ողջ մնալը<sup>369</sup> Թուրքիայի ներքաղաքական քննարկումներում մեկնաբանվեց և քաղաքականացվեց աստվածային նախախնամության լույսի ներքո<sup>370</sup>:

Ընդհանուր առմամբ, ԺԿ իշխանության շրջանի արտաքին քաղաքականությունը հանգում է Մենդերեսի արտահայտությանը, թե «*չնայած մեր փոքր թվաքանակին մեզ առաջնորդ համարող իսլամական մեծ աշխարհի*» նկատմամբ անտարբեր մնալը նշանակում է քաղաքականության արվեստից կատարել ապես գլուխ հանել»<sup>371</sup>: Ինչպես դիպուկ կերպով նշում է թուրք քաղաքագետ Յուսեֆն Բաղչըն, պատմության նկատմամբ վերաբերմունքը ԺԿ ղեկավարած Թուրքիան վերածել էր «*Միջին արևելքի սեյսմոգրաֆի*»<sup>372</sup>:

### 2.3. ԺԿ իշխանության տապալումը. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումը

Պետական կառավարման համակարգում ժողովրդավարական ինստիտուտների խորը ճգնաժամի առավել վստահելի ցուցիչներից մեկն այն է, որ «*ռեժիմը վստահ չէ գիտված ու ժերի*

<sup>368</sup> Յուսեֆն Բաղչըն, Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի վարչապետներ Կոնստանտին Կարամանլիսի, Ադնան Մենդերեսի և Յարուղ Մըքմիլանի միջև ձեռքբերված համաձայնության մասին և նախատեսվում էր կղզում հիմնել անկախ, երկհամայնք պետություն՝ նշված երեք պետությունների երաշխավորությամբ: Տե՛ս **Hakki M.M. (ed.), The Cyprus Issue: A Documentary History, 1878-2007**, London-New York, 2007, pp. 31-41:

<sup>369</sup> Թուրքիայի վարչապետի գլխավորած պատվիրակությունը տեղափոխող Վիքերս «Վայքաունթ» 794D տիպի ինքնաթիռը կործանվել էր վատ տեսանելիության պայմաններում Լոնդոնի «Քեթվիք» օդանավակայանում վայրէջքի փորձ կատարելիս: Անձնակազմի անդամներից և ուղևորներից 14-ը մահացել էին, փրկված 10 անձանց թվում էր նաև վարչապետ Մենդերեսը, որը գործնականում վնասվածքներ չէր ստացել: Չնայած Մենդերեսի ինքնաթիռի վթարին՝ նախատեսվող եռակողմ փաստաթուղթը ստորագրվել է երկու օրանց՝ փետրվարի 19-ին: Վթարի նկարագրությունը տե՛ս «Թռիչքի անվտանգություն» հիմնադրամի ավիացիոն անվտանգության ցանցում՝ <https://aviation-safety.net/database/record.php?id=19590217-0> [հասանելի է՝ 08.01.2019 թ.]:

<sup>370</sup> Տե՛ս **Kaya E.E., Avşar B.Z., İktidar - Muhalefet İlişkilerinde Değerlendirilemeyen Bir İyileşme Şansı: Adnan Menderes'in Uçak Kazası Üzerinden Siyasal İletişim İnşa Çabaları**, History Studies, vol. 4(4), 2012, pp. 219-244:

<sup>371</sup> Տե՛ս **Şeyhanhoğlu H., Demokrat parti ve siyasal muhafazakarlık**, s. 162:

<sup>372</sup> Տե՛ս **Bağcı H., Türk Dış Politikasında 1950'li Yıllar**, 2. baskı, Ankara, 2001, s. 37:

հավատարմության վրա»<sup>373</sup>: Ընդ որում, Մենդերեհյան կառավարման շրջանի թուրքիայի մոդելի հիբրիդային ռեժիմները, որոնք չի կարելի հստակորեն դասակարգել իբրև օրինակ ժողովրդավար կամ օրինակ ամբողջատիրական, առավել խոցելի են հեղաշրջումների համար<sup>374</sup>: ԺԿ պահպանողական քաղաքական ուղեգծի տապալման պատճառների քննության տեսակետից առանձնակի կարևորություն է ներկայացնում հանրապետական թուրքիայի պատմության առավել բեկումնային դրվագներից մեկի<sup>375</sup>՝ 1960 թ. ռազմական հեղաշրջման ուսումնասիրությունը:

Լինելով իր ժամանակի ամենաաղմկահարույց միջազգային զարգացումներից մեկը՝ այն գրեթե անմիջապես հայտնվել էր միջազգային հանրության ուշադրության կենտրոնում ու հաջորդօրը՝ մայիսի 28-ի առավոտյան տեղ գտել համաշխարհային մամուլի առաջին էջերին<sup>376</sup>՝ տասնամյակներ շարունակ մնալով ուսումնասիրողների հետաքրքրության առարկա<sup>377</sup>:

<sup>373</sup> Linz J. J., *The breakdown of democratic regimes: Crisis, breakdown and reequilibration*, Baltimore, 1978, p. 54 (տե՛ս նաև pp. 58-60, 71).

<sup>374</sup> Hiroi T., Omori S., *Causes and Triggers of Coups d'état: An Event History Analysis*, Politics & Policy, vol. 41(1), 2013, pp. 39-64:

<sup>375</sup> Թուրքիայի տնտեսական քաղաքականության քաղաքական հեղաշրջումից 5 տարի անց այս առնչությամբ գրում էր. «1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղափոխությունը (ընդգծումն իմն է, — Ա. Գ.) նշանավորում էր թուրքիայի գաղափարական զարգացման համար բեկումնային մի շրջադարձ: Այն խարխլեց Յանրապետության գոյության առաջին երեք տասնամյակների ընթացքում հաստատված քաղաքական հավասարակշռության սոցիալական հիմքերն ու նպաստեց հասարակական կազմակերպման և կառավարության իշխանության ավանդական սկզբունքների վերջին նշույլների չեզոքացմանը»: Տե՛ս Karpak K., *Ideology in Turkey after the Revolution of 1960: Nationalism and Socialism*, The Turkish Yearbook of International Relations, vol. 6, 1965, p. 68: Քաղաքական նույն հոդվածն անհանկուտակ փոփոխություններով տպագրել է նաև ավել ուշ, տե՛ս նույնի *Ideology in Turkey after the Revolution of 1960: Nationalism and Socialism in Karpak K.* (ed.), *Social Change and Politics in Turkey: A Structural-Historical Analysis*, Leiden, 1973, p. 317:

<sup>376</sup> Տե՛ս, օրինակ, *Army takes over Turkey; Menderes and aides held; vote is due*, New York Times, 28.05.1960, *L'armée prend le pouvoir en Turquie*, Le Monde, 28.05.1960, *Militärs übernehmen die Macht in der Türkei*, Passauer Neue Presse, 28.05.1960 և այլն: Նույն օրվա իրենց համարներում թեմային անդրադարձել էին նաև խորհրդային մամուլի դրոշակակիրներ «Պրավդան» և «Իզվեստիան», իսկ խորհրդային Հայաստանի մամուլը թուրքական հեղաշրջման վերաբերյալ նյութ էր հրատարակել մի քանի օր անց, տե՛ս *Պետական հեղաշրջումը թուրքիայում*, Սովետական Հայաստան, 02.06.1960: 1960 թ. թուրքական հեղաշրջման վերաբերյալ միջազգային և թուրքական մամուլի արձագանքի ամփոփման համար տե՛ս Oron Y. (ed.), *Middle East Record*, vol. 1, Jerusalem, 1960, pp. 432-436:

<sup>377</sup> Հեղաշրջման պատճառներին անդրադարձած աշխատություններից հատկապես ուշագրավ են Harris G., *The Causes of the 1960 Revolution in Turkey*, Middle East Journal, vol. 24(4), 1970, pp. 438-454, Karpak K., *The Military and Politics in Turkey, 1960-64: A Socio-Cultural Analysis of a Revolution*, The American Historical Review, vol. 75(6), 1970, pp. 1654-1683, Lerner D., *Robinson R., Swords and Ploughshares: The Turkish Army as a Modernizing Force*, World Politics, vol. 13(1), 1960, pp. 19-44, Ahmad F., *The Turkish Experiment in Democracy*, pp. 147-176, Hale W., *Turkish Politics and the Military*, Routledge, 1994, pp. 88-118, Aydemir S., *İhtilâlin Mantığı ve 27 Mayıs İhtilâli*, İstanbul, 1976, Başgil A., 27

Ավելորդ է անգամ նշել, որ ժողովրդավարական կուսակցության իշխանության տապալումը 1960-1961 թթ. թուրքական մամուլի հիմնական թեման էր: Այս համատեքստում բացառությունն չէր նաև Թուրքիայի մամուլի պատմության անընդհատ հրատարակվող ամենահին օրաթերթը՝ Ստամբուլում լույս տեսնող հայկական «Ժամանակը»<sup>378</sup>: Աշխատանքում թուրքական ռազմական հեղաշրջման և դրան հաջորդած շարաթվա իրադարձությունները ներկայացվում են հիմնվելով «Ժամանակի» անդրադարձների վրա<sup>379</sup> առանցքում ունենալով պրլսահայ համայնքի հավաքական դիրքորոշումը և Թուրքիայի ազգային-կրոնական փոքրամասնություններին բնորոշ մտավախությունները: Այս ընտրությունը նաև նպատակ ունի ժամանակակից Թուրքիայի պատմության առավել ուսումնասիրված դրվագներից մեկը դիտարկել նոր, քիչ հետազոտված՝ տեղի հայերի դիտանկյունից:

«Յինգշարթի կէս գիշերին մօտ էր որ տեղի ունեցաւ այն յեղաշրջումը որոն ընթացքին հազիւ թէ գէնքի քանի մը ձայներ լսուեցան»<sup>380</sup>. Նման նկարագրությամբ է սկսվում հեղաշրջման հաջորդ օրը՝ մայիսի 28-ին<sup>381</sup> «Ժամանակի» էջերում հրատարակված տեղեկատվական հոդվածը<sup>382</sup>: Նույն համարում

*Mayıs İhtilali ve Sebepleri: Görüp Yaşadıklarım*, İstanbul, 2011, Данилов В., Базиянц А., *Причины государственного переворота 1960 г.*, Проблемы современной Турции, Москва, 1963:

<sup>378</sup> 1908 թ. հոկտեմբերի 28-ին Միսակ և Սարգիս Գոչունյան եղբայրների կողմից հիմնված այդ օրաթերթը նաև հայալեզու մամուլի անընդհատ հրատարակվող ամենահին պարբերականն է: «Ժամանակի» մասին մանրամասն տե՛ս **Ազատեան Թ.**, *Ժամանակ. քառասնամեայ յիշատակարան*, 1908-1948, Կ. Պոլիս, 1948, **Խառառյան Ա.**, *Արևմտահայ մամուլը XX դ. առաջին քառորդին*, Լրաբեր հասարակական գիտությունների, № 3, 2013, էջ 20-31: Պարբերականի համացանցային կայքը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://www.jamanak.com/> (հայ., հասանելի է 19.08.2017):

<sup>379</sup> Տեքստում բերված բոլորում մեջբերումներում պահպանված է բնօրինակի ուղղագրությունն ու կետադրությունը՝ բացառությամբ ակնհայտ վրիպակների:

<sup>380</sup> 1960 թ. հեղաշրջումն այդ ժամանակաշրջանում աշխարհում տեղի ունեցող ռազմական միջամտությունների համեմատ գործնականում իրոք անարյուն էր: Սրա պատճառների մասին իր հուշերում հետաքրքրական դիտարկում է կատարում նախահեղափոխական Իրանի հատուկ ծառայությունների գեներալ Յոսեյն Տարդուստը. «*Բանակը Թուրքիայի ամենագործող քաղաքական կուսակցությունն է... (ընդգծումն իմն է՝ Ա. Գ.) և, ըստ էության, օժտված է անարյուն հեղաշրջման միջոցով իշխանությունը վերցնելու լիազորությամբ*»: Տե՛ս **Fardust H.**, *The Rise and Fall of the Pahlavi Dynasty: Memoirs of Former General Hussein Fardust*, Dareini A. (ed., trans.), Delhi, 1999, p. 355:

<sup>381</sup> Ինչպես տեղեկանում ենք մայիսի 28-ի համարից, հեղաշրջման օրը «Ժամանակը» լույս չի տեսել «կամք է նկատվում առ ներքով»:

<sup>382</sup> *Ինչպե՞ս երևան հանւեցաւ Ատնան Մէնտէրէս*, Ժամանակ, 28.05.1960:

արդեն նկատվում են տեղի ունեցածի վերաբերյալ վերլուծական գնահատականներ հնչեցնելու առաջին փորձերը: Մասնավորապես, հոդվածի՝ «*Ինչպես յաջողեցաւ գործողութիւնը*» խորագրով հատվածը, չնայած գերազանցապես հիմնվում էր իշխանության եկած զինվորականների համակարգող մարմնի՝ Ազգային միասնության կոմիտեի (ԱՄԿ) խոսնակ Ալփարսլան Թյուրքեշի տված մամլո ասուլիսից ստացված տվյալների վրա, իրենից ներկայացնում էր կատարվածի գնահատման նախնական փորձ: Այս աշխատանքում բերված մեջբերումների վերաբերյալ դատողություններ անելիս պետք է իբրև ելակետ ընդունել, որ հեղաշրջումից հետո գործող բոլոր թերթերի նման «Ժամանակը» ևս իրավիճակի պարտադրանքով վերածվել էր իշխանությունը վերցրած զինվորականության տեսակետների տարածողի: Ուստի հիշյալ հատվածմ էլ, ըստ էության, ամբողջությամբ կրկնում է հեղաշրջման պատճառների վերաբերյալ բանակի դիրքորոշումը. «*Երբ երկրի մը մէջ գոյութիւն ունեցող սահմանադրութիւնը ի գօրու իշխանութեան կողմէ ոտնակոխուի, կասկածելի կը դառնայ այդ իշխանութեան օրինաւորութիւնը... Այս կացութեան առջեւ թուրք զինեալ ուժերը որոնք պատասխանատու են երկրին ու ազգին ներքին եւ արտաքին վտանգներու դէմ պաշտպանութենէն, տեսան որ երկրին ներքին ապահովութեան չափ արտաքին ապահովութիւնն ալ վտանգուած է: Թուրք զինեալ ուժերը թէ Միջին Արեւելքի մէջ հաշտութիւնը եւ անդորրութիւնը ապահովելու եւ թէ սահմանադրութիւնը ամէն տեսակ ազդեցութենէ ձերբազատելու մտօք որոշեց իր պատասխանատուութեան ներքեւ բարեկարգել ներկայ կացութիւնը*»<sup>383</sup>:

Ինչպես և թուրքական մյուս թերթերի, այնպես էլ «Ժամանակի» օրվա շապիկին հրապարակվել էր երկրի փաստական ղեկավարումն իրականացնող ԱՄԿ նախագահ, բանակի գեներալ Ջեմալ Գյուրսելի ուղերձը<sup>384</sup>: Նույն համարում

<sup>383</sup> *Չօրավար Ճեմալ Կիւրսելի նախագահութեամբ ազգ. միասնութեան կոմիտէ մը կազմուեցաւ, Ժամանակ, 28.05.1960:*

<sup>384</sup> *Ազգ. միութեան կոմիտէի նախագահ գօր. ճ. Կիւրսելի ուղերձը ազգին, Ժամանակ, 28.05.1960: Զմմ.՝ Gürsel Diktatör olmyacağıım,, dedi, Milliyet, 28.05.1960, Orgeneral Cemal*

մանրամասնորեն ներկայացված էր նաև գինվորականների կողմից պաշտոնական արված վարչապետ Ադնան Մենդերեսի և ֆինանսների նախարար Յասան Փուլաթբանի՝ Էսքիշեհիրից Քյուլթահյա ճանապարհին տեղի ունեցած ձերբակալության դրվագը: Մենդերեսի նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն<sup>385</sup> ցցուն ապացույց է շարադրանքի հետևյալ հատվածը. «Ատնան Մենտերեսը (Անկարա, — Ա. Գ.) փոխադրող օդանավին մեջ կային օդային ուժերու երկու զորավարներ եւ գնդացիներով գինուորներ որոնք դեպի կալանավանդանոցները դարձուցած էին իրենց զենքերը»<sup>386</sup>:

Մեր կարծիքով՝ զգալի հետաքրքրություն է ներկայացնում նաև պարբերականի նույն օրվա հրապարակումը, որում հերքվում են թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինյունյուի մահվան մասին լուրերը. «Մեր յարգելի հայրենակիցները, ժողովուրդին մեջ շրջան ընող կարգ մը գրոյցներու համաձայն Իսմեթ Ինեօնիւ մեռած է: Իսմեթ Ինեօնիւ ողջ եւ առողջ է: Այս մասին տարած այնուած բոլոր գրոյցները անհիմն են»<sup>387</sup>: Յրապարակման մեջ շեշտվում է այն հանգամանքը, որ «Ազգային շեֆը» նախօրոք տեղեկություն չի ունեցել<sup>388</sup> սպասվող

---

*Gürsel millete teminat verdi, Akşam, 28.05.1960, Gürsel hür seçim çok yakındır., dedi, Vatan, 28.05.1960* և այլն:

<sup>385</sup> Յամեմատություն համար նշենք, որ հեղաշրջման նախորդ օրվա՝ մայիսի 26-ի համարում «Ժամանակը» մեծ խանդավառությունամբ էր ներկայացնում Մենդերեսի այցն Էսքիշեհիր, որի ընթացքում «անհամար մատաղներ եղան ճամբուն երկայնքի»: Տե՛ս Վարչապետ Ատնան Մենտերես 150 հազար էսկիշեհիրցիներուն խանդավառ ցոյցերուն առարկայ դարձաւ եւ կարելու ճամ մը խօսեցաւ, Ժամանակ, 26.05.1960:

<sup>386</sup> *Ինչպե՞ս երևան հանւեցաւ Ատնան Մենտերես, Ժամանակ, 28.05.1960:*

<sup>387</sup> *Ինեօնիւ ողջ առողջ է, Ժամանակ, 28.05.1960:*

<sup>388</sup> Յեղաշրջման վերաբերյալ Ինյունյուի տեղեկացվածություն և դրանում նրա հնարավոր ներգրավվածության խնդրի շուրջ շատ է գրվել և խոսվել, սակայն ընթերցողի մոտ թեմայի շուրջ որոշակի հստակություն մտցնելու նպատակով հարկ ենք համարում ստորև համեմատաբար ոչ ընդարձակ ակնարկով անդրադառնալ հարցին:

Խնդրով շահագրգիռ աղբյուրների նշանակալի մասը մեջբերում է Մեթին Թոքերի վկայությունը, թե երբ մայիսի 28-ի լուսադեմին ինքն արթացրել է Իսմեթ փաշային՝ տեղեկացնելու տեղի ունեցածի մասին, վերջինս հարցրել է, թե ո՞վ է հեղաշրջումն իրականացրած խուճտայի ղեկավարը: Տե՛ս **Toker M., Demokrasimizin İsmet Paşalı yılları (1944-1973), cilt 5, Yarı silahlı yarı kûlahlı bir ara rejim (1960-1961), Ankara, 1991, s. 14:** Նույն Թոքերը մեջբերում է նաև հեղաշրջումից հետո Ինյունյուին զանգահարած գեներալ Գյուրսելի խոսքերից մի հատված. «Մենք մեղավոր ենք, իմ փաշա մենք Ձեզ տեղյակ չէինք պահել մինչև միջամտությունը: Եթե մենք Ձեզ տեղյակ պահեինք, Դուք կփորձեիք մեզ հակառակում համոզել» (նույն տեղում, էջ 11): Ինյունյուն, ըստ էության, նույնաբովանդակ հայտարարությունամբ է հանդես եկել նաև հունիսի 1-ին հրավիրված մամլո ասուլիսի ժամանակ. «Յալքի կուսակցապետը յայտնեց որ լուր չունէր

հեղաշրջման մասին. «Յալքի կուսակցապետ Իսմէթ Ինէօնիւ այսօր ժամը 5ին իրազեկ կացուցուեցաւ Թուրքիոյ մէջ պատահած փոփոխութենէն: Առաւօտու ն կանուխ պահեստի սպայ ի ուսանողներ եւ սպաներ շրջապատեցին Ինէօնիւ ի տունը: Բայց կուսակցապետը լուրջ ունեցաւ ասկէ»<sup>389</sup>:

«Ժամանակի» մայիսի 29-ի համարում կրկին հանդիպում ենք 1960 թ. հեղաշրջմանը նվիրված վերլուծական հոդվածի, որը, չնայած խորքային անդրադարձներ չի պարունակում, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում տեքստում հնչեցված գնահատականների համատեքստում: Դրանում դիպուկ կերպով

---

*բանակին գործողութենէն» (Ինէօնիւ ի մամլոյ հավաքոյթը, ժամանակ, 02.06.1960): Յեղաշրջմանն Ինյոնյուի ներգրավվածության մասին իր կարծիքն է հայտնել ինքը՝ Մենդերեսը. «Նրանք, ովքեր գալիս են Աթաթյուրքի ավանդույթից, երբեք զինվորականությանը չեն ներգրավել քաղաքականության մեջ: Ծիշտէ՛ իշխանությանը կորցնելուց ի վեր Իսմէթ փաշան մեզ միշտ սպառնացել է ինչ-որ երևակայական ու ժերով: Սակայն ես չեմ կարծում, որ նակկորցներ իր ողջամտությանը և լուկ հանուն իշխանության գալու թույլ կտար, որ այս երկրում զինվորական միջամտության ավանդույթ ձևավորվի»: Տե՛ս Erer T., On yilin mücadelesi, İstanbul, 1964, s. 50:*

Յամաձայնելով, որ «Երկրորդ մարդը» հավանաբար հստակ տեղեկություններ չուներ միջամտության ձևաչափի և ժամկետների վերաբերյալ՝ պետք է հաշվի առնել, որ Ինյոնյու նաև վաղն հիմքեր ուներ նմանել քակնկալելու համար: Նախ, նա 1950-ական թթ. երկրորդ կեսին մի քանի անգամ մերժել էր հեղաշրջում կազմակերպելու վերաբերյալ թուրքական սպաների առաջարկները և հիասալի ծանոթ էր զինվորականության շրջանում տիրող տրամադրություններին: Տե՛ս Heper M., İsmet İnönü: The Making of a Turkish Statesman, p. 211: Եվ բացի դրանից, հեղաշրջումից ամիսներ առաջ՝ 1959 թ. սպաների հետ ունեցած հերթական հանդիպման վերաբերյալ Ինյոնյու նաև Թքերին ասել էր հետևյալը. «Եթե ես մի փոքր քաջալերեի, նրանք կարող դիմել ինձ հեղաշրջումը միասին կազմակերպելու համար: Բազմիցս ստիպված էի փոխել թեման և կատակի տալ: Մահու չափ վախենում էի, որ նրանք կբացահայտեն իրենց գաղտնիքը: Որովհետև ես գիտեի, թե որն էր նրանց գաղտնիքը (ընդգծումն իմն է՝ Ա. Գ.)»: Տե՛ս Toker M., Demokrasimizin İsmet Paşalı yılları (1944-1973), cilt 4, Demokrasiden darbeye (1957-1960), Ankara, 1991, s. 234:

Մեր կարծիքով՝ 1960 թ. հեղաշրջման ընթացքում Ինյոնյուի առավել ապետ չեզոք կեցվածքը պիտի բացատրել նրա խառնվածքի առանձնահատկություններով: Ինչպես գրում է թուրք հայտնի գրող և դիվանագետ Յաքուբ Քադրի Քարաօսմանօղլուն, Ինյոնյուին դժվար էր պատկերացնել հեղափոխության մասնակցելիս, քանի որ դա էր հուշում նրա ողջ կենսափորձը (Իսմէթ փաշան խուսափել էր ակտիվությունից զինծառայության տարիներին, գործնականում չէր մասնակցել 1908 թ. հեղաշրջմանը, քեմալական շարժմանը միացել էր միայն 1920 թ. մարտին և այլն): Տե՛ս Karaosmanoğlu Y., Politikada 45 yıl, İstanbul, 1968, s. 227-228: Յավել ենք, որ Քարաօսմանօղլունի տեղեկացվածությունն ամեն անուղղակիորեն մատնանշում է նաև հեղաշրջման օրերին «Ժամանակի» հրապարակումներից մեկում տեղ գտած հետևյալ տեղեկությունը. «Յալքեան կուսակցապետը կէսօրին Տուստ Բէօրքիւլիի, Տէվգի Լուրթքիի (վերջիններս կանգնած էին ժողովրդավարական կուսակցության ստեղծման հիմքերում, Մենդերեսի կաբինետում զբաղեցրել էին համապատասխանաբար արտաքին և ներքին գործերի նախարարի պաշտոնները, գաղափարական տարածայնությունների պատճառով կուսակցությունը լքել էին 1957 և 1955 թթ.՝ Ա. Գ.) եւ Եագուլ պաշտրի Քարաօսմանօղլուի հետճաշեց եւ վերջին դէպքերուն մասին խօսեցաւ»: Տե՛ս Իսմէթ Ինէօնիւ ի ընդունելու թիւ նները, ժամանակ, 01.06.1960:

<sup>389</sup> Ինէօնիւ ողջ առողջ է, ժամանակ, 28.05.1960:



նկատվում է, որ մայիսի 27-ն, ըստ էության, ծրագրվել էր միջին սպայակազմի նախաձեռնությամբ<sup>390</sup>. «Մայիսի սկիզբը Անգարայ է քանակներու եւ գորաքանակներու հրամանատարութեանց բազմազրեալ նամակներ ուղարկուեացան: Նոյն պարունակութիւնը ունէին այդ նամակները, կ'առաջարկուէր ճարմը գտնել երկրին ոչ ցանկալի վիճակէն: Նամակները գրուած էին գնդապետ, գեր գնդապետ (փոխգնդապետ, — Ա. Գ.), եւ հազարապետի աստիճան ունեցող երիտասարդ սպաներու կողմէ»<sup>391</sup>: Բացի դրանից, արձանագրվում է, որ հեղաշրջումը զինվորականության կողմից վաղօրոք հստակորեն ծրագրված էր<sup>392</sup>. «Եւ անկէ գրեթէ մէկ շաբաթ առաջ լրացան բոլոր պատրաստութիւնները: Ու բոլորը սպասեցին յարմար ժամուն գալ ստեան... Յարմարագոյն օրը նկատուեցաւ Մայիսի 27ը»<sup>393</sup>:

«Ժամանակի» այդ օրերի համարներում Ազգային միասնության կոմիտեի՝ իշխանական մարմինների բնականոն աշխատանքը վերականգնելու ն ուղղված գործողություններին<sup>394</sup> զուգահեռ լուսաբանվում էր նաև ռազմական հեղաշրջման նկատմամբ միջազգային դիրքորոշումը: Մասնավորապես, թերթի էջերում տեղ է գտել ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Նիկիտա Խրուշչովի՝ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու ցանկության մասին<sup>395</sup>

<sup>390</sup> Տե՛ս **Դումանյան Ա.**, *Քանակի դերը Թուրքիայի քաղաքական կյանքում 1920-1970-ական թվականներին*. Ընդհանուր ակնարկ, Արևել ազիտություն հարցեր, հ. XII, 2016, էջ 164:

<sup>391</sup> 27 մայիսի շարժումին ներքին ծալքերը, Ժամանակ, 29.05.1960:

<sup>392</sup> Հետաքրքրական է, որ մայիսի 27-ից մէկ շաբաթ առաջ հեղաշրջման կազմակերպչական աշխատանքների ավարտված լինելու մասին բրիտանական հեղինակավոր «Թայմս» օրաթերթը գրել է շատ ավելի ուշ՝ Նոյեմբերի 14-ին՝ հղում կատարելով իր վստահելի աղբյուրներին: Թերթը պնդում էր, որ ներգրավված զինվորական ստորաբաժանումներում սպասվելիք միջամտության մասին տեղեկությունը հասանելի է եղել դիվիզիայի հրամանատարի մակարդակով: Տե՛ս Times, 14.11.1960 (հղումը՝ ըստ **Oron Y.**, *Middle East Record*, p. 438): Հեղաշրջումից մի քանի օրանց ներքին շրջանառության մեջ դրված ԱՄՆ ԿՀՎ շաբաթական տեղեկագրի տվյալներով՝ նախապատրաստական հեղաշրջման աշխատանքները սկսվել էին մի քանի շաբաթ առաջ:

Տե՛ս USA Central Intelligence Agency, Current Intelligence Weekly Summary, № 2277/60. 2 June 1960, p. 6, [https://www.cia.gov/library/readingroom/docs/DOC\\_0005705904.pdf](https://www.cia.gov/library/readingroom/docs/DOC_0005705904.pdf) (հասանելի է 19.08.2018):

<sup>393</sup> 27 մայիսի շարժումին ներքին ծալքերը, Ժամանակ, 29.05.1960:

<sup>394</sup> Տե՛ս, օրինակ, *Չօր. ճեմալ Կիւրսէլ ստանձնեց պետութեան նախագահութիւնը վարչապետութիւնը եւ ազգ. պաշտպան գործավարութիւնը*, Ժամանակ, 29.05.1960, *Նոր դահլիճը առաջին նիստը այսօր կը գումարէ, Ժամանակ*, 30.05.1960 և այլն:

<sup>395</sup> Խրուշչովն այդ առիթով մայիսի 28-ին նամակ էր հղել Թուրքիայի փաստական ղեկավար գեներալ Գյուրսէլին, վերջինիս շատ ավելի չափավոր

հայ տարարություններից մի հատված. «Սովետական Միությունը կ'ուզե դրացիին թուրքիոյ հետ յարաբերություններուն զարկ տալ»<sup>396</sup>: Օրաթերթի հունիսի 31-ի համարից տեղեկանում ենք, որ ամերիկյան պաշտոնական արձագանքից հետո<sup>397</sup>, «թե կարիք չկա ասոր (երկկողմ հարաբերությունները նույնությամբ շարունակելու, — Ա. Գ.) համար նոր գործողություն մը ընել»<sup>398</sup>, Ազգային միասնության կոմիտեի իշխանությունը ճանաչել են արևմտյան երկրների մեծամասնությունը: «Ժամանակի» փոխանցմամբ՝ հունիսի 1-ի դրությամբ թուրքիայի նոր վարչակարգի օրինականությունը ճանաչել էր թվով 19 երկիր, այդ թվում՝ ՄԱԿ-ի Ախբուլոր մշտական անդամները<sup>399</sup>:

«Ժամանակի» հետհեղաշրջումային համարներում տեղ գտած հրապարակումների ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել ժամանակի թուրքական հասարակությանը համակած այսպես կոչված «օտարացման համախտանիշի»<sup>400</sup> մի շարք դրսևորումներ: Այսպես, նոր իշխանությունները, ըստ էության, ընտրել էին Մենդերեսի իշխանության «դիվանացման» ուղեգիծ: Օրինակ, հասարակական կարծիքի վրա ազդելու նպատակ հետապնդող «Մենդերեսի սարսափազդող ծրագիրը երեւան էլալ» աղմկահարույց վերնագրով հոդվածում, ըստ էության, առանց ապացույցների պնդում է հնչեցվում, թե «յերիւրածոյ ժողովրդական շարժում մը պիտի կազմակերպուէր եւ բազմաթիւ անձեր անգթօրէն պիտի սպաննուէին»<sup>401</sup>: Հրապարակվում էին հոդվածներ, որոնք նպատակ ունեին խարխլել երկրի իսլամադավան բնակչության շրջանում Մենդերեսի ունեցած

---

պատասխանը Մոսկվա էր ուղարկվել հուլիսի 8-ին: Ուղերձների տեքստերը տե՛ս **Гафурова Б., Зубока Л., Хрестоматия по новейшей истории**, т. 3, ч. 1 (1945-1960 документы и материалы), Москва, 1961, сс. 681-683:

<sup>396</sup> *Խորուշ էվի յայ տարարությունը թուրքիոյ մասին*, Ժամանակ, 29.05.1960:

<sup>397</sup> Այս մասին ավելի մանրամասն կխոսվի ներքևում:

<sup>398</sup> *Ամերիկա Անգլիա եւ Իրան ալ ճանցան նոր կառավարությունը*, Ժամանակ, 31.05.1960:

<sup>399</sup> *19 պետություն ճանչցաւ նոր կառավարությունը*, Ժամանակ, 01.06.1960:

<sup>400</sup> Այն արտահայտվում է հասարակության որոշ շերտերի (անգլ.՝ «outsiders»), մեր դեպքում՝ ժողովրդավարական կուսակցության անդամներն ու կողմնակիցները) օտարացմամբ, նրանց դեմ ֆիզիկական ու հոգեբանական հարձակումներով, նսեմացման ու անվանարկման փորձերով: Այդ «համախտանիշը» խիստ բնութագրական է թուրքական հասարակության համար, որի ներսում տարբեր շերտերի միջև հակասություններն առավել սուր են արտահայտված: Տե՛ս **Göner Ö., Turkish National Identity and Its Outsiders: Memories of State Violence in Dersim**, London and New York, 2017:

<sup>401</sup> *Մենդերեսի սարսափազդող ծրագիրը երեւան էլալ*, Ժամանակ, 31.05.1960:

հեղինակության հիմքերը: Այս իմաստով բնութագրական է «Ժամանակի» հրապարակումներից մեկի հետևյալ հատվածը. «*Երեկ լաւ ագոյնս հասկցուեցաւ որ Մէնտերէս ինչքան արժէք կ'ընծայէ կրօնքին: Արդարեւ Մէնտերէսի վարչապետարանի վերածած պանդոկին լիւքս յարկաբաժնին մէջ Գուրան մը գտնուեցաւ հանդերձարանի մը ներքեւ: Գուրանին վրայ ալ հին ու փոշոտկօշիկ մը կար*»<sup>402</sup>:

Պետական քարոզչամեքենան չէր խորշում նաև ժողովրդավարական կուսակցության անդամների մասին ծաղրական, երբեմն նսեմացուցիչ տեղեկություններ տարածելուց: Ստորև ներկայացնում ենք նման մի քանի հրապարակում: Օրաթերթի հունիսի 4-ի համարում կարդում ենք. «*Ներկայիս Անգարայի պատերազմ. վարժարանին մէջ արգելափակուած նախկին վարչապետ Մէնտերէսի եւ (ԹԱՄԺ նախկին խոսնակ, — Ա. Գ.) Րէֆիք Քօրալ թանի մագերուն ներկերը թափիլ սկսած են*»<sup>403</sup>: Հասարակությանը ներկայացվում է ձեռքակալության ժամանակ ինքնասպանության փորձ կատարած նախկին նախագահ Ջելալ Բայարի կերպարը. «*Երբ գինքը հսկողութեան տակ առնելու գացինք* (պատմում է ձեռքակալության գործողության ղեկավար բրիգադի գեներալ Բուրհանէթին Ուլուչը՝ Ա. Գ.) *Ճէլալ Պայար... ատրճանակը հանեց գրպանէն եւ քունքին տարաւ: Տեղակալ Չաքմաքլը իսկոյն թեւը բռնելով ատրճանակը առաւ*»<sup>404</sup>: Որոշակիորեն ոտնահարելով լրագրողական էթիկայի նորմերը<sup>405</sup> «Ժամանակի» մայիսի 31-ի համարի առաջին էջին տեղադրվել էր ձեռքակալությունից հետո

<sup>402</sup> *Նախկին վարչապետ Մէնտերէսի Բարք Օթէլի յարկաբաժնին մէջ կօշիկներուն տակ Գուրան մը գտնուեցաւ*, Ժամանակ, 01.06.1960:

<sup>403</sup> *Մէնտերէսի եւ Քօրալ թանի մագերուն ներկերը կը թափին*, Ժամանակ, 04.06.1960:

<sup>404</sup> *Սպաննեցէք զիս ըսալ Ճէլալ Պայար ձեռքակալուած պահուէն*, Ժամանակ, 03.06.1960:

<sup>405</sup> Այս կարծիքն ամենևին կասկածի տակ չի դնում «Ժամանակի» խմբագրակազմի մասնագիտական որակները: Ինչպես արդեն նշվեց վերևում, պետք է հաշվի առնել, որ հեղաշրջումից հետո թուրքական մամուլում հրապարակվող բոլոր նյութերն, ըստ էության, արտահայտում էին զինվորականության դիրքորոշումը: Գեղիքի հիշյալ լուսանկարը կարելի է տեսնել նաև օրվա թուրքական մյուս թերթերի առաջին էջին: Օրինակ, տե՛ս *Namik Gedik intihar etti*, *Vatan*, 31.05.1960, *Eski Dahiliye Vekili Dr. Namik Gedik intihar etti*, *Tercüman*, 31.05.1960 և այլն:

ինքնասպանությունն գործած<sup>406</sup> ներքին գործերի պաշտոնակարգում նախարար Նամըք Գեդիքի ձևախեղված մարմնի լուսանկարը՝ արված դիախերձարանում: Լուսանկարին կից նյութում կարդում ենք. «Կ'ըսուի որ, նախորդ հանր. նախագահ Ճելալ Պայար ալ փորձած է անձնասպան ըլլալ փողկապով – Մենտերես խելագարությունն նոպաներ անցուց եւ ժիլէթով ածիլ ու ել ու արտոնութիւնն չտրուեցալ անոր – Քորալթան անընդհատկուլ այ»<sup>407</sup>:

Ուշագրավ է «Ժամանակի» էջերում հստակորեն նկատվող՝ Թուրքիայի Յանրապետության հին և նոր նախագահների հակադրության միտումը: Օրինակ, օրաթերթի հունիսի 2-ի համարի շապկին կողք կողքի հրապարակվել էր երկու հոդված, որոնցում բանկային պահոցներում «100 միլիոն ոսկի» կուտակած, պաշտոնակարգում նախագահ Բայարի կերպարին<sup>408</sup> հակադրվում էր իր օրինական աշխատավարձից հրաժարված նոր նախագահ Գյուլրսելի կերպարը<sup>409</sup>:

Բացի այս ամենից, օրաթերթի էջերին կարելի է հանդիպել ժողովրդավարական կուսակցության անդամների հասցեին հնչեցվող ամենատարբեր մեղադրանքների՝ սկսած անբարոկենսակերպ վարելուց<sup>410</sup> մինչև անկախ Քրդստանի ստեղծման փորձերին նպաստելը<sup>411</sup>: Այդ օրերին երկար ընդմիջումից հետո առաջին անգամ մոռացումի գգրոցներից հանվում է Ստամբուլի 1955 թ. սեպտեմբերյան պոգրոմի թեման<sup>412</sup>: Քննարկվող

<sup>406</sup> Առկամի վարկածի համաձայն՝ նախկին ՆԳ նախարարը բռնություն ամբողջությամբ է նետվել պատուհանից, իսկ կատարվածը ինքնասպանությունն է որակվել սպանությունը կոծկելու համար: Գեդիքի մահվան հանգամանքներն այդպես էլ մինչև վերջ չեն պարզվել: Տե՛ս **Dikici A.**, *27 Mayıs 1960 Askerî Darbesi ve Türk Polisi*, Atatürk Araştırma Merkezi Dergisi, cilt 30(89), 2014, s. 28:

<sup>407</sup> *Նախկին ներքին գործավար Ն. Կետիկ 10 մեթր բարձրությունե նետուել ով անձնասպան եղալ*, Ժամանակ, 31.05.1960: Տե՛ս նաև հոդվածին կից լուսանկարը՝ «Նախկին ներքին գործավարին դիակը դիագնոստիկան մեջ»:

<sup>408</sup> *Ստուգուեցաւ որ ճ. Պայար միայն դրամատան մը մեջ 103 միլիոն ոսկի ու նէր*, Ժամանակ, 02.06.1960:

<sup>409</sup> *Կիւրսէլ 20,200 ոսկիի յատկացումը չպիտի առնէ*, Ժամանակ, 02.06.1960:

<sup>410</sup> *Նախկին պետական մարդոց անհատական կենսքէն*, Ժամանակ, 01.06.1960:

<sup>411</sup> *Քիւրդիստան մը հիմնել աշխատողներ կան եղեր դեմոկրատիստական մեջ*, Ժամանակ, 31.05.1960:

<sup>412</sup> «Ժամանակը» վերահրապարակել էր «Աքշամ» թերթի ժնկի թղթակցի՝ սեպտեմբերի 6-7-ի դեպքերի ժամանակ Ստամբուլի նահանգապետ, Շվեյցարիայում Թուրքիայի դեսպան Ֆահրէթին Քերիմ Գյոքայի հետ ունեցած հարցազրույցը: Տե՛ս *6-7 սեպտեմբերի դեպքերուն մասին բոլոր գիտցածներս յայտնելու պատրաստեմ, ըսալ դեսպան բրօժ. Ֆ. Քերիմ Կէօքայ*, Ժամանակ, 03.06.1960:

Ժամանակաշրջանից հետո այս հարցը, դառնալով առանցքային, կազմելու էր Յասսըադայի դատավարությունների ժամանակ ժողովրդավարական կուսակցության վերնախավին առաջադրված մեղադրանքի կետերից մեկը<sup>413</sup>:

1960 թ. հեղաշրջման վերաբերյալ «Ժամանակի» արձագանքներն ամբողջանում են պոլսահայ համայնքի դիրքորոշման արտացոլմամբ: Ստամբուլի հայ համայնքն ու դրա հավաքական կամքի գլխավոր արտահայտող Պոլսո Յայոց պատրիարքարանը 1960 թ. մայիսյան այդ օրերին դրսևորել են առավելագույն զգուշավորություն՝ բավարարվելով միայն դե ֆակտո իշխանություններին իրենց հավատարմությունը հավաստելով: Յեղաշրջմանը հաջորդող շաբաթվա ընթացքում «Ժամանակ» գրում է միայն մայիսի 30-ին Ստամբուլի նահանգապետի պարտականությունները կատարող բանակի գեներալ Ռևիք Թուլգայի հետ Պոլսո հայոց պատրիարք Գարեգին արք. Խաչատուրյանի ունեցած «մոտաւ որապէս 20 վայրկեանի տեսակցութեան» մասին: Պատրիարքարանի տարածած այդ տեղեկությունը կից ներկայացված է ԱՄԿ նախագահ Ջեմալ Գյուրսելին ուղղված Գարեգին պատրիարքի նամակի թուրքերեն տեքստը, որում Թուրքիայի հայերի հոգևոր առաջնորդը զինված ուժերի գլխավոր հրամանատարին ևս մեկ անգամ հավաստում է թուրքական պետականության նկատմամբ հայ քաղաքացիների անվերապահ հավատարմությունը<sup>414</sup>:

Յետաքրքիր մանրամասն է պարունակում «Ժամանակի» հունիսի 1-ի համարում հրատարակված առաջին հայացքից անէական թվացող հաղորդումը. «Կեդրոնական Վարչութեան

<sup>413</sup> «Ժամանակի»՝ հունիսի 6-ի համարում (№ 16951) տեղ էր գտել նախկին արտգործնախարար Մեհմեթ Ֆուաթ Քյոփրյուլյուի՝ «Ենի Սաբահ» թերթի լրագրողին տված ալմկահարույց հարցազրույցի վերահրապարակումը, որում մսե պտեմբերի 6-7-ի դեպքերի ողջ պատասխանատվությունը դրվում էր Մենդերեսի, Չոբլուի և Գեդիքի վրա. *Մենտրես մմբակոծել տուած է Աթային Մելանկի տունը: Տե՛ս Ֆուատ Քեօրրիլի 6-7 Մեպտեմբերի դեպքերուն մասին մերկացումները*, Ժամանակ, 05.06.1960:

Ստամբուլի պոգրոմի մասին մանրամասն տե՛ս **Մելքոնյան Ռ., 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի դեպքերը (Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ բռնությունների հերթական դրսևորումը)**, Արևելագիտության հարցեր, հ. VIII, 2014, էջ 144-156, **Zayas A. de, The Istanbul Pogrom of 6-7 September 1955 in the Light of International Law**, Genocide Studies and Prevention, vol. 2, issue 2, 2007, pp. 137-154:

<sup>414</sup> Զեկոյց պատրիարքարանի, Ժամանակ, 02.06.1960:

առե նապետ՝ Տիար Մկրտիչ Շելեֆեան անձնական պատճառներով Մայիս 29ին հրաժարած է Վարչութեան անդամակցութենէն»<sup>415</sup>: Մկրտիչ Շելեֆեանը ԹԱՄԺ պատգամավոր էր՝ ժողովրդավարական կուսակցութեանը և հեղաշրջումից հետո, իր կուսակիցներին հետ ձերբակալվելով, մեղադրվել էր հակասահմանադրական գործողութեաններին մեջ ու ավելի ուշ դատապարտվել 4 և կես տարվա ազատազրկման<sup>416</sup>: Յավանաբար պայմանավորված մամուլում հրապարակվող նյութերի նկատմամբ խիստ պետական վերահսկողութեամբ և պոլսահայերին հատուկ զգուշավորութեամբ, Շելեֆեանի ձերբակալութեան մասին «Ժամանակի» էջերում որևէ հատուկ հիշատակում չկա<sup>417</sup>:

«Այլեւս նախկին եւ գեռօ եղանք»<sup>418</sup>. հենց այսպիսինն էին 1960 թ. ռազմական հեղաշրջման արդյունքում պաշտոնակարգված Ադնան Մենդերեսի խոսքերը ձերբակալութեան պահին: Այդ արտահայտութեան բովանդակութեանը կարմիր թելի պես անցնում է «Ժամանակ» օրաթերթի՝ հեղաշրջմանը հաջորդած շաբաթվա ընթացքում թողարկած հրապարակումներում:

Հեղաշրջումից հետո 1960 թ. հոկտեմբերի 14-ին Մարմարաժովի Յասսըադա կղզում սկսվեց իշխանութեանը զրկված ԺԿ 592 պաշտոնյաների դատավարութեանը<sup>419</sup>: Վարչապետ Մենդերեսն, օրինակ, հարուցված 19 քրեական գործերից մեղադրյալի կարգավիճակով անցնում էր 6-ով, այդ թվում՝ վերևում արդեն հիշատակված «Մանկան գործը», 1955 թ. սեպտեմբերյան պոգրոմների գործը, սահմանադրութեանը ոտնահարելու գործը

<sup>415</sup> Տիար Մկրտիչ Շելեֆեան հրաժարեցաւ Վարչութեան անդամակցութենէն, Ժամանակ, 01.06.1960:

<sup>416</sup> Շելեֆեանի մասին մանրամասն տե՛ս **Մելքոնյան Ռ.**, Մկրտիչ Շելեֆեան. վերջին հայ պատգամավորը թուրքական խորհրդարանում, «21-րդ դար», № 5 (39), 2011, էջ 5-19:

<sup>417</sup> «Ժամանակը» սահմանափակվել էր նախորդ օրվա համարում հրապարակված պաշտոնական տեղեկատվութեամբ այն մասին, որ ժողովրդավարական կուսակցութեանը ներկայացնող ԹԱՄԺ բոլոր պատգամավորները ձերբակալվելու են: Տե՛ս *Բոլոր դեմոկրատ երեսփոխանները կը ձերբակալուին*, Ժամանակ, 31.05.1960:

<sup>418</sup> Մենդերես ձերբակալուած պահուն ըսավ «Այլեւս նախկին եւ գեռօ եղանք», Ժամանակ, 01.06.1960:

<sup>419</sup> Տե՛ս *Առաջին օրը Եասսըատայի մէջ. Թուրքիոյ տարեգրութեանց մեծագոյն դատավարութեան առաջին վարագոյրը բացուեցաւ*, Ժամանակ, 15.10.1960:

և այլն<sup>420</sup>: Շուրջ 11 ամիս տևած դատական գործընթացից հետո 1961 թ. սեպտեմբերի 15-ին Բարձրագույն արդարադատության ատյանը մեղադրյալներից 15-ի նկատմամբ կայացրեց մահվան դատավճիռ: Նրանց թվում էին՝ նախագահ Ջելալ Բայարը, վարչապետ Ադնան Մենդերեսը, արտաքին գործերի նախարար Ֆաթիհ Ռյուշթյու Չոռլուկ, ֆինանսների նախարար Յասան Փոլաթթանը, ԹԱՄԺ խոսնակ Ռեֆիք Քորալթանը, ԹԱՄԺ փոխխոսնակներ Ազահ Էրոզան, Իբրահիմ Քիրազօղլուկ և այլն: ԱՄԿ կողմից 12 անձանց մասով պատիժը փոխարինվեց ցմահ ազատազրկմամբ (այդ թվում՝ Ջ. Բայարին և առաջացած տարիքի հիմքով), իսկ Մենդերեսի, Չոռլուկի և Փոլաթթանի դատավճիռները մնացին անփոփոխ<sup>421</sup>: Վերջին երկուսի մահապատիժն իրականացվեց հաջորդ օրը, իսկ Մենդերեսին և առողջական վիճակի պատճառով սեպտեմբերի 17-ին<sup>422</sup>: «Ժամանակը» բնութագրական կերպով եզրակացնում է. «այս կերպով թուրքիոյ քաղաք. պատմութեան մէջ էջ մը փակուած է»<sup>423</sup>:

Մենդերեսի ղեկավարած ժողովրդավարական կուսակցության իշխանության տապալումից հետո վարչակարգն ակտիվորեն լծվել էր մոտանցյալի իրադարձություններն իրենց օգտին մեկնաբանելու գործին: Այդ նպատակի համար կիրառվում էին բոլոր միջոցները, այդ թվում՝ մամուլը: Թերևս, այս գործընթացների լավագույն վկայությունն է պաշտոնական արված նախագահ Ջեմալ Բայարի որդու՝ Մեքսիկայում թուրքիայի Յանրապետության դեսպան նշանակված թուրքութեան Բայարի արած հայտարարությունը, որը «Ժամանակը» լուսաբանում էր հետևյալ կերպ. «*Թուրկուտ Բայար... ներքողը հիւսեց իր երկրին ազգ. յեղափոխութեան շարժումին եւ ըսաւ. «Նոյնիսկ անհնար է երեւակայել որ օտար մատկայ բանակի գործողութեան մէջ»*»:<sup>424</sup> Չհավակնելով սպառնիչ պատասխան տալ

<sup>420</sup> Տե՛ս **Topçu İ., Akılmak Topçu S.**, Adnan Menderes'in Yargılanması ve İdamı, Akademik Bakış, sayı 61, 2017, ss. 69-70.

<sup>421</sup> Տե՛ս *Բարձրագոյն ատեանը 15 հոգի մահուան դատապարտեց. ԱՄԿ. 12 հոգիին պատիժը ցկեանս բանտարկութեան վերածեց եւ վաւերացուց Մէնտէրէսի, Ֆ.Ր. Չօրլուկ եւ Յ. Քօլաթթանի մահապատիժները, Ժամանակ, 16.09.1961:*

<sup>422</sup> Տե՛ս *Չօրլուկ եւ Քօլաթթան կախուեցան. երկու մահավճիռները երէկ առտուան դէմ գործադրուեցան, Ժամանակ, 17.09.1961, Ատնան Մէնտէրէսի մահավճիռը գործադրուեցաւ, Ժամանակ, 18.09.1961:*

<sup>423</sup> Նույն տեղը:

<sup>424</sup> *Թուրկուտ Պայար նոր շարժումին ներքողը հիւսեց, Ժամանակ, 02.06.1960:*

պաշտոնազրկված Ադնան Մենդերեսի հնչեցրած ինչ-որ իմաստով հռետորական հարցին, թե «*ո՞ւմ մտքով է սա անցել*»<sup>425</sup>՝ անդրադառնանք հեղաշրջման ներքին դրդապատճառների կողքին առկա առավել ծանրակշիռ արտաքին գործոնին՝ ԱՄՆ հնարավոր միջամտության հնարավորությունը:

Սառը պատերազմի տարիներին Խորհրդային Միության և Միացյալ Նահանգների հակամարտության հիմնական հարթակը երրորդ աշխարհի երկրներն էին: Այդ լուռ դիմակայության առավել հաճախ կիրառվող գործիքներից մեկը երկկողմ հետաքրքրություն ներկայացնող երկրներում հեղաշրջման կազմակերպումն էր<sup>426</sup>: Յետգաղութային Աֆրիկայում, Ասիայում, Լատինական Ամերիկայում և Մերձավոր Արևելքում տեղի ունեցած հեղաշրջումների մեծամասնությունը միավորվում է նույն տրամաբանությամբ. իշխանության եկած վարչակարգն անմիջապես ճանաչվում էր կա՛մ ԽՍՀՄ, կա՛մ ԱՄՆ կողմից<sup>427</sup>:

Թեև վերագրյալը հիմնականում բնորոշ էր նոր-նոր կայացող պետականություններին, 1960-1970-ական թթ. հեղաշրջումներ են տեղի ունեցել նաև Յուգոսլավիայում, Ինդոնեզիայում (1960 թ.), Յունաստանում (1967 թ.) և Պորտուգալիայում (1974 թ.): Յանդիսանալով ԱՄՆ գլխավորած ռազմական դաշինքի կարևոր օղակ՝ այս երկրները գտնվում էին Վաշինգտոնի քաղաքական ու տնտեսական ազդեցության ծիրում, ուստի բնական է, որ հեղաշրջումների կազմակերպման գործում ամերիկյան հնարավոր դերակատարության հարցը քննարկման առարկա է դարձել ուսումնասիրողների կողմից<sup>428</sup>:

<sup>425</sup> Թուրք.՝ «*Bunu kim uydurmuş?*»: Տե՛ս **Tuna T.**, *Adnan Menderes'in Günlüğü*, İstanbul, 2002, s. 333:

<sup>426</sup> 1945-1985 թթ. երրորդ աշխարհի երկրներում իրականացվել է հեղաշրջման 357 փորձ, որից 183-ը պսակվել է հաջողությամբ: Տե՛ս **Steven D.**, *Third World Coups d'Etat and International Security*, Baltimore, 1987, pp. 1-2:

<sup>427</sup> Տե՛ս **Luttwak E.**, *Coup d'État: A Practical Handbook*, Cambridge, 1979, p. 174:

<sup>428</sup> Թուրքական հեղաշրջման իրականացման գործում ԱՄՆ-ի դերակատարության մասին տե՛ս, օրինակ, **Gunn C.**, *The 1960 Coup in Turkey: A U.S. Intelligence Failure or a Successful Intervention?*, Cold War Studies, vol. 17, no. 2, 2015, pp. 103-139, հունական հեղաշրջման մասին՝ **Klarevas L.**, *Were the Eagle and the Phoenix Birds of a Feather? The United States and the Greek Coup of 1967*, Diplomatic History, vol. 30, issue 3, 2006, pp. 471-508, պորտուգալական հեղաշրջման մասին՝ **Del Pero M.**, *'Which Chile, Allende?' Henry Kissinger and the Portuguese revolution*, Cold War History, vol. 11, issue 4, pp. 625-657:



Թուրքիայում 1960 թ. մայիսի 27-ին տեղի ունեցած հեղաշրջումն, այնուհանդերձ, արժանի է հատուկ ուշադրության՝ հաշվի առնելով այդ երկրում ԱՄՆ ներգրավվածության աստիճանը: Բավական է նշել, որ 1947 թ. Թրումանի դոկտրինի ընդունումից ի վեր Թուրքիային տրամադրվող օգնությունը 1960-ականների սկզբին արդեն գերազանցում էր 3.8 միլիարդ դոլարը (դրա 53%-ը՝ ռազմական օգնություն)<sup>429</sup>: Բացի դրանից, 1960 թ. դրությամբ Թուրքիայի տարածքում տեղաբաշխված էր 7454 ամերիկացի զինվորական՝ չհաշված զինվորական կոչում կամ պաշտոնական կարգավիճակ չունեցողներին<sup>430</sup>:

Ինչպես Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելուց անմիջապես հետո գրում է Ջոն Լեյքը, այն «մի երկիր է Միջին Արևելքում, որտեղ սառը պատերազմի ընթացքում արևմուտքի հաղթանակը ԽՍՀՄ նկատմամբ կատարյալ էր»<sup>431</sup>: Ուստի առավել քան տարօրինակ է, որ, թեև 1960 թ. թուրքական հեղաշրջումը լրջորեն ուսումնասիրվել է սկսած դեռ 60-70-ականներից, գիտական շրջանակներում հիմնականում գերակայում է այն տեսակետը, թե «ԱՄՆ կառավարությունն անգամ չէր կանխատեսել հեղաշրջումը, իսկ այն կազմակերպելու մասին խոսելն անգամ ավել որդ է»<sup>432</sup>:

Չակառակ ավանդական տեսակետին՝ արխիվային փաստաթղթերը վկայում են, որ նախագահ Էյզենհաուերի վարչակազմը նվազագույնը քաջատեղյակ է եղել Թուրքիայում «ամենաճգրիտ, ամենասարդյունավետ ու ամենասարագ»<sup>433</sup> հեղաշրջման հնարավորությանը:

Չանրապետական Թուրքիայի պատմության առաջին ռազմական հեղաշրջման հաջորդ օրը՝ 1960 թ. մայիսի 28-ին ամերիկյան «Նյու

<sup>429</sup> Տե՛ս **Shorter F.**, *Military Expenditures and the Allocation of Resources* in Shorter F. (ed.), *Four Studies on the Economic Development of Turkey*, London and New York, 1967, p. 48:

<sup>430</sup> Տե՛ս **Migdal J.**, *Shifting Sands: The United States in the Middle East*, New York, 2014, p. 307:

<sup>431</sup> Տե՛ս **Hurewitz J.**, *Middle East Dilemmas: The Background of US Policy*, New York, 1953, p. 206:

<sup>432</sup> Տե՛ս **Hale W.**, *Turkish Foreign Policy Since 1774*, p. 102.

<sup>433</sup> Հեղաշրջման հաջորդ օրը՝ մայիսի 28-ին Ազգային միասնության կոմիտեի ղեկավար Ջեմալ Գյուլսելի հետ հանդիպման ժամանակ տեղի ունեցածին նման բնորոշում էր տվել Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ֆլեթչեր Ուորենը: Տե՛ս **LaFantasie G. (ed.)**, *Foreign relations of the United States, 1958-1960. Eastern Europe; Finland; Greece; Turkey*, vol. X, part 2, Washington, 1958-1960, pp. 845-848 (այսուհետ տեքստում՝ FRUS):

Յորք Թայմս» օրաթերթն անդրադարձել էր տեղի ունեցածին՝ հոդվածը վերնագրելով «Թուրքական հեղաշրջումն անակնկալի է բերում Միացյալ Նահանգներին»<sup>434</sup>։ Ամերիկյան հասարակության այս մտայնությանը հաստատվում է նաև հեղաշրջման օրը պետքարտուղարության կողմից մամուլին արված հայտարարությամբ, թե տեղի ունեցածը «լիակատար անակնկալ» էր Վաշինգտոնի համար<sup>435</sup>։

Թուրք ուսումնասիրող Ջիհաթ Գյոքթեփեն կարծիք է հայտնում, որ ամերիկյան արտաքին քաղաքական գերատեսչության նման արձագանքը մեծամասամբ բացատրվում է Անկարայում ԱՄՆ դեսպան Ֆլեթչեր Ուորենի գործունակ<sup>436</sup>։ Վերջինս, պայմանավորված Թուրքիայի վարչապետ Ադնան Մենդերեսի հետ անձնական մտերմությամբ, հաճախ Վաշինգտոն էր ուղարկում թուրքական ներքին զարգացումների վերաբերյալ սուբյեկտիվ, մասամբ ոչ ճշգրիտ տեղեկատվություն։ Մասնավորապես, հեղաշրջումից մի քանի օր առաջ՝ մայիսի 23-ին պետքարտուղարությունն ուղարկված 2673 թվակիր հեռագրում Ուորենը տեղեկացնում էր, որ ինքն ամենօրյա կապի մեջ է թուրքական ԳՇ պետի<sup>437</sup> հետ՝ հավաստիացնելով, որ բանակը շարունակելու է ապաքաղաքական մնալ և աջակցել Մենդերեսի կառավարությանը<sup>438</sup>։ Համեմատության համար՝ Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Բեռնարդ Բարոուզը մայիսի 19-ին Լոնդոնն ուղարկած հեռագրում տեղեկացնում էր, որ բանակում խժոժությունները շարունակվում են՝ հավելելով, որ երկրում «պրտենցիալ հեղափոխական վիճակ» է տիրում<sup>439</sup>։ Մեթին Թոքերը հիշում է, որ Վաշինգտոն ոչ ճշգրիտ տեղեկություններ ուղարկելու պատճառով ԱՄՆ դեսպանը, ով շուրջ 2 մետր հասակ ուներ,

<sup>434</sup> The New York Times, 28.05.1960.

<sup>435</sup> Weiker W., *The Turkish Revolution 1960-1961: Aspects of Military Politics*, Washington, 1963, p. 160.

<sup>436</sup> Göktepe C., *British Foreign Policy towards Turkey, 1959-1965*, London and New York, 2013, p. 66, նույնի *İngiliz Kaynaklarına Göre Türkiye'deki 27 Mayıs Darbesi*, Türkler Ansiklopedisi, c. 17, Ankara, 2002 s. 54:

<sup>437</sup> 1960 թ. ռազմական հեղաշրջման օրերին Թուրքիայի ՉՈՒ ԳՇ պետը բանակի գեներալ Մուսթաֆա Բյուշոն էր դել հոլնս էր:

<sup>438</sup> FRUS, pp. 842-843.

<sup>439</sup> Harris G., *Troubled Alliance: Turkish-American Problems in Historical Perspective, 1945-1971*, Washington, 1972, p. 67.

Անկարայի վերնախավի շրջանում հայտնի էր իբրև «բարձրահասակ ապրուշ»<sup>440</sup>:

Սակայն միամտություն կլինի կարծել, թե ԱՄՆ ղեկավարությունը թուրքիայի ներքաղաքական վիճակի մասին տեղեկանում էր միայն դեսպանատան հաղորդումներից: Անկարայում Միացյալ Նահանգների նախկին դեսպան (1952-1953 թթ.) Ջորջ Մըքգիս, խոսելով թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու մասին, գրում է. «Այսօր ամերիկյան մոտեցումը նշանակալիորեն փոխվել է: Թուրքիան իրավամբ համարվում է մեր ամենավստահելի գործընկերներից մեկը, իսկ ԱՄՆ-ում քիչ ազդեր են նման պատվի արժանացել»<sup>441</sup>: Բնական է, որ աշխարհաքաղաքական նման կարևորության երկրում դիվանագիտական անձնակազմից բացի ակտիվորեն գործելու էր հատուկ ծառայությունների գործակալական ցանցը: Յեղաշրջումից 3 օր առաջ՝ մայիսի 24-ին գումարված ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդի 445-րդ նիստի արձանագրության մեջ կարդում ենք. «Անդրադառնալով թուրքիային՝ այն. Դալեսը<sup>442</sup> հաղորդեց, որ կառավարության և ընդդիմության միջև լարվածությունն իրենից շարունակական վտանգ է ներկայացնում: Ինյոնյուի և վարչապետ Մենդերեսի միջև հակամարտությունն արդեն վերաճել է սահմանադրական ճգնաժամի: Ուսանողական ցույցերի թիվն աճել է, և այժմ ոչ ուսանողներն էլ են միանում ապստամբությանը: Անգամ որոշ զինվորականներ են մասնակցում ցույցերին: Թուրքական ոստիկանության և զինված ուժերի միջև նշանակալի հակասություններ են դիտվում: Թուրքական բանակը տրոհված է. ավագ սպայակազմը հակված է հավատարիմ մնալ կառավարությանը, մինչդեռ կրտսեր զինվորականությունը բաժանված է կառավարության և ընդդիմության միջև: Ակնհայտ է, որ վարչապետ Մենդերեսը չի գիտակցում դժգոհության մասշտաբները: ՊՆ. Դալեսը վստահ էր, որ թուրքիայում տիրող

<sup>440</sup> **Toker M.**, *Demokrasimizin İsmet Paşa'lı Yılları 1944-1973*, c. 6, *İnönü'nün Son Başbakanlığı*, Ankara, 1992, s. 48.

<sup>441</sup> **McGhee G.**, *Turkey Joins the West*, Foreign Affairs, vol. 32, no. 4, 1954, p. 617.

<sup>442</sup> Խոսքը ԱՄՆ Կենտրոնական հետախուզակազմի վարչության (ԿՅՎ, անգլ.՝ CIA) 3-րդ տնօրեն (1953–1961 թթ.) Ալեն Դալեսի մասին է:

վիճակը միայն վատթարանալու է, և անգամ հնարավոր է, որ քանակը վերցնի իշխանությունը [ընդգծումն իմն է, — Ա.Գ.]»<sup>443</sup>:

Թուրքական զարգացումների վրա ամերիկյան հատուկ ծառայությունների ազդեցությունն, ըստ ամենայնի, այնքան նշանակալի է եղել, որ որոշ հեղինակներ հանգել են ծայրահեղական ու գիտական կասկածելի հենք ունեցող եզրակացությունների: Թուրք ուսումնասիրող Բյուլենթ Գյոքայն, օրինակ, պնդում է, որ թուրքական հատուկ ծառայությունները լիովին վերահսկվել են ԿՅՎ կողմից ու կազմակերպվող հեղաշրջման մասին տեղեկություններն ամերիկյան իշխանություններին հայտնի են եղել անգամ ավելի վաղ, քան Մենդերեսի վարչակազմին հաղորդվելը<sup>444</sup>: Իսկ շվեդարացի պատմաբան Դանիել Գասներն իր «*ՆԱՏՕ-ի գաղտնի քանակները*» աղմկահարույց գրքում կարծիք է հայտնում, որ Ազգային միասնության կոմիտեի անդամ գնդապետ Ալֆարսլան Թյուրքեշը<sup>445</sup> ԿՅՎ կոնտակտային անձն էր<sup>446</sup>:

Ամերիկյան հրապարակված արխիվները վկայում են, որ վերոհիշյալ նիստից հետո էլ ԿՅՎ ղեկավարը շարունակել է ձեռքը պահել թուրքական իրադարձությունների զարկերակին: Յենց հաջորդ օրը՝ մայիսի 25-ին գումարվել է Գործողությունների համակարգման խորհրդի նիստ, որը պետք է Թուրքիայի հարցով գործողությունների ծրագիր հաստատեր<sup>447</sup>: Դրա ընթացքում Դալեսը Անկարայում ԱՄՆ դեսպանատնից պահանջել է իրավիճակի ևս մեկ վերլուծություն՝ հիմնված քաղաքական և տնտեսական կարճաժամկետ և երկարաժամկետ զարգացումների տեսլականի վրա: Ըստ նրա՝ առանձնահատուկ

<sup>443</sup> *Memorandum of Discussion at the 445th Meeting of the US NSC*, Washington, May 24, 1960, Eisenhower Library, Whitman File, NSC Records, in *FRUS*, p. 843.

<sup>444</sup> **Gökay B.**, *Soviet Eastern Policy and Turkey, 1920-1991: Soviet Foreign Policy, Turkey and Communism*, London and New York, 2006, pp. 86-87.

<sup>445</sup> ԱՄԿ արմատական թևի մյուս անդամների հետ Թյուրքեշը նոր հեղաշրջում պատրաստելու համար 1960թ. նոյեմբերի 13-ին հեռացվել է Ազգային միասնության կոմիտեից ու Թուրքիայի դեսպանատան ռազմական կցորդի կարգավիճակով ուղարկվել Յնդկաստան: Այս մասին մանրամասն տե՛ս **Данилов В.**, *Политическая борьба в Турции, 50-е начало 80-х годов XX в. : политические партии и армия*, Москва, 1985, с. 66-88.

<sup>446</sup> **Ganser D.**, *NATO's Secret Armies: Operation GLADIO and Terrorism in Western Europe*, London and New York, 2005, p. 227.

<sup>447</sup> Խորհրդի նիստի ոչ պաշտոնական գրագրությունը տե՛ս US Department of State, OCB Files: Lot 61 D 385, M/OP Informal Notes 1960: Տե՛ս ևս նույն տեղում, Lot 62 D 430, Turkey:

կարևորություն ուներ ճշգրտորեն շոշափել թուրքական բանակի տրամադրությունները:

Անկարայում ԱՄՆ դեսպանատնից ստացված հաջորդ՝ 2743 թվակիր հեռագիրը, սակայն, արդեն տեղեկացնում էր կատարված փաստական իրողության մասին. «Անսովոր լավ կազմակերպված հեղաշրջմամբ թուրքիայի զինված ուժերը մայիսի 27-ին, ժամը 04:00-ին տապալել են կառավարության իշխանությունը՝ ըստ ամենայնի առանց լուրջ դիմադրության՝ Անկարայում տալով միայն 50 րոպե<sup>448</sup>: Նախագահ Բայարը, ԹԱՄԺ նախագահ Քորալթանը, կառավարության անդամները, ԳԾ պետերդել հոլը ձերբակալված են<sup>449</sup>: Անկարայում, Ստամբուլում, Իզմիրում հանգստություն է տիրում. չկա որևէ կազմակերպված դիմադրության նշան: Այս պահին Դեսպանությունը հավատացած է, որ ապստամբությունը պայմանավորված է բացառապես ներքին շարժառիթներով. չկա հակամերիկյան տրամադրությունների որևէ ապացույց: Յակառակը՝ Ռազմական խորհրդի [նկատի ունի Ազգային միասնության կոմիտեն, — Ա.Գ.] անդամներից մեկն այս առավոտյան Դեսպանությունը հավաստիացրել է, որ թուրքիայի զինված ուժերը բարեկամաբար են տրամադրված ԱՄՆ նկատմամբ և ցանկանում են կատարել թուրքիայի բոլոր միջազգային պարտավորությունները, հատկապես՝ ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի մասով»<sup>450</sup>: Յատկանշական է, որ նույն պատրաստակամությունը վերահաստատվել է նաև հաջորդ օրը՝ մայիսի 28-ին՝ ԱՄՆ դեսպան Մելիի Էսենբելի մակարդակով: Վերջինիս և ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Դուգլաս Դիլոնի հանդիպման ժամանակ ամերիկացի պաշտոնյան տեղեկացրել է, որ «Միացյալ Նահանգները, ինչպես այլ նման դեպքերում, նախընտրում է շարունակել հարաբերություններն իրենց նախկին հոլնով՝ առանց պաշտոնական հայտարարության»<sup>451</sup>: Թուրքիայի

<sup>448</sup> Նման բանակի զոհերի մասին այս տեղեկությունը հետագայում չի հաստատվել:

<sup>449</sup> Դեսպան Ուորենը ոչինչ չի հաղորդում վարչապետ Մենդերեսի մասին, քանի որ վերջինս ֆինանսների նախարար Յասան Փոլաթթանի հետ ձերբակալվել է մի քանի ժամ անց՝ Էսքիշեհիրից Քյուլթահիա տանող ճանապարհին: Տե՛ս **Սաֆրասյան Ռ. (խմբ.)**, *Թուրքիայի Յանրապետության պատմություն*, Երևան, 2014, էջ 188:

<sup>450</sup> FRUS, p. 844.

<sup>451</sup> Տե՛ս US Department of State, Central Files, 782.00/5–2860.

հետհեղափոխական նոր կառավարությունն ԱՄՆ-ի և արևմտյան մյուս դաշնակիցների կողմից դե ֆակտո ճանաչվել է հեղաշրջումից ընդամենը 3 օր անց՝ մայիսի 30-ին<sup>452</sup>: Ամերիկյան քայլերի այս սահունությունը ցույց է տալիս, որ թուրքական զարգացումների վերաբերյալ պատկերացումներն օվկիանոսից այն կողմ, հակառակ ընդունված տեսակետին, բավական իրատեսական են եղել<sup>453</sup>:

Ենթադրությունը, որ դեպքերի կտրուկ շրջադարձը թուրքիայում ամենևին էլ անակնկալ չէր ամերիկյան իշխանությունների համար, հաստատվում է նաև մայիսի 31-ին՝ երկրի Ազգային անվտանգության խորհրդի հաջորդ՝ 446-րդ նիստում: Արձանագրության մեջ կարդում ենք. «Պարոն Էմորիս<sup>454</sup> հաղորդեց, որ հեղաշրջումը թուրքիայում ամիսներ շարունակ ծրագրվել է [ընդգծումն իմն է, — Ա.Գ.]Ստամբուլի ռազմական ուսումնարանում, սակայն գործողությունները մինչև մայիսի 21-ը զարգացել են շատ դանդաղ... Պարոն Էմորիս հավատում էր, որ թուրքիան հավատարիմ կմնա իր դաշնակցային պարտավորություններին»<sup>455</sup>:

Ավելի լին՝ կարելի է ենթադրել, որ ամերիկյան հատուկ ծառայությունները հեղաշրջման հնարավորությունը դիտարկում էին 1960 թվականից մի քանի տարի առաջ: Դեռ 1958 թ. վերջին ԿՀՎ կողմից պատրասված գեկոլյցում նշվում է (պարբերություններ 15-16), որ զինվորական միջամտությունը որոշակիորեն հավանական կլինի մինչև 1961 թ. ընտրությունները, եթե երկրում գրանցվի «տնտեսական վիճակի վատթարացում կամ քաղաքական ծայրահեղ սադրանքներ»<sup>456</sup>: Հեղաշրջումից հետո երկիրը գլխավորած Ջեմալ Գյուլսելը կամ, ինչպես նրան անվանում էին զինվորականների շրջանում,

<sup>452</sup> Տե՛ս **Gunn C.**, *The 1960 Coup in Turkey: A U.S. Intelligence Failure or a Successful Intervention?*, p. 112:

<sup>453</sup> Հետաքրքիր է, որ, հակառակ արևմտյան պատմագրության մեջ ընդունված տեսակետին, նման եզրակացության է հանգել նաև թուրք ուսումնասիրող Տահիր Արմաօղլուն, ով աշխատել է ամերիկյան արխիվներում: Տե՛ս **Armaoğlu F.**, *Amerikan Belgelerinde 27 Mayıs Olayı, Belleten, c. XL, sayı 227, 1996, ss. 203-226*;

<sup>454</sup> Խոսքը ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության փոխտնօրեն (1952-1962 թթ.) Ռոբերտ Էմորի կրտսերի մասին է:

<sup>455</sup> *Memorandum of Discussion at the 446th Meeting of the US NSC*, Washington, May 31, 1960, Eisenhower Library, Whitman File, NSC Records, in *FRUS*, pp. 848-849.

<sup>456</sup> Տե՛ս US Department of State, INR-NIE Files, Secret, NIE 33-58, 30.12.1958:

Ջեմալ աղան հնարավոր ռազմական միջամտության գաղափարին ծանոթացել է 1959 թ. փետրվարին Գերմանիայում ՆԱՏՕ-ի գործարժույթի ժամանակ: Նրան իբրև թարգմանիչ կցված գնդապետ Սադի Քոչաշը<sup>457</sup>, ով, ըստ ամենայնի, որոշակի կապեր է ունեցել ՆԱՏՕ-ում ներկայացված ամերիկյան հատուկ ծառայության ներքին հետ, ամեն օր Նյու Երկրներ գից գործարժույթի վայրեր հասնում բանակի գեներալին հատկացված մեքենայով: Այդ ուղևորություններից մեկի ընթացքում էր Գյուրսելը նախնական համաձայնություն է տվել հեղաշրջումը գլխավորելու՝ Քոչաշի առաջարկին<sup>458</sup>:

Այսպիսով, եթե Վաշինգտոնում գիտեին կամ նվազագույնը ենթադրում էին կազմակերպող հեղաշրջման մասին, ինչն էլ էյգենհաուերի վարչակազմը որևէ քայլ չի ձեռնարկել՝ կանխելու այն կառավարության տապալումը, որի հետ առկա էին «սերտ բարեկամական հարաբերություններ»<sup>459</sup>: Նման սցենարը ժամանակակիցների կողմից հավանական էր համարվում՝ հաշվի առնելով, որ 1959 թ. գարնանը Թուրքիայի հետ կնքված պայմանագրով ԱՄՆ պարտավորվել էր միջամտել՝ թուրքական կառավարությանը պաշտպանելով «*ուղղակի կամ անուղղակի ագրեսիայից*»<sup>460</sup>:

Որոշ ուսումնասիրողներ 1960 թ. մայիսյան դեպքերի ընթացքում ԱՄՆ որդեգրած դիրքորոշումը կապում են վարչապետ

<sup>457</sup> Քոչաշը 1971 թ. մարտի 12-ի զինվորական միջամտության նից հետո ձևավորված Նիհաթ Երիմի կառավարության մեջ զբաղեցրել է փոխվարչապետի պաշտոնը (մարտի 26-ից դեկտեմբերի 3-ը): Հայ ուսումնասիրողին քաջածանոթ է նրա «*Հայերը պատմության մեջ և թուրք-հայ կական հարաբերությունները՝ սկսած սելջուկյաններից*» աշխատությունը՝ գրված թուրքական ժխտողականության դիրքերից: Տե՛ս **Koçaş S., Tarih Boyunca Ermeniler ve Selçuklular'dan Beri Türk-Ermeni İlişkileri**, Ankara, 1967:

<sup>458</sup> **İpekçi A., Coşar Ö., İhtilalin İcyüzü**, İstanbul, 1965, ss. 105-109. Ա. Թյուրքեշի փոխանցմամբ, սակայն, Գյուրսելն այդ հանդիպման ժամանակ այդպես էլ որևէ հստակ պատասխան չի տվել՝ **Birand M., Dündar C., Çaplı B., Demirkırat: Bir Demokrasinin Doğuşu**, İstanbul, 1991, s. 161: Տե՛ս նաև **Hale W., Turkish Politics...**, pp. 102-103.

<sup>459</sup> Հենց այդպիսի ձևակերպում էր տեղ գտել ԱՄՆ նախագահ Դուլայթ Էյգենհաուերի՝ 1959 թ. դեկտեմբերի 6-7-ը Թուրքիա կատարած այցի ընթացքում թուրք պաշտոնակցի հետ հանդիպումից հետո հրատարակված համատեղ հայտարարության տեքստում: Տե՛ս *Department of State Bulletin*, vol. 41 no. 1058-1070, US Government Printing Office, 1959, pp. 932-933

<sup>460</sup> Մենդերեսի քաղաքական հակառակորդները վախենում էին հնարավոր ամերիկյան միջամտության նից, քանի որ հիշյալ պայմանագիրը Վաշինգտոնի կողմից կարող էր օգտագործվել Թուրքիայի տարածքում «*Էյգենհաուերի դրկտրինով*» սահմանված գործողություններ իրականացնելու համար: Տե՛ս **Karpat K., Turkish Soviet Relations in Karpat K.** (ed.), *Turkey's Foreign Policy in Transition, 1950-1974*, Brill, 1975, p. 87, **Hale W., Turkish Foreign Policy...**, p. 90.

Մենդերեհի՝ նույն տարվա հունիսին ԽՍՀՄ նախատեսվող այցի հետ<sup>461</sup>: 1959-1960 թթ. թուրքական տնտեսությունը դժվար ժամանակներ էր ապրում. 1959 թ. հոկտեմբերին Մենդերեհի՝ Միացյալ Նահանգներ կատարած այցի ընթացքում թուրքական կառավարությունն ակնկալում էր հավելյալ 500-600 միլիոն դոլարի աջակցություն ստանալ իր գլխավոր դաշնակցից<sup>462</sup>: Սակայն Էյզենհաուերի վարչակազմը, որ դժգոհ էր 1958 թ. Թուրքիային տրամադրված աջակցության<sup>463</sup> արդյունքներից, հրաժարվեց անգամ քննարկել ֆինանսների նախարար Փոլաթանի պատրաստած նախագիծը<sup>464</sup>:

Ստեղծված իրավիճակում Մենդերեհը, ով հայտնի էր սուր հակախորհրդային հռետորաբանությամբ<sup>465</sup>, ստիպված էր այլ ընտրանք փնտրել: Միացյալ Նահանգներից բացի այդ ծավալների աջակցություն կարող էր տրամադրել միայն Խորհրդային Միությունը: Նման պայմաններում Թուրքիայի արտգործնախարար Ֆաթին Ռյուշթյու 2021 թ. մարտի 27-ից ապրիլի 6-ը հանդիպումներ է ունենում Անկարայում Խորհրդային դեսպան Նիկիտա Ռիժոկի հետ: Վերջինս թուրքական կողմին հավաստիացնում է, որ Մոսկվան պատրաստ է տնտեսական աջակցություն ցուցաբերել Թուրքիային՝ անկախ տիրող քաղաքական իրավիճակից<sup>466</sup>: Միայն դրանից հետո՝ ապրիլի 11-ին Մենդերեհը հայտարարում է Մոսկվամեկնելու իր մտադրության մասին: Ընդ որում, ինչպես նշում է թուրք ուսումնասիրող Սուաթ Բիլգեն, պաշտոնական հայտարարությունն այնուամենայնիվ չէր հստակեցնում, թե արդյոք Թուրքիան,

<sup>461</sup> Տե՛ս, օրինակ, **Aktaş M.**, *1950-1960 Demokrat Parti Dönemi Türk-Sovyet İlişkilerinde Amerikan Faktörü*, İstanbul, 2006, ss. 94-95:

<sup>462</sup> Տե՛ս **Ahmad F.**, *The Making of Modern Turkey*, p. 117:

<sup>463</sup> 1958 թ. հոկտեմբերին արևմուտքի նախածեռնած՝ Թուրքիայի տնտեսությունը «փրկելու» ծրագրի շրջանակներում երկրին տրամադրվել էր 359 միլիոն դոլարի չափով վարկ, ինչպես նաև կատարվել էր շուրջ 422 միլիոն դոլարի հասնող արտաքին պարտքի կոնսոլիդացիա: Այս միջոցառումները, սակայն, չէին տվել ցանկալի արդյունք, ինչն արևմուտքում պայմանավորում էին Մենդերեհի կառավարության՝ «*բարդ որոշումներ ընդունելու անկարողությանը*»: Այս մասին մանրամասն տե՛ս **Krueger A.**, *Foreign Trade Regimes and Economic Development: Turkey*, New York, 1974, pp. 63-85:

<sup>464</sup> **Özdemir H.**, *The Turkish–American Relation Toward 1960 Turkish ‘Revolution’*, *The Turkish Yearbook of International Relations*, vol. 31, 2000, p. 172.

<sup>465</sup> Տե՛ս **Karpat K.**, *Turkish Soviet Relations*, p. 85, **Heper M.**, **Sayari S.**, *Political Leaders and Democracy in Turkey*, Oxford, 2002, pp. 79-80, **Danforth N.**, *The Menderes Metaphor*, *Turkish Policy Quarterly*, vol. 13, no. 4, p. 102,

<sup>466</sup> **Kuneral Z.**, *Sadece Diplomat*, İstanbul, 1981, ss. 108-110.



տնտեսական գործունով պայմանավորված, պատրաստվում է վերակազմակերպել իր հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ<sup>467</sup>:

Թեև Մենդերեսն իր մտադրության մասին տեղեկացրել էր ամերիկյան կողմին<sup>468</sup>, սակայն հասկանալի է, որ այդ քայլը լուրջ դժգոհություն էր հարուցելու Անկարայի անդրատլանտյան դաշնակցի ղեկավարության մոտ: Այնուհանդերձ, ԱՄՆ դեսպան Ուորենը, կասկածի տակ չդնելով Թուրքիայի հավատարմությունը, փետրվարի 8-ին հայտարարում է, որ «*Թուրքիան որոշելու իրավունք ունի*»<sup>469</sup>: Պաշտոնական Վաշինգտոնն, իր հերթին, շեշտում է, որ Թուրքիան չպետք է տրվի «*խորհրդային սին խոստումներին*»<sup>470</sup>: Առավել ուշագրավ է, որ այս շրջանում ԿՅՎ որևէ կերպ չի անդրադառնում թուրքական զարգացումներին, մինչդեռ 50-ականների կեսերին, երբ թուրքսովետական մերձեցման հավանականությունն անհամեմատավելի փոքր էր, հատուկ ծառայությունները թեման պահում էին ուշադրության կենտրոնում<sup>471</sup>: Տեղեկատվական հոսքի նման կատարյալ բացակայությունը, ըստ ամենայնի, պետք է բացատրել իրադարձությունների զարգացման այլընտրանքային սցենարների նկատմամբ ամերիկյան իշխանությունների կատարյալ վստահությունից<sup>472</sup>:

Յեղաշրջումից հետո՝ 1960 թ. հունիսի 8-ին գումարված ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի 447-րդ նիստի ժամանակ ԿՅՎ տնօրենի խոսքերն ընդգծում են թուրքական նոր իշխանությունների արտաքին քաղաքական ուղեգծում ԽՍՀՄ նկատմամբ դիրքորոշման կտրուկ կոշտացման փաստը. «*Մոսկվան*

<sup>467</sup> Bilge S., *Güç Komşuluk*, Ankara, 1992, s. 345.

<sup>468</sup> Այդ հարցն Անկարայում ԱՄՆ դեսպան Ուորենի հետ քննարկել են և՛ վարչապետ Մենդերեսը (հունվարի 13-ին), և՛ արտգործնախարար Չոռլուկ (հունվարի 30-ին): Özdemiir H., նշվ. աշխ., էջ 173: Յատկանշական է, որ գաղտնագրված ամերիկյան արխիվներում Խրոնոլոգիայի հետ Մենդերեսի սպասվող հանդիպումը հիշատակվում է միայն մեկ անգամ՝ Eisenhower J., *Memorandum: Turkey*, from 2 February 1960, in *Declassified Documents Reference System*: Վերոհիշյալ գրողի ցանկում ամերիկյան գրառումները շարունակում են գաղտնի մնալ:

<sup>469</sup> Տե՛ս Özdemiir H., *The Turkish–American Relation Toward 1960 Turkish ‘Revolution’*, p. 173:

<sup>470</sup> Տե՛ս *FRUS*, p. 820:

<sup>471</sup> Տե՛ս, օրինակ, *The Economic Situation in Turkey*, 18 January 1955 in CIA/ERR, CIA-RDP91T01172R000300050013–1, *The Economic Situation in Turkey*, 22 January 1955, in CIA/ERR, CIARDP91T01172R000300050014–0, *Background—Turkey*, 12 March 1957 in CIA/ERR, CIA-RDP79R00890A000800050017–6., *Current Status of Turkey*, National Security Council, 11 June 1957 in CIA RDP79R00890A000800080028–1:

<sup>472</sup> Տե՛ս Gunn C., *The 1960 Coup in Turkey: A U.S. Intelligence Failure or a Successful Intervention?*, p. 136:

քաջալերում է թուրքական նոր վարչակազմին՝ բարելավել ու  
ԽՍՀՄ հետ թուրքիայի հարաբերությունները: Խորհրդային  
իշխանություններն արդեն իսկ գեներալ Գյուրսելին  
հրավիրել են այցելել Մոսկվա.. Թուրքիայի արտաքին գործերի  
նախարար Սարփերը դիմել է մեզ՝ խնդրելով խորհրդային  
քարոզչությանը դիմակայել ու համար թուրքիայի հետ  
համերաշխության վերաբերյալ հայտարարություն  
հրատարակել»<sup>473</sup>:

Ամերիկյան իշխանություններն այս խնդրանքին  
արձագանքում են բարձրագույն մակարդակով: Պետքարտուղար  
Յերթերի խորհրդով նախագահ Էյզենհաուերը հունիսի 11-ին  
նամակ է հղում հետհեղաշրջումային թուրքիայի ղեկավար  
Ջեմալ Գյուրսելին: Ուղերձի տեքստն արտահայտում է  
թուրքական նոր կառավարության որդեգրած արտաքին  
քաղաքականության նկատմամբ պաշտոնական Վաշինգտոնի ողջ  
գոհունակությունը. «ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի հետ թուրքիայի կապերը  
պահպանել ու՝ Ձեր կառավարության մտադրությունը մեծ  
գոհունակության աղբյուր է անձամբ իմ և բոլոր նրանց համար,  
ովքեր հավաքական անվտանգության այդ  
կազմակերպություններում ասոցացված են թուրքիայի հետ՝  
նպատակ ունենալով պահպանել ազատ աշխարհը: Իմ  
կառավարությունը լիահունյս է շարունակել թուրքիայի հետ  
ջերմ հարաբերությունները՝ բարեկամության ու  
համագործակցության այն ավանդույթով, որով միշտ  
նշանավորվել են թուրք և ամերիկացի ժողովուրդների  
շփումները»<sup>474</sup>:

Ամփոփելով պետք է նշել, որ ԱՄՆ իշխանությունները  
տիրապետում էին բավարար տեղեկությունների՝ նվազագույնը  
կանխատեսելու 1960 թ. մայիսյան իրադարձությունների նման  
շրջադարձը: Ունենալով միջամտելու բոլոր լծակները՝  
Էյզենհաուերի վարչակազմը նախընտրեց պահպանել ակտիվ  
չեզոքություն՝ փոխարենը թուրքիայի նոր

<sup>473</sup> Memorandum of Discussion at the 447th Meeting of the US NSC, Washington, 8 June, 1960, Eisenhower Library, Whitman File, NSC Records, in FRUS, p. 849.

<sup>474</sup> Department of State, Central Files, 882.47411/6-1160. Տե՛ս նաև FRUS, p. 850:

իշխանություններին ակնկալելով տնտեսական, քաղաքական և  
նազմական հավատարմություն:

Այսպիսով՝ 1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայի  
Յանրապետության պատմության մեջ առաջին անգամ տեղի  
ունեցավ նազմական հեղաշրջում, որի արդյունքում տապալվեց  
Ադնան Մենդերեսի գլխավորած ժողովրդավարական  
կուսակցության իշխանությունը: Յանրապետականների և  
պահպանողականների միջև նկարագրված գաղափարական սուր  
բևեռացումը բանակի միջամտությամբ լուծելը դարձավ  
նախադեպային՝ զգալի չափով պայմանավորելով հետագա  
տասամյակներում թուրքական քաղաքական դաշտում տեղի  
ունեցող գործընթացների ընդհանուր տրամաբանությունը:

## ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ

### «ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԱՐԳԱՏՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՐՕՐՅԱ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 3.1. ԱՉԿ ստեղծման ու կայացման պատմական համատեքստը

Նոր հազարամյակի սկզբին թուրքական քաղաքական դաշտը դեռ կրում էր 1997 թ. փետրվարյան «պոստմոդեռն» հեղաշրջման (թրք.՝ «Postmodern darbe») <sup>475</sup> հետևանքների ազդեցությունը: 2001 թ. հունիսի 22-ին թուրքիայի Սահմանադրական դատարանի որոշմամբ փակվեց «Առաքինություն» կուսակցությունը (թրք.՝ «Fazilet Partisi») <sup>476</sup> և դրանորարարական թևը <sup>477</sup> ներկայացնող միջաբան գործիչներ էլ Ստամբուլի նախկին քաղաքապետ Ռեջեփ Թայիփ Էրդոդանի գլխավորությամբ կազմեցին 2001 թ.-ի օգոստոսի 14-ին ստեղծված «Արդարություն և զարգացում» կուսակցության հիմքը: Նորաստեղծ ԱՉԿ-ին հենց սկզբից հարեցին նաև այլ քաղաքական ուժերի (մասնավորապես՝ «Մայր հայրենիք» (թրք.՝ «Anavatan Partisi») և «Ճշմարիտ ուղի» (թրք.՝ «Doğru Yol Partisi») կուսակցությունների և այլն) միջաբան դամներ: Էրդոդանը, խոսելով առաջին սերնդի ԱՉԿ-ականների մասին, մասնավորապես նշում է Աբդուլլահ Գյուլի, Աբդյուլլահի Շեների,

<sup>475</sup> 1997 թ. փետրվարի 28-ին թուրքիայի ՉՈՒ ղեկավարության կողմից վարչապետ Ն. Էրբաքանին ներկայացվեց 18 կետից բաղկացած վերջնագիր, ինչից հետո կառավարության ղեկավարը հարկադրված եղավ հրաժարական տալ: Առանց գեներալ անմիջական կիրառման իշխանափոխության բերած դեպքերի նկատմամբ «Պոստմոդեռն» անվանումն առաջին անգամ կիրառվել է թուրք լրագրող թուրքեր Ալթանի կողմից և ավելի ուշ լայն տարածում ստացել անգլալեզու մամուլում տեղ գտնելուց հետո: Տե՛ս **Alkan T.**, *Postmodern bir askerî müdahale*, Radikal, 13.06.1997:

<sup>476</sup> Հատկանշական է, որ ԱՉԿ անմիջական գաղափարական նախնին՝ «Բարօրություն» կուսակցությունը (թրք.՝ «Refah Partisi»), նույնպես փակվել էր Սահմանադրական դատարանի որոշմամբ (16.01.1998 թ.):

<sup>477</sup> Դեռ մինչև «Առաքինության» փակվելը թուրքական մամուլում ակտիվորեն շրջանառվում էին «ավանդականների» (թրք.՝ «gelenekçiler») և «նորարարների» (թրք.՝ «yenilikçiler») միջև ներկուսակցական իշխանության համար պայքարի շուրջ լուրերը՝ **Dursun D.**, *Fazilet Partisi'nde "Yenilikçiler", "Gelenekçiler"*, Yeni Şafak, 15.02.2000, <http://yenisafak.com.tr/arsiv/2000/subat/15/ddursun.html> [հասանելի է՝ 07.03.2019]:

Աբդյուլլախմադի Աբսուլի, Ջեմիլ Չիչեքի, Մելիհ Գյոքչեքի, Իսմայիլ Քահրամանի, Ալթան Քարաիաշաօղլուի, Բյուլենթ Արընչի և Աբդուլլահ Չալըչքանի անունները<sup>478</sup>: Ընդհանուր առմամբ, օգոստոսի 14-ին «Bilkent» հյուրանոցի դահլիճում հավաքված կուսակցության «Յիմնադիրների խորհուրդը» բաղկացած էր 74 անդամից, որոնցից 13-ը իգական սեռի ներկայացուցիչ էին<sup>479</sup>: ԱԶԿ ստեղծումից անմիջապես հետո մի քանի տասնյակ «առաքինական» պատգամավորներ համալրեցին նրա շարքերը (Մեջլիսում ԱԶԿ ունեցավ 59 ներկայացուցիչ կամ ընդհանուր տեղերի 10,7%-ը):

Յիմնադրման պահին Թուրքիայի 39-րդ կուսակցությունը դարձած «Արդարություն և զարգացումը» հենց սկզբից հանդես եկավ իբրև փոփոխությունների ջատագով: 2002 թ. ընտրություններին ընդառաջ Էրդողանի ու ընկերների առջև ծառայած հիմնական գաղափարական խնդիրը քեմալիզմի 6 սյուներից աշխարհիկությանը թուրքական աջ պահպանողականների չհամապատասխանելու՝ քաղաքական հակառակորդների մեղադրանքներին հակադարձելն էր: Այս առիթով իր բավական կոշտ կրոնական հայացքներով հայտնի Էրդողանը հայտարարեց, թե աշխարհիկությունը դիտում է, իբրև թուրքական «ժողովրդավարության երաշխիք» (թուրք. «demokrasinin teminatı»)<sup>480</sup>:

Կուսակցության ու երկրի կյանքում հանգուցային նշանակություն ունեցան 2002 թ.-ի նոյեմբերի 3-ի համապետական ընտրությունները: Դրանց արդյունքում ԱԶԿ-ն ստացավ ընտրությանը մասնակցածների ձայների 34,3%-ը (10.808.229 քվե) ու համապատասխանաբար նաև 550 հոգանոց ԹԱՄԺ-ի մանդատների 66%-ը (363 տեղ)<sup>481</sup>: ԱԶԿ-ից բացի Մեջլիս անցավ (ձայների 19,4%-ով՝ 178 մանդատ) նաև Դենիզ Բայքալի գլխավորած Յանրապետական ժողովրդական կուսակցությունը (թրք.՝ Cumhuriyet Halk Partisi): Ընտրություններին մասնակցած մնացած 16 կուսակ-

<sup>478</sup> Տե՛ս Tekin Ü., *AK Parti'nin Muhafazakar Demokrat Kimliği*, Ankara, 2004, s.73:

<sup>479</sup> Անդամների անունները տե՛ս՝ *Adalet ve Kalkınma Partisi kuruldu*, *Hürriyet*, 14.08.2001, <http://www.hurriyet.com.tr/gundem/adalet-ve-kalkinma-partisi-kuruldu-10009> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>480</sup> Tosun T., *Siyasette Yeniden Mevzilenmeler*, İstanbul, 2003, s. 166.

<sup>481</sup> Տվյալներն ըստ՝ <http://electionresources.org/tr/assembly.php?election=2002> [հասանելի է՝ 07.03.2019]:

ցուցումները չհաղթահարեցին ձայների 10%-անոց շեմը, ուստի՝ քվեարկողների շուրջ 45%-ի ձայները իրենց արտացոլումը չգտան ԹԱՄԺ-ում: Պարզ դարձավ, որ 1987 թ. հետո առաջին անգամ Թուրքիայում ձևավորվելու էր միակուսակցական կառավարություն:

Ընտրություններում ԱԶԿ տպավորիչ հաղթանակը բացատրվում է մի շարք գործոններով: Թեև ԱԶԿ իրականում նախկին «բարօրականների» կուսակցություն էր, այն հասարակ մարդկանց կողմից ընդունվեց իբրև նոր ուժ (հաճախ՝ առանց կենտրոնական դրա գաղափարական ուղղվածության վրա): Շատերը 2001 թ. փետրվարյան տնտեսական վայրիվերումներից հետո հենց նոր ուժի հետ էին կապում հնարավոր առաջընթացը: Ոչ պակաս կարևոր դեր էր խաղում կուսակցության առաջնորդի խարիզմատիկ կերպարը: Շատերն անուղղակիորեն քվեարկեցին Երդոզանի օգտին, թեև վերջինս չէր կարող մասնակցել ընտրություններին<sup>482</sup>:

Քանի որ Երդոզանը նախկինում կրոնական հողի վրա անհնազանդությունների հրահրմանն ուղղված գործողություններ կատարելու պատճառով զրկված էր ընտրվելու կամ պետական պաշտոն զբաղեցնելու հնարավորությունից, նոյեմբերի 19-ին ձևավորված կառավարությունը գլխավորվեց ԱԶԿ հիմնադիրներից Աբդուլլահ Գյուլը: Սկզբից նեթել պարզ էր, որ ընդհանուր առմամբ կես տարի էլ չաշխատած Գյուլի կառավարությունը կոչված էր վերացնելու Երդոզանի իշխանության գալու ճանապարհին առկա իրավական և քաղաքական խոչընդոտները: Եվ արդեն դեկտեմբերի 13-ին ԹԱՄԺ-ը 440 կողմ, 18 դեմ և 4 ձեռնապահ ձայներով ընդունեց և նախագահի հաստատման ուղարկեց Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելու

<sup>482</sup> 1997 թ. դեկտեմբերին Սղերթում նահրապարակայնորեն ընթերցել էր 2իա Գյոքալ փի «Չինվորի աղոթքը» (թրք.՝ «Asker Duası») բանաստեղծության փոփոխված տարբերակը, որն ընդգծված իսլամական տարրեր էր պարունակում: Այս միջադեպի կապակցությամբ Դիարբեքիրի պետանվտանգության դատարանն Երդոզանին մեղավոր էր ճանաչել ԹԶՕ-ի 312-րդ հոդվածի 2-րդ կետի հատկանիշներով (կրոնական կամ ռասայական ատելության քարոզ)՝ դատապարտելով նրան 10 ամսվա ազատազրկման: Տե՛ս Serter N., *Dinde siyasal İslam tekeli*, İstanbul, 2010, s. 134. 2002 թ. սեպտեմբերի 20-ին Թուրքիայի Բարձրագույն ընտրական խորհուրդը մերժել էր ԹԱՄԺ ընտրություններում Երդոզանի հնարավոր թեկնածությունը:

մասին օրենքի նախագիծը<sup>483</sup>: Դրանում մասնավորապես նախատեսվում էր 76-րդ հոդվածի տեքստում «գաղափարակալական արտահայտությունները փոխարինել «ահաբեկչական գործողություններ» (թրք.՝ «ideoloji veya anarşik eylemler») արտահայտությունները փոխարինել «ահաբեկչական գործողություններ» (թուրք.՝ «terör eylemler») ձևակերպմամբ: Սակայն դեկտեմբերի 19-ին երկրի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը, «սուբյեկտիվ, կոնկրետացված ու անձնավորված» բնորոշելով, չվավերացրեց օրինագիծը<sup>484</sup>: Վերանայման ուղարկված նախագծի տեքստը կրկին քննարկելով՝ Մեջլիսը դեկտեմբերի 27-ին 437 կողմ, 44 դեմ, 1 ձեռնապահ ձայներով առանց փոփոխության կրկին հաստատեց այն: Այս անգամ արդեն փոփոխությունները նախագահի կողմից հաստատվեցին և օրենքի ուժ ստացան: Այսպիսով, ԱԶԿ առաջնորդը հնարավորություն ստացավ մուտք գործել խորհրդարանում, օգտագործելով առաջին իսկ հնարավորությունը, 2003 թ. մարտի 9-ին մասնակցեց Սղերթի կրկնակի ընտրություններին<sup>485</sup>: Ժողովրդական լայն զանգվածների մոտ ճանաչում վայելող Էրդողանը հեշտությամբ (ձայների 84.8%-ով) հաղթեց և հաջողությամբ մուտք գործեց ԹԱՄԺ: Սրան հաջորդեց քաղաքական կոմբինացիայի վերջին գործողությունը՝ մարտի 11-ին հրաժարական տվեց Գյուլի կառավարությունը և արդեն 3 օր անց ձևավորվեց Թուրքիայի պատմության 59-րդ կառավարությունը: Էրդողանի նորաստեղծ կաբինետում նախկին վարչապետ Գյուլին հատկացվեց փոխվարչապետի ու արտգործնախարարի պաշտոնը:

ԱԶԿ-ական երկրորդ կառավարության աշխատանքը, ընդհանուր գծերով, կարելի է հաջողված անվանել: Այս առումով հարկ է նշել, որ Էրդողանի կառավարությունը կարողացավ հաղթահարել իրաքյան պատերազմի շուրջ ստեղծված ճգնաժամը: Դեռ 2003 թ. մարտի 1-ին ԹԱՄԺ-ը ձայների 264 կողմ, 250 դեմ, 19 ձեռնապահ ձայների հարաբերակցությամբ դեմ էր արտահայտվել (նախագիծը չէր հավաքել ըստ Սահմանադրության 96-րդ հոդվածի անհրաժեշտ

<sup>483</sup> Օրենքի նախագծի տեքստը՝ <http://www.tbmm.gov.tr/kanunlar/k4774.html> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>484</sup> Նախագահի պատասխանի տեքստը՝ <http://www.tbmm.gov.tr/sirasayi/donem22/yil01/ss5m.htm>:

<sup>485</sup> Այս ընտրական շրջանի արդյունքներն Թուրքիայի Բարձրագույն ընտրական խորհրդի կողմից անվավեր էին ճանաչվել դեռ դեկտեմբերի 2-ին:

քվեարկությունը մասնակցածների ձայների բացարձակ մեծամասնությունը) Կոալիցիոն ուժերի կազմում թուրքական բանակի անմիջական մասնակցությունը: Չնայած դրան հաջորդած ԱՄՆ-ի հետ հարաբերությունների որոշակի սրմանը՝ որոշ փորձագետներ «post factum» կարծիք էին հայտնում անգամ, թե թուրքիայի տարածաշրջանային դիրքերը միայն ամրացել են դաշնակիցների հրաք ներխուժելուց հետո<sup>486</sup>: Պետք է փաստել նաև, որ 2000-2001 թթ. տնտեսական անկումից հետո ԱԶԿ-ական կառավարության օրոք երկիրը սկսեց բարելավել տնտեսական արդյունքները (մասնավորապես ՀՆԱ-ի ու սղաճի ցուցանիշների մասով<sup>487</sup>) և արդեն 2004 թ. վերջին դարձավ Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության (OECD) առավել արագ զարգացող տնտեսություն ունեցող երկրներից մեկը<sup>488</sup>:

Թերևս նաև այս գործոններով պիտի բացատրել 2004 թ. մարտի 28-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ԱԶԿ վստահ հաղթանակը: Կուսակցությունը մեծամասնություն կազմեց նահանգային խորհրդարաններում (ստանալով 3208 տեղերից 2276-ը), գերակշիռ ներկայություն ձեռք բերելով նաև տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների (3193-ից՝ 1750) և քաղաքային մետրոպոլիաների ղեկավարների (16-ից՝ 12-ը) շրջանում:

ԱԶԿ իշխանության այս շրջանում սկսված լայնածավալ փոփոխությունները, որոնք անվանվում էին նաև թուրքիայի «արդիականացման չորրորդ փուլ», ուղեկցվում էր թուրքական հասարակության շրջանում պահպանողական տրամադրությունների աճով<sup>489</sup>:

<sup>486</sup> “Newsweek: *Irak Savaşı'nın gerçek galibi Türkiye*”, Hürriyet, 29.11.2009՝ <http://hurarxiv.hurriyet.com.tr/goster/ShowNew.aspx?id=13070619> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>487</sup> Համեմատության համար նշենք, որ, Համաշխարհային բանկի տվյալներով, մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքը 2002 թ. 3660 ԱՄՆ դոլարի դիմաց 2004 թ. հասել է 6040, իսկ 2017 թ.՝ 10546 ԱՄՆ դոլարի: Իսկ սղաճը 2002 թ. 37,5%-ի փոխարեն 2004 թ. նվազել է մինչև 12,4, իսկ 2017 թ.՝ մինչև 10,8%: Տե՛ս <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=TR> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>488</sup> ՏՀԶԿ եզրակացությունը 2004 թ. հոկտեմբերյան թուրքիայի վերաբերյալ՝ <http://www.oecd.org/eco/surveys/33821199.pdf> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>489</sup> Սոցիալադարձության համապատասխան տվյալները տե՛ս Çarkoğlu A., Toprak B., *Religion, Society and Politics in a Changing Turkey*, Istanbul, 2007, p. 84:



Թուրքիայի քաղաքական կյանքի համար նշանակալի իրադարձությունն դարձան 2007թ. նախագահական ընտրությունները: Գործող նախագահ Ահմեթ Նեջդետ Սեզերի լիազորությունների ժամկետի սպառվելուն (2007 թ. մայիսի 16) ընդամաք սկսեցին հայտարարվել թեկնածուների անունները: Ապրիլի 24-ին վարչապետ Էրդողանն իբրև ԱԶԿ պաշտոնական թեկնածու ներկայացրեց Աբդուլլահ Գյուլին: Դեռ մինչև հայտարարումն ու դրանից հետո էլ թուրքական քաղաքների փողոցներ էին դուրս եկել քեմալական աշխարհիկության հարյուր հազարավոր կողմակիցներ (այսպես կոչված՝ «Յանրապետական երթեր»):

Չունչացավ նաև թուրքական բանակի արձագանքը: Ապրիլի 27-ին ԹՁՈԲ պաշտոնական կայքում հայտնվեց BA 08/07 հուշագիրը (այն Ուրալ Աքբուլունթի միջոցով աշխարհին հայտնի դարձավ իբրև «*e-muhtıra*»<sup>490</sup>), որում շեշտվում էր բանակի՝ իբրև աշխարհիկության երաշխավորի դերը: Յենց նույն օրը Մեջլիսում սկսվեցին Թուրքիայի Յանրապետության նախագահի ընտրությունները: Յամաձայն ընթացակարգի առաջին երկու փուլերում հաղթանակի հասնելու համար անհրաժեշտ էր ստանալ ԹԱՄԺ ձայների 2/3-ը (550 տեղանոց Մեջլիսում՝ 367 քվե): Յաղթող չլինելու դեպքում երրորդ փուլում նոր նախագահին որոշելու էին պարզ մեծամասնությամբ (անհրաժեշտ էր 276 քվե): Ապրիլի 27-ին առաջին փուլի քվեարկությանը ընդդիմադիրների բոյկոտի պատճառով մասնակցեց միայն 357 պատգամավոր: Ուստի և մայիսի 1-ին Սահմանադրական դատարանը Յանրապետական ժողովրդական կուսակցության հայցով չեղյալ հայտարարեց առաջին քվեարկությունը (նշելով, որ ձայների 2/3-ը պահանջող քվեարկության համար քվորում ապահովվում է մեջլիսի պատգամավորների 2/3-ի ներկայության դեպքում միայն): Իսկ երբ մայիսի 6-ին կրկնակի քվեարկության ժամանակ կրկին քվորում ապահովվել չհաջողվեց, նախագահի թեկնածու Գյուլը հայտարարեց ինքնաբացարկի մասին<sup>491</sup>: Քանի որ թեկնածուների

<sup>490</sup> Yetkin M., *e-muhtıra erken seçimi gündeme taşıdı*, Radikal, 29.04.2007, <http://www.radikal.com.tr/haber.php?haberno=219781> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>491</sup> Gül, *adaylıktan çekiliyor...*, Milliyet, 06.05.2007, <http://www.milliyet.com.tr/2007/05/06/son/sonsiy06.asp> [հասանելի է՝ 07.03.2019]:

բացակայության պատճառով նոր նախագահի ընտրությունն չէր կայացել, գործող նախագահ Սեզերը շարունակեց պաշտոնավարել նաև լիազորությունների ժամկետի սպառվելուց հետո: Նույն ընթացքում ԱԶԿ-ականները Մեջլիսում նախաձեռնեցին սահմանադրական փոփոխություններ՝ նպատակ ունենալով ի թիվս այլ փոփոխությունների քվորում ապահովելու շեմն իջեցնել 1/3-ի ու այսուհետերկրի նախագահին ընտրելու ղղակի քվեարկությունամբ: Թեև նախագահը վետո կիրառեց օրինագծի վրա, սակայն ԱԶԿ-ին հաջողվեց խորհրդարանում երկրորդ քվեարկությունամբ հաղթահարել այն: Այլևս վետո կիրառելու հնարավորություն չունեցող Սեզերը, հուլիսի 15-ին հարկադրված հաստատելով փոփոխությունների փաթեթը, դիմեց Սահմանադրական դատարան՝ դրա օրինականությունը վիճարկելու հայցով: Թուրքիայի ՄԴ, սակայն, հուլիսի 5-ին սահմանադրական ճանաչեց նախագիծը: Այնուամենայնիվ, լիազորությունները վայր դնող նախագահը հասավ նրան, որ հանրաքվեն տեղի ունեցավ (և փոփոխությունները 68.95% «այո»-ով ընդունվեցին) 2007 թ. համապետական ընտրություններից հետո՝ հոկտեմբերի 21-ին:

Իսկ նման թոհուբոհի պայմաններում հուլիսի 22-ին կայացած խորհրդարանական արտահերթ ընտրություններում ԱԶԿ-ն ստացավ 16.327.291 քվե կամ ընտրության մասնակցածների ձայների 46,58%-ը: Արդյունքում Էրդողանի կուսակցակիցները Մեջլիսում զբաղեցրեցին տեղերի 62%-ը (341 մանդատ): Բացի ԱԶԿ-ից 23-րդ գումարման ԹԱՄԺ-ում տեղ գտան նաև Հանրապետական ժողովրդական (112 տեղ) և Ազգայնական շարժում (71 տեղ) կուսակցությունները<sup>492</sup>:

Օգոստոսի 13-ին, այն բանից հետո երբ Հանրապետական ժողովրդական կուսակցությունը արդեն հայտարարել էր նորընտիր խորհրդարանում նախագահի ընտրությունները չբոյկոտելու մասին, ԱԶԿ-ն կրկին իբրև նախագահի պաշտոնական թեկնածու ներկայացրեց Աբդուլլահ Գյուլին<sup>493</sup>: Այս երկրորդ

<sup>492</sup> Արդյունքներն ըստ՝ <http://electionresources.org/tr/assembly.php?election=2007&constituency=> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>493</sup> “Erdoğan: Adayımız Gül, hayırlı olsun”, NTV-MSNBC, 15.08.2007՝ <http://arsiv.ntvmsnbc.com/news/417188.asp> [հասանելի է՝ 07.03.2019]:

քվեարկությունը ընթացավ 3 փուլով (օգոստոսի 20-ին, 24-ին և 28-ին) ու հիմնական հավակնորդ Գյուլը, ստանալով քվեարկությանը մասնակցած 448 պատգամավորներից 339-ի ձայները, ընտրվեց Թուրքիայի Հանրապետության 11-րդ նախագահ: Արդեն հաջորդ օրը ձևավորվեց նաև ԱԶԿ նոր կառավարությունը՝ բնականաբար, կրկին Երդողանի գլխավորությամբ:

2007 թ. հետո ընդգծված բնույթ ստացան իշխանության կողմից՝ երկրի քաղաքական կյանքին Թուրքիայի ՉՌԲ միջամտության հնարավորության նվազեցմանն ուղղված գործողությունները: Դրանց շարքում առավել հնչեղը, այսպես կոչված «Երգենեքոնի»<sup>494</sup> գործով մի շարք աղմկահարույց ձերբակալություններն էին (պաշտոնաթող գեներալ Վելի Քյուլչուքի, իրավաբան, քաղաքական գործիչ Դողու Փերինչեքի, իրավաբան Քեմալ Քերինչսիզի, հրապարակախոս Իլհան Սելչուքի և այլոց) ու դրան հաջորդած հարյուրավոր մարդկանց մասնակցությամբ քրեական դատավարությունները<sup>495</sup>: ՉՌԲ ներսում հեղափոխական տրամադրություն ունեցող տարրերի բացահայտման իմաստով կարելի է գուգահեռներ անցկացնել այս զարգացումների և 1957-1958 թթ. այսպես կոչված «9 սպայի դեպքի»<sup>496</sup> (թրք.՝ «Dokuz Subay Olayı») միջև:

Ծայրահեղ քեմալականների ու չափավոր պահպանողականների հակամարտության տեսակետից պետք է հիշատակել Թուրքիայի Սահմանադրական դատարան ԱԶԿ գործունեությունը կասեցնելու մասին երկու հայցերը: Առաջինը կապված էր համալսարաններում գլխառոր կրելու

---

<sup>494</sup> Երգենեքոնը աշխարհիկ ծայրահեղականների գաղտնի կազմակերպություն է, որը մաս էր կազմում այսպես կոչված «խորքային պետությանը»: Ըստ թուրքական պաշտոնական տեղեկությունների, ի թիվս այլոց դրան հարել են թուրքական բանակի ու անվտանգության ուժերի մի շարք բարձրաստիճան սպաներ: Կազմակերպությունն իր անվանումը ստացել է Ալթայան լեռներում գտնվող առասպելական վայրի անունից, որը, ըստ լեգենդի, ապաստարան է ծառայել մոնղոլներից փախչող թուրքերի համար: Մանրամասն տե՛ս **Kaya S.**, *The Rise and Decline of the Turkish "Deep State": The Ergenekon Case*, Insight Turkey, vol. 11(4), pp. 99-113:

<sup>495</sup> ԱԶԿ իշխանության ընթացքում հետագայում ևս գինվորական միջամտությունների կանխանք միտված միջոցառումները շարունակվել են (օր.՝ «Վանդակ» (թրք.՝ «Kafes Operasyonu») և «Մեծ մուրճ» (թրք.՝ «Balyoz Harekâtı») գործողությունները):

<sup>496</sup> 1957 թ. բացահայտված ԹՀ ՉՌԲ միջին սպայակազմի կողմից նախապատրաստվող հեղաշրջման մասին մանրամասն տե՛ս **Ak G.**, *Dokuz Subay Olayı*, M. K. Kaynar (haz.), *Türkiye'nin 1950'li Yılları*, İstanbul, 2015, pp. 285-293:

արգելքը վերացնելու փորձերի հետ: Գլխավոր պետական դատախազ Աբդուրահման Յալչընքայայի հայցը Սահմանադրական դատարանը քննեց 2008 թ. հունիսի 30-ին ու ձայների միայնակ վաճառումն տարբերությամբ (6 կողմ, 7 դեմ) մերժեց ԱԶԿ-ն փակելու միջնորդությունը: Դատարանի որոշումը հասարակության կողմից ընկալվեց իբրև ԱԶԿ-ին տրված «ուղղվելու» հնարավորություն: Անկարայում ժողովրդական զանգվածների առջև ունեցած ելույթում ինքը Էրդողանը գոհունակությամբ նշեց. «Թուրքիայի ապագան արգելակող մի մեծ անորոշություն է վերացվել»<sup>497</sup>: Երկրորդը, որ երկրի գլխավոր դատախազության կողմից ներկայացվել էր դեռ մինչև կուսակցության իշխանության գալը, կապված էր հիմնադիրների իսլամական գաղափարներ դավանող ու արդեն փակված կուսակցությունների հետ ունեցած անմիջական առնչությունների հետ: Հարցը քննվեց միայն 2009 թ. հունիսի 9-ին ու դատարանն այս անգամ էլ մերժեց ԱԶԿ-ն փակելու հայցը<sup>498</sup>:

2007 թ. ընտրությունները եզրափակում են ԱԶԿ ինստիտուցիոնալ և գաղափարական կայացման փուլը: Դրանից հետո ԱԶԿ հասարակության ժողովրդավարացման և արդիականացման մղումը սկսում է աստիճանաբար մարել: Թուրք քաղաքագետ Մուրաթ Սոմերն այդ հանգամանքը բացատրում է նրանով, որ հասարակության ժողովրդավարական համախմբման փոխարեն ԱԶԿ վերնախավը նախընտրեց մինչև 2011 թ. ընկած ժամանակահատվածում կոնսուլիդացնել իր իշխանությունը<sup>499</sup>: 2011 թ. հաջորդող շրջանում Թուրքիայում հստակորեն դրսևորվում են ընտրական մենիշխանության («electoral authoritarianism») բոլոր հատկանիշները՝ ընդդիմության համար անհավասար խաղի կանոններ, մարդկանց հիմնարար ազատությունների ոտնահարումներ, վարչական ապարատի

<sup>497</sup> Տե՛ս **Tavernise S., Arsu S.**, *Turkish Court Calls Ruling Party Constitutional*, The New York Times, 31.07.2008, <https://www.nytimes.com/2008/07/31/world/europe/31turkey.html> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>498</sup> Թուրքիայի Սահմանադրական դատարանի՝ ԱԶԿ-ի նկատմամբ ունեցած դիրքորոշման վերաբերյալ մանրամասն տե՛ս՝ **Çakmak C., Dinç C.**, *Constitutional Court: Its Limits to Shape Turkish Politics*, Insight Turkey, vol. 12(4), 2010, pp. 69-92:

<sup>499</sup> Տե՛ս **Somer M.**, *Conquering versus democratizing the state: political Islamists and fourth wave democratization in Turkey and Tunisia*, Democratization, vol. 24(6), 2017, pp. 1025-1043:

ազդեցությունն ընտրական գործընթացի թափանցիկության վրա<sup>500</sup>: Ավելին, լուրջ կասկածներ են առկա 2015 թ. հետո տեղի ունեցած ընտրությունների արդյունքների արդարության նկատմամբ<sup>501</sup>: 2015 թ. հունիսի 7-ի, նոյեմբերի 1-ը ընտրությունների և հասկապես 2017 թ. սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ընթացքն ու արդյունքները խարխլում են 1950 թ. հետո թուրքիայում գործող արդար ընտրական գործընթացի ավանդույթը:

2016 թ. հունիսի 15-ի հեղաշրջման փորձը<sup>502</sup> ևս Երդոզանի և ԱԶԿ կողմից օգտագործվեց քաղաքական նպատակներով: Հստակ ապացույցների բացակայության պայմաններում՝ Գյուլենական շարժման նկատմամբ սկսված արշավը ծառայեցվեց պետական կառավարման և հանրային ծառայության տարբեր օղակներում կուսակցական իշխանության ամրապնդման նպատակին<sup>503</sup>: Ընդհանուր առմամբ, վերջին տարիների ԱԶԿ քաղաքականությունը, որը դրսևորվում է նաև ներքին եկամտի աղբյուրների նկատմամբ վերահսկողության հաստատմամբ կրում է ավելի ու ավելի ընդգծված նեոպատրիմոնիալ երանգավորում: պահպանողական, ազգայնական և ընտրական կողմնորոշման տեսակետից կայուն աջակիցները ծայրամասից մղվում են կենտրոն՝ բերելով նոր բուրժուազիայի ձևավորմանը: Այս կերպ Երդոզանը ձգտում է պահպանել

<sup>500</sup> Տե՛ս **White D., Herzog M.**, Examining State Capacity in the Context of Electoral Authoritarianism, Regime Formation and Consolidation in Russia and Turkey, Southeast European and Black Sea Studies, vol. 16(4), 2016, pp. 551–569: Ընտրական մենիշխանության վերաբերյալ մանրամասն տե՛ս նաև **Schedler A.**, *Electoral Authoritarianism: The Dynamics of Unfree Competition*, Boulder, 2006:

<sup>501</sup> Տե՛ս **Yilmaz I., Bashirov G.**, *The AKP after 15 years: emergence of Erdoganism in Turkey*, Third World Quarterly, vol. 39(9), pp. 1818.

<sup>502</sup> 2016 թ. հունիսի 15 լույս 16-ի գիշերը ԹՀ ԶՈՒ տարբեր ստորաբաժանումների բարձրաստիճան սպաներից բաղկացած «խաղաղություն և հայրենիքում» խորհուրդը (թրք.՝ «Yurtta Sulh Konseyi») թուրքիայի ՌՕՈՒ հրամանատար, բանակի գեներալ Աքըն Օզթյունը զլխավորությամբ փորձեց զենքի ուժով տապալել երկրում գործող իշխանությունը: Նախագահ Երդոզանի կոչով փողոցները ողողած քաղաքացիների ակտիվ մասնակցությամբ հեղաշրջման փորձը տապալվեց: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Taş H.**, *The 15 July abortive coup and post-truth politics in Turkey*, Southeast European and Black Sea Studies, vol. 18(1), 2018, pp. 1-19:

<sup>503</sup> «Amnesty international» միջազգային իրավապաշտպան կազմակերպության տվյալների համաձայն՝ հեղաշրջման փորձից հետո ԱԶԿ նախաձեռնած ակիքը «ավելի քան 100 հազար մարդու մասնագիտական ոչ նչացում էր»: Տե՛ս **Gardner A.**, *Turkey: “Professional annihilation” of 100,000 public sector workers in post-coup attempt purge*, Amnesty International, 22.05.2017, <https://www.amnesty.org/en/latest/news/2017/05/turkey-professional-annihilation-of-100000-public-sector-workers-in-post-coup-attempt-purge/> [հասանելի է՝ 07.03.2019]:

պահ պանողակ ան և հավատացյալ ընտրագանգվածի նկատմամբ վերահսկողությունը<sup>504</sup>:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ թուրքական պահ պանողակ մտքի վերադրսևորումը «Արդարություն և զարգացում» կուսակցության միջոցով աստիճանաբար հանգեց ժողովրդավարության աղճատման և ավտորիտար ռեժիմի ձևավորման: Այսպես կոչված «Էրդոզանիզմը» դրսևորվում է ընտրական մենիշխանության ընտրական համակարգի, նեոպատրիմոնիալ տնտեսական համակարգի, պոպուլիստական քաղաքական ռազմավարության, իսլամիստական քաղաքական գաղափարախոսության տեսքով<sup>505</sup>: Այդ ամենը պատվում է քաղաքական գաղափարախոսության պաշտոնական «փաթեթավորմամբ», հանրությանը ներկայացվում իբրև պահ պանողակ ժողովրդավարություն:

### **3.2. Պահ պանողակ ժողովրդավարությունն իբրև ԱԶԿ պաշտոնական գաղափարախոսություն**

Չնայած «Արդարություն և զարգացում» կուսակցությունն ու դրա առաջնորդ Ռեջեփ Թայիփ Էրդոզանը քաղաքական ուժի ձևավորման պահից ևեթ չէին թաքցնում իրենց հավակնությունները, ԱԶԿ վերնախավը միառժամանակ խուսափում էր սեփական գաղափարական ուղղվածությունը հստակորեն տարրոշելուց<sup>506</sup>: Էրդոզանի վաղ շրջանի ելույթները անուղղակիորեն մատնանշում են նորաստեղծ կուսակցության շարքերում քաղաքական ինքնության որոնումների և գաղափարական համադրականության որոշ դրսևորումներ: Այս համատեքստում հատկապես բնութագրական է հնչում նրա հետևյալ միտքը. «Աթաթյունը քից սկսած՝ Ինյունյունի, Մենդերեսի, Էջևիթի, Դեմիրելի, Չիլերի, Յըլմազի, Էրբաքանի դրական կողմերը միավորելով՝ ցանկանում եմ

<sup>504</sup> Տե՛ս Yildirim A.K., *Muslim Democratic Parties in the Middle East: Economy and Politics of Islamist Moderation*, Bloomington, 2017, pp. 73-128:

<sup>505</sup> Տե՛ս Yilmaz I., Bashirov G., *The AKP after 15 years: emergence of Erdoganism in Turkey*, pp. 1824-1825:

<sup>506</sup> Տե՛ս Fedayi C., *AKP'nin Siyasal Kimliği Üzerine: Kimlik Arkadan Gelsin*, Muhafazakâr Düşünce, sayı 1(1), 2004, s. 151:

ստեղծել մի նոր քաղաքականություն»<sup>507</sup>: 2002 թ. Թուրքիայի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին ԱԶԿ-ականների քաղաքական բառապաշարում մի շարք այլ ձևակերպումների թվում պարբերաբար հանդիպում էին նաև «ժողովրդավարություն» և «պահպանողականություն» եզրերը<sup>508</sup>: Սակայն միայն իշխանության գալուց հետո էլ այն զանգվածներին ներկայացվում գրավոր մի տեքստ, որն, ըստ էության, կուսակցության քաղաքական ինքնության հռչակագիրն էր: 2003 թ. վարչապետ Երդոհանի ներածական խոսքով լույս է տեսնում նրա քաղաքական խորհրդական Յալչըն Աքդոհանի «Պահպանողական ժողովրդավարություն» աշխատությունը<sup>509</sup>: Այն ազատական պահպանողականության դիրքերից<sup>510</sup> տեսական հիմնավորումներ էր բերում՝ ըստ էության վերհանելով ԱԶԿ քաղաքական ինքնության բաղադրատարրերը:

2004 թ. հունվարի 15-ին, Ելույթ ունենալով «Պահպանողականություն և ժողովրդավարություն» միջազգային սիմպոզիումի ամբիոնից, Երդոհանը նշում է, որ իրենց պահպանողական ժողովրդավարությունը հիմնված է հասարակության մեծ մասի ցանկության վրա, այն է՝

- «արդիականացում, որը չի բացառում ավանդույթները,
- համընդհանրության, որն ընդունում է տեղայնականը,
- ռացիոնալության, որը չի մերժում աստվածային իմաստը,
- փոփոխության, որը ծայրահեղական չէ»<sup>511</sup>:

Թվարկված այս տարրերի ներդաշնակ համադրության որոնումը թուրքական քաղաքական մտքի համար ամենևինև նոր չէ: Քեմալական շրջանի հանրապետական պահպանողականության

<sup>507</sup> Çakır R., Çalmuk F., Recep Tayyip Erdoğan: Bir Dönüşüm Öyküsü, İstanbul, 2001, ss. 178-179.

<sup>508</sup> Ինքն Երդոհանը «պահպանողական ժողովրդավարություն» եզրն ի թիվս այլնի կիրառել է կուսակցության հիմնումից գրեթե անմիջապես հետո, օրինակ՝ 2001 թ. սեպտեմբերի 13-ին՝ ՌԴ դեսպան Ալեքսանդր Լեբեդևի հետ հանդիպման ժամանակ: Տե՛ս Erdoğan: AKP din eksenli bir parti değil, Hürriyet, 13.09.2001, <http://www.hurriyet.com.tr/gundem/erdogan-akp-din-eksenli-bir-parti-degil-15612> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>509</sup> Տե՛ս Akdoğan Y., Muhafazakar Demokrasi, Ankara, 2003:

<sup>510</sup> Տե՛ս Bora T., AKP ve Muhafazakâr Demokratlığın Sınırları, Karizma, sayı 5(17), 2004, s. 38:

<sup>511</sup> Erdoğan R.T., Ülke Konuşmaları: 2003-2007, Ankara, 2008, ss. 286-287.

հայ տնի գաղափարախոս Փեյ ամի Սաֆայի խոսքերով՝ Թուրքիայի աշխարհագրությունը ու պատմությունը պարտադրում են «սրտով կապվել Արևելքի, մտքով՝ Արևմուտքի հետ, հավատալ ինչ պես արևելքի՝ մտածել ով ինչ պես արևմուտքի»<sup>512</sup>:

Այսօր՝ Թուրքիայում իշխող քաղաքական ուժի ստեղծումից 18 տարի անց էլ, անկախորոշ ու սուլմնասիրողների կողմից ԱԶԿ-ին տրվող արդարացի և չարդարացված բնութագրումներից («իսլամական ժողովրդավարներ»<sup>513</sup>, «իսլամամետներ»<sup>514</sup>, «նեոիսլամիստներ»<sup>515</sup>, «նեոօսմանիստներ»<sup>516</sup>, «նեոֆաշիստներ»<sup>517</sup> և այլն), «պահպանողական ժողովրդավարությունը» շարունակում է համարվել կուսակցության քաղաքական ինքնության գոնե թե պաշտոնական հիմքը<sup>518</sup>: Այս ողջ ընթացքում ԱԶԿ գաղափարախոսությունը ներկայացվել է իբրև «քաղաքական նոր փիլիսոփայություն և ոճ»<sup>519</sup>: Այս համատեքստում ուշագրավ է կուսակցության առաջին համագումարի ընթացքում Ռ. Թ. Էրդողանի ելույթի հետևյալ հատվածը. «Իբրև «պահպանողական ժողովրդավար» ներկայացող մեր կուսակցությունը, պահպանողական մտքի և քաղաքական գործընթացների միջև ամուր հանգուցակետեր ստեղծելով, Թուրքիայի առջև միանգամայն նոր քաղաքական մի հեռանկար է առաջադրել»<sup>520</sup>: Ընդունված է համարել, որ այդ փիլիսոփայությունը համադրում է արևմտյան հայացքները թուրքական արժեքների հետ<sup>521</sup>:

<sup>512</sup> Safa P., *Din, İnkılap, İrtica*, İstanbul, 1999, s. 87.

<sup>513</sup> Տե՛ս, օրինակ, Tepe S., *Turkey's AKP: A Model 'Muslim-Democratic' Party?*, Journal of Democracy, vol. 16(3), 2005, pp. 69–82:

<sup>514</sup> Տե՛ս, օրինակ, Kirdiş E., Drhimeur A., *The rise of populism? Comparing incumbent pro-Islamic parties in Turkey and Morocco*, Turkish Studies, vol. 17(4), 2016, pp. 599-617:

<sup>515</sup> Տե՛ս, օրինակ, Bora A., Çalışkan K., *What is Under a Headscarf? Neo-Islamist vs. Kemalist Conservatism in Turkey*, The Arab Studies Journal, vol. 15/16(2/1), 2007-2008, pp. 140-155:

<sup>516</sup> Տե՛ս, օրինակ, Volfová G.Ö., *Turkey's Middle Eastern Endeavors: Discourses and Practices of Neo-Ottomanism under the AKP*, Die Welt des Islams, vol. 56(3-4), 2016, pp. 489-510:

<sup>517</sup> Տե՛ս, օրինակ, Demir F., *From Islamic Renaissance to Neo-fascism in Turkey*, Review of Middle East Studies, vol. 50(2), 2017, pp. 186-194:

<sup>518</sup> ԱԶԿ «պահպանողական-ժողովրդավար» լինելու փաստը, ի թիվս այլնի, ամրագրված է նաև կուսակցության՝ Թուրքիայի Հանրապետության 100-ամյակին ընդառաջ ընդունված «2023 քաղաքական տեսլական» հռչակագրի առաջին պարբերությունում: Տեքստը տե՛ս ԱԶԿ պաշտոնական կայքում՝ <https://www.akparti.org.tr/parti/2023-siyasi-vizyon/> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>519</sup> Çağliyan-İçener Z., *The Justice and Development Party's Conception of "Conservative Democracy": Invention or Reinterpretation?*, s. 597.

<sup>520</sup> Տե՛ս Günel E., *Türkiye'de Siyasal Partiler ve Güncel Sorunları*, Ankara, 2006, ss. 266-267:

<sup>521</sup> Հետաքրքրական է ներկայումս ընդդիմադիր ժողովուրդների ժողովրդավարական կուսակցությունից ԹԱՄԺ պատգամավոր, ԱԶԿ հիմնադիր փոխնախագահ (2001-2008 թթ.) Դենգիր Միր Մեհմեթ Ֆըրաթի ձևակերպումը, թե



Պահպանողական ժողովրդավարուն թյան առանձնահատկություններինց մեկը արևմտականացմանն ընթացքում փոփոխություններին ու դրան գուգահեռ քաղաքական նատիվիզմի համադրման հնարավորությունն հարցն է: Թուրքական նատիվիզմը ենթադրում է երկրի կյանքի մի շարք կոնցեպտուալ գործոնների (ժողովրդավարական արժեքներ, ազատ շուկա, աշխարհիկություն, ազգայնականություն և այլն) մեկնաբանումն ազգային արժեքների և կրոնի տեսակետից<sup>522</sup>: Եթե Երբաքանի և «Ազգային տեսակետի» նատիվիզմը խարսխված էր հակաարևմտականություն վրա՝ իբրև «ազգային տեսակետի» ինքնություն բնորոշիչ, ապա ԱԶԿ-ն, մերժելով հակաարևմտականությունը, հստակ դեր է հատկացնում նատիվիզմի սեփական պատկերացմանը: Երդողանի խոսքերով՝ «ԱԶԿ-ն առաջ է քաշում նոր պահպանողական ժողովրդավարություն, որը համապատասխան է պահպանողականության գեներին ու պատմական օրենքներին, բայց և հենվում է այն վայրի պատմական և մշակութային ավանդույթների վրա, որտեղ դրսևորվում է»<sup>523</sup>:

Միաժամանակ, պետք է հաշվի առնել, որ հակառակ ժողովրդավարուն արևմտեվրոպական մոդելների, թուրքական ընտրագանգվածի համար կուսակցության խարիզմատիկ առաջնորդն ավանդաբար անհամեմատ ավելի էական է, քան դրա քաղաքական ինքնությունը: Այս հանգամանքը 20-րդ դարի երկրորդ կեսից մշտապես Թուրքիայի քաղաքական զարգացումների առանցքում է եղել: Ինչպես նշում է Ջեմ Էրօղուլը, 1950 թ. ընտրությունների ժամանակ ևս ժողովրդավարական կուսակցության նշանակալիորեն ավելի ազատական և ժողովրդավարական ծրագիրը գտնվում էր դրա առաջնորդների կերպարի ստվերում<sup>524</sup>: Ժամանակի որոշ

---

կուսակցության քաղաքական ինքնությունը «պահպանողականության ու ժողովրդավարուն սինթեզ է, որ կապում է ավանդական թուրքական արժեքները և եվրոպական պահպանողականության տարրերը»: Տե՛ս Genel Başkan Yardımcısı Dengir Mir Mehmet Fırat, Uluslararası Muhafazakarlık ve Demokrasi Sempozyumu, İstanbul, 2004, s. 20:

<sup>522</sup> Տե՛ս **Yavuz H.**, *Modernleşen Müslümanlar: Nurcular, Nakşiler, Milli Görüş ve AK Parti*, İstanbul, 2005, s. 15:

<sup>523</sup> **Erdoğan R.T.**, *Ülke Konuşmaları: 2003-2007*, ss. 286-287.

<sup>524</sup> Տե՛ս **Eroğul C.**, *Demokrat Parti*, Ankara, 1970, s. 13:

ուսու մնասիրողներ վաղ շրջանի Էրդողանին համարում էին անգամ Մենդերեսի, («Քարաջաօղլանի» շրջանի) Էջևիթի, (1960-ականների շրջանի) Դեմիրելի և Օզալի յուրահատկությունները համադրող մի կերպար<sup>525</sup>: Կարելի է համաձայնել, որ կար նախ «Թայիփը», հետո ծնվեց ԱՉԿ-ն, ապա՝ «պահպանողական ժողովրդավարությունը»<sup>526</sup>:

Թեև սեփական գաղափարախոսությունն ԱՉԿ-ականների կողմից ներկայացվում է իբրև լիովին նոր և բացառիկ քաղաքական ֆենոմեն, դրա շուրջ դիսկուրսում օգտագործվող փաստարկներն ու բառապաշարը ամբողջովին տեղավորվում են թուրքական պահպանողական մտքի շրջանակում: ԱՉԿ կազմավորման շրջանում «Չաման» պարբերականի սյունյակագիրներից մեկի բնորոշմամբ՝ «պահպանողական ժողովրդավարությունն ԱՉԿ կողմից ներմուծված նորարական ֆենոմենն է, պատմական է, ներկայացնում է 1946 թ. [բազմակուսակցական քաղաքական համակարգի անցնելուց, — Ա. Գ.] ի վեր թուրքական ժողովրդավարության պատմության հիմնական երակներից մեկը»<sup>527</sup>: Ավելին, գուտ գաղափարական բաղադրիչի առումով Էրդողանի գլխավորած կուսակցությունը մայրցամաքային Եվրոպայի պահպանողական ավանդույթից ավելի կրում է հանրապետական շրջանի մտածողների Մեհմեթ Աքիֆ Էրսոյի և Նեջիփ Ֆազըլ Քըսաթյուրեքի<sup>528</sup> ազդեցությունը<sup>529</sup>:

Պահպանողական ժողովրդավարության կայացման հիմնական գաղափարական խոչընդոտը դրա՝ քեմալականության 6

<sup>525</sup> Տե՛ս **Yalsızuçanlar S.**, *İslamcı/Milliyetçi/Sağ Siyaset'in yeni adı: Muhafazakâr Demokrasi*, Karizma, sayı 17, 2004, s. 16:

<sup>526</sup> Տե՛ս **Fedayi C.**, *AKP'nin Siyasal Kimliği Üzerine: Kimlik Arkadan Gelsin*, s. 155:

<sup>527</sup> **Dayı İ.D.**, *AK Parti: Müslüman Demokrat Mı Muhafazakar Demokrat Mı?*, Uluslararası Muhafazakarlık ve Demokrasi Sempozyumu, s. 307.

<sup>528</sup> Երկու հեղինակները պարբերաբար մեջբերվում և արժևորվում են Էրդողանի հրապարակային ելույթներում: Տե՛ս, օրինակ, *Cumhurbaşkanı Erdoğan: Mehmet Akifi geleceğe taşımalyız*, Sabah, 26.12.2018, <https://www.sabah.com.tr/gundem/2018/12/26/cumhurbaskani-erdogan-mehmet-akifi-gelecege-tasimaliyiz> [հասանելի է՝ 07.03.2019]: *Cumhurbaşkanı Erdoğan Necip Fazıl'ın hitabesini okudu!*, Sabah, 11.05.2018, <https://www.sabah.com.tr/gundem/2018/05/11/cumhurbaskani-erdogan-necip-fazilin-o-siirini-okudu> [հասանելի է՝ 07.03.2019]: Որոշ հեղինակներ Նեջիփ Ֆազըլին համարում են անգամ Էրդողանի գաղափարական «մուսան»: Տե՛ս **Singer S.R.**, *Erdogan's Muse: The School of Necip Fazil Kisakurek*, World Affairs, vol. 176(4), 2013, pp. 81-88:

<sup>529</sup> Տե՛ս **Uluçakar M.**, *Muhafazakâr Demokrasi Söylemi Üzerine Bir İnceleme*, Alternatif Politika, sayı 10(3), 2018, s. 363:

հիմնասյուներից աշխարհիկոլոթյանը չհամապատասխանելու վերաբերյալ մեղադրանքներին հակադարձելն էր<sup>530</sup>: Այդ ճանապարհին ԱԶԿ-ն մշտապես շեշտադրել է «*laikçilik*»-ը (գաղափարախոսական աշխարհիկոլոթյուն) «*laiklik*»-ից (իրական աշխարհիկոլոթյուն) տարբերելու անհրաժեշտությունը՝ կրոնի և պետության որակական տարանջատման ամերիկյան (չեզոք) մոդելի համանմանությունամբ<sup>531</sup>: Աբդոդանը նույնպես շեշտում է, որ պահպանողական ժողովրդավարությունը չի ընդունում աշխարհիկոլոթյան՝ իբրև քաղաքական գործիքի կիրառումը<sup>532</sup>: Այս տեսակետից ուշագրավ է թուրք քաղաքագետ Թանըլ Բորայի տեսակետը, թե. «*ազգայնականությունը, պահպանողականությունն ու իսլամականությունը ոչ թե դիրքորոշում են, այլ վիճակներ, ճիշտ ֆիզիկայի նյութի վիճակների նման՝ պինդ, գազային, հեղուկ: Ազգայնականությունը, պահպանողականությունն ու իսլամականությունը թուրքական աջերի տարբեր վիճակներն են, որոնք կարող են փոխակերպվել մեկը մյուսի»<sup>533</sup>: Ավելին, անգամ իսլամն ու հանրապետական աշխարհիկոլոթյունը պետք է դիտարկել իբրև «*նույն պատմական ընդհանրության տարբեր համակյաց հատվածներ*»<sup>534</sup>:*

Հիմնադրման պահից նաքշիբենդի սուֆիական միաբանության հետ սերտ առնչություն ունեցող<sup>535</sup> ԱԶԿ գաղափարական այս համակցությունը ոմանց կողմից մեկնաբանվում էր անգամ իբրև «թաքիայի» դրսևորում<sup>536</sup>: Սա

<sup>530</sup> Երդոդանն իր հրապարակային գործունեության վաղ շրջանում հայտնի էր դեռ 1990-ականների սկզբին հնչեցրած սկանդալային «*Ա՛ աշխարհիկ, Ա՛ մուսուլման չեն լինում*» (թրք.՝ «*Hem laik hem Müslüman olunmaz*») արտահայտությունով:

<sup>531</sup> Տե՛ս **Kaboğlu İ.Ö.**, *Laiklik ve Demokrasi*, Ankara, 2001, s. 175-178.

<sup>532</sup> Տե՛ս **Akdoğan Y.**, *Muhafazakar Demokrasi*, s. 132:

<sup>533</sup> **Bora T.**, *Türk Sağının Üç Hâli: Milliyetçilik, Muhafazakârlık, İslâmcılık*, İstanbul, 1999, s. 8.

<sup>534</sup> Տե՛ս **Yavuz H.**, *Introduction: The Role of the New Bourgeoisie in the Transformation of the Islamic Movement*, in Yavuz M.H. (ed.), *The Emergence of New Turkey*, p. 8.

<sup>535</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Քարաջյան Ա., Մարտիրոսյան Ա., Թուրքիայում իշխող Արդարություն և զարգացում կուսակցության և նաքշբանդիա սուֆիական տարիկաթի փոխադարձերություններին շոք, ԵՊՀ ԲՄԿՎ վերլուծական տեղեկագիր, հ. 5, 2010, էջ 84-101:**

<sup>536</sup> Տե՛ս, օրինակ, *Erdogan takiyeci*, *Hürriyet*, 01.06.2008, <http://www.hurriyet.com.tr/gundem/erdogan-takiyeci-9069938> [հասանելի է՝ 07.03.2019]: Թաքիան (արաբ.՝ تقيية, թրք.՝ takiye) արտաքին միջավայրից սպառնացող վտանգի պայմաններում մուսուլմանի կողմից սեփական հավատքն առերես ուրանալու երևույթն է: Տե՛ս **Strothmann R.**, “*Takīyya*”

ցույց է տալիս, որ լիբերալ ժողովրդավարության և իսլամական պահպանողականության միջև ընկած<sup>537</sup> գաղափարախոսությունն ԱՉԿ-ին «ռեալ պոլիտիկի» տարբեր իրավիճակներում ազատորեն մանևրելու հնարավորությունն էր ընձեռում: Ընդ որում, պահպանողական ժողովրդավարության սահմանները էրդոզանի և կողմնակիցների իշխանության տարբեր տարիներին նշանակալիորեն տարբերվել են: Որպես ԱՉԿ ներսում գաղափարախոսական խզման պայմանական սահման կարելի է ընդունել 2007 թ. հուլիսյան համապետական ընտրությունները: Եթե մինչ այդ պահպանողական ժողովրդավարությունը հանդես էր գալիս իբրև թուրքական տարրասեռ հասարակությունը միավորելու խորհրդանիշ (օգտագործելով այնպիսի հասկացություններ ինչպիսիք են՝ «համաշխարհայնություն», «հանդուրժողականություն», «երկխոսություն», «Եվրոպա» և այլն), ապա դրանից հետո այն դարձավ տարամերժողականության և ավտորիտարիզմի քարոզի գործիք (հասարակությունը բաժանելով «մենք»-ի և «նրանք»-ի)<sup>538</sup>:

Ամփոփելով նշենք, որ 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձից հետո կայուն քայլերով հակաժողովրդավարական պոպուլիզմի<sup>539</sup> ուղին բռնած թուրքիայում գաղափարախոսությունները մղվել են քաղաքական գործողությունների ետևաբեմ: Կարծիքներ են հնչում անգամ, որ այսուհետ «էրդոզանականություն» է թուրքիայի պաշտոնական գաղափարախոսությունը<sup>540</sup>: Իսկ ԱՉԿ պաշտոնական քաղաքական ինքնությունն համարվող պահպանողական ժողովրդավարությունը, իր ստեղծման պահից հարմարեցված լինելով արդեն իսկ գոյություն ունեցող կուսակցությանը և

in Bearman P.J., Bianquis Th., Bosworth C.E., Donzel E. van and W. P. Heinrichs (eds.), *Encyclopaedia of Islam*, 2<sup>nd</sup> ed., vol. 10, Leiden, 2000, pp. 134-136.

<sup>537</sup> Թոմաս Սմիթս այդ համակցությունը դիպուկ կերպով բնորոշում է իբրև դրոնություն «Ալլահի և Աթաթյոն ռեքի միջև»: Տե՛ս **Smith W.T.**, *Between Allah and Atatürk: Liberal Islam in Turkey*, *The International Journal of Human Rights*, vol. 9(3), 2005, pp. 307–325.

<sup>538</sup> Տե՛ս **Alpan B.**, *From AKP's 'Conservative Democracy' to 'Advanced Democracy': Shifts and Challenges in the Debate on 'Europe'*, *South European Society and Politics*, vol. 21(1), 2016, pp. 15-28:

<sup>539</sup> Տե՛ս **Rogenhofer J.M.**, *Antidemocratic Populism in Turkey after the July 2016 Coup Attempt*, *Populism*, vol. 1(2), 2018, pp 116-145:

<sup>540</sup> Տե՛ս **Akyol M.**, “Erdoganism [noun]”, *Foreign Policy*, 21.07.2016, <https://foreignpolicy.com/2016/06/21/erdoganism-noun-erdogan-turkey-islam-akp/> [հասանելի է՝ 07.03.2019]: Տե՛ս նաև **Yilmaz I., Bashirov G.**, *The AKP after 15 years: emergence of Erdoganism in Turkey*:

դրա առաջնորդին, ներկայումս հիշեցնում է լոկ «դատարկ խորհրդանիշ»<sup>541</sup>: Իրականում, սակայն, Թուրքիայի պարագայում գործունենք կառավարող ժողովրդավարության հետ, երբ ժողովրդավարական ինստիտուտներն օգտագործվում են ամբողջատիրական ռեժիմի իշխանությունը լեգիտիմացնելու համար<sup>542</sup>:

### 3.3. Մենդերեսի կերպարը ժամանակակից Թուրքիայի հասարակական-քաղաքական հոլովույթում

1961 թ. սեպտեմբերի 17-ին, երբ Թուրքիայի առաջին ազատ ընտրություններով ընտրված վարչապետ Ադնան Մենդերեսը կախաղան բարձրացվեց, ԹՀ գործող նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ընդամենը 7 տարեկան էր: Ավելի ուշ նավերի իշխում էր, թե ինչպես էր իր հայրը՝ Ահմեթ Էրդողանն արտասվում մահապատժի մասին տեղեկանալուց հետո<sup>543</sup>՝ պնդելով, որ այդ «տխրությունն է քաղաքականությունը գրավիչ դարձրել իր համար»<sup>544</sup>:

Հանրային հիշողության պարզագույն վերացարկումներն անգամ փաստում են, որ այն միահյուսված է ներկայի քաղաքականության հետ: Նախորդ դարասկզբին \$րանսիացի սոցիոլոգ Մորիս Ալբլաքսը գրում էր. «անցյալը չի պահպանվում, այն վերստեղծվում է իրականության հիմքի վրա»<sup>545</sup>: 1960 թ. ռազմական հեղաշրջումը և հաջորդող Յասսըադայի

<sup>541</sup> Դատարկ, բովանդակչություն և չունեցող խորհրդանիշի քաղաքագիտական ներկայիմաստավորման համար տե՛ս **Wullweber J.**, *Global politics and empty signifiers: the political construction of high technology*, Critical Policy Studies, vol. 9(1), 2014, pp. 78-96:

<sup>542</sup> Կառավարող ժողովրդավարության վերաբերյալ մանրամասն տե՛ս **Lippmann W.**, *Public Opinion*, London, 1992 և **Bernays E.L.**, *Crystallizing Public Opinion*, New York, 1923:

<sup>543</sup> «Այն օրերին մի նկար կար, մի լուսանկար՝ Մենդերեսը՝ ձեռքերը հետևում կապած, մահապատժի շապիկով քայլելիս: Այն ժամանակ «Կյանք» խորագրով մի ամսագիր կար... Հայրս տուն էր բերել դրա այն համարը, որում մահապատժի լուսանկարներն էին, հետո դատարանի վճիռը և այլն... Այն ժամանակ ես իհարկե այդ ամենը շատ լավ չէի հասկանում: Քայց դեպի մահապատժ քայլող նման մի մարդ կար, կար հորս ու մորս զգացմունքային վիճակը, տանը հոլզմունք կար»: Տե՛ս Erdoğan anlatıyor, Radikal, 18/11/2002, <http://www.radikal.com.tr/politika/erdogan-anlatiyor-651686/> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>544</sup> Տե՛ս **Deborah S.**, *The Erdogan Experiment*, New York Times, 11.05.2019, <https://www.nytimes.com/2003/05/11/magazine/the-erdogan-experiment.html> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>545</sup> Տե՛ս **Halbwachs M.**, *On Collective Memory*, ed. by L.A. Coser, Chicago, 1992, p. 39

դատավարու թյուր ներքին, լինելով թուրքական հասարակության չսպիացած վերքերից մեկը, շարունակ տեղ են գտել Էրդոհանի հանրային ելույթներում: Պատահական չէ, որ 2014 թ. Էրդոհանի` Թուրքիայի 12-րդ նախագահ ընտրվելուց հետո երկրի նախագահի պաշտոնական կայքում այս կամ այն կերպ Մենդերեսին անդրադարձող հրապարակումների թիվն արդեն գերազանցել է 200-ը<sup>546</sup>:

Այդ անդրադարձների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում յուրաքանչյուր տարի Մենդերեսի մահապատժի օրը հրապարակվող նախագահական ուղերձները<sup>547</sup>: Դրանցում Մենդերեսը ներկայացվում է իբրև առաջնորդ, «որը հավատով աշխատել է Թուրքիայի ժողովրդավարացման, գործնական, զարգացման և առաջադիմության համար, կյանքը նվիրել մեր սրբազան ազգի բարձրացմանը` անջնջելի հետք թողնելով նրա կյանքում»: Իսկ 1960 թ. ռազմական հեղաշրջման նկատմամբ Էրդոհանի վերաբերմունքը միանշանակ է. «սադրանքներով մայիսի 27-ի հեղաշրջման համար հող նախապատրաստողներն ու հանգուցյալ Մենդերեսին և ընկերներին հեղաշրջման դատարաններում անհրավ և անօրինական կերպով դատողները մեր ազգի խղճի կողմից են դատապարտվել»<sup>548</sup>:

Էրդոհանի հրապարակային ելույթներում Մենդերեսն ու նրա ժամանակն օգտագործվում են ժամանակակից Թուրքիայի ներքաղաքական զարգացումները մեկնաբանելու և արդարացնելու նպատակով: 2014 թ. սեպտեմբերի 18-ին, օրինակ,

<sup>546</sup> Տե՛ս համապատասխան որոնման արդյունքները ԹՅ նախագահի պաշտոնական կայքում` <https://www.tccb.gov.tr/Search?s=Menderes&p0=Menderes&p1=-410--365--356--353--1709--1695--355--354-&p2=28.08.2014&p3=27.05.2019&sT=1&langText=tr&presidentId=12> [հասանելի է` 07.03.2019]:

<sup>547</sup> Տե՛ս *Adnan Menderes'in Vefat Yil Dönümü*, T.C. Cumhurbaşkanlığı resmi sitesi, 17.09.2014, <https://www.tccb.gov.tr/basin-aciklamalari/365/1644/adnan-menderesin-vefat-yil-donumu> [հասանելի է` 07.03.2019], *Adnan Menderes'in Vefat Yil Dönümü Dolayısıyla Yayınladıkları Mesaj*, T.C. Cumhurbaşkanlığı resmi sitesi, 17.09.2015, <https://www.tccb.gov.tr/basin-aciklamalari/365/35385/adnan-menderesin-vefat-yil-donumu-dolayisiyla-yayinladiklari-mesaj> [հասանելի է` 07.03.2019], *Adnan Menderes'in Vefat Yil Dönümü*, T.C. Cumhurbaşkanlığı resmi sitesi, 17.09.2016, <https://www.tccb.gov.tr/basin-aciklamalari/365/51328/adnan-menderesin-vefat-yil-donumu> [հասանելի է` 07.03.2019], *Adnan Menderes ile Fatin Rüştü Zorlu ve Hasan Polatkan'ın İdam Edilmelerinin Yıldönümü*, T.C. Cumhurbaşkanlığı resmi sitesi, 16.09.2017, <https://www.tccb.gov.tr/basin-aciklamalari/365/83492/adnan-menderes-ile-fatin-rustu-zorlu-ve-hasan-polatkanin-idam-edilmelerinin-yildonumu> [հասանելի է` 07.03.2019], *Adnan Menderes ile Fatin Rüştü Zorlu ve Hasan Polatkan'ın İdam Edilmelerinin Yıldönümü*, T.C. Cumhurbaşkanlığı resmi sitesi, 16.09.2018, <https://www.tccb.gov.tr/basin-aciklamalari/365/98592/adnan-menderes-ile-fatin-rustu-zorlu-ve-hasan-polatkan-in-idam-edilmelerinin-yildonumu> [հասանելի է` 07.03.2019]:

<sup>548</sup> Տե՛ս նույն տեղը:

Թուրքիայի արդյունաբերողների և գործարարների միության (թրք.՝ «TÜSİAD») բարձրագույն խորհրդակցական ժողովի առջև ելույթ ունենալիս Թուրքիայի նախագահը հայտարարում էր. «Յավատացե՛ք՝ եթե Գեզիի դեպքերի<sup>549</sup> ժամանակ կոչում դիրքորոշում չորդեգրեինք, ապա այսօր լիովին այլ Թուրքիայում կապրեինք: Նույնը նաև դեկտեմբերի 17-25-ի հեղաշրջման<sup>550</sup> փորձի ժամանակ... Թուրքիայում այսպիսի մի համակարգ, այսպիսի շրջապտույտ է ստեղծվել, որ ամեն անգամ, երբ գործերը լավ են ընթանում, երբ բոլորի համար շահավետ ժամանակաշրջան է սկսվում, հեղաշրջում, միջամտություն է տեղի ունենում, ճգնաժամ է սկսվում: Թուրքիան սա մի քանի անգամ է վերապրել՝ կրկին ու կրկին: Յիշե՛ք հանգուցյալ Մենդերեսի գլխավորած կառավարությունը, ում մահապատժի տարելիցն էր երեկ, տնտեսությունը զարգացնում էր, բարգավաճումը տարածում հասարակության բոլոր շերտերի շրջանում: Նման պահին խառնակություններ սկսվեցին փողոցներում, թերթերի խորագրերը քառս էին տարածում, տնտեսական որոշ կասկածելի գործարքներ էին կատարվում: Ամենավերջում էլ գինվորական հեղաշրջում իրականացնելով կառավարությունը տապալեցին»<sup>551</sup>: Երդողանն իբրև Մենդերեսի քաղաքական երազանքի իրականացում էր ներկայացնում

<sup>549</sup> 2013 թ. մայիս-օգոստոս ամիսներին Ստամբուլի Գեզի այգու քաղաքաշինական ծրագրի դեմ հասարակական բողոքի գործողություններից սկսված դժգոհության ալիք, որը տարածվել էր ողջ Թուրքիայով: Ցուցարարների և ոստիկանական ուժերի բախման արդյունքում զոհվել էր 22, վիրավորվել 8000-ից ավելի մարդ: Մանրամասն տե՛ս **Göle N., Gezi – Anatomy of a Public Square Movement**, Insight Turkey, vol. 15(3), 2013, pp. 7-14, **Yardımcı-Geyikçi Ş., Gezi Park Protests in Turkey: A Party Politics View**, The Political Quarterly, vol. 85(4), 2015, pp. 445-453:

<sup>550</sup> 2013 թ. դեկտեմբերի 17-ին ձերբակալություններով սկսված կոռուպցիոն սկանդալը ընդգրկում էր իշխող ԱԶԿ հետառնչություն ունեցող մեծ թվով անձանց: Ոստիկանական գործողությունը հարուցել է կառավարության կոչում հակադեցողությունը՝ բերելով մեծ թվով իրավապահների ձերբակալությունների և գործադիր իշխանության ներքում լուրջ փոփոխությունների: Այն ժամանակվա Թուրքիայի վարչապետի կողմից տեղի ունեցածը մեկնաբանվել է իբրև դատական հեղաշրջում, որում մեղավոր է Տեթհուլլահ Գյուլլենի գլխավորած «Յիզմեթ» շարժումը: Այս մասին տե՛ս **Erikli R., The December 17-25, 2013 Corruption/Coup incident in Turkey in the Eyes of Islamic Social Movements**, Central European University, Department of Sociology and Social Anthropology, MA thesis, Budapest, 2015:

<sup>551</sup> Տե՛ս **Gezi ve 17 Aralık Olayları Karşısında Dik Durmasaydık, Bugün Çok Farklı Bir Türkiye’de Yaşıyor Olurduk**, T.C. Cumhurbaşkanlığı resmi sitesi, 18.09.2014, <https://www.tccb.gov.tr/haberler/410/1358/gezi-ve-17-aralik-olaylari-karsisinda-dik-durmasaydik-bugun-cok-farkli-bir-turkiyede-yasiyor-olurduk> [հասանելի է՝ 07.03.2019]:

Թուրքիայի անցումը նախագահական կառավարման համակարգի<sup>552</sup> և իր ուղերձներից մեկում նշում. «Թուրքիան, հունիսի 24-ի ընտրություններում կառավարման նախագահական համակարգի անցում կատարելու միջոցով պատմության ամենամեծ կառավարման բարեփոխումն իրականացնելով, ցույց տվեց, որ ժողովրդավարական պայքարի ընթացքում Մենդերեսի ու ընկերների վճարած կյանքի գինն իզուր չի անցել»<sup>553</sup>: Իսկ 2014 թ. օգոստոսի 11-ին նախագահական ընտրություններում տարած հաղթանակից հետո իր կողմնակիցների առջև պատշգամբից ունեցած ելույթում Թուրքիայի ղեկավարը եզրակացնում էր. «2010 թ. սեպտեմբերի 12-ին ձայների 58 տոկոսով ընդունված սահմանադրական փոփոխությունները հիշողությունից չնջեցին սեպտեմբերի 12-ի հեղաշրջման հերքերը: Իսկ այսօր արդեն փակվեցին 1960 թ. մայիսի 27-ի փակագծերը: Մայիսի 27-ի կողմից իբրև խնամակալության գործիք ներդրված նախագահական համակարգի ընկալումն արդեն անցյալ է»<sup>554</sup>:

2016 թ. հունիսի 15-ի ռազմական հեղաշրջման տապալված փորձից հետո Թուրքիայի նախագահի անունից տարածված հայտարարությունը արտահայտում է 1960 թ. ռազմական հեղաշրջման նկատմամբ թուրքական հասարակության մի հատվածին բնորոշ՝ անցյալի հիշողությունների չհաղթահարվածություն «համախտանիշը». «Մեր ազգը, որը կրում է 1960 թ. հեղաշրջման ընթացքում Մենդերեսին և ընկերներին, ինչպես նաև 1980 թ. «մեկին՝ աջերից, մեկին՝ ձախերից» սկզբունքով կախաղան բարձրացված երիտասարդներին պաշտպանել չկարողանալու ցավը, 2016 թ. հունիսի 15-ին «ոչ» ասաց դեպքերի նման ընթացքին»<sup>555</sup>: 2017 թ. մայիսի 27-ին, ելույթ ունենալով Ընտանիքի և սոցիալական քաղաքականության նախարարության կողմից կազմակերպված՝ Ռամադանի ընթրիքի

<sup>552</sup> Տե՛ս Yackley A. J., *Turkish President casts self as heir to reformer who died on gallows*, Reuters, 28.08.2014, <http://reut.rs/1u0gaHa> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>553</sup> Տե՛ս Adnan Menderes ile Fatin Rüştü Zorlu ve Hasan Polatkan'ın İdam Edilmelerinin Yıldönümü, T.C. Cumhurbaşkanlığı resmi sitesi, 16.09.2018, <https://www.tccb.gov.tr/basin-aciklamalari/365/98592/adnan-menderes-ile-fatin-rustu-zorlu-ve-hasan-polatkan-in-idam-edilmelerinin-yildonumu> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>554</sup> Տե՛ս Türkiye'nin 12. Cumhurbaşkanı Erdoğan, BBC Türkçe, 11.08.2014, [https://www.bbc.com/turkce/haberler/2014/08/140810\\_cumhurbaskanligi\\_secim](https://www.bbc.com/turkce/haberler/2014/08/140810_cumhurbaskanligi_secim) [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>555</sup> Տե՛ս Milletimiz Meydanı Darbecilere Birakmamış, Tarihi Bir Duruş Sergilemiştir, T.C. Cumhurbaşkanlığı resmi sitesi, 19.07.2016, <https://www.tccb.gov.tr/haberler/410/47678/milletimiz-meydani-darbecilere-birakmamis-tarih-bir-durus-sergilemistir> [հասանելի է՝ 07.03.2019]:



ավարտին, Էրդողանն ուղղակի զուգահեռներ է անցկացնում 1960 թ. մայիսի 27-ի և 2016 թ. հունիսի 15-ի դեպքերի միջև. «Այսօր նշում ենք մայիսի 27-ի հեղաշրջման 57-րդ տարելիցը, այդ հեղաշրջման արդյունքում Ադնան Մենդերեքի և ընկերների մահապատիժը թուրքական քաղաքական պատմության ամենաաղբերգական դրվագներից մեկն է: Մի ժամանակաշրջանում, երբ Թուրքիայի պատմության հեղաշրջումների էջն անվերադարձ փակված էինք համարում, վերապրեցինք հունիսի 15-ի աղետը: Մենք դասեր կքաղենք հունիսի 15-ից և այլևս թույլ չենք դրա կրկնությունը: Ոչ միայն հունիսի 15-ի, այլև [1980 թ.] սեպտեմբերի 12-ի, [1997 թ.] փետրվարի 28-ի, [1971 թ.] մարտի 12-ի, [1960 թ.] մայիսի 27-ի կրկնությունը թույլ չենք տա: Դրան հասնելու ուղին այն է, որ մեր ազգի յուրաքանչյուր անդամ՝ 7-ից 70 տարեկան, պաշտպանի իր արժեքները, իրավունքները, ազատության ներքին և արտաքին: Հունիսի 15-ը մյուս բոլոր հեղաշրջումներից և հեղաշրջման փորձերից տարբերվում է նրանով, որ մեր ազգն այդ գիշեր կարողացավ ցուցադրել իր կամքը»<sup>556</sup>:

Ընդհանուր առմամբ, 1960 թ. հեղաշրջման և հաջորդող դատավարության նկատմամբ Էրդողանի վերաբերմունքը պարունակում է նաև տարրեր, որոնց գերմանացի փիլիսոփա Ֆ. Նիցշեն իր «Կյանքի համար պատմության օգուտի և վնասի մասին» ծավալուն հոդվածում բնորոշում է իբրև «ակտիվ մոռացում»<sup>557</sup>: Դրա դրսևորումն է, թերևս, 2013 թ. դեկտեմբերի 14-ին դատավարությունների վայրի՝ Մարմարա ծովի Յասսըադակղզու վերանվանումը Ժողովրդավարության և ազատության ներքին կղզու <sup>558</sup>:

<sup>556</sup> Տե՛ս *Türk Milleti Yeni Bir Diriliş, Yeni Bir Kuruluş ve Yükseliş Döneminin İşaretini 15 Temmuz Direnişiyile Verdi*, T.C. Cumhurbaşkanlığı resmi sitesi, 27.05.2017, <https://www.tccb.gov.tr/haberler/410/77372/turk-milleti-yeni-bir-dirilis-yeni-bir-kurulus-ve-yukselis-doneminin-isaretini-15-temmuz-direnişiyile-verdi> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>557</sup> Տե՛ս **Nietzsche F.**, *On the advantage and disadvantage of history for life*, P. Preuss (trans.), Indianapolis-Cambridge, 1980, pp. 9-10: Հարցի շուրջ տե՛ս նաև **Talay Turner Z.**, *Nietzsche on Memory and Active Forgetting*, *The European Legacy*, vol. 24(1), pp. 46-58:

<sup>558</sup> Անվանափոխության մասին որոշումը ԹՀ պաշտոնաթերթում տե՛ս *İstanbul İli Adalar İlçesi Sınırları İçerisinde Bulunan Yassıada'nın İsminin "Demokrasi ve Özgürlükler Adası" Olarak Değiştirilmesi Hakkında Karar*, T.C. Resmi Gazete, 14.12.2013: Այդ մասին թուրքական մամուլում տեղ գտած հրապարակումներում ուղղակիորեն մատնանշվում է, որ անվանափոխության նպատակը Թուրքիայում հեղաշրջման հետքերի վերացումն է: Տե՛ս, օրինակ, *Yassıada 'Demokrasi ve Özgürlük Adası' oldu!*, Akşam, 07.11.2013,

Վարչապետ Մենդերեսի կերպարի վերարժևորումը Ռ.Թ. Էրդողանի կողմից հետաքրքիր է նաև թուրքական պահպանողական մտքի ժառանգականության համատեքստում: Այս տեսակետից բնութագրական է ԱԶԿ Ստամբուլի նահանգային համագումարի ընթացքում Էրդողանի հնչեցրած պնդումը. «Ավելի վաղ լուսահոգի Մենդերեսին, լուսահոգի Օզալին, մեր լուսահոգի ուսուցիչ Էրբաքանին վստահվածը հիմա էլ մենք ենք պահպանում: Ձգտում ենք հասնել նպատակին՝ առանց դրոշը վայր գցելու: Ամենևին չենք մոռանում, որ մեզ վստահված դրոշի տերն ազգն է: Մեր անկախության պրետ Մեհմեթ Աբիֆի կոչին ականջալ ուր լինելով՝ չվախեցանք<sup>559</sup>»<sup>560</sup>: 2007 թ. խորհրդարանական ընտրություններինց սկսած նախընտրական քարոզչության մեջ պարբերաբար կիրառվում են առաջին անգամ Թուրքիայի Թուրքիայի կամավորների կազմակերպությունների հիմնադրամի (թրք.՝ «Türkiye Gönüllü Teşekküller Vakfı») կողմից շրջանառության մեջ դրված այսպես կոչված «Ժողովրդավարության աստղեր» (թրք.՝ «Demokrasinin Yıldızları») գովազդային պաստառները<sup>561</sup>, որոնցում Էրդողանը պատկերված է Օզալի և Մենդերեսի խորապատկերների ֆոնին: Ինքը՝ Էրդողանը ևս առիթը բաց չի թողնում ընդգծել այդ առերևույթ ժառանգականությանը: 2017 թ. ապրիլի 17-ին, օրինակ, Թ. Օզալի մահվան 24-րդ տարելիցի օրը այցելելով վերջինիս գերեզմանին, Թուրքիայի նախագահը միևնույն օրը ծաղիկներ է խոնարհել նաև Ա. Մենդերեսի և նրա հետթաղված Ֆ. Ռ. Չոռլուի և Յ. Փոլաթքանի, ինչպես նաև Ն. Էրբաքանի շիրիմներին<sup>562</sup>:

Մենդերեսի քաղաքական խաղաքարտը շահարկվում է ոչ միայն Էրդողանի, այլև նրա քաղաքական հակառակորդների

<https://www.aksam.com.tr/siyaset/yassiada-demokrasi-ve-ozgurluk-adasi-oldu/haber-259046> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>559</sup> Էրդողանը բառախաղի միջոցով հիշատակում է Մ.Ա. Էրսոյի կողմից գրված ԹՀ օրհներգի առաջին տողը՝ «Մի՛ վախեցիր, չի՛ մարի արևացայ տ դրոշը ալ» (թրք.՝ «Korkma! Sönmez bu şafaklarda yüzen al sancak»):

<sup>560</sup> *Adalet ve kalkınma idealini şiar edindik*, T.C. Cumhurbaşkanlığı resmi sitesi, 06.05.2018, <https://www.tccb.gov.tr/haberler/410/92779/-adalet-ve-kalkinma-idealini-siar-edindik-> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>561</sup> **Türenç T.**, *Demokrasinin Yıldızları*, Hürriyet, 16.06.2017, <http://www.hurriyet.com.tr/demokrasinin-yildizlari-6719772> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>562</sup> *Cumhurbaşkanı Erdoğan, Özal, Menderes ve Erbakan'ın Kabirlerini Ziyaret Etti*, T.C. Cumhurbaşkanlığı resmi sitesi, 17.04.2017, <https://www.tccb.gov.tr/haberler/410/74794/cumhurbaskani-erdogan-ozal-menderes-ve-erbakanin-kabirlerini-ziyaret-etti> [հասանելի է՝ 07.03.2019]:

կողմից: Դրա թարմ օրինակներից է վերջին նախագահական ընտրություններում թուրքիայի գործող նախագահի և հիմնական ընդդիմադիր ՅԺԿ թեկնածու Մուհարրեմ Ինջեթիմիչ և Մենդերեսի շուրջ հեռակա բանավեճը<sup>563</sup>: Հասկանալի է, որ Մենդերեսի մասին հիշողության քաղաքականացումը բնորոշ էր նաև Օզալին: Բնութագրական օրինակ է Մենդերեսի, Չոռլուի և Փոլաթթանի արդարացման և 1990 թ. սեպտեմբերի 17-ին մահապատժի 29-րդ տարելիցի օրն Ստամբուլում կառուցված դամբարանում վերահուղարկվորման առիթով «Գյուլայդըն» թերթում տպագրված ծաղրանկարը, որում պատկերված է դամբարանը բարձրացնող Օզալը, իսկ շենքի տակ կարելի է կարդալ. «պիտանելիության ժամկետը. 1992 թ. համապետական ընտրություններ»<sup>564</sup>:

Մենդերես-Էրդողան և ԺԿ-ԱԶԿ համեմատությունները քննարկման թեմատեն դարձել ինչպես համապատասխան գիտական<sup>565</sup>, այնպես էլ հրապարակախոսական<sup>566</sup> շրջանակների կողմից: Թեմային անդրադարձող հեղինակների մեծ մասը հիշատակում է վաղ շրջանի Էրդողանի հայտարարություններից մեկը, որում նա ԱԶԿ իշխանության գալը բնորոշում էր իբրև «երկրորդ Մենդերեսի շրջան» և «երկրորդ ժողովրդավարական շարժում»՝ նշելով, որ իրենք ԺԿ շարունակությունն են<sup>567</sup>: Էրդողանի անձնական նախընտրությունից և գաղափարական ընդհանրություններից զատ ԱԶԿ ղեկավարի նման ձևակերպումները պայմանավորված էին նաև նրանով, որ Մենդերեսի կերպարը թուրքական հասարակության լայն շրջանակների մոտդրական հիշողություններ էր արթնացնում:

<sup>563</sup> *İnce'den Erdoğan'a 'Menderes' yanıtı: Bu kadar cahil olma*, 17.06.2018, BirGün, <https://www.birgun.net/haber-detay/ince-den-erdogan-a-menderes-yaniti-bu-kadar-cahil-olma-219815.html> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>564</sup> Տե՛ս **Tüblek N.**, *Nehar Tüblek'in gözüyle*, Günaydin, 20.09.1990:

<sup>565</sup> Տե՛ս, օրինակ, **Danforth N.**, *The Menderes Metaphor*, Turkish Policy Quarterly, vol. 13(4), 2015, pp. 99-105; **Keskin Y.Z.**, *Demokrat Parti İktidarı ve Günümüze Yansımaları*, Erzincan Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, vol. 2(2), 2012, pp. 48-60:

<sup>566</sup> Տե՛ս, օրինակ, **Rengin A.**, *Cindoruk: Menderes ve Erdoğan iki zıt adam*, BBC Türkçe, 27.05.2015, [https://www.bbc.com/turkce/haberler/2015/05/150526\\_27mayis\\_cindoruk](https://www.bbc.com/turkce/haberler/2015/05/150526_27mayis_cindoruk) [հասանելի է՝ 07.03.2019], *İnce Ö.*, *Menderes'i kendine örnek alan*, Hürriyet, 08.08.2010, <http://www.hurriyet.com.tr/menderes-i-kendine-ornek-alan-15509278> [հասանելի է՝ 07.03.2019], *Cindoruk: "Menderes'le Erdoğan mukayese edilemez"*, Hürriyet, 17.08.2010, <http://www.hurriyet.com.tr/gundem/cindoruk-menderesle-erdogan-mukayese-edilemez-15573737> [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>567</sup> Տե՛ս *Milli görüşçü değil DP'nin devamıyız*, Sabah, 17.05.2003, <http://arsiv.sabah.com.tr/2003/05/17/s1916.html> [հասանելի է՝ 07.03.2019]:

Թուրքիայում Մենդերեսի վերաբերյալ հանրային հիշողության դրսևորումները բազմազան են<sup>568</sup>, սակայն սույն աշխատանքի մեջ մի քանի ֆիլմերի և հեռուստատեսիալների միջոցով անդրադարձ կկատարվի երկրի նախկին վարչապետի կերպարի և նրա ժամանակի արտացոլմանը թուրքական հեռուստատեսային-կինոմատոգրաֆիկ հիշողության մեջ («telecinematic memory»): Նման ընտրությունը կապված է այն հանգամանքի հետ, որ գեղարվեստական ֆիլմերը, թուրքական հասարակության պարփակված բնույթին հակառակ, հնարավորություն են տալիս հանրային կարծիքի կառուցարկմանը զուգահեռ գեղարվեստական պատկերի մեջ դրսևորել տրավմատիկ հիշողության պատճառները, կամ, գերմանացի գրականագետ Անդրեաս Յոլսսենի արտահայտությամբ, բացահայտել «*հիշողությունն առանց սահմանների*»<sup>569</sup>:

Առաջին նման օրինակը 1988 թ. թողարկված թուրք հայտնի գրող, երաժիշտ, ռեժիսոր և քաղաքական գործիչ Չյուլֆյուլ Լիվանելիի «Մառախուղ» (թրք.՝ «Sis») ֆիլմն է<sup>570</sup>, որը ժամանակից Թուրքիայի պատմությունը ներկայացնում է երկու հեղաշրջումների (1960 թ. և 1980 թ.) համատեքստում: Ֆիլմում ներկայացվող սերունդների հակադրության մեջ ընտանիքի պապը գնդապետը (ում մարմնավորում է հայազգի հայտնի դերասան Քենան Փարսը՝ Քիրքոր Ջեզվեջյանը) ներկայացնում է ԹՀԶՈՒ միջին սպայակազմը, որն ակտիվորեն ներգրավված է եղել ԺԿԻԶ խանութային տապալման գործողության մեջ:

2004-2005 թթ. «Kanal D» հեռուստաալիքով հեռարձակված ռեժիսոր Չաղան Ըրմաքի «Գլխաշորիս վրայի ժանյակավոր

<sup>568</sup> Այդընի նահանգի օրինակի վրա Մենդերեսի վերաբերյալ հանրային ընկալումների մասին մանրամասն տե՛ս **Işık C.**, *Halk Tahayyülünde Adnan Menderes*, ss. 175-200, [https://www.academia.edu/35570424/Halk\\_Tahayy%C3%BCl%C3%BCnde\\_Adnan\\_Menderes.pdf](https://www.academia.edu/35570424/Halk_Tahayy%C3%BCl%C3%BCnde_Adnan_Menderes.pdf) [հասանելի է՝ 07.03.2019]:

<sup>569</sup> **Huyssen A.**, *Present Pasts. Urban Palimpsests and the Politics of Memory*, Stanford, 2003, p. 4. Թուրքական կինոմատոգրաֆում հանրային տրավմատիկ հիշողության դրսևորումների մասին մանրամասն տե՛ս **Başcı P.**, *Social Trauma and Telecinematic Memory: Imagining the Turkish Nation since the 1980 Coup*, Cham, 2017:

<sup>570</sup> Ֆիլմը տե՛ս «IMDb» համացանցային ֆիլմադարանում՝ <https://www.imdb.com/title/tt0262307/> [հասանելի է՝ 07.03.2019]:

վարդը» (թրք.՝ «Çemberimde Gül Oya»)<sup>571</sup> 40 մասից բաղկացած հեռուստատեսային սերիալի վերջին մասում հերոսներից պահպանողական քաղաքական գործիչ Դինչեր Բայրաթարը շեշտում է, որ ինքն իր աչքերով է տեսել 1960 թ. հեղաշրջումը: Այդ խոսքերը միաձուլվում են Մենդերեսի, Չոռլուի և Փոլաթթանի մահապատժի տեսարանների հետ. հիշողության մեջ հայտնվում են Յասսըադայում պահվող ԺԿ պատգամավորները:

Մենդերեսի վերաբերյալ ծավալուն անդրադարձ է պարունակում 2006-2008 թթ. «ATV» հեռուստաընկերությամբ ցուցադրված ռեժիսորներ Ումյուլ Բուհրանի և Ֆարուք Թեբերի «Յիշի՛ր, սիրելիս» (թրք.՝ «Hatırla Sevgili») հեռուստապատումը<sup>572</sup>: 68 մասից բաղկացած ֆիլմաշարի առաջին 6 սերիաներն ընդրկում են ԺԿ իշխանության վերջին շրջանը՝ սկսած 1959 թ. Լոնդոնում Մենդերեսի ինքնաթիռի վթարից մինչև 1961 թ. նրա մահապատժը: Սերիալում գեղարվեստական ֆիլմի համար բավական մեծ ճշգրտությամբ ներկայացված է ԺԿ-ՅԺԿ քաղաքական էլիտաների պայքարը, ազատ խոսքի և ազատ մամուլի նկատմամբ ճնշումները, Մենդերեսի քաղաքական ավտորիտարիզմի այլ դրսևորումները:

Ամբողջությամբ Մենդերես անձի և քաղաքական գործչի պատկերմանն է նվիրված ռեժիսորներ Մեհմեթ Բահադր Էրի և Էյլեմ Քոզայի նկարահանած «Ես նրան շատ էի սիրում» (թրք.՝ «Ben Onu Çok Sevdim») հեռուստատեսիալը<sup>573</sup>: 2013-2014 թթ. «ATV» հեռուստաալիքով հեռարձակված ֆիլմաշարի 15 մասերը պատմում են Մենդերեսի քաղաքական վերելքի և անկման պատմությունը՝ օպերային երգչուհի Այհան Այդանի հետ նրա սիրավեպի համատեքստում:

Ընդհանուր առմամբ, հասարակական-քաղաքական ամենատարբեր դրսևորումները ցույց են տալիս, որ ժամանակակից թուրքական հասարակության շրջանում առկա է Մենդերեսի և ԺԿ իշխանության տարիների նկատմամբ հետաքրքրության աճ, ինչը պայմանավորված է ինչպես Ռ. Թ. Էրդոդանի անձով, այնպես էլ

<sup>571</sup> ֆիլմաշարը տե՛ս «IMDb» համացանցային ֆիլմադարանում՝ <https://www.imdb.com/title/tt0424754/> [հասանելի է՝ 07.03.2019]:  
<sup>572</sup> ֆիլմաշարը տե՛ս «IMDb» համացանցային ֆիլմադարանում՝ <https://www.imdb.com/title/tt0878797/> [հասանելի է՝ 07.03.2019]:  
<sup>573</sup> ֆիլմաշարը տե՛ս «IMDb» համացանցային ֆիլմադարանում՝ <https://www.imdb.com/title/tt5736118/> [հասանելի է՝ 07.03.2019]:

թուրքական հասարակության մի հատվածի վրա հեղաշրջումների թողած հոգեբանական ազդեցությանը: Այս երկու գործոնների ազդեցությունը կարելի է տեսնել 2016 թ. հուլիսի 15-ին ի պաշտպանություն նախագահ Էրդոգանի փողոց դուրս եկած 50-ամյա կին աջակիցներից մեկի խոսքերում. «*Ես մի մարդու թոռ եմ, որը ԺԿ աջակից էր, ԺԿ Իզմիրի նահանգային կառույցի ղեկավարն էր: Նա պատմել է ինձ, որ Մենդերեսը նշում էր, թե «ինքը վստահում էմ է իր ժողովրդին», բայց իր ժողովուրդը որևէ բան չկարողացավ անել նրան պաշտպանելու համար: Հիշում եմ այն տանջանքները, որոնց միջոց նա անցավ: Ես հիշում եմ իմ պապի կին, ու ստիշտապեցի փողոց: Իմ 16-ամյա դուստրն ասաց. «մի՛ գնա», բայց ես պատասխանեցի, որ գնում եմ, որովհետև չեմ ցանկանում ապագայում գղջալ դրա համար: Ես անհանգիստ էի, բայց անմիջապես դուրս եկա տնից, երբ լսեցի նախագահի կոչը»<sup>574</sup>:*

Ամփոփելով նշենք, որ Ա. Մենդերեսի քաղաքական կերպարը հաջողությանը օգտագործվել և օգտագործվում է Թուրքիայի նախագահ Ռ.Թ. Էրդոգանի կողմից սեփական քաղաքական նպատակները հետապնդելիս: Երկու գործիչների միջև հաճախ անցկացվում են գուգահեռներ հիմնված երկու առաջնորդներին էլ բնորոշ խարիզատիկ խառնվածքի, թուրքական աջ կենտրոնամետ քաղաքական մտքի շարունակականության, ազատական պահպանողականությունից դեպի ավտորիտարիզմ աստիճանական անցման վրա: Նման համեմատությունները քննարկվում են նաև երկու առաջնորդների ժամանակաշրջաններում տեղի ունեցած հեղաշրջման փորձերի ու 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջման համատեքստում: Ընդ որում, Էրդոգանի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ վերջինս, Պենտագոնի նախկին խորհրդական Մայքլ Ռուբինի ձևակերպմամբ, «մեծամասամբ մեղավոր է անգամ այն դեպքերում, որոնցում Մենդերեսն իրականում անմեղ էր»<sup>575</sup>:

<sup>574</sup> Miş N., *Measuring Social Perception of the July 15 Coup Attempt*, Insight Turkey, vol. 18(3), 2016, p. 175.  
<sup>575</sup> Rubin M., *Erdogan's future in Turkey does not look bright*, Washington Examiner, 30.01.2019, <https://www.washingtonexaminer.com/opinion/recep-tayyip-erdogans-future-in-turkey-does-not-look-bright> [հասանելի է՝ 07.03.2019]:

## ԵՃՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Թուրքական պահպանողական քաղաքական մտքի շարունակականության ու զարգացման ընդհանուր օրինաչափությունների համալիր ուսումնասիրությունը ժողովրդավարական և «Արդարություն և զարգացում» կուսակցությունների օրինակով թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները.

- Չնայած օսմանյան որոշակի գաղափարափիլիսոփայական ժառանգության առկայությանը՝ քաղաքական պահպանողականության աստիճանական վերելքը Թուրքիայի Յանրապետությունում բացատրվում է քեմալական ռեժիմի իշխանության առաջին տարիներին իրականացվող օսմանյան ավանդական հասարակության արդիականացման գաղափարական հիմնավորման ճանապարհին տեսական նոր ուղղությունների ուսումնասիրության ակտիվացմամբ:
- Պետական աստեղծման և ազգաստեղծման քեմալական գաղափարների ազդեցությամբ պահպանողական քաղաքական հայացքներ ունեցող և միաժամանակ մոդեռնիստական կենսափիլիսոփայություն դավանող մի շարք գործիչների կողմից թուրքական քաղաքական դիսկուրս են բերվում պահպանողական մոդեռնիզմի գաղափարները՝ իբրև սոցիալական կապերն ու հասկացությունները նոր ձևին համապատասխանեցնելու ջանք:
- Երկրորդ աշխարհամարտից հետո Թուրքիայում բազմակուսակցական քաղաքական համակարգի ներդրումից հետո բարենպաստ պայմաններ են ստեղծվում առաջին պահպանողական քաղաքական ուժի ասպարեզ գալու համար: Պահպանողական տարրերով ժողովրդավարության և կուսակցության ղեկավարությանը բնորոշ խարիզմատիկ առաջնորդությունը կանխորոշեցին ժողովրդավարական կուսակցության հաջողությունը երկրի առաջին մրցակցային ընտրություններում:

- Ժողովրդավարական կուսակցության իշխանության շրջանը (1950-1960 թթ.) նշանավորվում է հանրապետականության և պահպանողականության գաղափարական և քաղաքական դիմակայությանը: ԺԿ պահպանողականության մոտեցումներն առավել ցայտուն են արտահայտվում քեմալական աշխարհիկության և հեղափոխականության թեզերի վերափմաստավորման հարցերում:
- ԺԿ կառավարման տարիներին գրանցվում է աստիճանական անցում ազատական պահպանողականությանը և հիմնականում ավտորիտարիզմի: Կուսակցության առաջնորդ Ա. Մենդերեսի անվան շուրջ ձևավորվում է ամբողջատիրական ռեժիմներին բնորոշ անձի պաշտամունք՝ հիմնված վերջինիս խարիզմատիկ առաջնորդության վրա:
- Իսլամի և արդիականացման հարցերի շուրջ պահպանողականության և հանրապետականության գաղափարական առճակատման հետևանքով թուրքական հասարակության շրջանում առաջացած բևեռացումը 1960 թ. մայիսի 27-ին լուծվում է ռազմական հեղաշրջման ճանապարհով՝ դուռ բացելով Թուրքիայի քաղաքական կյանքում բանակի հետագամիջամտության ներքին համար:
- Յեղաշրջման արդյունքում կախաղան բարձրացված վարչապետ Մենդերեսի կերպարը հետագայում պարբերաբար քաղաքականացվում է՝ թուրքական պահպանողական մտքի զարգացման տարբեր փուլերում օգտագործվելով տարբեր գործիչների և ուժերի կողմից: Նրամասին հիշողությունը խորը դաջվել է թուրքական հանրային հիշողության մեջ՝ մինչև մեր օրերն արտահայտվելով հասարակական-քաղաքական կյանքի տարբեր դրսևորումներում:
- 2001 թ. ստեղծված «Արդարություն և զարգացում» կուսակցությունը թուրքական պահպանողականության շարունակականության հերթական օրինակն է, որ գալիս է ապացուցելով, որ Թուրքիայում ազգայնականությունը, պահպանողականությունն ու իսլամականությունը ոչ թե դիրքորոշում են, այլ՝ վիճակներ, նյութի վիճակների



նման՝ պատրաստ հարմար պահի փոխակերպվելու մեկը մյուսի:

- ԱՉԿ կողմից առաջ քաշված պաշտոնական գաղափարախոսական հայեցակարգը՝ պահպանողական ժողովրդավարությունը, չնայած նոր «փաթեթավորմանը», ներկայացնում է թուրքական քաղաքական մտքի պատմության հիմնական երակներից մեկը: Ինչպես և ԺԿ դեպքում, աստիճանական անցումը ավտորիտարիզմի բերել է մենիշխանության մի նոր դրսևորման, որը սույն աշխատանքի մեջ պայմանականորեն անվանվում է «երդողանիզմ»:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒ ՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ

## I. Աղբյուրներ

### ա) Արխիվային նյութեր

1. Թուրքիայի վարչապետի նկից գործող հանրապետական արխիվ (Türkiye Cumhuriyeti Başbakanlık Cumhuriyet Arşivi),  
Ֆոնդեր՝ BCA: 490.1.0 և BCA: 30.1.0.0:
2. Թուրքիայի ազգային մեծ ժողովի արխիվ (TBMM Tutanakları, Kütüphaneler ve Arşiv Hizmetleri Başkanlığı),  
[www.tbmm.gov.tr/kutuphane](http://www.tbmm.gov.tr/kutuphane):
3. Ժողովրդավարական կուսակցության խորհրդարանական խմբակցության գաղտնի նիստերի արձանագրություններ (Demokrat Parti Meclis Grubu Gizli Müzakere Zabıtları: Dönem: IX, X, XI),
4. ԱՄՆ պետական քարտուղարության արխիվ (U.S. National Archives and Records Administration),  
Ֆոնդեր՝ NARA: RG 59 և NARA: M1292:
5. ԱՄՆ կենտրոնական հետախուզական վարչության արխիվ (U.S. Central Intelligence Agency, Freedom of Information Act Electronic Reading Room),  
[www.cia.gov/library/readingroom](http://www.cia.gov/library/readingroom):

### բ) Տպագրված սկզբնաղբյուրներ

6. LaFantasie G. (ed.), Foreign relations of the United States, 1958-1960. Eastern Europe; Finland; Greece; Turkey, vol. X, part 2, Washington: United States Government Printing Office, 1993, 926 p.
7. Гафурова Б., Зубока Л. (ред.), Хрестоматия по новейшей истории, т. 3, ч. 1 (1945-1960 документы и материалы), Москва: Социально-экономическая литература, 1961, 795 с.
8. Arar İ. (der.), Hükümet Programları 1920-1965, İstanbul: Burçak Yayınevi, 1968. 559 s.
9. DP Program ve Tüzüğü, İstanbul: Pulhan Matbaası, 1946, 24 s.

### գ) Պարբերական մամուլ (1946-1961 թթ.)

### *հայերեն*

10. Էջմիածին
11. Ժամանակ
12. Հայ Կեդրոն

### *թուրքերեն*

13. Ayn Tarihi
14. Cumhuriyet
15. Milliyet
16. Son Posta
17. T.C. Resmi Gazete
18. Tan
19. Ulus
20. Vakit
21. Vatan
22. Yeni Adam
23. Yeni Gün
24. Zafer

### **դ) Հոլշագրու թյուներ**

25. Ağaoğlu S., Arkadaşım Menderes, İstanbul: Baha Matbaası, 1967, 204 s.
26. Ağaoğlu S., Yassıada, Kayseri ve Toptaşı Cezaevi Günlükleri, İstanbul: Yapı Kredi Yayınları, 2013, 380 s.
27. Bayar C., Ben de Yazdım, 8 cilt, İstanbul: Baha Matbaası, 1965-1972, 2768 s.
28. Bayar C., Başvekilim Adnan Menderes, İ. Bozdağ (ed.), İstanbul: Baha Matbaası, 1986, 176 s.
